



ՀԼ. ՏԱՐԻ


ԲԱՆԴՈՒՆ

ՊԵՇԱՏՈՒՆԿԱՆ ԼԵՐԱՂԵՐ
ԼԵՐԱՆԵՆ ՀԼՅՈՑ ԿԼԹՈՒՆԿՈՒԹԵԼՆ
ՄԼՅՐ ԼԹՈՒՄՅՈՒՆ ՄԻԲՅՈՒՆ ԷԶՐԻԼԵՐՆԻ

ՅԵՆԻ

2021

Լ. ԷԶՐԻԼԵՐՆԻ




ՀՐԱՄԱՆԱԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



«ԷԶՄԻԱԾԻՆ»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրական

Գլխավոր խմբագիր՝ **Գեորգ Մադոյեան**


Խմբագիրներ՝ **Արփինէ Զանթիկեան,
Լուսինէ Վարդանեան**

Լեզուաոճական խմբագիր՝ **Նարէ Սարգսեան**

Տեխնիկական խմբագիր՝ **Գոռ Գրիգորեան**

Խմբագրական խորհուրդ՝ **Տ. Եզնիկ արք. Պետրոսեան,
Տ. Չաքարիա ծ. վրդ. Բաղումեան,
Տ. Անդրէաս վրդ. Եզեկեան,
Ազատ Բօգոյեան,
Գեորգ Տէր-Վարդանեան,
Վարդան Դերիկեան,
Գոհար Աւագեան**





“Etchmiadzin”

Theological and Armenological Journal

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**

Editors **Arpine Chantikyan,
Lusine Vardanyan**

Stylistic editor **Nare Sargsyan**

Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Archbishop Yeznik Petrosyan,
Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Archimandrite Andreas Yezekyan,
Azat Bozoyan,
Gevorg Ter-Vardanyan,
Vardan Devrikyan,
Gohar Avagyan**



«Эчмиадзин»

Религиоведческий и арменоведческий журнал

Редакционный состав


Главный редактор **Геворг Мадоян**

Редакторы **Арпине Чантикян,
Лусине Варданян**

Стилистический редактор **Нарэ Саргсян**

Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Архиепископ Езник Петросян,
Протоархимандрит Закария Багумян,
Архимандрит Андреас Езекян,
Азат Бозоян,
Геворг Тер-Варданян,
Вардан Деврикян,
Гоар Авакян**



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՍԱՂԱՔԱՆՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ
ԳՈՐԻՍԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ**

(3 հունիսի, 2021 թ.)

Միրելի՛ սյունեցի հավատավոր զավակներ Մեր,

Այցելել ենք ձեզ հետպատերազմյան դժվարին իրավիճակի, դառն հարվածների եւ նեղությունների դիմագրավման այս ժամանակահատվածում: Եկել ենք ի մոտո հաղորդ լինելու ձեր մտահոգություններին ու խնդիրներին, նաեւ հայրապետական Մեր գնահատանքն ու օրհնությունը վերստին բերելու ձեզ: Եկել ենք Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ տիար Պերճ Սեդրակյանի հետ, որի գլխավորությամբ ազգանվեր բարեգործական այս հաստատությունը շարունակում է ավելի քան մեկդարյա նվիրական առաքելությունը մեր ազգի ու հայրենիքի կյանքում՝ պատերազմի օրերին եւ հետպատերազմյան շրջանում եւս կարեւոր աջակցություն բերելով հայրենի մեր երկրին եւ մեր ժողովրդի զավակներին:

Մենք քաջատեղյակ ենք ազգային-հայրենական մեր կյանքի այս վճռորոշ շրջանում ձեզ պատած դժվարությունների, ձեր առջեւ ծառացած մարտահրավերների մասին: Արցախյան վերջին պատերազմում մեր թանկագին զավակները նահատակվեցին, ունեցանք վիրավորներ, անհայտ կորածներ, գերեվարվածներ, տասնյակ հազարավոր տեղահանված խաղաղ բնակիչներ: Տարածքային կորուստների պատճառով նաեւ Սյունյաց աշխարհի բնակավայրեր սահմանամերձ դարձան Ադրբեջանի հետ՝ դրանից բխող խիստ մտահոգիչ հետեւանքներով: Ադրբեջանը սանձարձակ ոտնձգություններ է կատարում նաեւ Հայաստանի

սահմանների՝ մասնավորապես Սյունիքի, Գեղարքունիքի գյուղական որոշ համայնքների տարածքների նկատմամբ: Եւ այժմ էլ գյուղատնտեսութեամբ զբաղվելու վտանգներն են առկա՝ թշնամու կողմից հնարավոր նշանառության տակ լինելու հետեւանքով: Սիրելիներ, խռովքի մեջ է ամենքիս հոգին, խռովքի մեջ է համայն հայությունը: Սյունյաց աշխարհի Մեր զավակներիդ ստեղծագործ ու խաղաղ կյանքի բնականոն ընթացքն է խաթարված, ավելին՝ ապահովության ու անվտանգության լրջագույն խնդիրն է հառնած: Սակայն Մենք գիտենք, որ ձեր ոգին անկոտրում է, ձեր հարազատ հողին կապվածությունը, հայրենասիրությունն ու ազգանվիրումը ամուր են ձեր սրտերում ու հոգիներում: Դուք ձեր պապերից ու հայրերից ժառանգել եք քաջություն ու կորով՝ օրհասական հանգամանքներում ձեր հայրենի տունն ու օջախը պաշտպանելու, անսասան լինելու հայրենյաց պաշտպանության դիրքերում եւ արիաբար կանգուն մնալու հարազատ հողին: Այս փորձությունը եւս, քաջարի՛ սյունեցիներ, ազգովի կհաղթահարենք՝ միայն թե, մեր հերոս նախնիների ոգեշունչ պատգամի համաձայն, մեր արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք, ամուր պահենք մեր նվիրումը հայրենիքին ու մեր սրբազան արժեքներին: Հաստատուն մնանք հավատի մեջ, անկոտրում՝ նեղությունների ու դժվարությունների առջեւ: Ամուր պահենք միմյանց հանդեպ քրիստոսապատվեր սերն ու հզոր՝ միասնությունը, որի առջեւ նահանջում են փորձությունները, եւ զորանում ու ամրապնդվում է լավատեսության ոգին, ինչպես որ առաքյալն է ասում. «Քանզի գիտենք, որ նեղությունները համբերություն են բերում, համբերությունը՝ փորձառություն, փորձառությունը՝ հույս: Հույսը երբեք չի ամաչեցնում, որովհետեւ Աստծու սերը սփռված է մեր սրտերում Սուրբ Հոգու միջոցով» (Հռոմ. 5. 3—5):

Սյունյաց աշխարհի Մեր սիրելի՛ զավակներ, մեր Եկեղեցին եւ եկեղեցականները հանապազօրյա իրենց աղոթքով ու ծառայությամբ ձեզ հետ են, ձեր կողքին՝ ձեզ Աստծու խոսքով զորացնելու, դժվարությունների ու փորձությունների մեջ Տիրոջ օգնության խոստումը փոխանցելու, ձեր խիզախությունն ամուր պահելու: Մեր Սուրբ Եկեղեցին թե՛ պատերազմի ընթացքում եւ թե՛ հետպատերազմյան օրերին իր ձայնն է բարձրացրել միջազգային, միջեկեղեցական, միջկրոնական ատյաններում Արցախի եւ Հայաստանի դեմ իրականացվող ոտնձգությունները խստորեն դատապարտելու կոչով, գերիների ազատ արձակման համար հրատապ


աշխատանքներ իրականացնելու հորդորով եւ ի պաշտպանություն Արցախի մեր ժողովրդի ազատ ու անկախ կյանքի արդար իրավունքի:

Այսօր Աստծու ողորմությամբ պատեհ առիթ ունենք հայրապետական Մեր գնահատանքն ու օրհնությունը անձամբ բերելու Սյունիքի մարզային իշխանություններին, համայնքապետերին, որոնք եւ այսօր, ինչպես պատերազմական դժվարին օրերին, համայնքների բնակիչների հետ ամուր կանգնած են հայրենիքի պաշտպանության դիրքերում: Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում Սյունյաց թեմի հոգեւոր սպասավորներին՝ թեմակալ առաջնորդի գլխավորությամբ, հավատավոր մեր ժողովրդի հավատն ու ոգին ամուր պահելու, Աստծու խոսքով հավատավոր իրենց հոտին զորացնելու ու մխիթարելու, սահմանամերձ դարձած բնակավայրերում արիասիրտ ծառայությունը շարունակելու համար:

Աղոթենք միասնաբար, որ Բարձրյալ Տերը օգնական ու զորակից լինի մեզ՝ մեր ժողովրդի իրավունքների պաշտպանության գործում ճշմարտությունը ճանաչելի դարձնելու եւ արդարության հասնելու ջանքերն արդյունավորելու: Աղոթենք, որ Աստված խաղաղ ու անվրդով պահի հայրենի մեր երկիրը եւ պարգևի խաղաղ ու բարօր կյանքի զարգացում Հայաստանում եւ Արցախում: Հայցենք, որ ողորմածն Աստված հանգստություն շնորհի հայրենյաց պաշտպան մեր զոհված զավակների լույս հոգիներին, շուտափույթ վերադարձ պարգևի գերիներին եւ անհայտ կորածներին: Թող Տիրոջ պահապան Սուրբ Աջի առջեւ նահանջեն բոլոր շարիքներն ու փորձանքները մեր կյանքից ու հայրենյաց սահմաններից, եւ Երկնավորը պահի ու պահպանի ամենքիս Իր հանապազ օրհնության ու բարի հայացքի ներքո, այսօր եւ միշտ, ամեն:

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ՊԱՐԵԳԻՆ Բ.
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
ԱՄԱՐԱՍԻ ՎԱՆՔՈՒՄ ԴՐԱՇԱՓԱՌԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ**

(4 հունիսի, 2021 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Քանի որ պահեցիր Իմ համբերության խոսք,
ես էլ քեզ պիտի պահեմ քո փորձության ժամին...»
(Հայտ. Գ. 10):

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Այսօր ուխտի ենք եկել Ամարասի աղոթաբույր, նշանավոր վանք, որտեղ ամփոփված են Սուրբ Գրիգորիս Հայրապետի նշխարները: Համախմբված ենք այս հինավուրց սրբավայրի կամարների ներքո՝ Արցախի նվիրական այս հողում, որը դեռ կրում է 44-օրյա ծանր պատերազմի վերքերը: Միասնական մեր աղոթքներով հայցեցինք, որ Աստված խաղաղության ու ապահովության մեջ պահպանի Արցախը եւ Իր անսահման ողորմածությունն ու Սուրբ Աջի պահպանությունը տարածյալ պահի արցախահայոց եւ համայն մեր ժողովրդի վրա:

Սիրելիներ, հայրական սիրո ջերմագին զգացումներով ենք ուղեւորվել դեպի ձեզ՝ առ մեր Սուրբ Եկեղեցու հավատավոր զավակներդ, տազնապալի օրերից հետո գոտեպնդվելու միմյանցով, զորանալու մեր Տիրոջ խոսքով, որ խոստանում է՝ ասելով. «Քանի որ պահեցիր Իմ համբերության խոսքը, ես էլ քեզ պիտի պահեմ քո փորձության ժամին...»: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի այս խոստումը, որ կոչում է մեզ համբերության եւ հավատարմության, պիտի օգնի առաջ ընթանալու եւ հառնած դժվարություններն ու նեղությունները, ցավն ու վիշտը հաղթահարելու: Ծանր փորձությունը, որի միջով անցանք, եւ հիմնախնդիրները, որոնք մեր առջեւ են, չեն կարող մատնել մեզ հուսալքության, այլ ընդհակառակը՝

պիտի առավել համախմբեն ու ամրացնեն մեզ, առավել պիտի իմաստացնեն մեզ՝ դասեր քաղելու սխալներից եւ սթափ գնահատելու իրավիճակները: Փորձության ու նեղության ժամին հատկապես առավել անհրաժեշտ է, որ մենք լինենք համախմբված, հավատարիմ մնանք մեր հայրերի հավատքին, մեր Տեր Հիսուս Քրիստոսին, դարեր շարունակ մեր ժողովրդի արյուն քրտինքով սրբացած մեր հայրենիքին՝ անխախտ հավատով, որ Տերը մեզ հետ է նաեւ մեր փորձության ժամին եւ պարգեւում է մեզ վեր հառնելու զորությունը:

Դուք, Արցախի՝ քաջազուն զավակներ, այսօր արի հոգով ու հաստատակամ կանգնած եք մնում հայրենի հողին, որի յուրաքանչյուր թիզը վկան է մեր պատմության, քրիստոնեական մեր ինքնության, մեր ստեղծարար կյանքի եւ խաղաղության ու արդարության մեր ազնիվ ձգտումների: Արցախը, որ նվիրական մասն է մեր բնօրրան հայրենիքի, բնօրրան է նաեւ քրիստոնեության: Այստեղ քարոզել են Սուրբ Թադեոս առաքյալի Դադի եւ Եղիշա աշակերտները, որոնք իրենց ուսուցչի հետ մեր ժողովրդի առաջին լուսավորիչներից են եւ սկզբնավորողները Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու: Այստեղ քրիստոնեության լույսն է տարածել եւ ծաղկուն տարիքում նահատակվել Սուրբ Գրիգոր Լուսավորչի թոռը՝ Սուրբ Գրիգորիս Հայրապետը: Այստեղ Սուրբ Մեսրոպ Մաշտոցը բացել է առաջին դպրոցներից մեկը, որտեղ Սուրբ Գիրքն ուսուցանվել է հայկական գրով, հայերեն խոսքով: Այստեղ հազարավոր մեր սուրբ նահատակների մասունքներն են եւ նրանց վրա բարձրացած մեր վանքերն ու եկեղեցիները: Այստեղ ոգին է բազում տառապանք տեսած եւ իր խաղաղ ու ազատ կյանքի համար մաքառած մեր ժողովրդի: Եւ այսօր սրբազան այս հողի վրա ձեր ներկայությունը, սիրելիներ, դժվարությունները հաղթահարելու ձեր հանձնառությունն ու նախանձախնդրությունը ոգեշնչում են համայն մեր ժողովրդին աշխարհի բոլոր կողմերում: Արցախը, այո՛, շարունակում է մնալ մեր ժողովրդի հավատքի ու հայրենասիրության խորհրդանիշը եւ շարունակում է միավորել մեր ժողովրդին ազգային իղձերի շուրջ: Աննվազ է մեր ժողովրդի պատրաստակամությունը՝ շարունակելու աջակցությունն Արցախին եւ ջանքեր ներդնելու՝ ի խնդիր այստեղ ապրող Մեր զավակներիդ խաղաղ ու բարօր կյանքի: Խոսուն օրինակը Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ տիար Պերճ Սեդրակյանի ներկայությունն է այստեղ, որը Մեզ հետ այցելել է ձեզ՝ վկայելու ազգանվեր այս հաստատության զորակցությունը:

Մենք, մեր ուժերը համախմբելով ի սփյուռս աշխարհի, ձեռնամուխ պիտի լինենք Արցախում ծանր պատերազմի հետեւանքով ավերակված տների, դպրոցների, հիվանդանոցների վերականգնմանը, մեր սրբատեղիների պահպանությանը: Միասնաբար պիտի սատար կանգնենք ձեզ՝ Արցախի հերոսական մեր ժողովրդին, որպեսզի նորոգեք ձեր կյանքը եւ ամուր մնաք հայրենի հողի վրա: Դա է ամենամեծ երաշխիքը մեր իրավունքների պաշտպանության եւ հեռանկարը գալիքի:


Հայրապետական Մեր պատգամն ենք բերում ձեզ, սիրելի՛ բարեպաշտ զավակներ Արցախի, եւ համայն մեր ժողովրդին, որ Աստծուն ապավինած, հույսով ու լավատեսությամբ յուրաքանչյուրս մեր տեղում, յուրաքանչյուրս մեր շափով նպաստենք Արցախի մեր ժողովրդի կյանքի վերազարթոնքին եւ իր հայրենի հողի վրա ազատ ու անկախ ապրելու արդար իրավունքների պաշտպանությանը: Անվերապահ նվիրումով եւ հանձնառություներով պիտի արժանի լինենք մեր խիզախ զավակներին, որոնք իրենց կյանքը նվիրեցին հայրենիքին՝ պաշտպանելով Արցախ եւ Հայաստան մեր հայրենիքը: Արդ, միասնաբար տոկանք ու համբերենք նեղություններին, հանձն առնենք զոհողություններ ու պիտի արժանանաք մեր Տիրոջ քաջալերական խոսքին. «Քանի որ պահեցիր Իմ համբերության խոսքը, ես էլ քեզ պիտի պահեմ քո փորձության ժամին...»:

Սիրելիներ, Աստվածաշունչ այս խոսքով եւ սրտաբուխ աղոթքով հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում Արցախի պետական ավագանուն, այստեղ ներկա Արցախի Հանրապետության վաստակյալ նախագահ տիար Բակո Սահակյանին, Արցախի թեմի հոգեւոր դասին՝ ի գլուխ թեմակալ առաջնորդի՝ մաղթելով ուժ եւ կորով եւ Աստծու զորակցությունն իրենց առաքելության ճանապարհին: Հայրական սիրով Մեր օրհնությունն ու բարձր գնահատանքն ենք բերում մեր բանակի քաջարի մարտիկներին եւ ռուսական խաղաղապահներին՝ աղոթքով, որ Տերը զորացնի եւ ապահով ու անվրդով պահի ու պահպանի նրանց իրենց ծառայության մեջ: Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում «Լույս» հիմնադրամին եւ ի մասնավորի ՀՀ վաստակյալ նախագահ տիար Սերժ Սարգսյանին՝ Ամարասի վանքի հիմնանորոգության կարեւոր հանձնառության համար: Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում ձեզ, սիրելի՛ զավակներ Արցախի: Աստծու շնորհները, օրհնությունն ու պահպանությունն ենք հայցում ձեր կյանքին, ձեր ընտանիքներին եւ ձեր գործերին:

Ամարասի այս նվիրական սրբավայրում հայցելով բարեխոսությունը Սուրբ Գրիգորիս Հայրապետի՝ աղոթենք միասնաբար, որ Աստված երկնային բարձունքներում խաղաղության մեջ հանգչեցնի հոգիները հայրենիքի պաշտպանության մարտերում զոհված մեր զավակների, ապաքինություն պարգևի վիրավորներին, շուտափույթ դարձ՝ գերիներին եւ անհայտ կորածներին, մխիթարություն՝ հարազատներ կորցրած ընտանիքներին: Թող Աստված օրհնի մեր ժողովրդի ջանքերը հանուն հայրենիքի եւ հանուն ազգային մեր իղձերի իրագործման: Թող Փրկիչ մեր Տիրոջ խաղաղությունը լինի ողջ աշխարհում, մեր հայրենիքում, մեր ժողովրդի կյանքում, այսօր եւ միշտ. ամեն:

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ՊԱՐԵԳԻՆ Բ.
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
ԱՐՑԱՆՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊԱՆՈՒԹՅԱՆ

(5 հունիսի, 2021 թ.)

Սիրելի՛ զինվորներ, սպաներ եւ հրամանատարներ,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից եկել ենք հայրական մեր սերն ու գնահատանքը բերելու ձեզ՝ հայրենյաց պաշտպաններիդ, եւ վերստին վկայելու այն հպարտության զգացումի մասին, որ իբրեւ Հայոց Հայրապետ ամեն անգամ ապրում ենք՝ կանգնելով ձեր առջեւ եւ տեսնելով ձեր քաջարի եւ աննկուն ոգին:

Մեր խոնարհումն ենք բերում հանուն Արցախ աշխարհի անկախության եւ Արցախի մեր ժողովրդի իրավունքների պաշտպանության պայքարած մեր քաջարի զինվորականներին եւ իրենց կյանքն ի սեր հայրենյաց զոհաբերած հերոսների հիշատակի առջեւ: Վճարված այդ թանկ գինը երբեք չպիտի մոռացվի, այլ այն պետք է դառնա մի նոր ուխտ Արցախի անկախ պետականության պաշտպանության եւ զորացման:

Դժվարին ժամանակներ է ապրում համայն հայությունը: Արցախի դեմ Թուրքիայի եւ միջազգային ահաբեկչական խմբավորումների օժանդակությամբ սանձազերծված Ադրբեջանի 44-օրյա պատերազմն իր հետեւանքներով, պատճառված վնասներով ու ահռելի կորուստներով դեռ երկար ժամանակ ցավի ու տրտմության մեջ պիտի պահի մեզ, քանի դեռ չենք կարողացել գործուն միջոցներով հաղթահարել առկա ծանր իրավիճակը եւ փարատել ապագայի հանդեպ անորոշության զգացումը: Առկա խնդիրներն ու մարտահրավերները մեր կյանքի իրենց լուծումները պիտի ստանան, երբ անխտիր ամենքս հետեւություններ կատարենք ողբերգական այս կացության պատճառների վերաբերյալ:

Սիրելիներ, Մենք հաղորդ ենք ձեր քաջությանը եւ հերոսական սխրանքներին: Զեր անձնուրաց պայքարի փառավոր դրվագներն ակամա մեզ տանում են դեպի մեր պատմության խորքերը, ուր բազում

փառավոր վկայություններ ենք գտնում ազգային մաքառումների, մեր նախնյաց արիասիրտ գործերի՝ հանուն ազատության, հանուն անկախ մեր պետականության եւ սրբազան մեր արժեքների պահպանության: Ավարայրից մինչեւ Սարգարապատ եւ Արցախ՝ բոլոր ժամանակներում դրսևորվել են այն հաստատ համոզումն ու գիտակցությունը, որ հայ զորականի թիկունքում ամենաթանկն են՝ հայրենի հողը, մեր ինքնությունը պայմանավորող սրբությունները եւ մեր ընտանիքը: Այս հերոսագործ ոգին սրբացրեց մեր ժողովուրդը՝ հետագա սերունդներին փոխանցելով հայրենյաց պաշտպան մարտիկների փառապանծ անուններ:

Սիրելի՛ զավակներ Մեր, պանծալի այդ անձինք իրենց ժամանակի մեջ առավել չէին, քան դուք այսօր: Ձեզ պես պարզ երիտասարդներ եւ այրեր էին հայրենասեր եւ ազգանվեր նույն խառնվածքով ու ձգտումներով, կյանքի նկատմամբ լցված նույն հույսերով եւ լուսավորին ու պայծառին հասնելու ջինջ ցանկությամբ: Առավել չէին նաեւ նրանց մաքառումի ոգին եւ նախանձախնդրությունը, քան արցախյան հողի վրա ձեր եղբայրների ու հայրերի անձնդիր հանձնառությունը:

Սակայն, առաքյալի խոսքի համաձայն, նրանք իրենց բարի պատերազմը պատերազմեցին, եւ այսօր նախնյաց կողմից մեր սերնդին է փոխանցված սրբազան պարտքը վառ պահելու մեր ինքնության կերոնը, նաեւ հաստատակամորեն կանգնելու հայրենիքի պաշտպանության առաջնագծում, որքան էլ որ դժվարին եւ ծանր լինի այդ առաքելությունը: Հայոց բանակը եւ հայ զինվորն են այսօր միակ երաշխավորը հայրենի պետականության, մեր ժողովրդի ազատ ու անկախ կյանքի, ձեր ընտանիքների ու սիրելիների անվտանգության ու երջանկության, ամեն ազգայինի հարատևության:

Այս հանձնառության մեջ Եկեղեցին մշտապես զորավիգ է եղել եւ այսուհետ եւս պիտի լինի Հայոց բանակին: Մխիթարական է Հայրապետիս համար, որ պատերազմի ամենածանր պահերին անգամ մեր եկեղեցականները եւ գնդերեցները հայ զինվորի կողքին են եղել առաջնագծում եւ խրամատում, իսկ աշխարհափյուռ մեր համայնքները՝ զորակցել եւ առկա կարիքներում օգնություն հասցրել:

Սիրելի՛ զինվորներ եւ սպաներ, Հայոց բանակի ոգին եւ հաղթական կամքն են աղբյուրը ազգի զորության եւ վստահության, մեր ժողովրդի ոգեշնչման եւ գալիք օրվա նկատմամբ լավատեսության: Ամուր եւ


անսասան մնացեք այս կոշման մեջ, եւ Փրկիչ մեր Տերը, հավատում ենք, պիտի պարգեւի մեզ նորանոր հաղթություններ:

Աղոթում ենք եւ հայցում, որ Աստված պահի եւ պահպանի ձեզ ամենքիդ ապահով եւ անփորձանք, որ ձեր աներեր ու զորավոր բազկով պաշտպանը լինեք հայրենի երկրի, մեր սահմանների, մեր սրբությունների, դեպի ձեզ ուղղված յուրաքանչյուր հուսառատ հայացքի եւ, կատարելով ձեր սրբազան պարտքը, վերադառնաք ձեր ընտանիքներ՝ շարունակելու ձեր նվիրական կյանքն ու գործը մեր հայրենական անդաստանում:

Թող ամենազոր Աստված ամրապնդի խաղաղությունը աշխարհում եւ Արցախ հայրենի մեր երկրում՝ Իր ամենահաս Սուրբ Աջի հովանու ներքո պարգեւելով մեր ժողովրդին ապահով եւ անվրդով կյանք:

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ԳԱՆՁԱՍԱՐԻ ՎԱՆՔՈՒՄ

(5 հունիսի, 2021 թ.)

Սիրելի՛ բարեպաշտ հավատավոր ժողովուրդ,

Արցախահայ Մեր սիրելի զավակներիդ այս անգամ այցելել ենք ծանր սրտով: Դեռ ամիսներ առաջ այստեղ զենքի թնդյուններն էին, ումբակոծությունների ավերածությունները, հայրենյաց պաշտպան մեր զոհված զավակների համար կսկիծն ու տխրությունը: Պատերազմի պատճառած այդ վերքերը հիմա էլ մեր հոգիներում են, համայն մեր ժողովրդի սրտում: Մեր ապրած տագնապալի օրերից հետո, երբ հնարավոր եղավ Մեր այցելությունն Արցախ, հայրական սիրո ջերմ զգացումներով ուղեւորվեցինք դեպի ձեզ: Բերել ենք ձեզ օրհնությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ողջույններն ու բարի մաղթանքներն աշխարհասփյուռ մեր ժողովրդի՝ ձեր քույրերի ու եղբայրների: Եկել ենք նվիրական այս հողից ու դարավոր մեր սրբավայրերից հավատավոր Մեր զավակների, Հայոց բանակի քաջարի զինվորների հետ աղոթք բարձրացնելու երկինք՝ Արցախի խաղաղության ու ապահովության համար: Սիրելիներ՛, այսօր Աստծու ողորմությամբ Արցախի նախագահ տիար Արայիկ Հարությունյանի, Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ տիար Պերճ Սեդրակյանի, մեր հոգեւորականաց եւ ձեզ հետ համախմբվել ենք Գանձասարի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու խնկաբույր կամարների ներքո՝ քրիստոնեական մեծ Սրբի՝ Սուրբ Հովհաննես Մկրտչի բարեխոսությունը հայցելու արցախահայության ու համայն մեր ժողովրդի խաղաղ, անվտանգ ու համերաշխ կյանքի համար:

Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, մարդկության փրկության համար մատնվեց չարչարանքների, նեղությունների ու մահվան: Արցախյան գոյամարտերում մեր զավակները քրիստոսանմանությամբ նահատակվեցին՝ վասն հայրենյաց ընծայաբերելով իրենց կյանքը: Մենք անցանք պատերազմի բովով, նեղությունների միջով: Բայց Փրկիչ մեր Տերը մեզ

պարգեւել է հարուստի շնորհը, որով պատմության բոլոր արհավիրքներից հառնել է մեր ժողովուրդը եւ վերընծյուղել իր նոր կյանքը: Մենք հավատում ենք, որ Տերը փորձությունների մեջ մեզ հետ է, եւ շարի հարվածները չեն կարողանալու խորտակել մեր հույսն ու կամքը, ապրելու ու հարատեւելու մեր զորութունը, մեր պետականութունը՝ կերտված մեր ժողովրդի զավակների կյանքի թանկ գնով:

Սիրելի արցախցի զավակներ Մեր, քաջալեր ենք ձեզանով, որ հակառակ ամեն դժվարության ու նեղության՝ ամուր կանգնած եք հարազատ հողին եւ անսասան հավատով ու հույսով կերտում եք ձեր նոր կյանքը: Պողոս առաքյալն ասում է, որ տկարության մեջ ավելանում է երկնային շնորհը՝ հարվածներին դիմակայելու, փորձությունները հաղթահարելու (հմմտ. Բ. Կորնթ. ԺԲ. 9, 10): Այս փորձությունը եւս, հավատում ենք, հաղթահարելու ենք համազգային միասնականությամբ ու համատեղ ջանքերով: Անարդարությունները, մեր ազգի դեմ ցեղասպան նոր գործողությունները, մեր սրբությունների, վանքերի ու եկեղեցիների հանդեպ ոտնձգություններն ու ավերումները մենք աներեր կամքով ու միաբանությամբ պիտի վերածենք ազգային վերազարթոնքի ու հզորության՝ ապահովելով Արցախի անկասելի առաջընթացը:

Սիրելիներ, մեր Սուրբ Եկեղեցին միշտ իր զորակցությունն է բերել Արցախին ու արցախահայությանը, քաջալերել ու ոգեշնչել փորձության ժամին: Վերջին պատերազմի ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից եւ տարբեր թեմերից հոգեւորականներ եւ մեր գնդերեցները մարտի դաշտում մեր զինվորների կողքին էին՝ անկոտրում պահելով ոգին մեր մաքառող ժողովրդի, միախառնվել նրանց Աստծու խոսքով, ճակատամարտերից առաջ Սուրբ Հաղորդություն մատուցելով, չմկրտված զինվորներին մկրտելով: Այսօր դժվարին պայմաններում Արցախի թեմը շարունակում է իր հոգեւոր խնամքը ծանր ժամանակներ ու մարտահրավերներ դիմագրավող արցախահայությանը: Այս առումով Մեր գնահատանքն ենք բերում Արցախի թեմի հոգեւոր դասին՝ թեմակալ առաջնորդի գլխավորությամբ:

Սիրելի արցախահայ զավակներ Մեր, հայրապետական Մեր հորդորն է, որ տոկուն մնաք, ամուր պահեք հավատքը, կապված լինեք ձեր հողին ու ջրին՝ նոր կյանք բխեցնելու հայրենի երկրում, այն շենացնելու եւ ձեր գործերով հզոր ու բարօր դարձնելու: Ամուր պահեցեք ձեզանում գիտակցությունն ու հիշողությունը, որ առ Աստված ապավինության մենք


հառնել ենք մեր պատմության գողգոթաներից եւ այս պատերազմի պատուհասներից էլ պիտի վեր բարձրանանք դեպի մեր կյանքի լուսավոր նոր հորիզոնները: Այս է պատգամը մեր նահատակ հերոսների, որոնք իրենց կյանքը տվեցին՝ ի սեր հայրենիքի ու ազգի:

Աղոթենք միասին մեր զոհված հերոսների հոգիների խաղաղության, վիրավորների ապաքինման, գերեվարված եւ անհայտ կորած մեր զավակների վերադարձի համար: Աղոթենք, որ Բարձրյալ Տերն իր օրհնությունն ու Սուրբ Աջի պահպանությունը միշտ հովանի դարձնի ազգային ու հայրենական մեր կյանքին եւ պարգևի հոգու ամրություն ու զորություն՝ դիմակայելու մեր առջեւ հառնած մարտահրավերները: Թող Աստծու խնամքի մեջ արգասավորվի ազգային մեր միաբանությունը հայրենիքում ու սփյուռքում՝ միասնական ջանքեր բերելու մեր կյանքի նորոգման, մեր իրավունքների պաշտպանության առաքելության մեջ:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերը, խաղաղությունն ու շնորհները թող միշտ լինեն մեզ հետ եւ ամենքի. ամեն:

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ՊԱՐԵԳԻՆ Բ.
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ
ՀԸՆԹԱՅՍ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ**

(6 հունիսի, 2021 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Կատարեալ՝ ի բարի զխնդրուածս մեր,
զի ի Քեզ եմք ապաւինեալ, եւ Քո առատ
ողորմութեամբդ մխիթարեալ՝ զմեզ»
(Ժամագիրք):

Սիրելի՛ հավատաւոր զավակներ Մեր,

Տիրոջ ողորմածութեամբ համախմբվել ենք Ստեփանակերտի Սուրբ Աստվածածին եկեղեցում՝ մեր միասնական աղոթքը վերառաքելու առ Աստված, որ Տերը մեզ ուժն ու զորութիւնը տա հաղթահարելու պատերազմի արհավիրքները, վեր ելնելու վշտերի ու տառապանքների ծանր շրջանից եւ վիրավոր մեր կյանքը նորոգելու տերունական օգնութեամբ: Համախմբվել ենք աղոթելու Հայաստան եւ Արցախ մեր աշխարհի խաղաղ ու ապահով կյանքի, հայրենի մեր պետութեանց զորացման ու բարօրութեան համար, ռազմի դաշտում անմահացած մեր հերոսների, խաղաղ բնակչության շրջանում մեր ունեցած զոհերի, պատերազմի ընթացքում վիրավորվածների, անհայտ կորածների, գերեվարված մեր զավակների համար: Ժամագրքի խոսքերով մեր սրտագին աղոթքն ենք վերառաքում երկինք եւ հայցում Տիրոջից. «Ի բարին կատարիր մեր խնդրանքները, քանզի Քեզ ենք ապաւինել, եւ Քո առատ ողորմութեամբ մխիթարիր մեզ»:

Սիրելիներ, այսօր տոնն է Սուրբ Էջմիածնի, որ հիմնվեց Աստծու Միածին Որդու էջքով հայոց հողի վրա 301 թվականին, երբ քրիստոնեությունը հռչակվեց պետական կրոն Հայաստանում: Այս լուսեղեն

իրողությունը վկայությունն է մեր ազգին տրված հարուստ շնորհի, Տիրոջ օգնությամբ մեզ պատուհասած փորձությունների հաղթահարման: Դարերի մեջ մենք շատ ծանր ու դժան ժամանակներ ենք ապրել, ավեր ու կոտորած, ցեղասպանություն տեսել, բայց միշտ առ Աստված ապավինությամբ հառնել ենք բարօր ապագա կերտելու ամուր կամքով եւ հույսով: Այսօր էլ մենք նույն հավատն ունենք, որ խաչյալ եւ հարուցյալ մեր Փրկչի շնորհով պիտի զորանանք եւ հաղթահարենք պատերազմի ծանր հարվածները՝ վեր ելնելով մեզ պատած նեղություններից դեպի մեր կյանքի նոր արեւաշող հորիզոններ:

Սիրելիներ, Արցախը հայրենի մեր բնօրրանի սրբազան մասն է, քրիստոնյա մեր ժողովրդի հարստությունը՝ իր պատմությամբ ու սրբություններով: Արցախի սիրով եք դուք ամուր եւ կանգուն ձեր հարազատ հողին, այդ ոգով եք վճռական՝ այստեղ ձեր կյանքը շարունակելու եւ նոր իրագործումներով բարեզարդելու: Դուք հիանալի օրինակն եք տվել այս նվիրական երկրում արիասիրտ սխրանքների ու աստվածահաճո արարումների: Դուք խիզախորեն պաշտպանել եք ձեր երկիր հայրենին, նորոգել ու պայծառացրել եք ձեր քաղաքներն ու շենքերը, ձեր այգեստանները, ձեր սրբավայրերը, նոր աղոթավայրեր կառուցել, որի լուսաշող վկայություններից մեկն է Սուրբ Աստվածածին հոյակերտ այս եկեղեցին: Մեր նախնյաց փորձառությունը եւ ոգին հավաստում են, որ մեզ պատուհասած ավերներն ու պատերազմի արհավիրքները եւ ոչ մի նեղություն չեն կարողանալու մեզ ընկճել եւ սասանել հայրենիքում անկախ ապրելու մեր հաստատակամությունը: Հայի ոգին չի ընկրկում դժվարությունների առջեւ, չի կոտրվում ցավից ու վշտից: Մենք ահասարսուռ պատուհասների հաղթահարումի ու մեր ազգի հարուստ փորձառությունն ունենք, որը մեզ ուժ է տալու այս նոր ժամանակներում եւս ելնել նոր արարումների, հավատալ մեր ապագային, հավատալ մեր հայրենիքի ու կյանքի զարթոնքին:

Սիրելիներ, վեր հառնելու ճանապարհին, պահելով հավատն առ Աստված եւ սերն առ հայրենին, մենք առավել պիտի զորանանք, առավել պիտի զորանա մեր կամքը ապրելու եւ արարելու նոր եռանդով ու ձեռքբերումներով: Մեր վերելքներով ու հաջողություններով է նաեւ, որ արժեւորելու ենք մեր նահատակների անձնագոհության ու հայրենանվիրումի մեծագույն սխրանքը: Պատերազմի ընթացքում մենք կորցրեցինք հարազատ երկրի զգալի մասը: Սակայն գիտենք՝ ձեր ոգին աննկուն է, եւ

հույսը՝ անջնջելի, որ հակառակ ամեն խոչընդոտի վերականգնելու եւ շենացնելու եք Արցախը: Արցախը մեր ժողովրդի իրավունքների պաշտպանության եւ ազատ ու անկախ ապրելու վճռականության խորհրդանիշն է: Մեր պատմական հայրենիքի այն նշխարը, որի վրա շարունակում ենք ապրել, պիտի հզորացնենք եւ դարձնենք անվտանգ ու բարգավաճող, ամուր պետականությամբ, համազգային միաբանությամբ, համընդհանուր ջանքերով: Հույսով ամուր մնացեք, հավատով՝ անսասան: Աննկուն եղեք նեղությունների հանդիման, մի՛ վհատվեք ընդդեմ դժվարությունների, այլ միաբան եղեք մարտահրավերների դիմագրավման եւ միասնական՝ փորձությունների հաղթահարման մեջ: Այս ծանր փորձությունից պետք է հետեւություն անենք՝ սխալներ թույլ չտալու, մեր ազգային միաբանությունը շտկարացնելու, գործելու ազգի ու հայրենիքի գերագույն շահով, մեծագույն պատասխանատվությամբ:

Այս պատգամով հայրական Մեր սերն ու օրհնություններն ենք բերում ձեզ եւ վստահեցնում, որ համայն մեր ժողովուրդը, մեր Սուրբ Եկեղեցին իր թեմերով ու կառույցներով ձեզ հետ է Արցախի խաղաղ ու ազատ կյանքը հաստատելու եւ կորուստները վերականգնելու ձեր ջանքերում: Դրա վկայությունը ներկայությունն է Պատարագի այս սրբազան արարողությանը Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ տիար Պերճ Սեդրակյանի, որն այցելել է ձեզ՝ հավաստելու, որ նվիրական այս հաստատությունը ազգային-եկեղեցական կյանքում իր ավելի քան մեկդարյա առաքելությամբ շարունակելու է զորակցությունը հայրենիքին, արցախահայությանը, ինչպես որ գովարժան ծառայություն է մատուցել անցնող տասնամյակներին, պատերազմի օրերին եւ հետպատերազմյան շրջանում: Հայրապետական Մեր բարձր գնահատանքն ենք բերում Հայկական բարեգործական ընդհանուր միությանը, ազգային-եկեղեցական անդաստանում շարունակական նպաստ բերող եւ պատերազմական դժվարին պայմաններում էլ Արցախին աջակցած մեր բարերար բոլոր զավակներին, աշխարհասփյուռ մեր ողջ ժողովրդին:

Արցախի սիրելի՛ հավատավոր զավակներ, հայրական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում ձեզ ամենքիդ, Արցախի պետական այրերին՝ ի գլուխ հանրապետության նախագահ տիար Արայիկ Հարությունյանի, ողջունում ենք Սրբազան Պատարագի արարողությանը ներկայությունը վաստակյալ նախագահների՝ տիար Արկադի Ղուկասյանի եւ տիար Բակո Սահակյանի՝ հայցելով Տիրոջ զորակցությունն ու

օգնականությունը պատերազմի հետեւանքների հաղթահարման, Արցախի կյանքի բնականոն ընթացքը վերահաստատելու կարեւոր գործում: Հայրական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում Պաշտպանության բանակի մեր սպաներին ու զինվորներին, որ անձնվիրումով կանգնած են հայրենյաց պաշտպանության դիրքերում: Արցախի յուրաքանչյուր զավակ հայրենյաց մարտիկ է եւ Արցախում իր կեցությամբ պահում է հայրենի երկիրը:

Մեր գնահատանքն ենք բերում Արցախի թեմի երկարամյա առաջնորդ Գերաշնորհ Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանին, Արցախի թեմի ներկայիս առաջնորդ Գերաշնորհ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանին եւ հոգեւոր դասին՝ Արցախի թեմը շենացնելու, հայորդյաց հավատքն ամրապնդելու, նաեւ պատերազմական ծանր շրջանում հավատավոր մեր զավակների հետ լինելու, նրանց քաջալերելու եւ մխիթարելու գովարժան ծառայության համար:

Մեր գնահատանքն ու շնորհակալությունն ենք հայտնում Ռուսաստանի Դաշնության իշխանություններին, նախագահ տիար Վլադիմիր Պուտինին՝ խաղաղության հաստատման ջանքերի համար, որով կանխվեցին մարդկային նոր կորուստները եւ հայկական բնակավայրերի ավերումները Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ պատերազմում: Մեր եղբայրական սերն ու շնորհակալությունն ենք հայտնում Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքին՝ խաղաղության հաստատման, ի մասնավորի Դադիվանքի հոգեւոր կյանքի անխաթար ապահովման գործում իր բերած ջանքերի համար: Մեր օրհնությունն ենք բերում Արցախում ռուս խաղաղապահներին եւ նրանց հրամանատարին՝ բարձրորեն գնահատելով նրանց առաքելությունը Արցախում անվտանգության ու իրավիճակի կայունության ապահովման գործում:

Սիրելիներ, Մենք Արցախ աշխարհ ենք բերել Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի մասունքները, որպեսզի մեր մեծ Հայրապետի օրհնությունը եւ տառապանքներ հաղթահարելու նրա զորությունը տարածվեն ձեր մեջ, եւ դուք զորանաք հավատքով ու լավատեսությամբ ձեր նոր կյանքը կերտելու ճանապարհին:

Մեր հայցն ենք բարձրացնում արցախյան պատերազմում զոհված մեր զինվորների համար՝ խնդրելով ամենագութ Տիրոջից հավերժ հանգստություն ու երանություն նրանց լույս հոգիներին: Վերստին մխիթարություն ենք հայցում զոհվածների հարազատներին, մեր բոլորի սրտերին


ու հոգիներին: Շուտափույթ վերադարձ ենք մաղթում գերիներին եւ անհայտ կորածներին, ապաքինում՝ վիրավորներին:

Ի խորոց սրտի աղոթում ենք առ Փրկիչը մեր՝ Հիսուս Քրիստոս, որ ամենազոր Իր Սուրբ Խաչի հովանու ներքո անսասան խաղաղության մեջ պահի Արցախի Հանրապետությունը: Թող Աստծու ողորմությամբ զորանան Արցախի թեմը եւ Մեր սիրելի արցախահայությունը՝ կերտելով ստեղծագործ ու զարգացող կյանքի նորանոր հաջողություններ: Կրկին խնդրում ենք Տիրոջը. «Ի բարին կատարիր մեր խնդրանքները, քանզի Քեզ ենք ապավինել, եւ Քո առատ ողորմությամբ մխիթարիր մեզ»:

Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերը, ողորմությունն ու խաղաղությունը միշտ լինեն ձեզ հետ եւ ամենքի, այսօր եւ միշտ. ամեն:

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ՎԱՐԵՊԻՆ Բ.
ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՕՍՔԸ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԱՐՏԱՅԵՐԹ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

(19 յունիսի, 2021 թ.)

Սիրելի՛ ժողովուրդ,


Մեր հայրենիքի համար վճռական օրուայ շեմին ենք։ Խորհրդարանական արտահերթ ընտրություններին մասնակցութեամբ որոշելու ենք մեր երկրի գալիքի կերտման ուղին։ Մենք ամէնքս ուզում ենք ապրել խաղաղ ու անվտանգ, կայուն զարգացող երկրում, հեռու ցնցումներից ու պառակտումներից եւ կառուցել մեր արժանապատիւ ու բարօր կեանքը ազգաշահ ու հայրենաշէն ձեռքբերումների վրայ։


Այսօր՝ մեզ պատուհասած ծանր կորուստների պայմաններում, առաւել, քան երբեւէ մենք պարտք ու պատասխանատուութիւն ունենք մեր անկախ պետականութեան պահպանման ու ամրապնդման, մեր հայրենիքի զօրացման համար։ Պատասխանատուութիւն ունենք մեր զոհուած նահատակների լուսավառ յիշատակի, մեր ներկայի ու գալիքի, մեր սերունդների առջեւ։ Ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփիւռս, մեր ժողովրդի առջեւ յառնած է հրամայականը՝ թօթափելու յետպատերազմեան եւ նախընտրական օրերին ստեղծուած լարուածութիւնը, վերահաստատելու համերաշխութիւնը։ Նաեւ կենսական անհրաժեշտութիւն է, որ յետընտրական շրջանում մեր երկրի ներքին կեանքն ընթանայ հանդարտութեան եւ ողջախոհութեան մթնոլորտում։ Երբեք եւ ոչ մի կերպ չեն կարող արդարացուել ազգը պառակտող գործողութիւնները եւ հասարակութեան մէջ թշնամանքի սերմանումը, բռնութեան ու հաշուեյարդարի կոչերը, բախումներ հրահրելը։ Հայրապետական Մեր յորդորն է, սիրելի՛ ժողովուրդ, զերծ մնալ ատելութեան խօսքից, անհանդուրժողականութիւնից, դրսեւորել զգօնութիւն, օրինայարգութիւն եւ նոր փորձութիւններով շփտանգել հայրենական մեր կեանքը։ Մեր պատմութեան նոր էջը կերտենք հաւատքով ու լաւատեսութեամբ, սիրով ու միասնականութեամբ։

Միշտ յիշենք, որ Հայաստանում կայուն իրավիճակով, մեր ամուր պետականութեամբ է նաեւ պայմանաւորուած Արցախի ապագան, արցախաբնակ մեր քոյրերի ու եղբայրների հիմնախնդիրների յաղթահարումը: Այս գիտակցութեամբ, այս ոգով ու յանձնառութեամբ մասնակցութիւն բերենք ընտրութիւններին, անտարբեր չմնանք մեր երկրի վաղուայ օրուայ հանդէպ, որպէսզի մեր ազգային ու հայրենական անդաստանում տեղ չգտնեն նեղութիւններ ու տառապանքներ, նոր արհաւիրքներ, որպէսզի միասիրտ ու միախորհուրդ յաղթահարենք ներքին ու արտաքին մարտահրաւէրները, կառուցենք հզօր ու պայծառ հայրենիք՝ խարսխուած մեր ինքնութիւնը պայմանաւորող ազգային ու հոգեւոր մեր արժէքների վրայ: Այս ընթացքով ի զօրու կլինենք առատացնել տէրունական օրհնութիւնը մեր կեանքում եւ Հայաստանում ու Արցախում մարմնաւորել մեր ժողովրդի բարօրութեան ու առաջընթացի լուսաւոր տեսիլքները:

Սիրելիներ, աղօթենք միասնաբար, որ առկայ ճգնաժամի յաղթահարման բոլոր ջանքերը Աստծոյ ողորմութեամբ պսակուեն բարի արդիւնքներով: Հայցենք, որ ամենախնամ Տէրը Իր շնորհների եւ օրհնութեան ներքոյ պահի ու պահպանի մեր հայրենիքն ու աշխարհասփիւռ մեր ողջ ժողովրդին, պարգեւի իմաստնութիւն ու զօրութիւն, խաղաղ ու ապահով կեանք Իր ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքոյ:

Աստծոյ սէրը, օրհնութիւնն ու ողորմութիւնը մեր հայրենիքին ու մեզ ամէնքիս, ամէն:





Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԸ
ՍՅՈՒՆԻՔ ԵՒ ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

(3–6 հունիսի, 2021 թ.)

Հ Ո Ւ Ն Ի Ս Ի 3

Նունիսի 3-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական քառօրյա այց կատարեց Սյունիքի մարզ եւ Արցախի Հանրապետություն: Այցի ընթացքում նորին Սրբությանն ուղեկցում էին հատուկ հանձնարարություններով հայրապետական նվիրակ Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, Մայր Աթոռի վանական խորհրդի ատենապետ եւ լուսարարապետ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը, Գեորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Մեսրոպ վարդապետ Պարսամյանը, Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանման հարցերով գրասենյակի տնօրեն Տ. Գարեգին վարդապետ Համբարձումյանը, ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Տ. Մովսես վարդապետ Սարգսյանը եւ Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Վահրամ ավագ քահանա Մելիքյանը: Վեհափառ Հայրապետի հետ Արցախ մեկնեց նաեւ Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ տիար Պերճ Սեդրակյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորած պատվիրակությանը Գորիսի «Զանգեր» հուշարձանի մոտ դիմավորեցին Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Մակար վարդապետ Հակոբյանը՝ թեմի հոգեւոր դասի հետ միասին, Գորիսի համայնքապետ Առուշան Առուշանյանը, Սիսիանի համայնքապետ Արթուր Սարգսյանը, Քաջարանի համայնքապետ Մանվել Փարամազյանը, զինվորականներ եւ Գորիսի համայնքայիններ: Ավանդական աղուհացի արարողությունից հետո Ամենայն Հայոց

Կաթողիկոսն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներին եւ հավաքված ժողովրդին: Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀԲԸՄ նախագահի եւ հոգեւոր դասի հետ միասին մեկնեց Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցի, որտեղ Հայոց Հայրապետին դիմավորեցին Գորիսի բնակիչներ եւ զինվորներ: «Հրաշափառ» շարականի երգեցողության ներքո Վեհափառ Հայրապետը, իր օրհնությունը բաշխելով հավատավոր ժողովրդին, մուտք գործեց տաճար, ուր սաղմոսերգությունից եւ աղոթքից հետո կատարվեց Հանրապետական մաղթանք Հայաստանի եւ Արցախի անսասանության, Սյունյաց աշխարհի եւ նրա ժողովրդի անվտանգ, խաղաղ ու բարօր կյանքի համար: Արարողության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր պատգամն ուղղեց ներկա ժողովրդին. «Սիրելի՛ սյունեցի հավատավոր զավակներ Մեր, այցելել ենք ձեզ հետպատերազմյան դժվարին իրավիճակի, դառը հարվածների եւ նեղությունների դիմագրավման այս ժամանակահատվածում: Եկել ենք ի մոտո հաղորդ լինելու ձեր մտահոգություններին ու խնդիրներին, նաեւ հայրապետական Մեր գնահատանքն ու օրհնությունը վերստին բերելու ձեզ:

...Մենք փաշատեղյակ ենք ազգային-հայրենական մեր կյանքի այս վնասն ու շրջանում ձեզ պատած դժվարությունների, ձեր առջեւ ծառացած մարտահրավերների մասին: Արցախյան վերջին պատերազմում մեր թանկագին զավակները նահատակվեցին, ունեցանք վիրավորներ, անհայտ կորածներ, գերեվարվածներ, տասնյակ հազարավոր տեղահանված խաղաղ բնակիչներ: Տարածֆային կորուստների պատճառով նաեւ Սյունյաց աշխարհի բնակավայրեր սահմանամերձ դարձան Ադրբեջանի հետ՝ դրանից բխող խիստ մտահոգիչ հետեւանքներով: Ադրբեջանը սանձարձակ ոտնձգություններ է կատարում նաեւ Հայաստանի սահմանների նկատմամբ, մասնավորապես Սյունիքի, Գեղարքունիքի գյուղական որոշ համայնքների տարածքների հանդեպ», — ասաց Հայրապետը:

«Սիրելիներ՛, խոռվի մեջ է ամենփա հոգին, խոռվի մեջ է համայն հայությունը: Սյունյաց աշխարհի Մեր զավակներից ստեղծագործ ու խաղաղ կյանքի բնականոն ընթացքն է խաթարված, ավելին՝ ապահովության ու անվտանգության լրջագույն խնդիրն է հառնած: Սակայն Մենք գիտենք, որ ձեր ոգին անկոտրում է, ձեր հարազատ հողին կապվածությունը, հայրենասիրությունն ու ազգամիջոցումն ամուր են ձեր սրտերում ու հոգիներում: Դուք ձեր պապերից ու հայրերից ժառանգել եք փառքն ու կորով՝ օրհասական

հանգամանքներում ձեր հայրենի տունն ու օջախը պաշտպանելու, ամասասան լինելու հայրենյաց պաշտպանության դիրքերում եւ արիաբար կանգուն մնալու հարազատ հռչին: Այս փորձությունը եւս, ֆաշարի՝ սյունեցիներ, ազգովի կհաղթահարենք՝ միայն թե մեր հերոս նախնիների ոգեշունչ պատգամի համաձայն՝ մեր արիության ու ֆաշության մեջ վախկոտություն չխառնենք, ամուր պահենք մեր նվիրումը հայրենիքին ու մեր սրբազան արժեքներին: Հաստատուն մնանք հավատի մեջ, անկոտրում՝ նեղությունների ու դժվարությունների առջեւ: Ամուր պահենք միմյանց հանդեպ փոստոսապատվեր սերն ու հզոր միասնությունը, որի առջեւ նահանջում են փորձությունները եւ զորամուր ու ամրապնդվում է լավատեսության ոգին», — *ասաց Նորին Սրբությունը՝ հավելելով, որ Հայոց Եկեղեցին եւ եկեղեցականները հանապազօրյա իրենց աղոթքով ու ծառայութեամբ սյունեցիների կողքին են՝ Աստծու խոսքով զորացնելու, դժվարությունների ու փորձությունների մեջ Տիրոջ օգնության խոստումը փոխանցելու, նրանց խիզախությունն ամուր պահելու:*

Վեհափառ Հայրապետը տեղեկացրեց նաեւ, որ Հայոց Եկեղեցին թե՛ պատերազմի ընթացքում եւ թե՛ հետպատերազմյան օրերին իր ձայնն է բարձրացրել միջազգային, միջեկեղեցական, միջկրոնական ատյաններում Արցախի եւ Հայաստանի դեմ իրականացվող ոտնձգությունները խստորեն դատապարտելու կոչով, գերիների ազատ արձակման համար հրատապ աշխատանքներ իրականացնելու հորդորով եւ ի պաշտպանություն Արցախի մեր ժողովրդի ազատ ու անկախ կյանքի արդար իրավունքի: Այցի առիթով Նորին Սրբությունն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց Սյունիքի մարզային իշխանություններին, համայնքապետերին, որոնք եւ այսօր, ինչպես պատերազմական դժվարին օրերին, համայնքների բնակիչների հետ ամուր կանգնած են հայրենիքի պաշտպանության դիրքերում: Հայրապետական գնահատանք եւ օրհնություն փոխանցվեց նաեւ Սյունյաց թեմի հոգեւոր սպասավորներին՝ առաջնորդական տեղապահի գլխավորությամբ, հավատավոր մեր ժողովրդի հավատն ու ոգին ամուր պահելու, Աստծու խոսքով հավատավոր իրենց հոտին զորացնելու ու մխիթարելու, սահմանամերձ դարձած բնակավայրերում արիասիրտ ծառայությունը շարունակելու համար: Վերջում Հայոց Հայրապետը հայցեց, որ Բարձրյալ Տերը օգնական ու զորակից լինի ամենքին՝ մեր ժողովրդի իրավունքների պաշտպանության գործում ճշմարտությունը ճանաչելի դարձնելու եւ արդարության հասնելու ջանքերն արդյունավորելու: Նորին Սրբությունը նաեւ աղոթեց, որ Աստված խաղաղ ու անվրդով

պահի հայրենի մեր երկիրը, եւ Տիրոջ պահապան Սուրբ Աջի առջեւ նահանջեն բոլոր չարիքներն ու փորձանքները մեր կյանքից:

Արարողությունից հետո հայրապետական պատվիրակությունը համայնքապետերի ուղեկցությամբ այցելեց Գորիսի զինվորական պանթեոն, ուր Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանը ծաղկեպսակներ զետեղեցին անմար կրակի եւ հիշատակի խաչքարի առջեւ, ապա արցախյան երկրորդ պատերազմում զոհված քաջորդիների շիրիմների առջեւ Նորին Սրբության գլխավորությամբ հոգեւոր դասն աղոթեց նրանց հոգիների հանգստության համար:

Նույն օրն Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատվիրակությամբ այցելեց Շուռնուխի սահմանամերձ համայնք, ուր Հայոց Հայրապետին դիմավորեցին համայնքի ղեկավար Հակոբ Արշակյանը եւ համայնքի բնակիչները: Փոխանցելով ժողովրդին իր հայրական սերն ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունը՝ Նորին Սրբությունն իր զորակցությունը բերեց շուռնուխցիներին: Վեհափառը նշեց, որ սյունեցիներն ազգային-ազատագրական պայքարում իրենց աննկուն ու անպարտ ոգու շնորհիվ դարերի մեջ քաջերի համբավ են վաստակել, եւ մեր օրերում եւս սահմանին սյունյաց քաջերի ինքնակազմակերպված խմբերի դրսևորած արիությունն ու հայրենի հողը պաշտպանելու հարցում սկզբունքայնությունը եւս այդ ոգու անուրանալի արտահայտությունն են:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀԲԸՄ նախագահը բնակիչների հետ զրուցեցին տիրող անհանգստությունների ու առկա խնդիրների, կյանքի բնականոն ընթացքի խաթարման եւ վտանգների մասին: Իր զրույցում Նորին Սրբությունը հավաստիացրեց, որ Հայոց Եկեղեցին պիտի շարունակի ջանքեր գործադրել բարձրաձայնելու սահմանամերձ համայնքներում բնակվող մեր ժողովրդի խնդիրները եւ հետամուտ լինելու իրավունքների պաշտպանությանը, ապա հորդորեց նախնյաց օրինակով ամուր եւ աննահանջ մնալ իրենց հավատի եւ հույսի մեջ՝ կառչած հարենի հողին, իրենց օջախներին: Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց նաեւ շուռնուխցիների տներ, զրուցեց ընտանիքների հետ, ծանոթացավ առկա դժվարություններին: Նորին Սրբությունը նաեւ իր օրհնություններն ու բարեմաղթանքները բերեց շուռնուխցի նորապսակ մի զույգի, որ, տեղեկանալով Հայոց Հայրապետի այցի մասին, մասնավոր ցանկություն էր հայտնել արժանանալու հայրապետական օրհնության:

Վերադարձին Ամենայն Հայոց Կաթողիկոսը զրույց ունեցավ համայնքապետերի հետ, որոնց թվում էր նաեւ Կապանի համայնքապետ Գեորգ Փարսյանը: Իսկ երեկոյան Հայոց Հովվապետը հանդիպում ունեցավ Սյունյաց թեմի հոգեւոր դասի հետ՝ եկեղեցականներին վերստին բերելով իր հայրական օրհնությունն ու գնահատանքը՝ իրենց նվիրյալ ծառայության համար: Հանդիպմանը քննարկվեցին հետպատերազմյան շրջանում՝ առկա դժվարին իրավիճակում, եկեղեցու կողմից ձեռնարկվող քայլերի, իրականացվող սոցիալական, հոգեխնամ ծրագրերին: Նորին Սրբությունը թեմի հոգեւոր սպասավորների ուշադրությունը մասնավորապես հրավիրեց զոհվածների, անհայտ կորածների եւ գերության մեջ գտնվողների ընտանիքներին, վիրավորներին եւ նրանց հոգեւոր խնամքին:

Հ Ո Ւ Ն Ի Ս Ի 4

Հունիսի 4-ին, ավարտելով իր այցը Սյունյաց թեմ, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եռօրյա այցով մեկնեց Արցախ: Այցի առիթով Վեհափառ Հայրապետն Արցախ է տարել Մայր Աթոռում պահվող մեր հավատի հայր Սուրբ Գրիգոր Լուսավորչի մասունքները՝ որպես օրհնության եւ մխիթարության աղբյուր Արցախի բարեպաշտ ժողովրդի համար:

Ամենայն Հայոց Հայրապետի շքախմբին եւ ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանի գլխավորած պատվիրակությանը սահմանի վրա դիմավորեցին Արցախի թեմի առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը՝ թեմի եկեղեցականների հետ, եւ ուսաստանյան խաղաղապահ ուժերի հրամանատարի տեղակալ գնդերեց Բորիս քահանա Գրիշինը:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետն ուղեւորվեց Ստեփանակերտ, ուր այցելեց եղբայրական գերեզմանոց: Հուշարձանի առջեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմավորեցին Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը եւ կառավարության անդամները: Անմար կրակի առջեւ ծաղկեպսակ գետեղելուց եւ հարգանքի տուրք մատուցելուց հետո Նորին Սրբությունը հոգեւոր դասի հետ աղոթք բարձրացրեց առ Աստված արցախյան երկրորդ պատերազմում զոհված հայ քաջորդիների հոգիների հանգստության համար: Երկրի ղեկավարության ուղեկցությամբ Հայոց Հայրապետն այցելեց նաեւ նահատակ զինվորականների շիրիմներին:

Նույն օրն Ամենայն Հայոց Կաթողիկոսը ԱՀ վաստակյալ նախագահ Բակո Սահակյանի եւ հոգեւոր դասի ուղեկցությամբ այցելեց Ամարասի վանք, որտեղ Նորին Սրբությանը դիմավորեցին մոտակա համայնքներից այս առիթով համախմբված հայորդիները եւ զինծառայողներ: Ս. Գրիգորիսի եկեղեցում «Հրաշափառի» արարողությունից հետո Գարեգին Բ. Հայրապետի նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն հայրենիքի պաշտպանության համար նահատակված հերոս զավակների հոգիների խաղաղության համար: Միասնական աղոթք բարձրացվեց հայցով, որ ամենողորմ Աստված խաղաղության ու ապահովության մեջ պահպանի Արցախը եւ Իր անսահման ողորմածությունն ու Սուրբ Աջի պահպանությունը տարածյալ պահի արցախահայոց եւ համայն հայ ժողովրդի վրա: Վերջում Նորին Սրբությունն իր օրհնությունն ու պատգամը բերեց ներկա ժողովրդին. «Սիրելիներ, հայրական սիրո ջերմագին զգացումներով եմ ուղեւորվել դեպի ձեզ՝ առ մեր Սուրբ եկեղեցու հավատավոր զավակներդ, տազնապալի օրերից հետո գոտեպնդվելու միայնացով, զորանալու մեր Տիրոջ խոսքով, որ խոստանում է՝ ասելով. «Քանի որ պահեցիր Իմ համբերության խոսքը, ես էլ քեզ պիտի պահեմ քո փորձության ժամին...» (Հայտ. Գ. 10): Մեր Տեր Հիսուս Քրիստոսի այս խոստումը, որ կոչում է մեզ համբերության եւ հավատարմության, պիտի օգնի առաջ ընթանալու եւ հառնած դժվարություններն ու նեղությունները, ցավն ու վիշտը հաղթահարելու: Ծանր փորձությունը, որի միջով անցանք, եւ հիմնախնդիրները, որոնք մեր առջեւ են, չեն կարող մատնել մեզ հուսալքության, այլ ընդհակառակը՝ պիտի առավել համախմբեն ու ամրացնեն մեզ, առավել պիտի իմաստնացնեն մեզ՝ դասեր փառելու սխալներից եւ սքափ գնահատելու իրավիճակները: Փորձության ու նեղության ժամին հատկապես առավել անհրաժեշտ է, որ մենք լիենք համախմբված, հավատարիմ մնանք մեր հայրերի հավատքին, մեր Տեր Հիսուս Քրիստոսին, դառն շարունակ մեր ժողովրդի արյուն-փրփրով սրբացած մեր հայրենիքին՝ անխախտ հավատով, որ Տերը մեզ հետ է նաեւ մեր փորձության ժամին եւ պարգևում է մեզ վեր հառնելու զորությունը:

Դուք, Արցախի փառազոհ զավակներ, այսօր արի հոգով ու հաստատակամ կանգնած եք մնում հայրենի հողին, որի յուրաքանչյուր թիզը վկան է մեր պատմության, փրստոնեական մեր ինքնության, մեր ստեղծարար կյանքի եւ խաղաղության ու արդարության մեր ազնիվ ձգտումների: Արցախը, որ նվիրական մասն է մեր բնօրրան հայրենիքի, բնօրրան է նաեւ փրստոնեության», — ասաց Հայոց Հովվապետը՝ նշելով, որ Արցախում են քարոզել

Սուրբ Թադեոս առաքյալի Դագի եւ Եղիշա աշակերտները, Արցախում է քրիստոնեության լույսը տարածել եւ ծաղկուն տարիքում նահատակվել Սուրբ Գրիգոր Լուսավորչի թողած՝ Սուրբ Գրիգորիս Հայրապետը, Արցախում է Սուրբ Մեսրոպ Մաշտոցը բացել առաջին դպրոցներից մեկը, Արցախում են հազարավոր մեր սուրբ նահատակների մասունքները եւ նրանց վրա բարձրացած վանքերն ու եկեղեցիները:

«Այսօր սրբազան այս հողի վրա ձեր ներկայությունը, սիրելիներ, դժվարությունները հաղթահարելու ձեր հանձնառությունն ու նախանձախնդրությունը ոգեշնչում են համայն մեր ժողովրդին աշխարհի բոլոր կողմերում: Արցախը, այո՛, շարունակում է մնալ մեր ժողովրդի հավատքի ու հայրենասիրության խորհրդանիշը եւ շարունակում է միավորել մեր ժողովրդին ազգային իդեաների շուրջ: Անմվագ է մեր ժողովրդի պատրաստակամությունը՝ շարունակելու աջակցությունն Արցախին եւ ջանքեր ներդնելու՝ ի խնդիր այստեղ ապրող Մեր զավակների՝ իրավունքների պաշտպանության», — ընդգծեց Հայրապետը՝ կարեւորելով ազգի ու ժողովրդի համախմբումն Արցախում ծանր պատերազմի հետեւանքով ավերակված տների, դպրոցների, հիվանդանոցների վերականգնման, սրբատեղիների պահպանության գործում: Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատգամեց արցախցիներին եւ համայն հայ ժողովրդին՝ Աստծուն ապավինած, հույսով ու լավատեսությամբ յուրաքանչյուրն իր տեղում, յուրաքանչյուրն իր չափով նպաստել Արցախի, մեր ժողովրդի կյանքի վերազարթոնքին եւ իր հայրենի հողի վրա ազատ ու անկախ ապրել արդար իրավունքների պաշտպանությանը: Նորին Սրբությունը նշեց, որ, միասնաբար տոկալով ու համբերելով նեղություններին, հանձն առնելով զոհողություններ, անվերապահ նվիրումով եւ հանձնառություններով պիտի արժանի լինենք մեր խիզախ զավակներին, որոնք իրենց կյանքը նվիրեցին՝ պաշտպանելով Արցախ եւ Հայաստան մեր հայրենիքը:

Վհահափառ Հայրապետը Աստծու շնորհները, օրհնությունն ու պահպանությունը մաղթեց արցախցիներին՝ Ամարասի նվիրական սրբավայրում հայցելով բարեխոսությունը Սուրբ Գրիգորիս Հայրապետի եւ աղոթելով, որ Աստված երկնային բարձունքներում խաղաղության մեջ հանգչեցնի հոգիները հայրենիքի պաշտպանության մարտերում զոհված հայորդիների, ապաքինություն պարգևի վիրավորներին, շուտափույթ դարձ՝ գերիներին եւ անհայտ կորածներին, մխիթարություն՝ հարազատներ կորցրած ընտանիքներին: Նորին Սրբությունը հայցեց, որ Աստված

օրհնի մեր ժողովրդի ջանքերը հանուն հայրենիքի եւ հանուն ազգային մեր իղձերի իրագործման:

Իր օրհնությունը ժողովրդին բաշխելուց հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոնարհումը բերեց Ս. Գրիգորիս Հայրապետի շիրիմին, ապա ծանոթացավ Ամարասի վանքի հիմնանորոգման աշխատանքներին: Այնուհետեւ հայրապետական պատվիրակությունն ուղղվեց դեպի Մաճկալաշեն համայնք, ուր Ամենայն Հայոց Հայրապետը հանդիպում ունեցավ համայնքի զոհված հայորդիների ընտանիքների հետ՝ բերելով իր մխիթարությունն ու օրհնությունը:

Հ Ո Ւ Ն Ի Ս Ի 5

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Արցախի Հանրապետություն հայրապետական այցի երկրորդ օրն սկսվեց Արցախի պաշտպանության բանակի N զորամաս այցելությամբ: ԱՀ նախագահ Արայիկ Հարությունյանի եւ հոգեւորականաց պատվիրակության ուղեկցությամբ ժամանելով զորամաս՝ Նորին Սրբությունն իր օրհնությունն ու հայրական բարեմաղթանքները բերեց հրամանատարական, սպայական կազմերին եւ այս առիթով հավաքված զինվորներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոնարհումը բերեց հանուն Արցախի անկախության եւ Արցախի մեր ժողովրդի իրավունքների պաշտպանության պայքարած քաջարի զինվորականներին եւ իրենց կյանքն ի սեր հայրենյաց զոհաբերած հերոսների հիշատակի առջեւ՝ ընդգծելով, որ վճարված այդ թանկ գինը երբեք չպիտի մոռացվի, այլ պետք է դառնա մի նոր ուխտ՝ Արցախի անկախ պետականության պաշտպանության եւ զորացման. «Դժվարին ժամանակներ է ապրում համայն հայությունը: Արցախի դեմ Թուրքիայի եւ միջազգային ահաբեկչական խմբավորումների օժանդակությամբ սանձազերծված Ադրբեջանի 44-օրյա պատերազմն իր հետեւանքներով, պատճառված վնասներով ու ահռելի կորուստներով դեռ երկար ժամանակ ցավի ու տրտմության մեջ պիտի պահի մեզ, քանի դեռ չենք կարողացել գործուն միջոցներով հաղթահարել առկա ծանր իրավիճակը եւ փարատել ապագայի հանդեպ անորոշության զգացումը: Առկա խնդիրներն ու մարտահրավերները մեր կյանքի իրենց լուծումները պիտի ստանան, երբ

անխափր ամենա հետեւություններ կատարեմք ողբերգական այս կացության պատճառների վերաբերյալ»,— *ասաց Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը նշեց նաեւ, որ հաղորդ է հայ զինվորականների քաջությանն ու հերոսական սխրանքներին, անձնուրաց պաշարի փառավոր դրվագներին՝ ընդգծելով, որ Ավարայրից մինչեւ Սարգարապատ եւ Արցախ՝ բոլոր ժամանակներում դրսեւորվել են այն հաստատ համոզումն ու գիտակցությունը, որ հայ զորականի թիկունքում ամենաթանկն են հայրենի հողը, հայի ինքնությունը պայմանավորող սրբությունները եւ ընտանիքը.*

«Այս հերոսագործ ոգին սրբացրեց մեր ժողովուրդը՝ հետագա սերունդներին փոխանցելով հայրենյաց պաշտպան մարտիկների փառապանծ անուններ:

Սիրելի՛ գավակներ Մեր, պանծալի այդ անձինք իրենց ժամանակի մեջ առավել չէին, քան դուք այսօր: Ձեզ պես պարզ երիտասարդներ եւ այրեր էին՝ հայրենասեր եւ ազգամկեր նույն խառնվածքով ու ձգտումներով, կյանքի նկատմամբ լցված նույն հույսերով եւ լուսավորին ու պայծառին հասնելու ջինջ ցանկությամբ: Առավել չէին նաեւ նրանց մաքառումի ոգին եւ նախանձախնդրությունը, քան արցախյան հողի վրա ձեր եղբայրների ու հայրերի անձնդիր հանձնառությունը:

Սակայն, առաջալի խոսքի համաձայն, նրանք իրենց բարի պատերազմը պատերազմեցին, եւ այսօր նախնյաց կողմից մեր սերնդին է փոխանցված սրբազան պարտքը վառ պահելու մեր ինքնության կերոնը, նաեւ հաստատակամորեն կանգնելու հայրենիքի պաշտպանության առաջնագծում, որքան էլ որ դժվարին եւ ծանր լինի այդ առաքելությունը: Հայոց բանակը եւ հայ զինվորն են այսօր միակ երաշխավորները հայրենի պետականության, մեր ժողովրդի ազատ ու անկախ կյանքի, ձեր ընտանիքների ու սիրելիների անվտանգության ու երջանկության, ամեն ազգային հարատւության»,— *իր խոսքում ընդգծեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:*

Վեհափառ Հայրապետը հաստատեց, որ Եկեղեցին մշտապես զորավիգ է եղել եւ այսուհետ եւս պիտի լինի Հայոց բանակին՝ հավելելով, որ անգամ պատերազմի ամենածանր պահերին եկեղեցականները եւ գնդերեցները հայ զինվորի կողքին են եղել, իսկ աշխարհասփյուռ համայնքները զորակցել եւ առկա կարիքներում օգնություն հասցրել. «Սիրելի՛ զինվորներ եւ սպաներ, Հայոց բանակի ոգին եւ հաղթական կամքն են աղբյուրը ազգի գոության եւ վստահության, մեր ժողովրդի ոգեշնչման եւ գալիք օրվա նկատմամբ լավատեսության: Ամուր եւ անասան մնացեք այս կոչման

մեջ, եւ Փրկիչ մեր Տերը, հավատում ենք, պիտի պարգևի մեզ նորանոր հաղթություններ», — պատգամեց Գարեգին Բ. Հայրապետը՝ հայցելով Աստծուց պահել եւ պահպանել զինվորականներին ապահով եւ անփորձանք, որպեսզի իրենց աներեր ու զորավոր բազկով պաշտպանը լինեն հայրենի երկրի, մեր սրբությունների եւ, կատարելով իրենց սրբազան պարտքը, վերագառնան իրենց ընտանիքներ՝ շարունակելու իրենց նվիրական կյանքն ու գործը հայրենական անդաստանում: Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Պահպանիչ աղոթքով օրհնեց ՊԲ հրամանատարներին եւ ներկա ողջ զինվորականությանը:

Զորամաս այցելությունից հետո Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Արցախի թեմի առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի եւ Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանի հետ, ուղեկցությամբ հոգեւոր դասի, այցելեց Գանձասարի վանք: Վանքի առջեւ Հայոց Հովվապետին դիմավորեցին վանահայր Տ. Սահակ վարդապետ Շաքարյանը, զինվորականներ եւ հարակից համայնքների բնակիչներ: «Հրաշափառի» արարողությամբ եկեղեցականաց թափորը Նորին Սրբությանն առաջնորդեց Ս. Հովհաննես Մկրտչի մասունքներն ամփոփող պատմական տաճար, ուր, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հայրապետական մաղթանք: Սուրբ Հովհաննես Մկրտչի բարեխոսության հայցով ներկա բարեպաշտ ժողովուրդը Հայոց Հայրապետի հետ միասին աղոթեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անսասանության, Հայաստանի ու Արցախի Հանրապետությունների խաղաղության եւ արցախահայության ու համայն մեր ժողովրդի խաղաղ, անվտանգ ու համերաշխ կյանքի համար: Արարողության ավարտին Վեհափառն իր պատգամը բերեց ներկաներին՝ ամենքին փոխանցելով օրհնությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ողջույններն ու բարի մաղթանքները աշխարհասփյուռ մեր ժողովրդի. «Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, մարդկության փրկության համար մատնվեց չարչարանքների, նեղությունների ու մահվան: Արցախյան գոյամարտերում մեր զավակները քրիստոսամանությամբ նահատակվեցին՝ վասն հայրենյաց ընծայաբերելով իրենց կյանքը: Մենք անցանք պատերազմի բովոյ, նեղությունների միջով: Բայց Փրկիչ մեր Տերը մեզ պարգևել է հաղթության շնորհը, որով պատմության բոլոր արհավիրքներից հառնել է մեր ժողովուրդը եւ վերենծյուղել իր նոր կյանքը: Մենք հավատում ենք, որ Տերը փորձությունների մեջ մեզ հետ է, եւ չարի հարվածները չեն կարողանալու խորտակել

մեր հույսն ու կամքը, ապրելու ու հարատևելու մեր գործությունը, մեր պետականությունը՝ կերտված մեր ժողովրդի զավակների կյանքի թանկ գնով:

Սիրելի՛ արցախցի զավակներ Մեր, փառալեր ենք ձեզանով, որ հակառակ ամեն դժվարության ու նեղության՝ ամուր կանգնած եք հարազատ հողին եւ անասան հավատով ու հույսով կերտում եք ձեր նոր կյանքը: Պողոս առաքյալն ասում է, որ տկարության մեջ ավելանում է երկնային շնորհը հարվածներին դիմակայելու, փորձությունները հաղթահարելու (հմմտ. Բ. Կորնթ. ԺԲ. 9, 10): Այս փորձությունը եւս, հավատում ենք, հաղթահարելու ենք համագլխին միասնականությամբ ու համատեղ ջանքերով: Անարդարությունները, մեր ազգի դեմ ցեղասպան նոր գործողությունները, մեր սրբությունների, վանքերի ու եկեղեցիների հանդեպ ռազմագործունեությունն ու ավերումները մենք աներեւ կամքով ու միաբանությամբ պիտի վերածենք ազգային վերագարթոնքի ու հգործության՝ ապահովելով Արցախի անկասելի առաջընթացը», — *ասաց Վեհափառ Հայրապետը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը խոսեց նաեւ Հայոց եկեղեցու կողմից Արցախին ու ժողովրդին ցուցաբերվող մշտական զորակցության, վերջին պատերազմի ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ տարբեր թեմերից հոգեւորականների եւ զնդերեցների կարեւոր առաքելության մասին՝ նշելով նաեւ, որ այսօր դժվարին պայմաններում Արցախի թեմը շարունակում է իր հոգեւոր խնամքը ծանր ժամանակներ ու մարտահրավերներ դիմագրավող արցախահայությունը:*

Խոսքն ուղղելով Արցախի հավատավոր ժողովրդին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատգամեց տոկուն մնալ, ամուր պահել հավատքը, կապված լինել հողին ու ջրին՝ նոր կյանք բխեցնելու հայրենի երկրում, այն շենացնելու եւ իրենց գործերով հզոր ու բարօր դարձնելու. «Ամուր պահեցեք ձեզանում գիտակցությունն ու հիշողությունը, որ առ Աստված ապավինությամբ մենք հառնել ենք մեր պատմության գողգոթաներից եւ այս պատերազմի պատուհասներից էլ պիտի վեր բարձրանանք դեպի մեր կյանքի լուսավոր նոր հորիզոնները: Այս է պատգամը մեր նահատակ հերոսների, որոնք իրենց կյանքը տվեցին՝ ի սեր հայրենիքի ու ազգի», — շեշտեց Նորին Սրբությունը՝ աղոթելով, որ Բարձրյալ Տերն իր օրհնությունն ու Սուրբ Աջի պահպանությունը միշտ հովանի դարձնի ազգային ու հայրենական մեր կյանքին եւ պարգևի հոգու ամրություն ու զորություն դիմակայելու մեր առջեւ հառնած մարտահրավերները: Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ Աստծու խնամքի մեջ արգասավորվի ազգային միաբանությունը հայրենիքում ու սփյուռքում՝ միասնական ջանքեր բերելու մեր կյանքի նորոգման, մեր

իրավունքների պաշտպանության առաքելության մեջ: Վերջում Գանձասարի վանքի բակում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բաշխեց այս առիթով վանք այցելած ամեն հայորդուն:

Հ Ո Ւ Ն Ի Ս Ի 6

Հունիսի 6-ին՝ Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, Ստեփանակերտի Սուրբ Աստվածածին առաջնորդանիստ տաճարում մատուցվեց Սուրբ եւ Անմահ Պատարագ: Այս առիթով եկեղեցում հավատացելոց խոնարհումի եւ օրհնության համար դրվել էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերված Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի մասունքները, որպեսզի զորանան հավատքով ու լավատեսությամբ իրենց նոր կյանքը կերտելու ճանապարհին:

Տաճարի առջեւ Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորեց եկեղեցականների թափորը: «Հրաշափառի» երգեցողության ներքո Վեհափառ Հայրապետը, օրհնելով ներկա բարեպաշտ ժողովրդին, առաջնորդեց դեպի խորան, ուր երկրպագությունից հետո սկսվեց Պատարագի սրբազան արարողությունը: Պատարագիչն էր Արցախի թեմի առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը: Սուրբ Պատարագի արարողությանը ներկա էին պետական ավագանին՝ գլխավորությամբ Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանի, Արցախի վաստակյալ նախագահներ Արկադի Դուկասյանը եւ Բակո Սահակյանը, ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանի պատվիրակությունը, թեմի եկեղեցականներ, զինծառայողներ եւ հավատավոր բազում արցախցիներ:

Պատարագի արարողության ավարտին, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հանրապետական մաղթանքի արարողություն Արցախի խաղաղության եւ անվտանգության, հավատավոր ժողովրդի՝ ապահով եւ բարօր կյանքի համար: Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Արցախ ողջունեց թեմակալ առաջնորդ Վրթանես եպիսկոպոսը՝ ընդգծելով, որ պատմական օրեր է ապրում Արցախը, քանզի Ամենայն Հայոց Կաթողիկոսը Արարատյան շաբաթն ու Սուրբ Էջմիածնի տոնն անցկացնում է Սյունիքի եւ Արցախի իր զավակների հետ: Սրբազանը նկատեց, որ առկա դժվարին պայմաններում Հայոց

Հայրապետի այցը մեծ մխիթարություն էր եւ քաջալերանք արցախցիներին համար:

Սրբազանի ողջույնի խոսքից հետո ներկաներին իր օրհնությունն ու պատգամը բերեց Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետը. «Տիրոջ ողորմածությամբ համախմբվել ենք Ստեփանակերտի Սուրբ Աստվածածին եկեղեցում մեր միասնական աղոթքը վերառափելու առ Աստված, որ Տերը մեզ ուժն ու գործությունը տա հաղթահարելու պատերազմի արհավիրքները, վերելնելու վշտերի ու տառապանքների ծանր շրջանից եւ վիրավոր մեր կյանքը նորոգելու տերունական օգնությամբ: Համախմբվել ենք աղոթելու Հայաստան եւ Արցախ մեր աշխարհի խաղաղ ու ապահով կյանքի, հայրենի մեր պետությանց զորացման ու բարօրության համար, ռազմի դաշտում անմահացած մեր հերոսների, խաղաղ բնակչության շրջանում մեր ունեցած զոհերի, պատերազմի ընթացքում վիրավորվածների, անհայտ կորածների, գերեվարված մեր զավակների համար»,— նշեց Նորին Սրբությունը: Վեհափառն անդրադարձավ նաեւ օրվա խորհրդին՝ Սուրբ Էջմիածնի տոնին, Աստծու Միածին Որդու Էջքով Մայր Տաճարի հիմնմանը՝ ընդգծելով. «Այս լուսեղեն իրողությունը վկայությունն է մեր ազգին տրված հառության շնորհի, Տիրոջ օգնությամբ մեզ պատուհասած փորձությունների հաղթահարման: Դարերի մեջ մենք շատ ծանր ու դժան ժամանակներ ենք ապրել, ավեր ու կոտորած, ցեղասպանություն տեսել, բայց միշտ առ Աստված ապավինությամբ հառնել ենք բարօր ապագա կերտելու ամուր կամքով եւ հույսով: Այսօր էլ մենք նույն հավատն ունենք, որ խաչյալ եւ հառուցյալ մեր Փրկչի շնորհով պիտի զորանանք եւ հաղթահարենք պատերազմի ծանր հարվածները՝ վեր ելնելով մեզ պատած նեղություններից դեպի մեր կյանքի նոր արեւաշող հորիզոններ»:

Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց նաեւ Արցախին պատուհասած դժվարություններին եւ վերազարթոնքի անհրաժեշտությանը. «Սիրելիներ, Արցախը հայրենի մեր բնօրանի սրբազան մասն է, փրստոնյա մեր ժողովրդի հարստությունը՝ իր պատմությամբ ու սրբություններով: Արցախի սիրով եմ դուրս ամուր եւ կանգուն ձեր հառազատ հողին, այդ ոգով եմ վճռական՝ այստեղ ձեր կյանքը շարունակելու եւ նոր իրագործումներով բարեգարդելու: Դուք հիանալի օրինակն եմ տվել այս նվիրական երկրում արիասիրտ սխրամքների ու աստվածահանո արարումների: Դուք խիզախորեն պաշտպանել եմ ձեր երկիր հայրենին, նորոգել ու պայծառացրել եմ ձեր ֆառակներն ու շենքերը, ձեր այգեստանները, ձեր սրբավայրերը, նոր աղոթավայրեր կառուցել, որի լուսաշող վկայություններից մեկն է Սուրբ Աստվածածին

հոյակերտ այս եկեղեցին: Մեր նախնյաց փորձառությունը եւ ոգին հավաստում են, որ մեզ պատուհասած ավերներն ու պատերազմի արհավիրքները եւ ոչ մի նեղություն չեն կարողանալու մեզ ընկնել եւ սասանել հայրենիքում անկախ ապրելու մեր հաստատակամությունը: Հայի ոգին չի ընկրկում դժվարությունների առջեւ, չի կոտրվում ցավից ու վշտից: Մենք ահասարսուռ պատուհասների հաղթահարումի ու մեր ազգի հարության փորձառությունն ունենք, որը մեզ ուժ է տալու այս նոր ժամանակներում եւս ելնելու նոր արարումների, հավատալու մեր ապագային, հավատալու մեր հայրենիքի ու կյանքի զարթոնքին:

Սիրելիներ, վեր հառնելու նաապարհին, պահելով հավատն առ Աստված եւ սերն առ հայրենին, մենք առավել պիտի գորանանք, առավել պիտի գորանա մեր կամքը ապրելու եւ արարելու նոր եռանդով ու ձեռքբերումներով: Մեր վերելքներով ու հաջողություններով է նաեւ, որ արժեւորելու ենք մեր նահատակների անձնագոհության ու հայրենամոլության մեծագույն սխրանքը: Պատերազմի ընթացքում մենք կորցրեցինք հարազատ երկրի զգալի մասը: Սակայն գիտենք՝ ձեր ոգին աննկուն է, եւ հույսը՝ անջնջելի, որ հակառակ ամեն խոչընդոտի՝ վերականգնելու եւ շենացնելու եք Արցախը: Արցախը մեր ժողովրդի իրավունքների պաշտպանության եւ ազատ ու անկախ ապրելու վճռականության խորհրդանիշն է: Մեր պատմական հայրենիքի այն նշխարը, որի վրա շարունակում ենք ապրել, պիտի հզորացնենք եւ դարձնենք անվտանգ ու բարգավաճող, ամուր պետականությամբ, համազգային միաբանությամբ, համընդհանուր ջանքերով», — *ասաց Նորին Սրբությունը՝ պատգամելով հույսով ամուր մնալ, հավատով՝ անսասան, աննկուն լինել նեղությունների հանդիման: Վեհափառը հորդորեց չվհատվել ընդդեմ դժվարությունների, այլ միաբան լինել մարտահրավերների դիմագրավման եւ միասնական՝ փորձությունների հաղթահարման մեջ*. «Այս ծանր փորձությունից պետք է հետեւություն անենք՝ սխալներ թույլ չտալու, մեր ազգային միաբանությունը չտկարացնելու, գործելու ազգի ու հայրենիքի գերագույն շահով, մեծագույն պատասխանատվությամբ», — *ընդգծեց Հայոց Հովվապետը՝ հայրական իր սերն ու օրհնությունները բերելով ամենքին եւ վստահեցնելով, որ համայն հայ ժողովուրդը, Սուրբ Եկեղեցին՝ իր թեմերով ու կառույցներով, արցախցիների հետ են՝ Արցախի խաղաղ ու ազատ կյանքը հաստատելու եւ կորուստները վերականգնելու իրենց ջանքերում:*

Հայոց Հայրապետը հայցեց Տիրոջ զորակցությունն ու օգնակա-նությունը Արցախի ժողովրդին եւ պետական այրերին պատերազմի

հետեւանքների հաղթահարման, Արցախի կյանքի բնականոն ընթացքը վերահաստատելու կարեւոր գործում: Նորին Սրբությունն իր օրհնությունը բերեց Պաշտպանության բանակի սպաներին ու զինվորներին, որ անձնվիրումով կանգնած են հայրենյաց պաշտպանության դիրքերում՝ ընդգծելով նաեւ, որ Արցախի յուրաքանչյուր զավակ հայրենյաց մարտիկ է եւ Արցախում իր կեցությամբ է պահում հայրենի երկիրը: Հայրապետն իր բարձր գնահատանքը բերեց Հայկական բարեգործական ընդհանուր միությանը, ազգային-եկեղեցական անդաստանում շարունակական նպաստ բերող եւ պատերազմական դժվարին պայմաններում էլ Արցախին աջակցած բարերար բոլոր զավակներին, աշխարհասփյուռ մեր ողջ ժողովրդին:

Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը բերեց Արցախի թեմի երկարամյա առաջնորդ Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանին, Արցախի թեմի ներկայիս առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանին եւ հոգեւոր դասին՝ Արցախի թեմը շենացնելու, հայորդյաց հավատքն ամրապնդելու, նաեւ պատերազմական ծանր շրջանում հավատավոր իրենց զավակների հետ լինելու, նրանց քաջալերելու եւ մխիթարելու գովարժան ծառայության համար:

Արցախի սրտից Ամենայն Հայոց Հայրապետն իր գնահատանքն ու շնորհակալությունն ուղղեց Ռուսաստանի Դաշնության իշխանություններին, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին խաղաղության հաստատման ջանքերի համար, որով կանխվեցին մարդկային նոր կորուստները եւ հայկական բնակավայրերի ավերումները Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ պատերազմում: Նորին Սրբությունը նաեւ իր եղբայրական սերն ու շնորհակալությունը հայտնեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքին խաղաղության հաստատման, ի մասնավորի Դադիվանքի հոգեւոր կյանքի անխաթար ապահովման գործում իր բերած ջանքերի համար: Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը գնահատանքով անդրադարձավ նաեւ Արցախում ռուս խաղաղապահների՝ անվտանգության ու իրավիճակի կայունության ապահովման գործում կարեւոր առաքելությանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն աղոթք բարձրացրեց արցախյան պատերազմում զոհված զինվորների համար՝ վերստին մխիթարություն հայցելով Տիրոջից զոհվածների հարազատներին, ամենքի սրտերին ու հոգիներին, եւ շուտափույթ վերադարձ մաղթելով գերիներին եւ













անհայտ կորածներին: Իր պատգամի վերջում նորին Վեհափառությունը, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի մասունքներով օրհնելով Արցախի հավատավոր ժողովրդին, հայցեց, որ Փրկիչ Տերը ամենագոր Իր Սուրբ խաչի հովանու ներքո անսասան խաղաղության մեջ պահի Արցախի Հանրապետությունը, եւ Աստծու ողորմությամբ զորանա արցախահայությունը՝ կերտելով ստեղծագործ ու զարգացող կյանքի նորանոր հաջողություններ:



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԻՅ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Յունիսի 10-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի զլխաւորութեամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցաւ Հայաստանի եպիսկոպոսների խորհրդակցութիւն, որի ընթացքում շօշափուել են մեր հայրենական կեանքի ներկայ իրավիճակին առնչուած հարցեր: Խորհրդակցութեան աւարտին ընդունուել է հետեւեալ յայտարարութիւնը.

«Քննարկելով մեր հայրենիքի ու ժողովրդի առջեւ ծառացած մարտահրաւէրները՝ խոր մտահոգութիւն ենք յայտնում Հայաստանի ներքաղաքական կեանքում, արտահերթ խորհրդարանական ընտրութիւնների այս շրջանում արձանագորուող մի շարք դատապարտելի երեւոյթների առնչութեամբ:

Յունիսի 7-ին մեկնարկած նախընտրական քարոզարշաւի առաջին իսկ օրից տեղ գտած ատելութեան խօսքը, վարկաբեկիչ եւ վիրաւորական արտայայտութիւնները, հայհոյելու, հաշուեյարդարներով ու բռնութեամբ սպառնալու վարքագիծը, ցաւօք, մեր հասարակութեանը կարող է կանգնեցնել այնպիսի կացութեան առջեւ, որի ահագնացման պարագայում անխուսափելի պիտի դառնան անհանդուրժողութեան, ատելութեան եւ թշնամանքի հողի վրայ քաղաքացիական բախումները: Արդարացում չունեն եւ դատապարտելի են բոլոր այն քայլերը, որոնք պառակտում եւ բեւեռացնում են պատերազմի ցաւերը դեռ չամօքած մեր հասարակութեանը: Անառարկելի ճշմարտութիւն է՝ չար սերմը երբեք չի կարող բարի պտուղ տալ, եւ ինքն իր մէջ բաժանուած ամէն տուն՝ կանգուն մնալ (հմմտ. Մատթ. ԺԲ. 25):

Նժարի վրայ է դրուած հայրենիքի ապագան: Հարկ է հայրենասիրութիւն, նախանձախնդրութիւն ու հետեւողականութիւն դրսեւորել հայրենիքի շուրջ մեր ժողովրդի միասնական տեսլականի ձեւաւորման գործում, որպէսզի իւրաքանչիւրը պատիւ համարի խոնարհուելը այդ տեսլականի իրագործման լծի ներքոյ: Դա է նուազագոյն գինը, որ կարող ենք

վճարել բոլոր ժամանակների մեր նահատակ զաւակների անձնագործութեան դիմաց: Այս գիտակցութիւնը պէտք է գերակայի մեր երկրում եւ ուղիներ հարթի առկայ խնդիրների յաղթահարման:

Այսու կոչ ենք անում բոլոր քաղաքական ուժերին, այդ թւում յատկապէս իշխող կուսակցութեանը, զերծ մնալու անպատշաճ խօսուածքից ու պահուածքից: Բազմադարեայ հարուստ մշակոյթ եւ բարձր արժէքներ կերտած մեր ժողովրդին անյարիր են այդպիսի դրսեւորումները, որոնք նսեմացնում են մեր ազգային նկարագիրն ու վարկը: Մի՛ եղէք չարի սերմնացաններ եւ անընդունելի վարքագծով գայթակղութիւն մի՛ դարձէք քրիստոնեայ մեր ժողովրդի համար:

Աղօթում ենք, որ Տէրն Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ խաղաղութեան մէջ պահի մեր երկիրը՝ պարգեւելով իմաստնութիւն համայն մեր ժողովրդին՝ սիրոյ եւ համերաշխութեան մթնոլորտում արարելու իր վաղուայ օրը»:



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՈՒՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Նայաստանում 2021 թ. յունիսի 20-ին տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրությունների առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հանդես է եկել յայտարարությամբ:

«Աստծոյ ողորմածութեամբ խորհրդարանական ընտրությունները, հակառակ նախընտրական լարուածութեանը, սուր հակադրությունների եւ արձանագրուած որոշ խախտումների, ունեցան համեմատաբար խաղաղ ընթացք եւ անցան առանց լուրջ միջադէպերի:

Եկեղեցու համար չափազանց կարեւոր է, որ երկրի ղեկավարումն ստանձնող քաղաքական ուժը կարող լինի ապահովելու եւ երաշխաւորելու ազգանպաստ լուծումները կենսական այնպիսի հարցերի, որոնք վերաբերում են Հայաստանի, Արցախի եւ հաւատաւոր մեր ժողովրդի անվտանգութեանը, ազգային ինքնութեան եւ արժեհամակարգի պաշտպանութեանը, կրթութեանը, մշակոյթին, հանրային համերաշխութեանը եւ համազգային ընդգրկում ունեցող այլ խնդիրների: Մայր Աթոռը եւ մեր Եկեղեցու հոգեւոր ողջ դասը իր դիրքորոշումներն ու մտահոգությունները պարբերաբար արտայայտել է նման կարեւորագոյն հարցերի վերաբերեալ եւ այսուհետ եւս հետեւողական է լինելու յիշեալ ոլորտներում պետական, ազգային եւ հոգեւոր առաջնային շահերի պաշտպանութեանը:


Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դրական է գնահատում հանրահաւաքի ժամանակ վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանի երեկ կատարած անդրադարձը համերաշխութեան, միաբանութեան, համազգային ողջ ներուժի համախմբման կարեւորութեանը հայրենիքի անվտանգ, բարօր ու առաջընթաց կեանքի հաստատման գործում, ինչպէս նաեւ՝ քաղաքական դաշտում հայհոյախօսութեանը եւ ատելութեան խօսքին վերջ տալու անհրաժեշտութեանը: Ողջունելի է նաեւ վարչապետի պաշտօնակատարի կողմից հոգեւոր առաջնորդներին ուղղուած երկխօսութեան առաջարկը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը մշտապէս հանդես է եկել այս դիրքերից եւ ակնկալում է, որ նոր ձեւաւորուող իշխանութիւնը

գործնական եւ հետեւողական քայլեր կձեռնարկի Եկեղեցու հետ գործակցութեան իրենց իսկ առաջարկն իրականացնելու, ինչպէս եւ հանրային համերաշխութիւն ձեւաւորելու ուղղութեամբ:

Հոգեւոր դասը՝ գիտակից իր հոգեւոր առաքելութեանը եւ դրա կարեւորութեանը յատկապէս նման ճգնաժամային իրավիճակներում, պիտի շարունակի անել ամէն անհրաժեշտը, որպէսզի մեր ժողովուրդը կարող լինի յաղթահարելու իր կեանքի դժուարութիւններն ու մարտահրաւէրները, որպէսզի հայրենիքի անկախացեալ այս փոքրիկ նշխարն ուժ գտնի իր մէջ վերականգնելու իր անվտանգութիւնն ու ամրութիւնը՝ շարունակելու ուղին դէպի նոր հարիւրամեակներ:

Հայցում ենք ամենակալ Աստծոյ օրհնութիւնն ու զօրակցութիւնը մեր երկրին եւ մեր հաւատաւոր ժողովրդին: Աստուած թող պահի ու պահպանի Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկիրը խաղաղութեան եւ բարօրութեան մէջ»:





Տ. ՏԱՃԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԾԱՏՈՒՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ՊԱՅԼՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՍԱՏՈՒՑՎԱԾ
ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՍԱՅ ԴԱՏԱՐԱԳԻՆ

(20 հունիսի, 2021 թ.)

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ազգ շար եւ շնացող՝ նշան խնդրէ, եւ նշան մի՛ տացի
նմա, բայց նշանն Յովնանու մարգարէի»
(Մատթ. ԺԲ. 39):

Սիրելիներ,

Տեր Հիսուս Քրիստոսի վերոհիշյալ խոսքերը հանդիմանական պատասխանն են այն պահանջի, որով դպիրներից ու փարիսեցիներից ոմանք դիմել էին՝ ասելով. «Վարդապէ՛տ, ուզում ենք մի նշան տեսնել քեզանից» (Մատթ. ԺԲ. 38): Թեեւ Քրիստոս մինչ այդ բազում նշաններ էր նրանց ցույց տվել, այնուհանդերձ նրանք ցանկանում էին իրենց տեսածից բոլորովին այլ՝ հատուկ նշանի կամ հրաշքի ականատես դառնալ: Տեր Հիսուս, սակայն, նրանց պահանջը մասամբ մերժելով, նախատում է՝ վերջիններիս «շար ու շնացող սերունդ» անվանելով: Հարց է ծագում. ինչո՞ւ է Քրիստոս այդ կերպ վարվում նրանց հետ:

Հին Կտակարանում Աստծու եւ Իսրայելի միջեւ ճշմարիտ կապը կամ Աստծու ուխտն Իսրայելի ժողովրդի հետ Երեմիան, Եզեկիելը, Ովսեեն եւ մյուս մարգարեները բազմիցս ներկայացրել են տղամարդու եւ կնոջ սուրբ ամուսնության տեսանկյունից՝ դրանից շեղումը համարվելով շնություն եւ դավաճանություն: Օրինակի համար՝ Իսրայելի ապականությունները նկարագրելիս Աստված Երեմիա մարգարեի բերանով ասում է. «Իսրայելի բնակչությունն ամբողջովին տարվեց շնությամբ եւ բռնվեց դրամեջ, արձակեցի նրան, ապահարզանի թուղթ տվեցի ձեռքը, ու ես տեսա, որ նրա ուխտադրուժ քույրը՝ Հուդան, չգարհուրեց, այլ գնաց եւ ինքն

էլ պոռնկացաւ» (Երմ. Գ. 8): Ապա շարունակում է՝ ասելով. «Եւ ինչպէս կինն է անարգում իր ամուսնուն, այնպէս էլ դու անարգեցիր Ինձ, ո՛վ Իսրայելի տուն» (Երմ. Գ. 20): Ովսէե մարգարեի միջոցով եւս Աստված, ի ցույց դնելով Իսրայելի անհավատարմությունն Իր հանդեպ, ասում է. «Նրա որդիներին չեմ ողորմի, որովհետեւ պոռնկության որդիներ են, քանի որ սաստիկ պոռնկացաւ նրանց մայրը եւ ամոթահար արեց նրանց» (Ովս. Բ. 6—7): «Զկա ճշմարտություն նրանց մեջ, ո՛չ էլ ողորմություն եւ Աստծու գիտություն երկրի վրա: Անեծք, ստություն, սպանություն, գողություն եւ շնություն ողողել են երկիրը, եւ արյունն արյանն են խառնում» (Ովս. Դ. 1—2):

Ինչպէս տեսնում ենք, Աստծու հետ վերոհիշյալ ուխտը խախտելը ոչ միայն սոսկ դավաճանություն է որակվել, այլ երբ Իսրայելի ժողովուրդը կենդանի եւ ճշմարիտ Աստծու փոխարեն սկսել է երկրպագել այլ աստվածներին. դրանով իսկ անհավատարմություն ցուցաբերելով Աստծու հանդեպ՝ շնացողի անուն է վաստակել: Տեր Հիսուս նույն Իսրայելի ժողովրդի մարգարեների բառերով էլ հենց բնութագրում է նշանի ցուցադրման պահանջով Իրեն դիմած բազմությանը, քանի որ Իր ժամանակի Իսրայելի սերունդը հրաժարվեց հավատալ եւ ընդունել Իրեն որպէս Մեսիա՝ այդպիսով ապացուցելով, որ իրենք անհավատարիմ են ճշմարիտ Աստծուն եւ Նրա նոր ուխտի ծրագրին: Իսրայելի ժողովուրդը Տիրոջ կողմից համարվեց հոգով շնացող, որովհետեւ իր բնական ամուսնուն՝ ճշմարտության խոսքը կամ օրենքը, եւ կենդանի Աստծուն թողնելուց զատ՝ ամուսնացաւ ստի ու կեղծիքի հետ:

Սուրբ Պողոս առաքյալն ասում է. «Ինձ հաճելի է Աստծու օրենքը ներքին մարդու տեսանկյունից, բայց իմ անդամների մեջ ուրիշ օրենք եմ տեսնում, որ մարտնչում է իմ մտքի օրենքի դեմ եւ ինձ գերի է պահում մեղքի օրենքին, որ իմ անդամների մեջ է» (Հռոմ. Է. 23): Այդ «ուրիշ օրենքը» պատճառ է դառնում հոգու շնության, այն հոգու, որն իբրեւ հարս իրեն փեսա պետք է ունենա Աստծու մարմնացած ու մարդացած Խոսքը՝ Տեր Հիսուս Քրիստոսին, սակայն մեղք գործելով ու շնանալով դավաճանում է իր Տիրոջն ու Փեսային՝ Քրիստոսին:


Այնուամենայնիվ, Աստված մարգարեների միջոցով մեծ հույս է ներշնչում Իրենից հեռացած այն մեղավորներին, որոնք անառակ որդու պէս հայրական տնից հեռանալուց հետո մի օր գուցե վերադառնան իրենց ողորմած Տիրոջ մոտ: «Ինձնից հեռացած որդիներ, դարձե՛ք Ինձ

մոտ, որպեսզի ես ձեզ տիրեմ» (Երմ. Գ.14): «Ես ձեզ վրա չեմ բարկանա, քանզի ես ողորմած եմ,— ասում է Տերը,— ձեր դեմ հավիտյան ոխ չեմ պահի» (Երմ. Գ.12): «Դարձե՛ք, որդիներ, դարձե՛ք, եւ ես կբուժեմ ձեր վերքերը» (Երմ. Գ. 22):

Տեր Հիսուս եւս իր անսպառ գութն ու ողորմությունն է ցույց տալիս՝ հասկացնելով, որ ամեն դեպքում կա մեկ նշան, որ պիտի ցույց տրվի չար ու շնացող սերնդին՝ Իսրայելի ժողովրդին, եւ այն Հովնան մարգարեի նշանն է: Ավետարանում կարդում ենք. «Ինչպես որ Հովնանը երեք օր ու երեք գիշեր մնաց կեսի փորի մեջ, նույնպես եւ մարդու Որդին երեք օր ու երեք գիշեր կմնա երկրի ընդերքում» (Մատթ. ԺԲ. 40): Փաստորեն, այդ նշանը ցույց է տալիս մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի կենսատու մահը եւ հրաշափառ հարությունը, իրողություններ, որոնք եկան ու հաստատեցին, որ Տեր Հիսուս ճշմարիտ Մեսիան է՝ Աստծու Միածին Որդին: Հենց այդ հրաշք նշանն էր, որն Իսրայելի ժողովուրդն այդպես էլ չընդունեց: Նրանց կամեցած նշանը պիտի ի հայտ գար Քրիստոսի դեմ կատարած իրենց իսկ հանցագործության հետեւանքով: Այո՛, նրանք մեղավոր են Տեր Հիսուսի մահվան մեջ, բայց Հովնան մարգարեի նշանի մասին հիշեցնելով ու դրա հետ համեմատելով՝ Քրիստոս Իսրայելի ժողովրդին հնարավորություն էր տալիս՝ հետագայում այդ ամենը կատարված տեսնելուց հետո իրեն որպես Փրկիչ եւ Օծյալ ընդունելու եւ հավատալու համար:

Արդ, սիրելիներ, ի՞նչ է այսօրվա պատգամը: Քանի որ Տեր Հիսուս Աստծու Որդին է, եւ Նա փեսան է իրեն հավատացող մարդկային հոգու, եւ այդ նույն հոգին իր հարսն է, Քրիստոսին մերժելը նույնն է, ինչ մեկ ուրիշի պատճառով սեփական կնոջը կամ ամուսնուն մերժելը: Հետեւաբար շնացող անձը կամ սերունդը նա է, որ դավաճան եւ անհավատարիմ է Քրիստոս Աստծուն: Տեր Հիսուս նախատում է բոլոր նրանց, ովքեր մարդու նկատմամբ չարություն եւ Աստծու հանդեպ շնություն են գործում՝ դրանով իսկ անհավատարմություն ցուցաբերելով հենց իր հանդեպ: Այս ամենով հանդերձ՝ քանի որ մեր Տերը մարդասեր եւ ողորմած Աստված է, խոստացավ եւս մեկ ու վերջին նշանը ցույց տալ համայն մարդկությանը: Այդ միակ ու անկրկնելի նշանը հանուն մարդու եւ աշխարհի փրկության Քրիստոսի մահը, երեքօրյա թաղումն ու հարությունն են: Ուստի քանի դեռ ուշ չէ, հարկավոր է, որ եթե մեր մեղքերի պատճառով դավաճանել ու հեռացել ենք Աստծուց, ապա աշխարհումք եւ զղջումով վերադառնանք մեր միակ Փրկչի՝ Տեր Հիսուս Քրիստոսի մոտ, եւ ինչպես Ինքն է

խոստանում՝ չի բարկանա մեզ վրա, որովհետեւ անոխակալ եւ ողորմած է, ավելին՝ կբուժի մեր բոլոր վերքերը՝ սպեղանի դնելով դրանց վրա: Թող մեր փրկության համար մարմնով մեռած ու հարություն առած Աստծու Որդին ըստ մեր ունեցած հավատքի մեզ արժանի դարձնի մեր կյանքը՝ մարդկանց նկատմամբ բարության եւ Աստծու հանդեպ հավատարմության մեջ ապրելու այսօր եւ հավիտյանս. ամեն:



**Տ. ԽՈՐԵՆ ԱՎԱԳ ՔԱՂԱՆԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ՊԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՏՈՒՓԻ
ԳՅՈՒՏԻ ՏՈՆԻՆ ՍԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(27 հունիսի, 2021 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Տէ՛ր, ո՞չ սերմն բարի սերմանեցեր յագարա-
կին բում, արդ ուստի՞ ունիցի զորումն: Եւ նա
ասէ ցնոսա. Այ՛ր թշնամի արար զայն»

(Մատթ. ԺԳ. 27—28):

Տեր Հիսուս Քրիստոս հաճախ ասելիքը փոխանցում էր առակաների միջոցով, որպէսզի մարդիկ կարողանային հասկանալ Իր վարդապետութիւնը, հիշել եւ յուրացնել այն: Ավետարանական առակաները կարճ պատմութիւններ են՝ կյանքի ամենասովորական իրողութիւնների վերաբերյալ, որոնք պարզ ու հասկանալի էին ունկնդրի համար եւ իրենց մեջ կրում են հոգեւոր, աստվածաբանական եւ բարոյախրատական իմաստ եւ հորդոր: Առակաները, որքան էլ պարզ, միշտ եղել են եկեղեցական հայրերի ուշադրութեան կենտրոնում եւ արժանացել նրանց բազմաթիւ եւ բազմակողմանի մեկնաբանութիւններին:

Այսօր Մատթեոսի Ավետարանից ընթերցվեց Որոմնների առակը, որը Տեր Հիսուս Քրիստոս պատմեց մի քանի առակաների շարքում՝ Սերմնացանի առակից հետո: Մինչ այս՝ Սերմնացանի առակով Տերը խոսեց այն մասին, որ Աստծու Խոսքը ոչ բոլոր ունկնդիրներին է հասու, այլ միայն նրանց, ում հոգիներում պարարտ հող կա՝ աստվածային ճշմարտութիւններն ընդունելու համար: Մյուս մասը տարբեր պատճառներով անհաղորդ է մնում աստվածայինին, ինչին մենք այսօր էլ ականատես ենք առօրյա կյանքում:

Երկնքի արքայութիւնը նման է մի մարդու, — ասաց Քրիստոս, — որն իր այգում ցորենի բարի սերմեր սերմանեց: Որոշ ժամանակ անց նրա ծառաները եկան եւ ասացին, որ թեեւ նա միայն բարի սերմեր

սերմանեց, սակայն ցորենի հետ միասին նաեւ որոմ է աճել: Որոմն անպտուղ մոլախոտ է, որն իր տեսքով շատ նման է ցորենի բույսին, եւ դժվար է դրանց տարբերելը, մինչեւ որոշակի հասունացումը: Այգու տերը պատասխանեց, թե թշնամին է այն ցանել, մինչ նրանք քնած էին: Ծառաները ցանկություն հայտնեցին գնալ եւ մաքրել այգին որոմներից, սակայն տերը թույլ չտվեց՝ ասելով, որ գուցե որոմը հեռացնելիս նաեւ ցորենը վնասեն: Ավելի լավ է սպասել հունձքի ժամանակին եւ որոմն առանձին կհավաքել՝ այրելու համար, իսկ ցորենը՝ ամբարել շտեմարաններում:

Որոմների առակն ավետարանական այն քիչ առակներից է, որ մեկնաբանում է Ինքը՝ Տեր Հիսուս Քրիստոս, երբ աշակերտները, առանձին, ինչպես Ավետարանն է նշում, հարցնում են, թե ինչ էր իմաստն այն առակի, որ պատմեցիր:

Սերմնացանը, — բացատրում է Տերը, — որը սերմանում է բարի սերմը, Մարդու Որդին է, եւ արտը՝ այս աշխարհը: Բարի սերմերը արքայության որդիներն են, իսկ որոմը՝ չարի որդիները: Թշնամին, որ ցանել էր որոմը, սատանան է, իսկ հունձքի ժամանակը՝ աշխարհի վախճանն է, հնձվորները՝ հրեշտակները: Մարդու Որդին հրեշտակներին պիտի ուղարկի, որոնք պիտի զատեն որոմը ցորենից: Այսինքն՝ նրանք, որ գայթակղությունների ու անօրենսությունների մեջ են ապրել, պիտի այրվեն հրավառ հնոցում, իսկ արդարները պիտի փայլեն արքայության մեջ, ինչպես արեգակը:

Այս առակում մի քանի կարեւոր գաղափարներ կան, որոնք հարկ է առանձնացնել:

Ա. Աստված արարել է միայն բարին: Ամենայն բարին Տիրոջ գործն է, եւ աստվածային արարչության մեջ չկա չար: Աշխարհում առկա չարի սկզբնաղբյուրը սատանան է՝ Աստծու եւ մարդու թշնամին: Նա է արմատը, աղբյուրը ամենայն մեղքի:

Բ. Այս աշխարհում ապրում եւ գործում են ինչպես արքայության որդիները, այնպես եւ չարի որդիները, այլ խոսքով՝ ինչպես արդար, բարի մարդիկ, նույնպես եւ չարի ու մեղքի ծառաները: Նրանք միաժամանակ եւ միակերպ օգտվում են կյանքի բարիքներից, բայց նրանց ներքին բովանդակությունն ամբողջապես տարբեր է:

Այստեղ կարեւոր է այն հանգամանքը, որ երբ ծառաները տիրոջից խնդրում են գնալ եւ մաքրել այգին որոմից, տերը մատնանշում է հունձքի ժամանակը, երբ զատվելու են ցորենն ու որոմը: Շատ հաճախ ենք

մենք լսում, կամ ինքներս էլ հարցնում, թե ինչու է Տերն արտոնում աշխարհում այսչափ անօրենություն, ինչու չեն պատժվում նրանք, ովքեր մեղքին են ծառայում: Հատկապես դիմացինին մեղադրելու ժամանակ մարդն ավելի հակված է նրա մեջ տեսնելու վատը, կենտրոնանալու թուլությունների ու թերությունների վրա: Իհարկե Աստված անտարբեր չէ մեր մեղքերի հանդեպ, սակայն ամենքին շնորհում է գործելու, ապաշխարելու ժամանակ, փոփոխության ու փրկվելու հնարավորություն: Յուրաքանչյուր մարդու հոգում էլ կան բարի հունդեր, որքան էլ որ նա չարագործությունների ու մեղսագործությունների հեղինակ լինի:

Գ. Իսկ որտեղից եւ ինչպես հայտնվեց որոմն այն արտի մեջ, որտեղ միայն ցորեն էր սերմանվել: Առական ասվում է՝ թշնամին ծածուկ արեց, մինչ նրանք՝ ծառաները, քնած էին: Կարելոր պահ է սա: Այսինքն՝ չարը գործում է այն ժամանակ, երբ մարդիկ կորցնում են արթնությունը, զգոնությունը, թերանում են աղոթքի ու աստվածաշուտության մեջ, այլ խոսքով՝ երբ գտնվում են հոգեւոր թմբիրում: Դրա համար էր Պողոս առաքյալն ասում՝ հսկեցեք, հաստատուն մնացեք հավատքի մեջ, քաջ եղեք, զորացեք:


Սիրելիներ, այս առակը փոխաբերություն է, որի միջոցով Քրիստոս մեզ համար կյանքի իրողությունն է բացահայտում: Որոմը խորհրդանշում է ամեն տիպի մեղք ու գայթակղություն, որ տեղ է գտնում մարդկային հոգում: Ինչպես որոմը որոշակի շրջանում դժվար է տարբերակել ցորենից, նույն կերպ եւ մեղսավոր ընթացքը մատուցվում է որպես բարություն ու բարեգործություն, ներկայացվում է որպես ընդունելի ճանապարհ, սուտը՝ որպես ճշմարտություն, կեղծիքը՝ արդարություն: Առհասարակ սատանան գործում է հակառակություններ ու մոլորություններ տարածելու ճանապարհով: Սուրբ Հովհան Ոսկեբերանը մեկնաբանում է, որ մարգարեների ժամանակ ի հայտ էին գալիս սուտ մարգարեներ, առաքյալների ժամանակ՝ սուտ առաքյալներ, Քրիստոսից հետո՝ սուտ քրիստոսներ: Այս նույն գործելակերպն է, որ այսօր աշխարհում ջնջում է մեղքի ընկալման սահմանները, եւ կյանքը կառուցվում է ըստ հարմարավետության կամ ըստ հեշտասիրության: Անտեսվում են քրիստոնեական առաքինությունները՝ որպես հնացած ավանդույթներ, փոխարենը՝ տարբեր կեղծ շղարշների ներքո դուռ է բացվում ամենայն մերժելի ու գարշելի երեւույթների առջեւ: Ժամանակակից մարդը հոգեւոր, ստեղծող ու բանական արարածից վերափոխվում է սպառող ու անհոգի արարածի,

որ պիտի մտածի ու ընթանա այս նոր կարգ ու կանոնով: Երբեմն նույնիսկ անհավատալի է, թե ինչպես է մարդը նյութական ինչ-որ բարիքների համար գահավիժում հոգեւոր իր այն բարձրությունից, ուր Քրիստոս է նրան բարձրացրել, կարգել տեր եւ իշխան բոլոր արարածներին՝ դառնալով ծանծաղ մի դատարկութուն՝ ամայի հոգով, անտարբեր, նյութական ու նյութապաշտ:

Աստված մարդուն շնորհել է ազատ կամք եւ բանականություն՝ ճանաչելու համար չարն ու բարին: Մարդու յուրաքանչյուր գործ կամ նույնիսկ խոսք չեն անհետանում հենց այնպես, չեն վերանում անհետ, այլ վերածվում են յուրօրինակ մի արարչության, որոնց ամբողջությունը դառնում է Աստծու աշխարհում ստեղծած մեր աշխարհը, Տիրոջ այգում տնկած մեր այգին: Այս իմաստով է, որ մարդն արարչակից է համարվում Բարձրյալին, միայն թե մարդու արարչագործությունը նրա ամբողջ կյանքի՝ նրա մտքի, խոսքի ու գործերի ամբողջությունն է՝ բարի կամ չար, այսօրվա առակի փոխաբերությամբ՝ ցորեն կամ անպտուղ որոմ:

Այս առակի մասին անհրաժեշտ է հաճախ մտորել: Որքան էլ պարզ ու հասկանալի, այն երկնային ճշմարտություններն է բացում մեր առջեւ: Մեղավոր բնությամբ մարդը կարող է տատանվել, կարող տկարանալ հավատքի մեջ, բայց մեղավոր ընթացքը հարատեւ չի կարող շարունակվել, չի կարող դառնալ կենսաձեւ միայն այն պատճառով, որ Տերն անմիջապես չի պատժում յուրաքանչյուր սայթաքումի համար: Կյանքի ակնթարթները մեզ մոտեցնում են հունձի ժամանակին, երբ Մարդու Որդին հրեշտակներին պիտի ուղարկի, որոնք պիտի զատեն որոմը ցորենից, այսինքն՝ արքայության որդիներին՝ չարի որդիներից: Աղոթենք, ջանանք ու գործենք, որ արժանի լինենք Տիրոջ կողմից կոչվելու արքայության որդիներ:

Հայցենք, որ Բարձրյալի սերը, խնամքն ու առատ օրհնությունները միշտ ուղեկից լինեն մեր երկրին ու հավատավոր ժողովրդին այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:





Տ. ՇԱՀԵ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԱՆՅԱՆ
Միաբան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ԴՀԾ

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՒ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ Սոտեցումներ ու հեռանկարներ հայ եկեղեցական-կանոնական իրավունքի ավանդության լույսի ներքո

Եկեղեցական-կանոնական իրավունքի եւ աստվածաբանության փոխհարաբերության հիմնահարցը Հայ եկեղեցու ավանդության մեջ, կարելի է ասել, նորույթ է: Մի կողմից պետք է արձանագրել, որ ԺԹ. դարից սկսած, հատկապես հայագիտական շրջանակում, հայ եկեղեցական իրավունքի պատմական եւ բանասիրական հետազոտությունների դաշտը բավական հարուստ է ու բազմաշերտ: Մյուս կողմից, սակայն, չենք կարող չնշել, որ հայ եկեղեցական իրավունքի աստվածաբանական հիմքերը բավարար չափով վերհանված չեն. այս իրողության անտեսումն ինքնին կնշանակի լինել գիտականորեն աչառու եւ կողմնակալ: Բնականաբար, հնարավոր չէ գիտական մեկ հոգվածով սպառել այդ նյութին ուղղակիորեն առնչվող եւ դրանից ածանցվող հարցերի ու խնդիրների լայն շրջանակը: Մեզ հետաքրքրողն այստեղ հայ եկեղեցական իրավունքի ու կանոնագիտության ոլորտում «եկեղեցական-կանոնական իրավունք եւ աստվածաբանություն» թեմային առնչվող մոտեցումները եւ տեսակետներն են՝ դրանցից բխող հիմնախնդիրներով ու հեռանկարներով:

Հայ եկեղեցական իրավունքի հետազոտության նոր շրջանը համընկնում է հիմնականում ԺԹ. դարի երկրորդ կեսի հետ, երբ անհրաժեշտություն առաջացավ Ռուսաց կայսրության տարածքում հստակեցնելու Հայոց եկեղեցու, հետեւաբար նաեւ հայ ժողովրդի ներքին իրավական կազմակերպման կարգավիճակը¹: Բայց սկսված ուսումնասիրությունները

¹ Այս մտահոգության արտահայտությունն է նաեւ անվանի կովկասագետ-արեւելագետ Լ. Մելիքսեթ-Բեկի փոքրածավալ աշխատությունը՝ Л. М. МЕЛИКСЕТЪ-БЕКОВЪ, Юридическое положение верховного патриарха армянскаго (краткій догматическій очеркъ), Одесса, 1911:

հիմնականում բնորոշվում էին ռուսական եկեղեցական ու եւրոպական իրավագիտական մեթոդաբանությունն ու ժեղ ազդեցություններ, այսինքն՝ եկեղեցական իրավունքը դիտարկվում էր զուտ իրավական, պատմաքննական ուսումնասիրությունների ծիրից ներս: Մյուս կողմից՝ իրավունքի պատմության ուսումնասիրման նմանօրինակ մեթոդաբանությունների որդեգրումն իր հերթին ավելի նպաստեց հայ եկեղեցական իրավունքի աղբյուրների եւ հուշարձանների գիտաքննական հրատարակությանը՝ առանց, սակայն, դրանց աստվածաբանական-կանոնագիտական վերաբերման ու քննության²: Պետք է նշել նաեւ, որ, պատմաբանասիրական այս հետազոտություններից զատ, արդեն Ի. դարասկզբին որոշ մասնագետներ գիտակցում էին հայ կանոնական իրավունքի ուսումնասիրության մեկ այլ կողմի՝ իրավական-տեսական (դոգմատիկ-դոկտրինալ) արժեւորման կարեւորությունը: Առ այս կարեւոր է մեջբերել հայ իրավունքի ուսումնասիրողներից Ս. Տիգրանյանի դիտարկումը. «Բանասիրական եւ պատմահրաւաբանական այս հետազոտութիւնները անհրաժեշտ նախապատրաստութիւն են Կանոնագրքից զուտ իրաւաբանութեան, այսինքն՝ մեր ներկայ գործող իրաւունքի դոգմատիկ-իրաւաբանական ուսումնասիրութեան համար անսխալ եւ հաստատ կերպով օգտուելու: Զուրկ լինելով ուսումնասիրելիք իրաւունքին եւ նիւթին վերաբերեալ պատմաբանական տեղեկութիւններից՝ դոգմատիկ-իրաւաբանը շատ բան սխալ կը հասկանայ, շատ բան բոլորովին չի հասկանայ: Պատմաբանական իրաւաբանութիւնը մեզ ցոյց կը տայ, թէ կանոնագրքի կանոնադրութիւններից որոնք եւ ինչ չափով կարող են այսօր էլ գործող իրաւունք համարուել եւ թէ ինչպէս պէտք է մեկնաբանել եւ ինչպէս հասկանալ իւրաքանչիւր կանոնի ճշմարիտ իմաստը»³:

² Հայ եկեղեցական իրավունքի առավել ամբողջական մատենագիտության համար տե՛ս „Bibliographie zur Rezeption des byzantinischen Rechts im alten Rußland sowie zur Geschichte des armenischen und georgischen Rechts“, unter Mitwirkung von A. Bozozjan et al., zusammengestellt von Ludwig Burgmann und Hubert Kaufhold, Löwenklau-Gesellschaft E.V. Frankfurt am Main, 1992, էջ 91–186. A. MARDIROSSIAN, Le Livre des Canons arméniens (Kanonagirk' Hayoc') de Yovhannēs Awjneg'i. État, droit et société en Arménie du IV^e – VIII^e siècle, Lovanii in Aedibus Peeters, 2004, էջ 627–692:

³ Ս. ՏԻԳՐԱՆԵԱՆ, Կանոնագիրքը եւ մեր կանոնական իրաւունքը, «Արարատ», 1902, Բ. (Լե.), էջ 128–129: Ս. Տիգրանյանն իր այս ծրագրի մի մասը կարողացավ միայն իրագործել՝ հրապարակելով «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի պատմաբանասիրական նկարագրությունը՝ «Древне-армянская книга канонов. Очерки описания и исследования памятника (Описательная часть, I)», Петроградъ, 1918:

Ըստ այսմ՝ կարելի է նշել, որ հայ իրականության մեջ, հատկապես ժԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին, եւրոպական կանոնագիտական շրջանակի հետեւողությամբ, տարածված մտայնություն էր կանոնական իրավունքի աստվածաբանական տեղիններն ու հիմքերը նկարագրելու փոխարեն զբաղվել վերջինիս սկզբնաղբյուրների համակարգային հետազոտությամբ, իսկ մյուս կողմից՝ կազմել կանոնական իրավունքի ընդհանրական տեսություն⁴:

Կանոնական կամ եկեղեցական իրավունքի աստվածաբանական հիմքերին որոշ չափով անդադարձել են հայ եկեղեցական իրավունքի երկու նշանավոր հետազոտողներ՝ Վահան Ժ. վրդ. Բաստամյանցը⁵ եւ Ներսես արքեպս. Մելիք-Թանգյանը⁶: ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին ապրած⁷

⁴ Ի. դարասկզբի եւրոպական գիտական շրջանակում տիրող մտայնությունների մասին այս առումով տես L. GEROSA, L'interprétation de la loi dans l'Eglise, էջ 41: «Կանոնագիրք Հայոց»-ի հետազոտության պատմության մասին տես «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա., աշխ.՝ Վ. Հակոբյանի, Երեւան, 1964, էջ XXVI–XXXI: Հայ միջնադարյան իրավունքի աղբյուրների համակարգման վերաբերյալ տես Ա. ԲՈՋՈՅԱՆ, Հայ միջնադարյան իրավունքի պատմության հուշարձանները, «Էջմիածին», 2006, է.–Ը., էջ 90–108: Ուսումնասիրողն այս հոգվածում առանձնացրել է (իհարկե, ելնելով հայ միջնադարյան իրավունքի պատմության տեսանկյունից) իրավական հուշարձանների հետեւյալ խմբերը՝

ա. եկեղեցական կանոններ (էջ 92–96).

բ. է.–ԺԱ. դարերի հայոց միջնադարյան իրավունքի այլ հուշարձաններ (էջ 96–98).

գ. Իրավագիտական խառը (քաղաքացիական եւ եկեղեցական) հուշարձաններ (էջ 98–100).

դ. Քաղաքացիական օրենսգրքեր (էջ 100–101).

ե. Թարգմանական իրավունքի համահայկական հուշարձաններ (էջ 101–104).

զ. Թարգմանական այլ կանոնագրքեր (Մագ-արքայուն-հոռոմների եւ կաթոլիկների, էջ 104–105).

է. «Նղբարց միութիւնների» կանոնադրություններ (էջ 105):

Հայ միջնադարյան իրավունքի ուսումնասիրության տեսանկյունից եզակի այս հոգվածում նույնպես, սակայն, հայոց եկեղեցական կանոնների ու իրավական (պետական եւ ոչ պետական) վավերագրերի (ակտերի) միջեւ տարբերակումն այդքան էլ հստակ չէ: Պատճառը թերեւս հայ միջնադարյան իրավունքի դիտարկման դասական եղանակն է, այսինքն՝ մեթոդը, որի համաձայն՝ միջնադարյան իրավունքը ներառում է թե՛ եկեղեցական կանոնը եւ թե՛ ընդհանրապես իրավական բնույթի այլ ժողովածուներ: Եկեղեցական իրավունքի կամ կանոնի ուսումնասիրության ոլորտում մեկ այլ կարեւոր՝ հետազոտության կարող հարց է եկեղեցական կանոնների մեկնության ավանդույթի խնդիրը, որը գրեթե անտեսված է: Մինչդեռ կանոնների մեկնության ամբողջական կամ մասնակի օրինակներ կարելի է գտնել հայ եկեղեցական մատենագրության գրեթե բոլոր ժամանակաշրջաններում...

⁵ Տես Վ. ԲԱՍՏԱՄՅԱՆՑ, Կանոնագիտական երկեր, Ս. Էջմիածին, 2015, էջ 80–124:

⁶ Տես Ն. ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ, Հայոց եկեղեցական իրավունքը, Ս. Էջմիածին, 2011, էջ 17–28:

⁷ Վ. Բաստամյանցի կազմած «Եկեղեցական իրաւաբանութիւն» առարկայի դասախոսությունները կարդացվել են Գեորգյան հոգեւոր ճեմարանում 1880–1881 ուսումնական տարվա ընթացքում եւ մինչեւ 2015 թ. անտիպ էին: Հրատարակվել են պատմական գիտ. դոկտոր

այս երկու գիտնականների երկերից առավել կամ պակաս չափով կարելի է ամբողջական կարծիք կազմել հայ իրականության մեջ եկեղեցական իրավաբանության աստվածաբանական կողմի վերաբերյալ՝ չնայած երկու աշխատություններն էլ զգալիորեն ազդված են ռուս ուղղափառ ու եւրոպական կանոնագիտական եւ իրավաբանական տեսություններից: Նրանց կատարած վերլուծությունները կարելի է ամփոփել ըստ այսմ:

Երկու հեղինակներն էլ օգտագործում են «եկեղեցական իրաւաբանութիւն» արտահայտությունը՝ եկեղեցական կանոնական իրավունքն ընդհանրապես բնորոշելու համար: Վ. Բաստամյանցն առավել հստակ թարգմանում է լատիներեն «jus sacrum»-ը՝ որպես եկեղեցական կամ սրբազան իրավունք⁸: Իսկ Ն. Մելիք-Թանգյանը, «կանոնական իրաւունք» եւ «եկեղեցական իրաւագիտութիւն» եզրերը⁹ տալով հանդերձ, նախընտրում է «եկեղեցական իրաւունք»-ը: Երկու հեղինակների համոզմամբ էլ՝ եկեղեցական իրավագիտությունն առնչվում է աստվածաբանական գիտություններին, քանի որ նրա ուսումնասիրության միակ առարկան Եկեղեցին է: Այս իմաստով կարելու է Վ. Բաստամյանցի հետեւյալ դիտարկումը. «...եկեղեցական իրաւաբանութիւնը, իբրեւ իրաւաբանական գիտութիւն, որն ունի իւր յատուկ առարկան, պետք է ընդունէ եկեղեցին իբրեւ իրական փաստ, եւ իրաւունք չունի կազմել իւր կողմից աստուածաբանական բացատրութիւն կամ սահման Եկեղեցու համար¹⁰... Եկեղեցական իրաւաբանութիւնը, ընդունելով քրիստոնէական Եկեղեցու գոյութիւնը վերոյիշեալ յատկանիշներով եւ այլ կրօնական համայնքների լինելութիւնը իբրեւ իրական փաստ եւ աստուածաբանութեան թողնելով նոցա դաւանական սկզբունքների բացատրութիւնները եւ սահմանները, քաղում է դոցանից այն, ինչ որ կարող է եւ պետք է կազմէ իրաւաբանութեան նիւթ եւ առարկայ»¹¹:

Վերոբերյալ մեջբերումը ձեւակերպելով կանոնական իրավունքի աստվածաբանության ժամանակակից մտայնության համաձայն՝ կարող

Ա. Բողոյանի ջանքերով եւ աշխատասիրությամբ: Ներսէս արքեպիսկոպոսի ծավալուն աշխատությունն առաջին անգամ հրատարակվել է Շուշիում 1903 թ., երբ հեղինակը տակավին վարդապետ էր:

⁸ Տէս Վ. ԲԱՍՏԱՄՅԱՆՑ, նշ. աշխ., էջ 75. այս մասին առավել մանրամասն տե՛ս անդ, էջ 76–80:

⁹ Տէս Ն. ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ, նշ. աշխ., էջ 25:

¹⁰ Վ. ԲԱՍՏԱՄՅԱՆՑ, նշ. աշխ., էջ 86:

¹¹ Անդ, էջ 88–89:

ենք արձանագրել, որ եկեղեցական իրավաբանությունը, մեկնելով եկեղեցաբանությունից, իբրեւ իր տեսական հիմնադրույթներ օգտագործում է եկեղեցու վերաբերյալ վարդապետական բոլոր հաստատումները: Ընդ որում, այստեղ արդեն եկեղեցական իրավաբանության համար ուսումնասիրության նյութ են ընդհանրապես կրոնի ներքին եւ արտաքին դրսևորումները: Ըստ Վ. Բաստամյանցի՝ կրոնի ներքին կողմն է հավատը՝ իբրեւ ընդհանրական հոգեբանական երեւույթ¹², իսկ արտաքին կողմը՝ աղոթքը, ծիսակատարությունը, նվիրապետությունը են¹³:

Մի փոքր այլ, բայց ավելի հստակ սահմանում է տալիս Ն. Մելիք-Թանգյանը: Ըստ նրա՝ եկեղեցական իրավունքի սահմանմանն անցնելուց առաջ նախ պետք է հստակեցնել տվյալ եկեղեցու վարդապետության համաձայն եկեղեցի հասկացության բնորոշումը: Ն. Մելիք-Թանգյանը, ի տարբերություն Վ. Բաստամյանցի, որդեգրում է տեսանկյունի եկեղեցի եւ անտեսանկյունի եկեղեցի եզրերը: Այս տարբերակումն անհրաժեշտ է հավատին ու բարոյականությանը՝ ընդհանրապես հավատացյալի խղճին առնչվող բարոյական հասկացություններն իրավաբանական սահմաններից հանելու համար¹⁴: Անտեսանկյունի եկեղեցին «այս տեսակետով իրաւաբանական հասկացութիւն չէ, այլ զուտ բարոյական-կրօնական»¹⁵: Ընդ որում, անտեսանկյունի եկեղեցին չի կարող առանձին վերցրած, այսինքն՝ առանց մարդկային հասարակության, եւ հակառակը՝ մարդկային հասարակությունն առանց անտեսանկյունի եկեղեցու, կազմել ամբողջացած եկեղեցի¹⁶: Ըստ այսմ՝ եկեղեցին սահմանվում է իբրեւ հոգեւոր-անտեսանկյունի ու տեսանկյունի եկեղեցիների անբաժան ամբողջություն, որն իր լրումին է հասնում Քրիստոսին հավատացող ժողովրդի ժողովի մեջ¹⁷: Եկեղեցու իրավունքը, սակայն, վերաբերում է ոչ թե «եկեղեցու էութեան, ինչպէս աստուածային հաստատութեան, այլ այն արտաքին կազմակերպութեան, որով սահմանի տակ են դրւում նրա բոլոր անդամների բազմազան յա-

¹² Տէս անդ, էջ 81:

¹³ Տէս անդ:

¹⁴ Տէս Ն. Մելիք-Թանգյան, նշ. աշխ., էջ 19:

¹⁵ Անդ:

¹⁶ Տէս անդ: Ն. Մելիք-Թանգյանի այս դիտարկումը հենվում է հայ եկեղեցաբանական մտքի դրույթների վրա: Այս մասին տես SHAHE ANANYAN, We believe in One, Holy, Catholic and Apostolic Church: the Armenian Apostolic Perspectives, “International Journal for the Study of the Christian Church” (2016), vol. 16, no. 2, էջ 149–155:

¹⁷ Տէս Ն. Մելիք-Թանգյան, նշ. աշխ., էջ 20:

րաբերութիւնները: Այս յարաբերութիւնները երկու շրջանով են բացորոշուում՝ ներքին եւ արտաքին. ներքին յարաբերութիւնը տեղի է ունենում եկեղեցու անդամների շրջանում, արտաքին յարաբերութիւնը՝ եկեղեցու եւ ուրիշ հասարակական կազմակերպութիւնների մէջ»¹⁸: Այս հարաբերութիւնների երկակի նշանակութեան բացահայտումը տրամաբանորեն հանգեցնում է նաեւ եկեղեցական իրավունքն ըմբռնելու երկու մոտեցումների՝ ներառմանական մտքով (*sensus subjectivus*), երբ եկեղեցական կանոններն ու օրենքները դիտարկվում են իբրեւ եկեղեցու անդամներին տրված, եւ արտառմանական մտքով (*sensus objectivus*)՝ իբրեւ համախմբում այն օրենքների ու կանոնների, որոնք նախատեսված են կարգավորելու եկեղեցու հարաբերութիւններն այլ կազմակերպութիւնների հետ¹⁹: Շարունակելով այս տարբերակումը՝ Ն. Մելիք-Թանգյանը, ի վերջո, տալիս է նաեւ աստվածաբանութեան եւ եկեղեցական իրավունքի ուսումնասիրութեան ոլորտների տարբերութեան սահմանումը. «Աստուածաբանութիւնն ուսումնասիրում է եկեղեցին՝ իբրեւ աստուածային հաստատութիւն, եկեղեցական իրավունքն ուսումնասիրում է նրան՝ իբրեւ արտաքին կրօնական հասարակութիւն»²⁰:

Ն. Մելիք-Թանգյանի սույն դիտարկմանը զուգահեռ՝ անհրաժեշտ է այստեղ ընդգծել Վ. Բաստամյանցի բավական հետաքրքիր, բայցեւ զուտ իրավաբանական-տեսական վերլուծութիւնը: Նա, ելնելով իր ժամանակի իրավաբանական մտածողութիւնից, եկեղեցին սահմանում է իբրեւ «իրավունքի տեր» (*objectus*) եւ որպէս «առարկա» (*subjectus*): «Իրավունքի տեր» հասկացութեամբ Վ. Բաստամյանցը, ըստ էութեան, մոտենում է Ն. Մելիք-Թանգյանի առաջ քաշած՝ եկեղեցական իրավունքի ներանձնական մտքով ընկալմանը, քանի որ եկեղեցական իրավունքը սահմանում է իբրեւ «զումար զանազան իրաւունքների եւ պարտաւորութիւնների, որք պատկանում են եկեղեցու անդամներին...»²¹: Առավել հետաքրքիր ու բովանդակային առումով կարելոր է եկեղեցական իրավունքի՝ իբրեւ ուսումնասիրութեան առարկա, նրա սահմանումը: Վ. Բաստամյանցն այս իմաստով ավելի հակվում է կանոնական իրավունքի հետազոտութեան պոզիտիվիստական դիրքերին՝

¹⁸ Տէս անդ, էջ 21:

¹⁹ Տէս անդ, էջ 21–22:

²⁰ Տէս անդ, էջ 26:

²¹ Վ. ԲԱՍՏԱՄՅԱՆ, նշ. աշխ., էջ 98–99:

ուսումնասիրությանը տալով զուտ իրավաբանական նշանակություն²²: Այս երկու հասկացությունների փոխհարաբերությունից տրամաբանորեն բխում է նաեւ այսպես կոչված նյութական կամ էական իրավունքի առկայությունը՝ *jus substantiale*, որը եկեղեցական իրավունքը սահմանում է իբրեւ «կարգուկանոն Եկեղեցու կազմակերպութեան եւ կառավարութեան, նրա գործունէութեան եւ գործողութեանց... որ բխում է Եկեղեցու յատկութիւնից եւ որպիսութիւնից...»²³: Ըստ Վ. Բաստամյանցի՝ եկեղեցական իրավունքը բարոյական-կրոնական սկզբունքների միայն արտաքին կողմն է ուսումնասիրում: Հետեւաբար, ինչպես արդեն նշվեց, Վ. Բաստամյանցը լիովին մերժում է եկեղեցական իրավունքը կամ կանոնագիտությունն աստվածաբանության մի ճյուղ համարելու պնդումը²⁴ միեւնույն ժամանակ, սակայն, անհնար համարելով եկեղեցական իրավունքի ստորադասումը կամ ներառումն իրավաբանական գիտությունների մեջ²⁵: Եկեղեցական իրավունքը չի պարունակում դավանական սկզբունքներ, այլ ուսումնասիրում է միայն նրանց իրավական կողմը: Իր այս պնդումը Վ. Բաստամյանցը հիմնավորում է հետեւյալ կերպ. աստվածաբանությունը հիմնականում առնչվում է հավատի կամ Եկեղեցու ներքին կողմին, այլ խոսքով՝ քննում է հավատի երեւութներն ըստ էության եւ ներքին նշանակության, իսկ եկեղեցական իրավաբանության հիմնական պարտականությունն ու նպատակն է շաղկապել այդ ներքին նշանակությունից բխող արտաքին պայմաններն ու հարաբերությունները, «մի խօսքով՝ ուսումնասիրել Եկեղեցին իբրեւ արտաքին կրօնական ընկերակցութիւն իւր որոշ եւ միշտ զարգացող կազմակերպութեամբ»²⁶:

Աստվածաբանության ու եկեղեցական իրավունքի փոխհարաբերությունների վերաբերյալ հայ եկեղեցական իրավաբանության ուսումնասիրության այս երկու երախտավորների վերլուծություններն իրենց ժամանակի համար, իհարկե, ունենին կարեւոր եւ առաջադիմական նշանակություն: Սակայն պետք է նաեւ նշել, որ նրանք հիմնականում հակված էին պոզիտիվիստական մոտեցմանը՝ առավել մեծ տեղ հատկացնե-

²² Տե՛ս անդ, էջ 99:

²³ Անդ:

²⁴ Տե՛ս անդ, էջ 111:

²⁵ Տե՛ս անդ, էջ 110:

²⁶ Անդ, էջ 117:

լուվ պատմաքննական ու իրավաբանական մեթոդների կիրառությանը կանոնական իրավունքի եւ ընդհանրապես կանոնի ուսումնասիրության հարցերում: Սա է պատճառը, որ աստվածաբանության եւ կանոնական իրավունքի հարաբերությունների եւ առնչակցությունների մասին նրանց վերլուծությունները մեծավ մասամբ ընդգրկված են աշխատությունների ներածական մասերում՝ առանց որեւէ մեթոդական համակարգված մոտեցման: Վ. Բաստամյանցի ու Ն. Մելիք-Թանգյանի երկերից հետո, դժբախտաբար, հայ եկեղեցական իրավունքի ուսումնասիրությունը զարգացավ հիմնականում իրավունքի պատմության հետազոտության հրամայականով, չնայած առանձին թեմաների վերաբերյալ աստվածաբանական-կանոնադրական խուզարկումների առկայությունն էլ կարող է դիտարկվել որպես մի հաճելի բացառություն...

Հետեւաբար՝ դեռեւս բաց են մնում այնպիսի կարեւոր ու սկզբունքային հարցեր, ինչպիսիք են, օրինակ, կանոնական եւ եկեղեցական իրավունքի տեղն ու դերն աստվածաբանության մեջ, եկեղեցական կանոնների փոփոխելիության եւ անփոփոխության հույժ կարեւոր, իր բովանդակությամբ հիմնականում աստվածաբանական հիմնախնդիրը, կանոնների ստեղծման ու դրանց նպատակահարմարության չափանիշների բացակայությունը Հայ եկեղեցում են: Ավելին՝ Հայոց եկեղեցում եկեղեցական կանոնների ու իրավունքի բարեփոխության աստիճանաբար ուժեղացող պահանջը դեռ կարող է ղեկավարվել Ի. դարասկզբին Ն. Մելիք-Թանգյան վարդապետի իրավացիորեն ձեւակերպած հետեւյալ մի քանի հիմնահարցերով. «Ի՞նչ ժողովներ ենք ընդունում, ի՞նչ կանոններ, որոնք են մեր եկեղեցական իրավունքի աղբիւրները, ինչո՞վ է ղեկավարում մեր Սինոդը եկեղեցական խնդիրները որոշելիս, ինչո՞վ են առաջնորդում կոնսիստորիաները պատիժներ նշանակելիս, դատերն ի՞նչպէս պիտի վարել եւլն, այդ բոլորը մթույթեան եւ խաւարի քողով պատած է...»²⁷: Ընդամին, անհրաժեշտ ենք նկատում մեր եզրակացությունից առաջ անդրադառնալ եւս մեկ՝ ոչ պակաս կարեւոր հարցի:

Գրեթե ճնշող մեծամասնությամբ հայ եկեղեցական կամ կանոնական իրավունքը, արդեն իսկ ԺԹ. դարի կեսերից սկսած, ուսումնասիրվել է հին հայ իրավունքի գիտությունից ներս: Մինչ օրս էլ եկեղեցական կանոնները դիտարկվում են իբրեւ հին հայ իրավունքի պատմության մի մաս²⁸: Արդյոք

²⁷ Ն. Մելիք-Թանգյան, նշ. աշխ., էջ 34:

²⁸ Տէս, օրինակ, հետեւյալ աշխատությունը՝ Ռ. ԱՎԱԳՅԱՆ, Հայ իրավական մտքի գանձարան, Նրեւան, հտ. Ա., 2001, հտ. Բ., 2002: Այս հրատարակություն-ուսումնասիրության

ընդունելի է այս մոտեցումը ժամանակակից կանոնագիտության եւ աստվածաբանության տեսանկյունից: Հարցը հրատապ է այն իմաստով, որ այն դժվար թե կարելի լինի հիմնավորել եկեղեցական կանոնի պատմության տեսանկյունից, քանի որ եկեղեցական իրավունքի եւ կանոնների կողքին միջնադարյան Հայաստանում գործել են նաեւ պետական առանձին՝ գրավոր կամ բանավոր օրենքներ, որոնց հարաբերակցությունը եկեղեցական կանոնի հետ մնում է դեռեւս շատ քիչ ուսումնասիրված ոլորտ²⁹: Մյուս կողմից՝ եկեղեցական կանոնի եւ պետական օրենքի ստեղծման գործիքակազմն ու համակարգերն իրենց նպատակով խիստ տարբեր են միմյանցից, ինչը եւս հավելյալ դժվարություններ է առաջացնում հին հայ իրավունքի ծիրից ներս եկեղեցական կանոններն ուսումնասիրելու համար³⁰:

Արդեն իսկ ԺԹ. դարում հայ իրավական հուշարձանների քննության եւ հրատարակության աշխուժացմամբ, գիտական բազմաթիվ ուսումնասիրությունների շնորհիվ հաստատվեց, որ ընդհուպ մինչեւ ԺԲ. դար միջնադարյան Հայաստանում չկար աշխարհական որեւիցե օրենսգիրք կամ դատաստանագիրք³¹: Դ. դարասկզբին քրիստոնեության տարածումով եւ

մեջ հեղինակը կատարում է հետեւյալ պնդումը. «...հին եւ միջնադարյան հայ իրավունքի աղբյուրը, սովորութային նորմերից հետո, կանոնական իրավունքն է: Եկեղեցում կանոնն այն է, ինչ օրենքը պետության մեջ (sic!)... Կանոնական իրավունքը չի սահմանափակվել եկեղեցական ներքին կազմակերպական նորմերով, այլ դրա հետ միասին ընդգրկել է քաղաքացիական, քրեական, վարչական եւ հաճախ դատական իրավունքի բնագավառները» (էջ 36): Չթերագնահատելով հանդերձ այս հետաքրքիր աշխատության գիտական արժեքն ու նորությունը՝ անհրաժեշտ է, սակայն, նշել, որ կատարված ընդհանրացումները, մեղմ ասած, այդքան էլ համատեղելի չեն կանոնական իրավունքի տեսության եւ պատմության սկզբունքների հետ: Նկատելի է, որ Ուրարտուից մինչեւ Ի. դարասկիզբ հայ իրավունքի հուշարձաններից թարգմանաբար նմուշներ ընդգրկող այս երկհատոր աշխատությունը նույնպես կանոնական իրավունքը դիտարկում է հայ իրավունքի պատմության համատեքստում՝ ակնհայտորեն չնկատելով կանոնական իրավունքի եւ սովորութենական օրենքի տարբերությունները:

²⁹ Այս իմաստով քիչ թե շատ ամբողջական պատկերացում կարելի է կազմել հետեւյալ ուսումնասիրության միջոցով՝ J.-P. MAHÉ, Norme écrite et droit coutumier en Arménie du Ve au XIII^e siècle, “Travaux et Mémoires 13”, Paris, 2000, էջ 683—697: Հայ միջնադարյան իրականության մեջ օրենքի եւ կանոնի փոխհարաբերության վերաբերյալ դիտարկումները մեծավ մասամբ ներկայացնելու ենք ըստ այս հետազոտության եզրահանգումների:

³⁰ Օրենքը, լինելով օրինակ-ի իմաստային անբաժան մի մասը, միջնադարյան Հայաստանում ենթադրում էր սովորութենական իրավունքի պարտադիր սկզբունք: Մինչդեռ կանոն-ն ավելի շատ արտահայտում է առկա իրավական ընկալումը, որը տրված էր Ս. Հոգու ներշնչումով՝ եկեղեցական կամ հոգեւոր դատավորներին առաջնորդելու համար: Այս մասին առավել մանրամասն տես J.-P. MAHÉ, նշ. աշխ., էջ 686. հմմտ. նաեւ A. MARDIROSIAN, նշ. աշխ., էջ 27—28:

³¹ Տես, օրինակ, Վ. ԲԱՍԱՄԵԱՆՅԱՆ, Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց, իրաւաբանական հետազոտությունը հանդերձ ծանօթութեամբ, Վաղարշապատ, 1880, էջ 52—53.

Հայոց դարձով, ի շարս պետական-հասարակական այլ փոփոխությունների, եկեղեցին ներմուծեց նաեւ սեփական կանոնական իրավունքը, որը տարբեր էր մինչ այդ գործող սովորութենական օրենքից³²: Չնայած վիմագրական արձանագրությունների հատուկենտ տվյալներով մեզ հասած պետական, տվյալ դեպքում՝ թագավորական կամ իշխանական մի քանի գրավոր որոշումների առկայությանը³³, այնուամենայնիվ, անհրաժեշտ է մեկ անգամ եւս արձանագրել, որ միջնադարյան Հայաստանում, ընդհուպ մինչեւ ԺԲ. դար, գրավոր օրենքի տակ հասկացվում էր միայն եկեղեցական կանոնը, որի հիմնական տարբերությունը պետական օրենքից հոգետր, հոգեխմամական մոտեցումն էր մեղավորի եւ օրինախախտի նկատմամբ: Այս տարբերությունը հստակ արտահայտված է Դատաստանագրքի հեղինակ, նշանավոր վարդապետ Մխիթար Գոշի հաստատման մեջ. «Կանոնական սահման հոգույ է ուղղիչ, եւ սա (այսինքն՝ դատաստանագիրքը.— Շ. Ա.)՝ մարմնոյ... եւ որպէս յանդգնելոցն աստ զկնի բանդ է եւ կապանք, այսպէս եւ անդ բանդ է եւ կապանք բանադրանք»³⁴: Հետեւաբար՝ կարելի է եզրակացնել, որ արդեն միջնադարյան Հայաստանում հստակորեն տարբերակվում էին օրենքը (հունարեն νομοֆ-ի իմաստով) եւ կանոնը՝ իրենց բովանդակային ու կիրառական բոլոր առանձնահատկություններով:

Վերոբերյալ դիտարկումները, անշուշտ, նպատակ չունեն ստորեւ սպառելու հիմնախնդիրների այն լայն ու բազմաբովանդակ դաշտը, որն ուղղակիորեն առնչվում է եկեղեցական իրավունքի եւ աստվածաբանության բարդ փոխհարաբերությանը: Մենք փորձեցինք հիմնական գծերով ներկայացնել հայ եկեղեցական-կանոնական իրավունքի վերարժեւորման ու արդիականացման ճանապարհին առկա այն բոլոր հիմնահարցերը, որոնք ծագել են հայ եկեղեցական իրավունքի ուսումնասիրության արդյունքում: Հստ այսմ՝ եկեղեցական իրավունքի եւ աստվածաբանության փոխհարաբերության դիտարկումը Հայ եկեղեցու ավանդության ծիրից ներս կարելի է ամփոփել հետեւյալ կետերի շուրջ.

ա. Այսօր արդեն դժվար ընկալելի, ավելին՝ անհնար է թվում հայ եկեղեցական կանոնների կամ իրավունքի ուսումնասիրությունը՝ իբրեւ ընդհանրապես հայ իրավունքի պատմության մի մաս: Թե՛ պատմաժա-

A. ABRAHAMIAN, Die Grundlagen des armenischen Kirchenrechts, Zürich, 1917, էջ 27—28:

³² Տե՛ս A. MARDIROSSIAN, նշ. աշխ., էջ 24—25:

³³ Տե՛ս J.-P. MAHÉ, նշ. աշխ., էջ 697:

³⁴ ՄԽԻԹԱՐ ԳՈՇ, Գիրք դատաստանի, աշխ.՝ Խ. Թորոսյանի, Երեւան, 1975, էջ 6:

մանակագրական, թե՛ բովանդակային եւ թե՛ գիտությունների առումով դրանք հետազոտական տարբեր դաշտեր են, որոնք համապատասխանաբար պահանջում են այլ մոտեցումներ եւ մեթոդաբանական հիմքեր: Հստ այսմ՝ մինչ օրս կատարված ուսումնասիրությունների մեծ մասն այդ իմաստով ենթակա է վերանայման ու վերարժեւորման: Ասվածը նկատի պետք է առնել ոչ թե գիտական մեթոդի ու մոտեցման բացակայության (քա՛վ լիցի), այլ ավելի շուտ հայ եկեղեցական իրավունքի ուսումնասիրության մեջ աստվածաբանական տարրերի ոչ բավարար ներառման եւ դիտարկման իմաստով:

բ. Զուտ իրավաբանական պոզիտիվիզմի դիրքերից հայ եկեղեցական իրավունքի քննությունն անխուսափելիորեն հանգեցնելու է եկեղեցական կանոնի ու կանոնական մտքի ընկալման բողոքական մոտեցմանը, որի մասին արդեն խոսվեց վերը: Իսկ վերջինիս աստվածաբանական-տեսական հիմքը բացարձակապես անհամատեղելի է հայ եկեղեցաբանական մտքի դրույթների ու ընկալումների հետ:

գ. Անցնող վերջին երկու հարյուրամյակների ընթացքում հայ իրավունքի պատմությանը, հայ սովորութենական իրավունքին, գրավոր եւ բանավոր օրենքներին, եկեղեցական իրավունքի պատմությանն ու սկզբնաղբյուրներին, դրանց ազգագրական, վիճագրական եւ այլ առանձնահատկություններին նվիրված աշխատությունների բավական զգալի ծավալն այսօր արդեն հայ կանոնական մտքի ուսումնասիրողներին կանգնեցնում է դրանք տեսական ընդհանրացումների ենթարկելու հրամայականի առջեւ, մասնավորապես՝ աստվածաբանական քննության առնելու կանոնների փոփոխության եւ անփոփոխության, կանոնների ստեղծման, կանոնաստեղծ գործընթացի եւ դրանցից ածանցվող մի շարք այլ հարցեր, առանց որոնց պարզապես անհնար կլինեն եկեղեցական իրավունքի եւ կանոնական ժառանգության յուրացումն ու արդիականացումը ներկա ժամանակներում:

РЕЗЮМЕ

Изучение проблем церковно-канонического права Армянской Апостольской Церкви занимает особое место в историко-филологических исследованиях культуры христианского Востока. Начиная с XIX века западные и восточные

специалисты в своих трудах в основном оценивали историко-филологическую важность памятников средневекового Армянского церковно-канонического права. Несмотря на немалое количество трудов и исследований, богословская оценка церковно-канонического права Армянской Апостольской Церкви все еще остается незначительной. Цель автора — систематизировать в данной статье вопросы и перспективы относительно богословской значимости и содержания традиции средневекового Армянского церковно-канонического права.

SUMMARY

The study of problems with respect to the canon law of the Armenian Apostolic Church occupies a special place in the historical and philological studies of the culture of the Christian East. Starting from the 19th century, Western and Eastern specialists in their works mainly assessed the historical and philological importance of the monuments of medieval Armenian canon law. Despite a considerable amount of works and researches, the theological assessment of the canon law of the Armenian Apostolic Church still remains insignificant. Hence, a great number of questions touching on the theological content and meaning of the canon law are still waiting for scientific appraisal in the light of the Armenian Church tradition. The author's goal in this article is to systematize questions and perspectives regarding the theological significance and content of the tradition of medieval Armenian canon law.



ԱԹԵՆԱԳՈՐԱՍ ԱԹԵՆԱՑԻ

**ԱԹԵՆԱՑԻ ՔՐԻՍՏՈՆՅԱ ՓԻԼԻՍՈՓԱ ԱԹԵՆԱԳՈՐԱՍԻ
ԽՆԴՐԱԳԻՐՆ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ
Մարկոս Ավրելիոս Անտոնինոսին եւ Լուկիոս Ավրելիոս Կոմմոդոսին՝
Հայոց եւ Սարմատացվոց ինքնակալ միապետներին եւ,
որ ամենից գերիվեր է, փիլիսոփաներին¹**

Սկիզբը՝ նախորդիվ

ժէ. Ի պաշտպանություն իմ գործի՝ հարկադրված եմ ներկայացնել ստույգ ապացույցներ աստվածների անունների այն առնչությամբ, որ դրանք նորելուկ են, իսկ դրանց պատկերների առնչությամբ, որ կերտված են, այսպես ասած, երեկ կամ առաջին օրը: Դուք ինքներդ՝ իբրեւ այս հնախոսություններին բոլորից քաջատեղյակ այրեր, հիանալի գիտեք դա: Այսպես, ես պնդում եմ, որ Օրփեոսը, Հոմերոսը եւ Հեսիոդոսը անուններ եւ ծննդաբանություն են տվել նրանց, ում աստվածներ են անվանում: Այդ մասին վկայում է նաեւ Հերոդոտոսը. «Կարծում եմ, որ Հեսիոդոսն ու Հոմերոսն ինձանից ավագ կլինեն ոչ ավելի քան չորս հարյուր տարով: Եւ նրանք են, որ հելլենների համար ստեղծել են աստվածների տոհմագրությունը, անուններ տվել նրանց, սահմանել նրանց մատուցվելիք պատիվները, նրանց գործունեությունը եւ նկարագրել նրանց արտաքին տեսքը»²: Իսկ նրանց պատկերները գործածության մեջ չէին, քանի դեռ չկային կերտարվեստը, գեղանկարչությունն ու քանդակագործությունը, քանի դեռ ի հայտ չէին եկել Սաբրիոս Սամոսացին, Կրատոնոս Սիկիոնացին, Կլեանթոս Կորնթացին եւ կորնթացի աղջիկը: Սաբրիոսը հորինեց գծագրությունը՝ արեգակի վրա պատկերելով նժույգի ուրվապատկերը, իսկ Կրատոնոսը՝ գեղանկարչությունը՝ սպիտակեցրած տախտակի վրա նկարելով տղամարդու եւ կնոջ ուրվապատկերներ, իսկ այն

¹ Բնագիրը տե՛ս «Антология: Ранние Отцы Церкви», Брюссель, 1988, էջ 410–449: Թարգմանչի ծանոթագրությունները հետալսու կտրվեն կարգային համարի հետ դրված աստղանիշով:

² ՀԵՐՈԴՈՏՈՍ, Պատմություն, գր. Բ., 53:

աղջիկը հնարեց կերտարվեստը. սեր տածելով մի մարդու հանդեպ՝ նա պատի վրա գծագրեց նրա քնած ուրվապատկերը, իսկ նրա հայրը, կատարյալ նմանությամբ ուրախացած (նա բրուտագործ էր), կտրեց հանեց նկարը՝ այն կավով լցնելով: Ցայսօր էլ այդ պատկերը պահվում է Կորնթոսում³:

Նրանցից հետո ապրած Դեդալոսն ու Թեոդորոս Միլետացին դրան հավելեցին արձաններ ու քանդակներ: Առհասարակ պատկերներն ու արձաններն ի հայտ եկան վերջերս, այնպես որ կարելի է ամեն աստծու վարպետին հականե-հանվանե հիշատակել: Այսպես, Արտեմիս Եփեսացու եւ Աթենասի, կամ ավելի լավ է՝ Աթիլասի (նա Աթիլա⁴ է կոչվում, ինչպես ասում են գաղտնիքներ իմացող մարդիկ, որովհետեւ հին ժամանակներում կերտվել էր ձիթենու ծառից), իսկ նրա արձանը՝ նստած վիճակում, կերտել էր Դեդալոսի աշակերտ Էնդեւսը: Ապոլլոն-Պյութիոսը Թեոդորոսի եւ Տերեկլասի ձեռքի գործն է: Ապոլլոն Դելոսացին եւ Արտեմիսը՝ Իդեկտեոսի եւ Անգելլիոնոսի, Հերա Արգոսցին եւ Սամոսացին՝ Սմիլիդոսի, իսկ մնացյալ արձանները Ֆիդասի ձեռքի գործերն են: Հետերայի տեսքով կնիդոսյան Վեներան Պրակսիտելեսի ստեղծագործությունն է, Ասկլեպոս էպիդաւրոսցին՝ Ֆիդասի աշխատանքը: Կարճ ասած՝ չկա մի արձան, որն իր գոյությունը մարդուց ստացած չլիներ: Այսպիսով, եթե նրանք աստվածներ են, ապա ինչո՞ւ ի սկզբանե գոյություն չունեին: Ինչո՞ւ են իրենց կերտողներից երիտասարդ: Ինչո՞ւ իրենց գոյության համար մարդիկ ու նրանց արվեստն էր հարկավոր: Դրանք հողի, նյութի եւ հմուտ աշխատանքի արգասիքներն են:

ԺԸ. Ոմանք, սակայն, ասում են, որ դրանք սոսկ պատկերներ են, իսկ աստվածները նրանք են, որոնց պատվին կերտվել են այդ պատկերները, որ պաղատանքները, որոնցով դիմում եմ սրանց, եւ զոհերը նվիրված են աստվածներին եւ մատուցվում են հանուն նրանց, քանզի դժվար է աստվածներին բացահայտ⁵ տեսնել, եւ իբրեւ այս բանի արդար հաստատում՝ որոշ կուռքերի գործողություններն են պատկերում: Այդ իսկ պատճառով ուսումնասիրենք, թե ինչ գործություն է ամփոփված աստվածների անուններում: Բայց նախքան ուսումնասիրությունը ձեռնամուխ լինելը, խնդրում եմ Ձեզ, ո՛վ մեծափառ ինքնակալներ, ներել ուղիղ

³ Տե՛ս նաեւ Պլինիոս Ավագ, Բնական պատմություն, Լե., 12:

⁴ Ἀθηλας այսինքն՝ մի կրծքով՝ ամազոնուհիների նման:

⁵ Հոմերոս, Իլիական, Ի., 131:

դատողություններ անող մարդուն: Ես միտք ունեմ ոչ թե դիմակազերծել կուռքերին, այլ զրպարտությունները հերքելով՝ արդարացնել մեր հավատքը: Դուք Ձեր իսկ օրինակով կարող եք երկնքի արքայության մասին պատկերացում կազմել, քանզի ինչպես Ձեզ՝ ի վերուստ թագավորություն ստացած հորն ու որդուն, ինչպես ասում է մարգարեական հոգին. «Թագավորի սիրտը Աստծու ձեռքում է»⁶, ամեն ինչ հնազանդվում է [Ձեզ], այդպես էլ ամեն ինչ հնազանդվում է Աստծուն եւ Նրա Խոսքին՝ իբրեւ Նրանից անբաժան Որդուն: Արդ, նախեւառաջ ուշադրություն դարձրե՛ք հետեւյալին: Ոչ թե աստվածները, ինչպես ասում են, ի սկզբանե կային, այլ նրանցից յուրաքանչյուրը ծնվեց այնպես, ինչպես որ մենք ենք ծնվում: Այս հարցում բոլորը համակարծիք են: Այսպես, Հոմերոսն ասում է. «Անմահների հայրը Օվկիանոսն է, եւ մայրը՝ Թետիսը»⁷:

Իսկ Օրփեոսը, որն առաջինն էր հնարել աստվածների անունները, շարադրել էր նրանց ծննդաբանությունը եւ պատմել նրանցից յուրաքանչյուրի սխրանքները, եւ ամենավստահելի աստվածաբանն էր համարվում, այնպես որ նրան շատ հարցերում հետեւում էր Հոմերոսը հատկապես աստվածների հարցում, աստվածների ծնունդը ջրից է դուրս բերում. «Օվկիանոսը, որը ծնող հայր է բոլոր արարածոց առհասարակ»⁸:

Ջուրը, ըստ նրա ուսմունքի, ամենայն ինչի սկիզբն է. ջրից առաջացավ տիղմը, իսկ դրանից՝ վիշապ-կենդանին, որին սերտաճեց առյուծի գլուխը, իսկ այս երկու գլուխների մեջտեղում [չ]աստծու երեսն էր՝ Հերակլեսի կամ Կրոդոսի [բն. այսպ.] անվամբ⁹: Այս Հերակլեսը արտասովոր մեծություն ձու ծնեց, որը երբ լցվեց, ծնողի ուժեղ ճնշման ազդեցությամբ, երկու մասի տրոհվեց. վերին մասը երկնքի տեսքն ընդունեց, իսկ ներքինը՝ երկրի: Այսպես առաջացավ մարմնեղեն դիցուհի երկիրը: Երկիրը, երկրի հետ միախառնվելով, կյանքի կոչեց երեք կանանց՝ Կլոթոյին, Լաբեսիսին ու Ատրոպեին եւ հարյուրձեռքանի այրերի՝ Կոտտիս Գիգոասին, Բրիարեոսին եւ Կիկլոպներին, Բրոնտեոսին, Ստերոպեոսին եւ Արգեսին: Իմանալով, որ այդ զավակները իրեն զրկելու են իշխանությունից՝ կապկպում ու տարտարոսն է նետում նրանց: Ուստի ցասումով լցված երկիրը Տիտաններ է կյանքի կոչում. «Պատվարժան Գեան ծնեց երկնային

⁶ Առակ, ԻԱ. 1:

⁷ Հոմերոս, Իլիական, ԺԲ., 302. տե՛ս Հոմերոս, Հորդորներ առ հելլենս, գլ. Բ.:

⁸ Տե՛ս Հոմերոս, Իլիական, ԺԴ., 246: Տե՛ս Հոմերոս, Հորդորներ առ հելլենս, գլ. Ե.:

⁹ Այսինքն՝ վիշապի կամ առյուծի գլուխների միջեւ:

զավակների, որոնց Տիտաններ կոչեցին, քանզի դրանք վրեժ էին լուծում աստղազարդ երկնքից»¹⁰:

ԺԹ. Այսպիսին է ե՛լ տիեզերքի, ե՛լ հեթանոսների պաշտած աստվածների նախասկզբնական ծագումը: Ի՞նչ է այս ամենից հետեւում: Այն, որ աստվածություն համարվող ամեն մի էակ կեցություն սկիզբ ունի: Իսկ եթե կար ժամանակ, երբ նրանք չկային, ինչպես այդ իսկ են վկայում նրանց մասին պատմողները, ապա դրանք աստվածներ չեն: Արդ, անսկիզբը հավերժ է, իսկ այն, ինչ կեցություն է ստացել, ենթակա է քայքայման: Ասում եմ այն, ինչ փիլիսոփաներն են ասում. «Հարկ է զանազանել այն, ինչ մշտագո ու անսկիզբ է, եղականից, որ երբեք գոյավոր չի եղել»¹¹:

Մտահասանելիի եւ զգայականի շուրջ խորհրդածելիս՝ Պլատոնն ուսուցանում է, որ մտահասանելին՝ մշտագոն, սկիզբ չունի, իսկ անգո՝ զգայականը, կեցություն է ստացել ժամանակի մեջ եւ սկիզբ ու վերջ ունի: Նույն կերպ եւ ստորիկյաններն են ասում, որ ամեն ինչ հոր ճարակ կդառնա եւ կրկին գոյություն կկոչվի, քանի որ աշխարհը այլ սկիզբ կստանա:

Եթե, ըստ նրանց կարծիքի, երկու պատճառ լինելով հանդերձ, մեկը գործուն ու կառավարող, այսինքն՝ տնօրինություն, մյուսը՝ տառապող ու փոփոխական, այսինքն՝ նյութ, այդուհանդերձ, անհնար է, որ սկիզբ ստացած աշխարհը՝ տնօրինված լինելով հանդերձ, անփոփոխ մնար, ապա ինչպես կարող են անփոփոխ մնալ աստվածները, որոնք ի բնե գոյություն չունեին, այլ կեցության սկիզբ են առել:

Ինչո՞վ են, ուրեմն, ջրից ստեղծված այդ աստվածները ջրից լավ: Բայց եւ ջուրն ամենի սկիզբը չէ, ինչպես նրանք են կարծում, քանզի պարզ ու համասեռ տարրերից ի՞նչ կարող էր առաջանալ: Նյութը վարպետի, իսկ վարպետը նյութի կարիքն ունի: Եւ ի՞նչ կերպ առանց նյութի ու վարպետի ձեւեր կառաջանային: Հիմնավոր չէ նաեւ այն, որ իբրեւ թե նյութը Աստծուց հին է ժամանակով, որովհետեւ առաջ բերող պատճառն անհրաժեշտաբար պիտի գոյություն ունենա նախքան այն, ինչ նրանից է առաջանում:

Ի. Եթե աստվածների մասին նրանց անհեթեթ ուսմունքը սահմանափակվեր սոսկ նրանով, որ աստվածներին ջրից ծնված ու կյանքի կոչված համա-

¹⁰ Այս բանաստեղծությունները Օրփեոսի երգերի շարքում են (տե՛ս G. HERMANN (Hrsg.), Orphica, Leipzig, 1805):

¹¹ ՊԼԱՏՈՆ, Տիմեոս, տե՛ս ՀՈՒՍԻՆՈՍ, Հորդորներ առ հելլենս, գլ. ԻԲ.:

րեին, ապա ես, ապացուցելով, որ ամենայն սկիզբ առած բան ապականացու է, կանդորադառնայի մեր դեմ հարուցած այլ մեղադրանքներին եւս:

Նրանք, սակայն, դրանից բացի, նրանց մարմնեղեն ձեւերով եւս օժտում են: Հերակլես աստծուն գալարվող վիշապի¹² տեսքով են պատկերում, ուրիշներին հարյուրձեռքանի անվանում, իսկ Զեւսի դստեր մասին, որին նա լույս աշխարհ էր բերել Հռեա կամ Դեմետրա մորից, ասում են, որ, բացի երկու սովորական աչքերից, եւս երկուսն ուներ ճակատի վրա, թռչնի կտուց՝ պարանոցի հետին մասում եւ եղջյուրներ: Իր երեխայի հրեշավորությունից սարսափահար եղած Հռեան փախչում է եւ կուրծք չի տալիս նրան: Այդ պատճառով էլ նա խորհրդավորապես Աթիլաս է կոչվում, իսկ սովորաբար Պրոզերպինա եւ Կորա: Բիբի (Κόρη) պատճառով Կորա է կոչվում նաեւ Աթենասը, որը, ի միջի այլոց, չի նույնանում Պրոզերպինայի հետ: Ընդ որում, նրանց սխրանքները, ինչպես կարծվում է, ճշտությամբ են նկարագրված: Այսպես, իբրեւ թե Քրոնոսը կտրել է իր հոր ամոթույքը, նրան մարտակառքից տապալել, սպանել արական սեռի իր երեխաներին ու խժուել, իսկ Զեւսը, իր հորը կապելով, տարտարոսը նետեց այնպես, ինչպես Ուրանոսն իր զավակներին. նա իշխանության համար պատերազմել է տիտանների դեմ եւ հետապնդել իր մայր Հռեային այն բանի համար, որ չի ցանկացել ամուսնանալ իր հետ: Իսկ երբ նա վիշապուհի դարձավ, նա եւս, վիշապ դառնալով, կենակցեց նրա հետ՝ նրան կապելով այսպես կոչված հերկուլեսյան օղակով, որի միախառնման խորհրդանիշը Հերմեսի գավազանն է: Հետո նա արյունապղծութուն գործեց իր դստեր՝ Պրոզերպինայի հետ եւ վիշապի տեսքով բռնաբարեց նրան, որից եւ ունեցավ իր որդի Դիոնիսոսին: Այսպիսով՝ հարկ է, համենայն դեպս, ասել հետեւյալը. ինչ բարի եւ օգտակար բան կա այս պատումներում, որ մենք կարողանայինք հավատալ, որ իբր Քրոնոսը, Զեւսը, Կորան եւ այլք աստվածներ են: Միթե նրանց մարմնական ձեւերը: Ո՞վ խոհեմ կամ մտածող մարդկանցից կհավատա, որ քարբը աստծուց է ծնվել: Օրփեոսն ասում է. «Փանիսը մեկ այլ երեխա ծնեց՝ [մոր իսկ] սրբազան արգանդից սարսափելի՝ սարսափազդու տեսքով քարբ օձի, որի գլխին մազեր կային եւ դեմքով բարետես էր, իսկ մնացյալ մասերը՝ պարանոցի վերին ծայրից սկսյալ, նման էին սարսափազդու վիշապի»¹³:

¹² Այս տեսքով էին եգիպտացիները պատկերում աշխարհն ստեղծողին, որը հույների համար Հերակլեսն էր:

¹³ Տե՛ս Հերմանի գրքի օրփեոսյան պարբերությունների միջեւ, Orphic P.:

Կամ ո՞վ կընդունի, որ այդ նույն Փանիսը անդրանիկ աստվածն է, քանզի ձվից է ելել, վիշապի մարմին կամ տեսք ունեն, որին կուլ էր տվել Զեւսը, որ անհասանելի մնա: Եթե նրանք ոչ մի բանով չեն տարբերվում ամենաստոր կենդանիներից, քանզի ականերեւ է, որ աստվածությունը պիտի տարբերվի երկրային արարածներից, ուրեմն նրանք աստվածներ չեն: Ուրեմն էլ ինչի՞ համար դիմենք նրանց, երբ նրանք իրենց ծնունդով իսկ հար եւ նման են անասունների ծնունդին եւ զազանակերպ ու ալլանդակ են:

ԻԱ. Եթե նույնիսկ պնդեին, թե [չ]աստվածները մարմին, արյուն, սերմ, ցասման եւ տուփանքի կրքեր ունեն, ապա այդ դեպքում եւս բոլոր այդ խոսքերը պիտի ցնորամոտություն եւ զավեշտ համարվեին: Քանզի Աստծու մեջ ո՛չ ցասում կա, ո՛չ բղջախոհություն եւ ցանկություն, ո՛չ որդեծնության սերմ: Թող, թեկուզ մարմին էլ ունենային, համենայն դեպս, թող ցասումից ու կատաղությունից վեր կանգնած լինեն, որպեսզի չերեւա Աթենասի զայրույթը.

«Զեւսի դեմ սրտմտած Աթենասը ձայն չհանեց

Մինչ ամենի մի բարկություն ցունց էր հանում նրա հոգին»¹⁴,

եւ որպեսզի Հերան այդպես չներկայանար.

«Սակայն Հերան չկարեցավ իր զայրույթը սանձահարել.

Ու սիրտը սեւ մաղձով լեցուն այս խոսքերը պոռակաց [Զեւսին]¹⁵:

Նրանք մաւե ողբից էլ վեր կանգնած պիտի լինեն.

«Մի սիրելի մարդ եմ տեսնում իմ աչքերով

Պարսպի շուրջ հալածական, որին սրտանց ցավում եմ ես»¹⁶:

Ես մաւե զայրույթին ու ողբին անձնատուր եղած մարդկանց եմ տգետ ու բիրտ համարում, բայց եթե «մարդկանց ու աստվածների հայրը» ողբում է որդուն՝ ասելով.

«Վա՛յ ինձ, մարդկանց մեջ ամենեն իմ սիրելի Սարպեդոնին

Վիճակված է հակատագրից ընկնել ձեռքով Պատրոկլեսի»¹⁷,

եւ չկարողանալով իր լաց ու կոծով փրկել նրան վտանգից.

«Ընկավ արի մի մարդ ահա՛, շֆեղ որդին Արամազդի

Սարպեդոնը, եւ չհասավ Զեւսը որդուն իր զորավիգ»¹⁸:

¹⁴ ՀՈՄԵՐՈՍ, *Իլիական*, Թ., 23:

¹⁵ ՀՈՄԵՐՈՍ, *Իլիական*, Դ. 24:

¹⁶ Անդ, ԻԲ., 5–6:

¹⁷ Անդ, ԺԶ., 443:

¹⁸ Անդ, ԺԶ., 527–528:

Ուրեմն ով ասես որ չի կշտամբի խելահեղությունն այն մարդկանց, ովքեր այս հեքիաթների հիմամբ իրենք իրենց աստվածության պաշտողներ են համարում: Թող աստվածները մարմիններ ունենան, բայց վերքեր չստանան, թող Ափրոդիտեի մարմինը չվիրավորվի Դիոմեդեսի ձեռամբ.

«Ինձ Տիդես որդին խոցեց, Դիոմեդեսն ամբարտավան»¹⁹,

կամ հոգին՝ Արեսից.

«Ինչպե՞ս է միշտ անարգում ինձ, կրկնակաղիս, դուստրը

Զեսի՝ Ափրոդիտեն,

Որ կապվել է ամբարտավան Արեսի հետ գաղտնի սիրով²⁰ [ու միավորվելով՝ չֆնաղ մարմինը խոշտանգել]²¹:

Տիտանների դեմ կռվում Զեսի օգնական եւ ահեղ պատերազմիկը Դիմեդիոսից էլ թույլ է.

«Արեսի պես կատաղած էր նիզակ նոնողը»²²:

Լոի՛ր Հոմերոս. Աստված չի մոլեգնում: Այնինչ դու Նրան ինձ ներկայացնում ես ե՛ւ չարագործ, ե՛ւ մարդակոպ.

«Բոլորն Արեսի ձեռքից բռնած՝ այս խոսքերը ասաց նրան.

«Արես, Արես պարսպաֆանդ, արյունոռուշտ ու մարդակոպ»²³:

Նկարագրում ես նաեւ նրա գործած շնություններն ու կապանքները.

«Ուրախությամբ նա նրա հետ պառկեց այնտեղ մի մահիճում:

Եւ ֆնեցին նրանք ապա, մինչդեռ նրանց իսկույն եւեթ

Ամենագետ Հեփեստոսի այն նրբագույն վարմը այնքան ամուր պատեց,

Որ ոչ միայն չէր կարելի բարձրացնել այն, այլ դժվար էր շարժել անգամ

Անդամները իրենց մարմնի»²⁴:

Եւ որքան ուրիշ բազում նմանօրինակ պիղծ զառանցանքներ էլ են պատմում նրանք: Ուրանոսն ամորձատվում է, Քրոնոսը կապկապվում եւ նետվում է տարտարոս, տիտաններն ապստամբություն են բարձրացնում, Ստիգոն ընկնում է մարտի դաշտում. նրանք մինչեւ իսկ մահկանացուներ էլ են, սիրահարվում են մեկմեկու, սիրահարվում մարդկանց.

«Անքիսեսի ուստրը, որին ծնեց Ափրոդիտե աստվածուհին,

¹⁹ Անդ, Ե., 374:

²⁰ Հոմերոս, Ողիսական, Ը., 308 եւ հաջորդ համարները. Հոմերոս, Իլիական, Ե., 858:

²¹ * Փակագծերի մեջ առնված կիսատողը բացակայում է հայերեն թարգմանության մեջ, եւ այն տալիս ենք ըստ ռուս թարգմանության:

²² Հոմերոս, Իլիական, ԺԵ., 605:

²³ Անդ, Ե., 31:

²⁴ Հոմերոս, Ողիսական, Ը., 296–298:

Իդա լեռան վրա դյուցազն Անիքսեսի հետ պառկելով»²⁵:

Արդյոք չէ՞ն սիրահարվում: Չէ՞ն տառապում արդյոք: Իրապեն աստվածներ են՝ զերծ ամենայն կրքից... Իսկ եթե Աստված աստվածային տնօրինությամբ մարմնացած էլ լիներ, մի՞թե այդժամ տուփանքի ստրուկը կդառնար:

«Ոչ մի աստվածուհու եւ երկրային ոչ մի կնոջ սերը այնպես ինձ չվառեց,

Չողողեց կուրծքս երբեք, չնվաճեց հոգին իմ վես

Ո՛չ Իսփոնի կինը, որին ցանկանալով մտա մի օր...

Ո՛չ գեղեցկոտն Դանայեն՝ Ակրիեսի դուստրը չֆնաղ...

Ո՛չ մեծամուն եւ հոշակված Փինիֆսի դուստրը մանկամարդ,

Ո՛չ Սեմելին, ո՛չ Ակլմենին, որոնց մտա Թեբեի մեջ

Եւ Ակլմենեն աշխարհ բերեց Հերակլեսին ուժգնասիրտ,

Իսկ Սեմեն՝ Դիոնիսին — ի խնդություն մահկանացոց...

Ո՛չ Դեմետրեն գեղազանգուր, շֆեղ բամբիջն ու գերափառ

Լետովնը վեհ,— եւ ոչ մեկին չեմ ցանկացել երբեփցե

Եւ ոչ էլ քեզ մի այլ անգամ՝ այնպես վառ, կիզիչ կրֆով,

Ինչպես որ արդ քեզ եմ տենչում բռնկված հուր մի ցանկությամբ»²⁶:

Այսպես խոսողը գոյության սկիզբ ունի, ենթակա է փայլայման եւ աստվածային ոչ մի բան իր մեջ չունի: Բացի այդ, աստվածները ծառայում են մարդկանց.

«Ով Ադմետոսի տուն արհայական, ուր ես՝ աստվածս,

համբերատար բավարարվում եմ բաժնով ստրուկներին»²⁷:

Նաեւ նախորներ են արածեցնում.

«Այդ երկիր գալով՝ ես իմ տիրոջ ցուլերն էի արածեցնում ու տունը նրա պահպանում»²⁸:

Նշանակում է Ադմետեսը աստծուց բարձր է: Ո՛վ գուշակ ու մարգարե՝ մարդկանց ապագան կանխասող: Չգուշակեցիր սիրելիիդ մահը՝²⁹ ու մինչեւ իսկ սպանեցիր ընկերոջդ՝³⁰ քո իսկ ձեռքերով:

²⁵ Անդ, Բ., 810 եւ հաջորդ համարները:

²⁶ ՀՈՄԵՐՈՍ, Իլիական, ԺԴ., 323—337: Այսպես է ասում Յուպիտերը Յունոնային կամ Հերային (տե՛ս ՀՈՒՍՏԻՆՈՍ, Հորդորներ առ հելլենս, գլ. Բ.):

²⁷ ԵՒՐԻՊԻԴԵՍ, Ալկեստա 1 եւ հաջորդ համարները՝ Ապոլլոնի խոսքերը:

²⁸ Անդ:

²⁹ Այսինքն՝ Աքիլլեսին (տե՛ս ՀՈՒՍՏԻՆՈՍ, Հորդորներ առ հելլենս, գլ. Բ.):

³⁰ Ամիքսոսի որդի Հիացինտոսը, որն անզգուշաբար սպանվել էր Ապոլլոնի ձեռամբ, երբ միասին խաղում էին:

«Իսկ ես կարծում էի,— ասում է էսքիլեսը՝ ծաղրուծանակի ենթարկելով Ապոլլոնի սուտ մարգարեությունները,— թե Ֆեբոսի շուրթերից ելած խոսքերը սուտ չեն եւ լի են մարգարեական տեսությունմբ: Նա, ով երգում է, ով ներկա է խնջույքներին, ով ասաց այս բանը, հենց նա էլ սպանեց իմ որդուն»³¹:

Շարունակությունը՝ հաջորդիվ

Ռուսերենից թարգմանությունը եւ ծանոթագրությունները՝
ԳՐԻԳՈՐ ԴԱՐԲԻՆՅԱՆԻ



³¹ Հատված էսքիլեսի անհայտ ստեղծագործությունից:

ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ ՊԻ, ՄՄ

ՈՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ Է «ԴԱՇԼՆՅ ԹՂԹՈՒՄ» ԿԵՐՊԱՎՈՐԵԼ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉԸ

«Դաշանց թղթի» վերաբերյալ գրվել են բազմաթիվ արժեքավոր աշխատություններ, որոնցում քննության առարկա են եղել նրա ստեղծման նպատակը, ժամանակը, ինչպես նաև հեղինակին ու հասցեատիրոջը վերաբերող հարցերը¹։ Ուսումնասիրողները թեև համակարծիք են, որ այն ստեղծվել է Կիլիկյան Հայաստանում ԺԲ.—ԺԳ. դարերում, սակայն առաջարկում են այդ դարերի սահմաններում առավել որոշակի ժամանակահատվածներ՝ ԺԲ. դարակես, նույն դարի վերջ եւ հաջորդ դարասկիզբ, ինչպես նաև ԺԳ. դարի առաջին կես։ Հաշվի առնելով «Դաշանց թղթի» թվագրման վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ կատարված ծավալուն քննությունը՝ զերծ կմնանք այդ խնդիրը սույն հոդվածում արծարծելուց՝ համերաշխելով ԺԲ. դարավերջից ԺԳ. դարասկիզբը մատնանշող տարբերակին²։ Վավերագրի բովանդակությունն ամբողջությամբ ներկայացնելը նույնպես դուրս է մեր խնդրի շրջանակից, առավել եւս, որ այն հանգամանորեն քննվել է բազմաթիվ աշխատություններում, ուստի կբավարարվենք նշելով, որ այնտեղ նկարագրված են Տրդատ Գ. Մեծի (287—330 թթ.) եւ Ս. Գրիգոր Լուսավորչի այցը

¹ «Դաշանց թղթի» քննական հրատարակությունն արժեքավոր ուսումնասիրությամբ տե՛ս Z. POGOSSIAN, The letter of Love and Concord, A revised diplomatic edition with historical and textual comments and english translation, Leiden.Boston, 2010. Հ. ԲԱՐԹԻԿՅԱՆ, «Դաշանց թուղթ». կազմը, ստեղծման ժամանակը, հեղինակն ու նպատակը, ՊԲՀ, 2004, թ. 2, էջ 65—116. M. E. SIRINIAN, “The Letter of Love and Concord” between Rome and Armenia. A Case of Forgery from the Crusaders Period. *Orientalia Lovaniensia Analecta*, 125. East and West in the Crusader States, Context — Contacts — Confrontations, III, edited by K. Ciggaar and H. Teule, Leuven, 2003, էջ 79—99. նույն հեղինակի՝ «Սեղբեսորոսի Վարքը» եւ «Դաշանց թուղթը», ԲՄ, հտ. 17, Երեւան, 2006, էջ 53—77. P. HALFTER, Das Papsttum und die Armenier im Frühen und Hohen Mittelalter: Von den ersten Kontakten bis zur Fixierung der Kirchenunion im Jahre 1198, Böhlau, Verlag, Köln, Wien, Weimar, 1996. նույն հեղինակի՝ «L’Église arménienne entre la Papauté et les Byzantins aux XIIe et XIIIe siècles», «L’Église arménienne entre Grecs et Latins fin XIe — milieu XVe siècle», Paris, 2009, էջ 71—74։

² Համակարծիք ենք Զարուհի Պողոսյանի թվագրմանը (տե՛ս Z. POGOSSIAN, The letter of Love and Concord, էջ 119—125)։

Հռոմ, Կոստանդինոս Մեծ կայսեր (306—337 թթ.) եւ Սեղբեստրոս (314—335 թթ.) պապի հետ կնքված դաշինքը, Հայոց արքայի թագադրումը կայսրից եւ կաթողիկոսի ձեռնադրությունը Հռոմի պապից:

Գրեթե աներկբա ընդունված է, որ «Դաշանց թղթի» գլխավոր դերակատարներից Տրդատ Գ. Արշակունին մարմնավորել է Կիլիկյան Հայաստանի առաջին թագավոր Լեւոն Ա. Մեծագործին (1187/98—1219 թթ.)³: Ի տարբերություն արքայի՝ այնքան էլ հստակ չէ, թե ում է կերպավորել Ս. Գրիգոր Լուսավորիչը: Թվում է՝ խնդիրը կարելի է լուծել՝ մատնացույց անելով Լեւոն Ա.-ի օրոք աթոռակալած Հայոց հայրապետին: Սակայն բանն այն է, որ այդ ժամանակահատվածում, եթե նկատի ունենաք նաեւ նրա իշխանության շրջանը՝ 1187—1198 թթ., Հայոց Եկեղեցին առաջնորդել են Գրիգոր Դ. Տղան (1173—1193 թթ.), Գրիգոր Ե. Քարավեժը (1193—1195 թթ.), Գրիգոր Զ. Ապիրատը (1195—1203 թթ.) եւ Հովհաննես Զ. Սսեցին (1203—1221 թթ.): Արդ, նրանցից որին վերապահել «Դաշանց թղթում» ի դեմս Ս. Գրիգոր Լուսավորչի ներկայանալու պատիվը: Խնդրի լուծումը փոքր-ինչ բարդանում է, եթե նկատի ենք ունենում, որ «Դաշանց թուղթը» ստեղծվել է ոչ թե մեկ, այլ մի քանի տարիների ընթացքում, որոնք, հնարավոր է, գերազանցում են մեկ տասնյակը եւ կարող են համընկնել նշված կաթողիկոսներից առնվազն երկուսի գահակալման ժամանակին:

Որոշելու համար՝ «Դաշանց թղթում» Ս. Գրիգոր Լուսավորչին այս հայրապետներից որին է կերպավորել, հարկ է պարզել, թե այդ վավերագրում Հայոց կաթողիկոսի ձեռնադրությանը, իշխանական ազդեցությանը վերաբերող սահմանումները, հատկապես Հռոմի պապից ստացած առանձնաշնորհումները նրանցից որի գահակալման հանգամանքներին են առավել բնութագրական: Բացառելի չէ, որ «Դաշանց թղթում» Ս. Գրիգոր Լուսավորիչը ներկայացվել է որպես վերոնշյալ հայրապետների, անգամ՝ նրանց նախորդած Ներսես Դ. Շնորհալու (1163—1173 թթ.)⁴ եւ Գրի-

³ Տե՛ս Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Երեւան, 1957, էջ 75. P. HALFTER, L'Eglise arménienne entre la Papauté et les Byzantins aux XII^e et XIII^e siècles, էջ 72. Z. POGOSSIAN, The letter of Love and Concord, էջ 121: Հրաչ Բարթիկյանը գրում է, որ «Դաշանց թուղթը» «արտացոլում է Կիլիկիայի հայկական պետության հզորացման շրջանը, երբ Լեւոն II-ի օրոք այն վերածվեց հզոր թագավորության» (Հ. ԲԱՐԹԻԿՅԱՆ, «Դաշանց թուղթ». կազմը, ստեղծման ժամանակը, հեղինակն ու նպատակը, էջ 110): Նա Թուղթը թվագրում է ԺԳ. դարի առաջին կեսով՝ փաստորեն նկատի ունենալով ոչ միայն Լեւոն Ա.-ի, այլ նաեւ Հեթում Ա.-ի (1226—1270 թթ.) գահակալման շրջանը (անդ, էջ 110—112):

⁴ Հաշվի առնելով, որ «Դաշանց թղթում» Ս. Գրիգոր Լուսավորչին անվանված է «կենդանի վկա», որպիսի բնութագրմամբ հիշվում է նաեւ Ներսես Դ. Շնորհալին՝ էռնա Մանե Շիրինյանն

գոր Գ. Պահլավունու (1113–1166 թթ.)⁵ հավաքական կերպար: Ուստի, այս կաթողիկոսներից որեւէ մեկի օգտին հոգւածում ներկայացված մեր եզրակացութիւնները չունեն անառարկելի համարվելու հավակնութիւն եւ կարող են ընդունվել որպէս վարկած-տեսակետներ:

Խնդրի պարզաբանման համար «Դաշանց թղթից» առանձնացրել ենք չորս՝ երկու հիմնական եւ երկու լրացուցիչ (սրանց կանգրադառնանք հոգւածի վերջում) հանգամանք՝ ա. Ս. Գրիգոր Լուսավորչի՝ Սեղբեստրոս պապից ձեռնադրութիւն եւ իշխանական տվչութիւնը խորհրդանշող նշանակներ (պալիում, խույր եւ այլն) ստանալը, բ. Արեւելքի պատրիարքութիւնների նկատմամբ (կամ՝ շրջանում) Հայոց կաթողիկոսութեանը վերապահված իշխանական ազդեցութիւնը:

Առաջինին վերաբերում են «Դաշանց թղթի» հետեւյալ տեղիները. «Սոքաւք ամենեքումբք եւ հզաւր աջով սուրբ առաքելոցս եւ նշանաւ խաչիս Քրիստոսի՝ ձեռնադրեցաք (Սեղբեստրոս պապը.— Վ. Թ.) զԿաթողիկոսն Հայոց զսուրբն Գրիգոր...»⁶, նաեւ՝ «Վասն որոյ եւ ես՝ Սեղբեստրոս, որ ականատես եղէ այսպիսի զարմանալեացս, որով պատուեաց Աստուած զՊարթեւն զայն մեծ, մեծարեցի եւ ես զնա ըստ իմում կարի, տալով նմա զվական իմ պատուական, որ էր լեալ սրբոյն Յակովբայ Տեառն եղբարն, առաջին եպիսկոպոսի Երուսաղէմի, նաեւ զամենայն զարդս հայրապետական անձին իմոյ ի ժամ ձեռնադրութեան, եւ զմատանին իմ խաչաձեւ, եւ զգաւազանն իմ գեղեցիկ ի գեղաղէշ ականց եւ ի մաքուր մարգարտաց յաւրինեալ...»⁷:

Հայտնի է, որ Ս. Գրիգոր Լուսավորչին ձեռնադրել է Կեսարիայի Ղեւոնդիոս հայրապետը: Բացի դրանից՝ Հայոց կաթողիկոսներից որեւէ մեկը, այդ թվում՝ Լեւոն Ա.-ի օրոք աթոռակալած հայրապետները, իրենց ձեռնադրութիւնը չեն ստացել Հռոմի Կաթողիկէ եկեղեցու առաջնորդից, այն էլ՝ Հռոմում: Այդ դեպքում ի՞նչ մեկնաբանութիւն տալ «Դաշանց թղթում» Ս. Գրիգոր Լուսավորչի՝ Սեղբեստրոսից ստացած ձեռնադ-

իր հոգւածում ենթադրում է, որ «Գրիգոր Լուսավորչի փոխարեն «Դաշանց թղթում» նկատի է առնված Շնորհալին» (Է. Մ. ՇԻՐԻՆՅԱՆ, «Սեղբեստրոսի Վարքը» եւ «Դաշանց թղթը», էջ 70):

⁵ Գրիգոր Գ.-ին նկատի ունենալով՝ Կիրակոս Գանձակեցին գրում է. «...զհին դաշինան Տրդատայ եւ սրբոյն Գրիգորի եւ Կոստանդիանոսի կայսեր եւ Սեղբեստրոսի հայրապետին վերստին նորոգեցին առ սովաւ» (ԳԻՐԱԿՈՍ ԳԱՆԶԱԿԵՅԻ, Պատմութիւն Հայոց, աշխատ.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երեւան, 1961, էջ 118):

⁶ Z. POGOSSIAN, The letter of Love and Concord, p. 392.

⁷ Անդ, էջ 402:

րությանը: Կարծում ենք՝ վերոբերյալ քաղվածքներում վավերագրի հեղինակը նկատի է ունեցել առնվազն հետևյալ հանգամանքները՝

— Հայոց կաթողիկոսի կողմից Հռոմի պապի գերագահության ընդունում,

— Հռոմի պապի կողմից Հայոց կաթողիկոսի իշխանության ճանաչում՝ նրան իշխանական տվյալությունն արտահայտող նշանակների, այդ թվում՝ պալիումի ընծայմամբ:

Առաջ անցնելով՝ նշենք, որ Հռոմի պապից իշխանական նշանակների ստացումը խիստ կարեւոր է խնդրո առարկա հարցի պարզաբանման համար:

Երկրորդ հանգամանքին առնչվում են «Դաշանց թղթի» հետևյալ քաղվածքները. «...ձեռնադրեցաք զկաթողիկոսն Հայոց զսուրբն Գրիգոր՝ պապ եւ պատրիարզ եւ հայրապետ, հրամանահան տիեզերական ժողովս, համապատիւ մեր հզաւր աթոռոյս եւ Երուսաղէմացոյն եւ Անտիոքացոյն եւ Աղէքսանդրացոյն»⁸, նաեւ՝ «Եւ պատրիարգարանքն երեքին՝ Երուսաղէմ[ի] եւ Անտիոք[այ] եւ Աղէքսանդրիայ, յորժամ պատրիարզ ձեռնադրեն, կամաւք եւ ընտրութեամբ հայոց հայրապետին լինիցի: Եւ որ ոք նոր նստցի յաթոռ պատրիարգութեան, զդաւանութիւն հաւատոյն իւրոյ, զոր պարտ էր մեզ ծանուցանել, զայն հայոց հայրապետին ծանուցէ, զի զնա (Ս. Գրիգոր Լուսաւորչին.— Վ. Թ.) կարգեցաք մեզ (Սեղբեստրոս պապի.— Վ. Թ.) զլիափոխան եւ հրամանահան ի վերայ ամենայն ասիական միջնաշխարհիդ, եւ յելս արեւու...»⁹:

Ինչպես առավել մանրամասն կտեսնենք ստորեւ, այս քաղվածքների բովանդակությունը, այն է՝ Արեւելքի պատրիարքությունների նկատմամբ Հայոց կաթողիկոսին վերապահված հավասարազոր, նույնիսկ նախագահ իշխանությունը, պետք է հասկանալ ոչ թե ուղիղ իմաստով, այլ մեկնաբանել իբրեւ Մերձավոր Արեւելքում, ի մասնավորի՝ տեղի լատին եկեղեցական աթոռների (Անտիոքի եւ Երուսաղեմի լատին պատրիարքությունների) շրջանում Հռոմի պապի կողմից Հայոց Եկեղեցու առաջնորդի ազդեցության ճանաչում կամ ամրագրում: Նշենք, որ Անտիոքի պատրիարքության եւ նրա թեմերի նկատմամբ Հայոց կաթողիկոսությունն իր հավակնությունները բացահայտ արտահայտել էր դեռեւս

⁸ Անդ, էջ 392:

⁹ Անդ, էջ 396:

1170-ական թթ.: Այսպես՝ 1165 թ. սկսված հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների ընթացքում Կոստանդնուպոլսի Միքայել Ա. Ալեքսիոս պատրիարքի (1170—1177 թթ.)՝ 1171 թ. ամռանը¹⁰ Ներսես Դ. Շնորհալույն ներկայացրած ինը պահանջներից վերջինը վերաբերում էր Հայոց կաթողիկոսի թեկնածուի առաջադրման իրավունքը Բյուզանդիայի կայսրին վերապահելուն. «Եւ զի ընդունիցիք զառաջարկութիւն կաթողիկոսին՝ միայն ի թագաւորէն Հռոմոց»¹¹: Ժամանակի նշանավոր եկեղեցականներից Ներսես Լամբրոնացին ի պատասխան նշում է, որ դա հնարավոր է միայն հետեւյալ պայմանով. Անտիոքի պատրիարքությունն իր թեմերով պետք է անցնի Հայոց կաթողիկոսի իշխանության ներքո. «Եւ կալցէ զաթոռն Անտիոքայ կաթողիկոսն Հայոց. եւ զոր ինչ եկեղեցիք եւ սահմանք են ընդ իշխանութեամբ նորա յարեւելս եւ յարեւմուտս. եւ նոյն յաջորդեսցէ հրամանաւ թագաւորիդ զՀայոց սեռն, այլ՝ մինչեւ ի սպառ»¹², — կարդում ենք նրան վերագրվող «Դիսադրութիւնք հռոմոց զորս պահանջեն առ ի մէնջ ի պէտս խաղաղութեան, ընդ որս եւ լուծմունք առընթեր եղեալ» վերտառությամբ վավերագրում: Ներսես Լամբրոնացին այդ առաջարկը, ի շարս այլ դրույթների, պետք է ներկայացներ Հռոմկլայի եկեղեցական ժողովում՝ ի պատասխան բյուզանդական կողմի առաջադրած պահանջների¹³:

«Դաշանց թղթից» վկայաբերված քաղվածքները հուշում են, որ Ս. Գրիգոր Լուսավորչի կերպավորած հայրապետին պետք է փնտրել այն կաթողիկոսների շարքում, որոնք առնչություն են ունեցել Հռոմի պապական աթոռի հետ: Այս հանգամանքի հաշվառմամբ չենք դիտարկել Գրիգոր Ե. Քարավեժի թեկնածությունը, որն իր կարճատեւ աթոռակալման ընթացքում Հռոմի պապի հետ որեւէ հարաբերություն չի ունեցել: Համենայն դեպս, աղբյուրներում չենք գտնում հակառակը փաստող վկայություն:

¹⁰ Տե՛ս Ա. Բոքոսյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165—1178 թթ.), Երեւան, 1995, էջ 65—66:

¹¹ «Ընդհանրական թուղթք Սրբոյն Ներսիսի Շնորհալույ», Երուսաղէմ, 1871, էջ 157:

¹² Ա. Պալաւս, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի հայս եւ միութեան նոցա ընդ հռոմեական եկեղեցւոյ ի Փլորենտեան սինհոդոսի, Վենետիկ, 1887, էջ 266. հմմտ. Ա. Բոքոսյան, նշ. աշխ., էջ 204:

¹³ Տե՛ս Ա. Բոքոսյան, նշ. աշխ., էջ 204—205:

Գրիգոր Դ. Տղա

Նշված հայրապետներից (բացառյալ Գրիգոր Ե. Քարավեժը) բոլորն էլ այս կամ այն չափով հարաբերվել են Հռոմի՝ իրենց ժամանակ աթոռակալած քահանայապետների հետ, ինչի մասին վկայում են ոչ միայն պատմագրական երկերը, այլ նաեւ երկու Եկեղեցիների առաջնորդների փոխադարձ նամակները: Դրանք առանցքային կարեւորութեան աղբյուր են սույն խնդրի քննութեան համար:

Կաթողիկոսներից ժամանակով առաջինն աթոռակալած Գրիգոր Դ. Տղան, ինչպէս նկատել է Զարուհի Պողոսյանը, նաեւ առաջինն է Հայոց հայրապետներից, որը Հռոմի պապից խույր է ստացել¹⁴: Այդ մասին տեղեկանում ենք Լուկիոս Գ. պապի (1181–1185 թթ.)՝ Գրիգոր Դ. Տղային հղած 1185 թվակիր պատասխան նամակից եւ Վարդան Արեւելցու ժամանակագրական բնույթի աշխատութեանից: Այս աղբյուրները վկայում են ինչպէս խույրի, այնպէս եւ հոգեւոր բարձրագույն իշխանութեան այլ նշանակների, այդ թվում՝ պալիումի մասին, որոնք Լուկիոս Գ.-ն ընծայել է Գրիգոր Դ. Տղային: Հայոց կաթողիկոսին ուղղված պատասխանում Հռոմի պապը գրում է. «Ոմոփորոն քեզ, եղբայր կաթողիկոս, պալիում, որ է առաջին ամենայն պատուով. եւ խոյր զիմոյ գլխոյս առաքեցի, զգեստ պայծառութեան եկեղեցւոյ. զորս ընկալեալ ի մէնջ որպէս վայելանաս յայսմ աշխարհի՝ նոյնպէս զօրասցիր պայծառանալ ի հանդերձեալ կեանսն»¹⁵: Նամակին կից հիշատակարանում Ներսէս Լամբրոնացին հաստատում է այդ նշանակների ստացումը Հռոմի պապից. «Ի թուին Հայոց Ուր. (1185) եկն Գրիգոր եպիսկոպոս ի հայրապետէն Հռոմայ Լուսիոյ առ կաթողիկոսն մեր տէր Գրիգորիոս, որ էր ի սմանէ առաքեալ. եւ եբեր

¹⁴ Տէն Z. POGOSSIAN, նշ. աշխ., էջ 109: Ներսէս Դ. Շնորհալուն նվիրված ներբողում Ներսէս Լամբրոնացին գրում է, որ Հռոմի պապը Գրիգոր Գ.-ին «...գաւազան եւ քօղ յրդեալ, //զըրով ըզսէրըն պահանջեալ» (օգտագործել ենք Ներբողի՝ Ներսէս Շնորհալու «Թուղթ ընդհանրականին» (Ս. էջմիածին, 1865) կցված հրատարակութիւնը (ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ, Գովեստ ներբողական պատմագրական բանիւ յաղագս վարուց մեծի հայրապետին տեառն Ներսիսի Կլայեցոյ, էջ 478): Ներսէս Լամբրոնացին, ըստ ամենայնի, վկայում է Ինոկենտիոս Բ.-ի Գրիգոր Գ.-ին հղած պատասխան նամակի մասին, որը, ինչպէս հայտնի է, պահպանվել է միայն հայերեն թարգմանությամբ (նամակի մասին մանրամասն տես Պ. ԱՆԱՆԵԱՆ, Ներսէս Շնորհալի. միջեկեղեցական յարաբերութիւններ, «Բազմավէպ», 1996, թ. 1–4, էջ 201–236. Ա. ԲՈՋՈՅԱՆ, Հռոմի պապ Ինոկենտիոս Բ.-ի թուղթը ուղղված Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ. Պաշլավունուն, «էջմիածին», 1999, թ. Գ., էջ 77–96): Նկատենք, որ Ինոկենտիոս Բ.-ի ուղարկած քողի եւ գավազանի մասին Հայոց կաթողիկոսին հղած նրա իսկ նամակում ոչինչ գրված չէ:

¹⁵ Պ. ԱՆԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 217:

զպատասխանի նամակի տեառնս մերոյ եւ զԳիրս կարգաց եկեղեցւոյ հռովմայեցի գրով, եւ եգիտ զտէրն մեր ի քաղաքն Տարսոն յամսեանն հոկտեմբերի: Եւ ընկալեալ կաթողիկոսին սրբոյ զպատուական պալիոնն եւ զխոյրն ի լրումն պատուոյ իւրոյ՝ գոհացաւ զԱստուծոյ»¹⁶: Վարդան Արեւելցին, Հռոմի պապի խոսքը վկայաբերելով, եւս փաստում է, որ եկեղեցական այդ հանդերձները Լուկիոս Գ.-ն է ուղարկել Գրիգոր Դ. Տղանին. «Եւ վասն զի երկայն ճանապարհ է ի մէջ իմ եւ եղբօրն իմոյ, Հայոց պատրիարգին, առաքեցի նմա զիմ վակասն եւ զպսակն եւ կօշիկն, զի զայն զգեցեալ պատարագեսցէ մատանեաւ հանդերձ»¹⁷:

Լուկիոս Գ.-ն իր պատասխանում չի հայտնում այն մասին, թե ինչ նպատակով է Գրիգոր Դ. Տղան նամակ հղել իրեն: Փոխարենը Վարդան Արեւելցին որոշակիորեն գրում է, որ Հայոց կաթողիկոսը Հռոմի պապին դիմել է Բյուզանդական կայսրությունում Իսահակ Անգելոս կայսեր (1185–1195 թթ.)՝ հայերի նկատմամբ հարուցած հալածանքների դեմ պայքարում օգնություն ստանալու ակնկալիքով. «Առաքէր եւ նոյն պատրիարք (Գրիգոր Դ. Տղան.— Վ. Թ.) եպիսկոպոս մի Գրիգոր անուն ի պապն Հռոմայ վասն վտանգին, որ ի Յունաց կրէին Հայք, եւ զի խնդրեսցեն աղօթս եւ օրհնութիւնս...»¹⁸: Զարուհի Պողոսյանի կարծիքով՝ պալիումը կարելի է համարել Հայոց Եկեղեցում գործածվող վակասի համարժեքը¹⁹:

«Դաշանց թղթին» անդրադարձած ուսումնասիրողներից ակադեմիկոս Հրաչ Բարթիկյանը գրում է, որ հայ-հռոմեական դաշնագրությունն արձանագրած այս վավերագիրը ոչ թե մոլեռանդ լատինամոլի՝ Հայոց Եկեղեցու դեմ հեղինակած գրվածք է, ինչպես կարծել են ժամանակին, այլ Կիլիկյան Հայաստանում, այն էլ աշխարհիկ ու հոգեւոր վերնախավում ծնված եւ լատին Արեւմուտքին հղված ուղերձ, որը, արդի եզրաբանությամբ, առաջին հերթին սպասարկում էր հայկական կողմի՝ Կիլիկիայի հայկական պետության եւ Ամենայն Հայոց կաթողիկոսության

¹⁶ Անդ, էջ 218:

¹⁷ «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ», Վենետիկ, 1862, էջ 134: Նկատենք, որ Վարդան Արեւելցին եկեղեցական հանդերձների շարքում հիշատակում է նաեւ կոշիկ, որի մասին խոսք չկա Հռոմի պապի նամակում: Նա նաեւ ակնարկում է մատանու մասին:

¹⁸ Անդ: Պատասխան նամակում Լուկիոս Գ.-ն եւս հայտնում է, որ Հայոց կաթողիկոսի պատվիրակը եղել է Փիլիպոսկոպոսի Գրիգոր արքեպիսկոպոսը (Պ. ԱՆԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 217):

¹⁹ Ներսես Լամբրոնացին կիրառում է պալիում ձեւը, իսկ Վարդան Արեւելցին այն կոչում է հենց վակաս (տես Z. POGOSSIAN, նշ. աշխ., էջ 107–108):

շահերը²⁰։ Ուստի, եթե «Դաշանց թուղթը» արտահայտում է հայերի ակնկալիքները Հռոմի պապական աթոռից եւ հեղինակվել է «Կիլիկիայի հայկական թագավորության եկեղեցական ու քաղաքական վերնախավի կողմից»²¹, ապա կարեւորություն է ստանում այն հարցի պարզաբանումը՝ այդ նշանակները Լուկիոս Գ.-ն ուղարկել է Գրիգոր Դ. Տղայի խնդրանքով, թե՛ իր ցանկությամբ։ Ինչպես Հռոմի պապի պատասխանից, այնպես եւ Վարդան Արեւելցու վկայությունից դժվար է մակաբերել, որ դրանք առաքվել են ի պատասխան Գրիգոր Դ. Տղայի դիմումի։ Առավել հավանական է, որ դա եղել է հենց Լուկիոս Գ.-ի նախաձեռնությամբ։ Վերջինս, օգտվելով պատեհ հնարավորությունից (հիշենք, որ Հայոց կաթողիկոսը նրան դիմել էր օգնության ակնկալիքով), իշխանական տվյալները խորհրդանշող հանգերձներ է ուղարկել Գրիգոր Դ.-ին, ինչպես նաեւ ներկայացրել ծիսական փոփոխություններ կատարելու պահանջ՝ ակնարկելով, որ միայն դրանց իրականացումը կարող է երաշխավորել պապական աթոռից սպասվող օգնությունը. «...գնացէք զկնի եկեղեցւոյն Հռոմայ ի խորհուրդ հաղորդութեանն, զի որ ոչ ներգործէ այսպէս՝ զրկէ զանձն իւր»²²։ Նամակին կից հիշատակարանում, ինչպես նշվեց, Ներսես Լամբրոնացին գրում է, որ Լուկիոս Գ.-ն Գրիգոր Դ.-ին է ուղարկել նաեւ Հռոմի Կաթողիկ Եկեղեցու «Կարգաց գիրքը»²³։ Այդ մասին նույն կաթողիկոսին գրած նամակում հայտնում է նաեւ Հռոմի Կղեմես Գ. պապը (1187—1191 թթ.), որը Գրիգոր Դ. Տղային դիմել էր Երուսաղեմի ազատագրմանն աջակցելու խնդրանքով. «Հաւատամք եթէ անմոռաց ունիս զի Լուսիոս պապն. որոյ յիշատակն երանութեամբ, որ նախքան էր քան զմեզ, ըստ խնդրոյ ձեր առաքեաց գիրք զկարգաւորութեան եկեղեցւոյս Հռոմայ. եւ վասն այսր աւելորդ համարեցաք զմիւռոնն որ ի մէնջ օրհնի՝ ձեր պատուականութեանդ առաքել»²⁴։ Ինչպես տեսնում ենք, Կղեմես Գ.-ն նշում է միայն «Կարգաց գրքի» մասին՝ առանց հիշելու սրբազան նշանակները։ Այսինքն՝ վերջիններս, ամենայն հավանականությամբ, Գրիգոր Դ. Տղային ուղարկվել են ոչ թե իր խնդրանքով, այլ Լուկիոս Գ.-ի որոշմամբ։

²⁰ «Դաշանց թղթի» վերաբերյալ մինչեւ 2004 թ. հայագիտության մեջ առկա տեսակետների քննությունը տես Հ. ԲԱՐԹԻԿՅԱՆ, նշ. աշխ., էջ 66—76։

²¹ Անդ, էջ 110։

²² Պ. ԱՆԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 217։

²³ Տես անդ, էջ 218։

²⁴ Անդ, էջ 221։

Դժվար չէ նկատել, որ «Դաշանց թղթի» հեղինակն առանձնապես ոգևորված է Արեւելքում Հայոց կաթողիկոսին վերապահված գերագահ իշխանությամբ: Ինչպես վերը նշեցինք, Հայոց կաթողիկոսությունն այդպիսի հավակնություն ցուցաբերել էր տակավին 1170-ական թթ.՝ պահանջելով իր ենթակայության տակ դնել Անտիոքի պատրիարքությունը: Սակայն աներկբա է, որ Անտիոքի պատրիարքության եւ նրա թեմերի վրա Հայոց կաթողիկոսության ազդեցությունը կարող էր հաստատվել միայն այն դեպքում, եթե եկեղեցական այդ վիճակների զբաղեցրած տարածքները լինեին ոչ թե խաչակիրների կամ Բյուզանդական կայսրության, այլ Ռուբինյան իշխանապետության ազդեցության ներքո: Անտիոքի իշխանապետությունը եւ նույնանուն պատրիարքությունը ԺԲ դարի երկրորդ կեսին՝ մասնավորապես 1160–1170-ական թթ., հայտնվել էին Բյուզանդական կայսրության նվաճողական քաղաքականության թիրախում: Բանն այն է, որ խաչակիրների կողմից Անտիոքի նվաճմանը (1098 թ.) եւ լատինական իշխանության ստեղծմանը հաջորդեցին հույն պատրիարքի հեռացումն ու կաթողիկ պատրիարքության հաստատումը²⁵: Այդպիսով, սակայն, Անտիոքի հունադավան պատրիարքությունը չդադարեց գոյություն ունենալուց, քանզի նրա առաջնորդները հաստատվեցին Կոստանդնուպոլսում՝ այնտեղ շարունակելով իրենց աթոռակալումը: Բյուզանդիայի ինքնակալ Մանուել Ա.-ն (1143–1170 թթ.) Անտիոքի իշխանապետությունը կայսրության ազդեցությանը ենթարկելուց հետո՝ 1165 թ., վերականգնեց տեղի հունադավան պատրիարքությունը²⁶: Սակայն նա խաչակիրների հարուցած ընդդիմության պատճառով չկարողացավ 1170 թ. երկրաշարժից զոհված Աթանասիոս Գ. պատրիարքին փոխարինող նշանակել²⁷: Անտիոքում բյուզանդական ազդեցությունը պահելու հնարավորությունն էապես նվազեց Միրիոկեֆալոնի 1176 թ. ճակատամարտում Իկոնիայի սելջուկյան սուլթանությունից Բյուզանդիայի կրած ծանր պարտության հետեւանքով: Դրանից հետո Հռոմի պապն այլեւս

²⁵ S^{én} B. HAMILTO, The Latin Church in the Crusader States, East and West in the Crusader States, Context-Contacts-Confrontations, III (Acta of congress held at Hernen Castle in May 1993), էջ 4. S. RUNCIMAN, The Eastern Schism. A study of the Papacy and the Eastern Churches During the XIth and XIIth Centuries, Oxford, 1997, էջ 91–92:

²⁶ S^{én} P. MAGDALINO, The Empire of Manuel I Komnenos: 1143–1180, Cambridge, 1993, էջ 72–73. R.-J. LILIE, Byzantium and the crusader states 1096–1204, transl. by J. C. Moris and J. E. Rodings, Oxford, 1993, էջ 176–178:

²⁷ S^{én} B. HAMILTON, The Latin Church in the Crusader States, East and West in the Crusader States, էջ 14:

չէր պատրաստվում հանդուրժել Բյուզանդիայի եկեղեցական ազդեցութիւնն այնտեղ²⁸։ Այսինքն՝ Անտիոքի պատրիարքութեանը հնարավոր էր տիրել, թերեւս, միայն նույնանուն իշխանապետութիւնը նվաճելով։ Գրիգոր Դ. Տղայի աթոռակալման շրջանում Կիլիկիայի հայկական իշխանապետութիւնը ոչ միայն ի վիճակի չէր ստանձնելու «Դաշանց թղթով» Արեւելքի պատրիարքութիւնների (նույնիսկ միայն Անտիոքի) շրջանում Հայոց կաթողիկոսին վերապահված նախագահ իշխանութեան երաշխավորի դերը, այլեւ հենց ինքն այդ ժամանակ չէր պատշաճում նույն վավերագրով հայկական թագավորութեանը տրված կարգավիճակին ու ազդեցութեանը²⁹։ Հայտնի է, որ Կիլիկիո հայկական իշխանապետութիւնը 1185—1194 թթ. եղել է Անտիոքի իշխանապետութեան ստորական եւ միայն 1194 թ. կնքված հայ-անտիոքյան պայմանագրով է թոթափել այդ կարգավիճակը³⁰։ Իհարկե, որոշակի բացառությամբ կարելի է մատնանշել Երուսաղեմի ազատագրման (Այյուբյան սուլթանութիւնը 1187 թ. նվաճեց այն) նպատակով կազմակերպված երրորդ խաչակրութեան ժամանակը, երբ իրական հնարավորութիւն էր ստեղծվել Ռուբինյան իշխանապետութիւնը թագավորութիւն հռչակելու համար։ Սակայն Սրբազան Հռոմեական կայսրութեան ինքնակալ Ֆրիդրիխ Ա. Բարբարոսայի (1155—1190 թթ.) հանկարծահաւ մահվամբ եւ խաչակրութեան ձախողմամբ հայերի ակնկալութիւններն ի չիք դարձան, եւ թագավորութեան հռչակումն առժամանակ հետաձգվեց։ Իրավիճակը նկատելիորեն փոխվեց Գրիգոր Դ. Տղայի մահվանից մեկ տարի անց՝ 1194 թ. կնքված հայ-անտիոքյան պայմանագրով, որով Ռուբինյան իշխանապետութիւնը ոչ միայն թոթափեց Անտիոքից ունեցած ստորակայական կախվածութիւնը, այլ նաեւ նրա իշխանապետ Բոհեմունդ Գ.-ն հավատարմութեան երդմամբ ընդունեց Լեւոն Բ.-ի գերագահութիւնը³¹։ Անտիոքի տիրակալի նկատմամբ Ռուբինյան իշխանապետի ձեռք բերած գերագահութիւնը հաստատվում

²⁸ Տէս P. MAGDALINO, նշ. աշխ., էջ 103:

²⁹ Հրաչ Բարթիկյանը գրում է, որ «Դաշանց թուղթը» չէր կարող արտացոլել Կիլիկյան Հայաստանի անգամ ժԲ. դ. քաղաքական իրավիճակը (տէս Հ. ԲԱՐԹԻԿՅԱՆ, նշ. աշխ., էջ 110):

³⁰ Այդ մասին մանրամասն տէս Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ, Խաչակիրները եւ հայերը (պատմա-քաղաքագիտական ուսումնասիրութիւն), հտ. Բ., Երեւան, 2007, էջ 158—163, 170—179:

³¹ Պայմանագրի մասին մանրամասն տէս Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 169—179: Ժան Ռիշարի իրավացի դիտարկմամբ՝ ստորակայական կախվածութեան վերացումը դարձավ թագավորութեան հռչակման կարեւոր նախադրյալ (տէս J. RICHARD, Les Arméniens dans les états Latins d'Orient: les lendemains de la Croisade, «Հայաստանը եւ քրիստոնյա Արեւելքը», Երեւան, 2000, էջ 169. Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 179):

է Վիլհելմ Տյուրացու շարունակողներից էռնոլի հաղորդմամբ, որի համաձայն՝ Սսի 1194 թ. պայմանագրի կնքումից հետո Լեւոն Բ.-ն իրեն թագադրելու խնդրանքով դիմել է Երուսաղեմի թագավոր Հենրի Շամպայնացուն՝ հայտնելով, որ իր իշխանապետությունը թագավորություն հռչակելու բոլոր նախադրյալներն արդեն առկա են։ Վերջիններիս թվում Լեւոն Բ.-ն առանձնացնում է Անտիոքի իշխանի նկատմամբ Սսի պայմանագրով իրեն վերապահված գերագահ իշխանությունը. «Ես ունեմ բավական հողեր, քաղաքներ ու ամրոցներ եւ շատ մեծ եկամուտներ թագավոր լինելու համար։ Անտիոքի դուքսն իմ հպատակն է։ Ուստի, ես Ձեզ խնդրում եմ ինձ թագադրել»³²։ Սակայն այդ ժամանակ էլ, չնայած դիվանագիտական գործուն ջանքերին, Լեւոն Բ. Ռուբինյանին չհաջողվեց ստանալ արքայական բաղձալի թագը։

Անշուշտ, «Դաշանց թղթով» Արեւելքի պատրիարքությունների նկատմամբ Հայոց կաթողիկոսին վերապահված գերագահությունը պարունակում է չափազանցության տարրեր. իրապես դժվար է մատնացույց անել գեթ մեկ տեղեկություն, որը վկայում է, օրինակ, Անտիոքի կամ Երուսաղեմի պատրիարքներից որեւէ մեկի ընտրության՝ Հայոց կաթողիկոսի կամքով կամ հավանությամբ կատարված լինելու մասին։ Սակայն, միթե «Դաշանց թղթի» խնդրո առարկա հավաստիացումները բոլորովին զուրկ են իրական ենթահողից եւ ամբողջովին մտացածին։ Ինչպես ստորեւ կտեսնենք՝ ոչ։ Ուստի, հայրապետների թեկնածությունը դիտարկելիս խիստ կարեւոր է մատնացույց անել Հռոմի պապի կողմից նրանց իշխանական ազդեցությունն Արեւելքի լատին եկեղեցական աթոռների շրջանում ճանաչելու գեթ մեկ փաստարկ-վկայություն։ Գրիգոր Դ. Տղայի պարագայում այն բացակայում է։ Այդ մասին լուռ են ոչ միայն Լուկիոս Գ.-ի եւ Կղեմես Բ.-ի ուղարկած նամակները, այլ նաեւ տվյալ ժամանակի հայ-լատին եկեղեցական հարաբերություններին այս կամ այն կերպ անդրադարձած մատենագրական երկերը։

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Գրիգոր Դ. Տղայի թեկնածությունը՝ որպես «Դաշանց թղթում» ի դեմս Ս. Գրիգոր Լուսավորչի հանդես եկած հայրապետի, դառնում է քիչ հավանական։

³² «Chronique d'Ernoult et de Bernard le Trésorier, publiée... par M. L. de Mas Latrie», Paris, 1871, p. 322.

Գրիգոր Զ. Ապիրատ

Հավանաբար նկատի ունենալով այն հանգամանքը, որ Կիլիկիայի հայկական թագավորության հռչակման ժամանակ Հայոց կաթողիկոսը Գրիգոր Զ. Ապիրատն էր, որը նաեւ թագադրել ու օծել էր Լեւոն Ա. Ռուբինյանին, «Դաշանց թղթին» անդրադարձած ուսումնասիրողներից Աշոտ Հովհաննիսյանի եւ Պիտեր Հալֆտերի կարծիքով, ի դեմս Ս. Գրիգոր Լուսավորչի՝ վավերագրում ներկայացված է հենց նա³³: Նշված իրողությունները, իհարկե, բավարար են Գրիգոր Զ. Ապիրատի թեկնածությունը դիտարկելու համար, սակայն այս դեպքում եւս անհրաժեշտ է նրա գահակալության հանգամանքները, հատկապես Հռոմի պապի հետ հարաբերությունները դիտարկել «Դաշանց թղթից» վերն առանձնացված սահմանումների տեսանկյունից:

Այս առումով կարեւոր է Գրիգոր Զ. Ապիրատի եւ Հռոմի Ինոկենտիոս Գ. պապի նամակագրությունը: Բարեբախտաբար, մեզ են հասել ինչպես Հռոմի պապին Հայոց կաթողիկոսի գրած նամակները, այնպես եւ դրանց պատասխանները³⁴: Եթե հակիրճ ներկայացնելու լինենք այդ նամակագրության բովանդակությունը, ապա կարող ենք առանձնացնել հետեւյալը.

Գրիգոր Զ. Ապիրատը՝

— Լեւոն Բ.-ին արքայական թագ շնորհելու եւ այդպիսով Ռուբինյան իշխանապետությունը թագավորություն ճանաչելու համար երախտագիտություն է հայտնում Հռոմի պապին,

— ճանաչում է Հռոմի պապի գերագահությունը եւ նրա առաջնորդած Եկեղեցին համարում «բոլոր Եկեղեցիների զլուխ»:

Ինոկենտիոս Գ.-ն, ինչպես իր նախորդները, շեշտում է՝

— Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու գերագահությունը մյուս Եկեղեցիների նկատմամբ եւ իր՝ որպես Ս. Պետրոսի՝ Տիրոջ ավագագույն աշակերտի փոխանորդը լինելը:

³³ Տե՛ս Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Երեւան, 1957, էջ 75. P. HALFTER, նշ. աշխ., էջ 72:

³⁴ Տե՛ս «Acta Innocentii PP. III (1198–1216)», E. Registris Vaticanis aliisque Eruit, introductione auxit, notisque illustravit P. Theodosius Haluščynskyj hieromonachus ordinis Basiliani S. Iosaphat E pontificia commissione ad redigendum C.I.C.O., Fontes series III, vol. II, Vaticanis, 1944, էջ 199–201, 221–223, 554–555, 565–568: Հիշենք, որ Գրիգոր Գ. Տղայի՝ Լուկիոս Գ.-ին գրած նամակը ցարդ հայտնի չէ:

Հռոմի պապի գերազահությունը ճանաչելու խնդրի քննությունը կատարված է հոգվածի վերջում, ուստի այստեղ կբավարարվենք նշելով, որ Գրիգոր Զ. Ապիրատն Ինոկենտիոս Գ.-ին գրած նամակներում նրա գերազահությունը ճանաչում էր առնվազն հետեւյալ դրդապատճառներով.

ա. Լեւոն Բ.-ին արքայական թագ շնորհելու համար,

բ. Անտիոքի իշխանապետության գահաժառանգման պայքարում Կիլիկիայի հայկական պետության շահերը պաշտպանելու եւ Տրիպոլիսի կոմսության դեմ պայքարում օգնություն ստանալու ակնկալությամբ:

Վերադառնալով մեր հիմնական խնդրին՝ նշենք, որ այս նամակներն Ինոկենտիոս Գ.-ի կողմից Գրիգոր Զ. Ապիրատին իշխանական տվյալությունը խորհրդանշող հանդերձներ (հատկապես՝ պալիում) շնորհելու, ինչպես նաեւ Հայոց կաթողիկոսի ազդեցությունն Արեւելքի պատրիարքությունների շրջանում ճանաչելու վերաբերյալ ոչինչ չեն հայտնում: Այդ մասին լուռ են նաեւ Գրիգոր Զ. Ապիրատին այս կամ այն կերպ հիշատակող մյուս աղբյուրները: Զարուհի Պողոսյանը գրում է, որ Գրիգոր Զ. Ապիրատը մատանի, պալիում եւ խույր է խնդրել Հռոմի Ինոկենտիոս Գ. պապից³⁵: Սակայն նրա մատնանշած 1202 թվակիր նամակը ոչ թե Գրիգոր Զ.-ի, այլ այդ ժամանակ դեռեւս Սսի արքեպիսկոպոս, Կիլիկիայի հայկական թագավորության կանցլեր Հովհաննեսի դիմումն է Ինոկենտիոս Գ.-ին³⁶:

Այսպիսով՝ պարզ է, որ Հռոմի պապական աթոռի հետ Գրիգոր Զ. Ապիրատի հարաբերությունները մասամբ բնութագրական են «Դաշանց թղթից» մեր առանձնացրած միայն առաջին սահմանում-հանգամանքի այն մեկնաբանությանը, ըստ որի՝ Սեղբեստրոսից Ս. Գրիգոր Լուսավորչի ստացած ձեռնադրությունը խորհրդանշում է ԺԲ. դարավերջին եւ հաջորդ դարասկզբին Հայոց կաթողիկոսի կողմից Հռոմի պապի գերազահության ճանաչումը: Սակայն միայն դա բավարար չէ՝ պնդելու, որ «Դաշանց թղթում» Ս. Գրիգոր Լուսավորչի կերպարով ներկայացված է հենց Գրիգոր Զ. Ապիրատը:

³⁵ Տե՛ս Z. POGOSSIAN, նշ. աշխ., էջ 108–109:

³⁶ Տե՛ս “Acta Innocentii PP. III (1198–1216)”, էջ 568–569:

Հովհաննես Զ. Սսեցի

«Դաշանց թղթի» թվագրմանն անդրադառնալիս իրավացիորեն մատնացույց է արվել այն հանգամանքը, որ վավերագրում Հայոց թագավորությունը, այն է՝ Կիլիկիայի հայկական պետությունը, օժտված է այնպիսի հզորությամբ, որը խիստ բնորոշ է Լեւոն Ա.-ի գահակալությանը, երբ ի հայտ էին եկել նրա իշխանությունը պետական սահմաններից դուրս տարածելու ծանրակշիռ նախադրյալներ: Դրանցից, թերեւս, գլխավորն Անտիոքի լատին իշխանապետությունը Կիլիկիո հայկական թագավորության ազդեցությանը ենթարկելու հնարավորությունն էր, որի հաջող իրացումը մեծապես պայմանավորված էր նրա օրինական գահաժառանգ, Լեւոն Ա.-ի որդեգիր Ռայմոնդ-Ռուբենին այնտեղ գահ բարձրացնելու հետ: Անտիոքին տիրանալը կհանգեցներ ոչ միայն հայկական թագավորության իշխանությունը դեպի հարավ-արեւելք ընդլայնելուն, այլ նաեւ կնպաստեր տեղի լատին եկեղեցական աթոռների շրջանում Հայոց կաթողիկոսի ազդեցության հաստատմանը:

Անտիոքի գահաժառանգման պատերազմում կարելուր դերակատարում ունեն Հռոմի Ինոկենտիոս Գ. պապը, որի աջակցությունը շահելու համար պայաքարում էին ինչպես կիլիկյան իշխանությունները, այնպես եւ Ռայմոնդ-Ռուբենի ժառանգական իրավունքը վիճարկող նրա հորեղբայրը՝ Տրիպոլիսի կոմս Բոհեմոնդ Միակնանին, որի հետ միաբանվել էր Լեւոն Ա.-ից դժգոհ Տաճարականների ասպետական միաբանությունը: Կիլիկիայի հայկական պետության դեմ պատերազմում Միակնանին դաշնակցում էր Հալեպի եւ Իկոնիայի սուլթանությունների հետ, ինչը կարող էր զորեղ կռվան ծառայել հայերի ձեռքում մուսուլմանական այդ պետությունները որպես ոխերիմ թշնամի ընկալող Հռոմի պապական աթոռն իրենց կողմը գրավելու համար³⁷: Այս գործում Լեւոն Ա.-ին մեծապես աջակցում էր 1203 թ. Հայոց կաթողիկոս ընտրված Հովհաննես Զ. Սսեցին, ինչի մասին ուշագրավ վկայություններ կան Ինոկենտիոս Գ. պապի հետ նրա փոխանակած նամակներում: Հռոմի պապը հայտնվել էր ծանր ընտրության առջեւ՝ Կիլիկյան Հայաստան, թե՛ Տրիպոլիսի կոմսություն: Նա չէր կարող որեւէ մեկին բացահայտ աջակցություն ցույց տալ, քան-

³⁷ Անտիոքյան պատերազմի եւ դրանում Կիլիկիայի հայկական պետության մասնակցության մասին մանրամասն տես CL. CAHEN, La Syrie du Nord et la principauté franque d'Antioche, Geuthner, Paris, 1940, էջ 596–623. Վ. ՏԵՐ-ՂԵՌՈՆՅԱՆ, Կիլիկյան Հայաստանը եւ Այլուբյան պետությունները (1171–1206), Երեւան, 2017, էջ 127–174:

զի կարգվել էր որպես միջնորդ դատավոր այս բարդ հակամարտությունում: Պատերազմող կողմերը քաջ գիտակցում էին այս հանգամանքը, ուստի գահաժառանգման իրավունքը ռազմի դաշտում վիճարկելուն զուգահեռ ջանում էին դիվանագիտական ճանապարհով շահել պապական աթոռի հովանավորությունը:

Կիլիկիայի հայկական թագավորության կանցլերի՝ արտաքին քաղաքականության պատասխանատուի պաշտոնն զբաղեցրած Հովհաննես Սսեցին քաջատեղյակ էր, որ Հռոմի պապից օգնություն ստանալու առնվազն մի քանի միջոցներ գոյություն ունեն՝ նրա գերագահության ճանաչում, Հայոց Եկեղեցու ծիսակարգում Հռոմի պապի պահանջած փոփոխությունները կատարելու պատրաստակամություն³⁸ (հայ-լատին եկեղեցական հարաբերությունների այս շրջափուլում դավանաբանական հարցեր, ըստ ամենայնի, չեն քննարկվել) եւ Երուսաղեմի ազատագրման հարցի դիվանագիտական «շահարկում», այն է՝ Հռոմի պապին արված հավաստիացում, որ հայկական թագավորությունը պատրաստ է ներգրավվել այդ պայքարում, սակայն փոխարենն ակնկալում է պապական աթոռի աջակցությունն Անտիոքյան պատերազմում: Ինոկենտիոս Գ.-ին 1202 թ. գրած նամակում, որին առավել մանրամասն կանդորադառնաք ստորեւ, Հովհաննեսը՝ որպես Սսի արքեպիսկոպոս, հիշեցնում է «խաչի թշնամիների դեմ հանուն քրիստոնեության պատվի եւ պաշտպանության» Լեւոն Ա.-ի մղած պայքարի մասին³⁹: Դեռեւս 1199 թ. Ինոկենտիոս Գ.-ին գրած իր նամակներից մեկում Լեւոն Ա.-ն բացահայտ ակնարկում էր, որ Տրիպոլիսի կոմսության եւ նրան սատարող ուժերի դեմ Կիլիկյան Հայաստանի մղած պայքարը խոչընդոտում է Երուսաղեմի ազատագրմանը՝ նշելով, որ այդ պատերազմի հետեւանքով «Խսրայելի տունը (նկատի ունի Երուսաղեմը.— Վ. Թ.) մեզանից հեռացավ»⁴⁰:

Ահա նաեւ այս հարցերն են արծարծված Հովհաննես Զ. Սսեցու եւ Ինոկենտիոս Գ.-ի ԺԳ. դարասկզբի նամակագրության մեջ, որն ուշագրավ վկայություններ է պարունակում նաեւ սուլյն ուսումնասիրության գլխավոր խնդրի վերաբերյալ:

³⁸ Այդ մասին Ինոկենտիոս Գ.-ին հղած 1205 թվակիր նամակում հայտնում է Հովհաննես Զ. Սսեցին. տե՛ս “Acta Innocentii PP. III (1198–1216)”, էջ 587. ԿՂԵՄԽ ՊԱԼԱՆՈՍ, Միաբանութիւն Հայոց սուրբ Եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ Եկեղեցւոյն Հռովմայ, հտ. Ա., 1650, էջ 368):

³⁹ Տե՛ս “Acta Innocentii PP. III (1198–1216)”, էջ 554–555:

⁴⁰ Տե՛ս անդ, էջ 557. Վ. ՏԵՐ-ՂԵՒՈՆԴՅԱՆ, նշ. աշխ., էջ 136–137:

Այսպես՝ խիստ հետաքրքիր է, որ ի տարբերություն Գրիգոր Դ. Տղայի՝ Հովհաննես Սսեցին ինքն է դիմել Հռոմի պապին հայրապետական իշխանության նշանակները (պալիում, խույր եւ մատանի) ստանալու համար: Առավել ուշագրավ է այն, որ նա դիմումը հղել է 1202 թ.՝ տակավին որպես Սսի արքեպիսկոպոս⁴¹: Սա նշանակում է՝ այդ թվականին արդեն հայտնի էր, որ Գրիգոր Զ. Ապիրատին հաջորդելու է հենց Հովհաննես Սսեցին: Երեք կաթողիկոսների շարքում նա միակն է, որ հայրապետական իշխանությունը հատկանշող նշանակներն ստանալու համար դիմել է Հռոմի պապին, նույնիսկ պատրաստակամություն հայտնել այդ նպատակով այցելել նրան, այն էլ՝ մինչ հայրապետ ընտրվելը: Այս դիմումը հատկանշական է նաեւ այն իմաստով, որ հայերն են հղել Հռոմի պապին, այսինքն՝ համահունչ է այն տրամաբանությանը, որով ստեղծվել է «Դաշանց թղթից»: Նկատի ունենք այն, որ վավերագիրը կազմվել էր Կիլիկյան Հայաստանում եւ արտահայտում էր հենց հայոց ակնկալիքները լատին Արեւմուտքից:

Ինոկենտիոս Գ.-ի արձագանքին երկար սպասելու կարիք չեղավ. նա 1202 թ. հունիսի 1-ի պատասխան նամակով բավարարում է Հովհաննես Սսեցու խնդրանքը՝ նրան պալիում ուղարկելով⁴²:

Ինչ վերաբերում է «Դաշանց թղթից» մեր առանձնացրած երկրորդ սահմանում-հանգամանքին, այն է՝ Արեւելքի պատրիարքական աթոռների շրջանում Հայոց կաթողիկոսի իշխանական ազդեցությանը, ապա այս հարցում եւս Հովհաննես Զ. Սսեցին շահեկանորեն տարբերվում է մյուս երկու հայրապետներից: Ըստ Լեոն Ա.-ի եւ Հովհաննես Զ. Սսեցու՝ Ինոկենտիոս Գ.-ին հղած 1205 թվակիր նամակներին՝ Հայոց կաթողիկոսը «խոստանում է... անձամբ կամ իր պատվիրակի միջոցով մասնակցել ծովի այս կողմում գումարված ժողովներին, եւ որ կողմերի համաձայ-

⁴¹ Տե՛ս «Acta Innocentii PP. III (1198–1216)», էջ 568–569: Ինչպես «Դաշանց թղթում», այնպես եւ այս նամակում սրբազան նշանակների շարքում հիշվում է մատանին: Համաձայն Կաթոլիկ հանրագիտարանի՝ մատանին՝ որպես իշխանական տվչության խորհրդանիշ, կարգինալներին շնորհել է Հռոմի պապը: Վերջինիս ընծայած մատանու գործածումը կարգինալների համար չի ունեցել պարտադիր բնույթ, եւ նրանք իրավասու են եղել կրել իրենց նախընտրած մատանին: Ենթադրվում է, որ այս նշանակը գործածելու արտոնությունը Ինոկենտիոս Գ.-ից սկսած վերապահվել է կարգինալներին: Հիշատակվում է նաեւ, որ այն ունեցել է նվազ կարեւորություն, այսինքն՝ մյուս նշանակներին ոչ համարժեք. տե՛ս <https://www.newadvent.org/cathen/13059a.htm>:

⁴² Տե՛ս «Acta Innocentii PP. III (1198–1216)», էջ 223–224: Ուշագրավ է, որ Հռոմի պապի նամակում խոսք չկա մատանու եւ խույրի մասին:

նությամբ ժողովներ չեն կարող գումարվել առանց նրա (Հայոց կաթողիկոսի.— Վ. Թ.) կամ նրա պատվիրակի ներկայության»⁴³։ Խոսքն այս քաղվածքում, ըստ ամենայնի, վերաբերում է Հայոց կաթողիկոսության եւ Արեւելքի լատին եկեղեցական աթոռների հրավիրած ժողովներին։ «Ծովի այս կողմ» ասելով՝ նկատի է առնվել Միջերկրականի արեւելյան ավազանը, որտեղ գտնվում էին ինչպես Հայոց կաթողիկոսությունը, այնպես եւ Անտիոքի պատրիարքությունը եւ նրա թեմական վիճակները։ Ուշագրավ է, որ այս հանգամանքը մատնանշելով՝ Լեւոն Ա.-ն եւ Հովհաննես Զ. Սսեցին նույն նամակներում հայտնում են, որ Հռոմի պապի ներկայացուցիչ Պետրոս կարդինալը, չկարողանալով լուծել Հայոց թագավորության եւ Տաճարականների ասպետական միաբանության հակադրությունը, որը ծագել էր վերջինիս՝ Անտիոքի գահաժառանգման պատերազմում Բոհեմունդ Միակնանուն օգնելու պատճառով, առանց Հայոց կաթողիկոսի մասնակցության՝ Անտիոքում ժողով է հրավիրել եւ բանադրանքի ենթարկել «մեր երկիրը», այն է՝ Կիլիկյան Հայաստանը եւ Հայոց կաթողիկոսությունը⁴⁴։ Այսինքն՝ հայոց թագավորը եւ կաթողիկոսը կողմերի միջեւ ձեռք բերված վերոնշյալ համաձայնության հիմքով անվավեր են ճանաչում Անտիոքում Պետրոս կարդինալի հրավիրած ժողովն ու նրա ընդունած որոշումները։ Այս հանգամանքն ավելորդ անգամ հուշում է, որ կողմերի համաձայնությունը վերաբերում է Հայոց կաթողիկոսության եւ Անտիոքի պատրիարքության հրավիրած ժողովներին։ Եթե Անտիոքում Պետրոս կարդինալի գումարած ժողովի վավերականությունը որոշվում էր Հայոց կաթողիկոսի (կամ նրա ներկայացուցչի) մասնակցությամբ, ապա դա նշանակում է, որ նրան վերապահված էր նախամեծար կարգավիճակ, այլ խոսքով՝ հավասարների մեջ առաջինը (primus inter pares) լինելու պատիվ։ Ուշագրավ է, որ այս հանգամանքը ճիշտ եւ ճիշտ արձանագրված է «Դաշանց թղթում», որտեղ կարդում ենք. «Գրեցի (Սեղբեստրոս պապը.— Վ. Թ.) եւ հրովարտակս ընդհանրականս առ աւետարանչաց աթոռակալ պատրիարքունս, որ յարեւելս, զի զհայոց հայրապետն համապատիւ տեսցեն իւրեանց, մանաւանդ եթէ եւ նախագահ իսկ, վասն զի

⁴³ Անդ, էջ 583, 587. ԿՂԵԴԵՍ ԳԱԼԱՆՈՍ, նշ. աշխ., հտ. Ա., էջ 368. տե՛ս The Deeds of Innocent III by an Anonymous Author, Translated with an Introduction and Notes by James M. Powell, Washington, 2004, էջ 216–217, 220:

⁴⁴ Տե՛ս “Acta Innocentii PP. III (1198–1216)”, էջ 585. “The Deeds of Innocent III...”, էջ 218–219. Ինոկենտիոս Գ.-ին իր նամակներից մեկում գրում է, որ Լեւոն Ա.-ին բանադրելու պատճառը «խիստ չնչին է» (The Deeds of Innocent III..., էջ 227):

յերկոտասան առաքելոցն չորքն անդանաւր կատարեցան»⁴⁵: Այսպիսով՝ «Դաշանց թղթով» Արեւելքի պատրիարքությունների շրջանում Հայոց կաթողիկոսությանը վերապահված նախագահ կարգավիճակը բնորոշ է հենց Հովհաննես Զ. Սսեցու հայրապետական իշխանությունը:

Դիտելի է, որ մինչ այդ Հայոց Եկեղեցու առաջնորդը մասնակցել էր Արեւելքի լատինական աթոռների հրավիրած եկեղեցական մի ատյանի: Նկատի ունենք Երուսաղեմի 1140 թ. եկեղեցական ժողովը, որին Հռոմի պապի պատվիրակ Ալբերիկոս Օստրացու հրավերով մասնակցել է նաև Գրիգոր Գ. Պահլավունի կաթողիկոսը՝ ներկայացնելով Հայոց Եկեղեցու դավանանքը⁴⁶: Ներսես Դ. Շնորհալուսն ձեռնած ներբողում ներսես Լամբրոնացին գրում է, որ Գրիգոր Գ. Պահլավունին ներկա է եղել Անտիոքի՝ Երուսաղեմյանին նախորդած եկեղեցական ժողովին (1139/1140 թ.), որի քննության առարկան վերաբերել է տեղի պատրիարքի եւ Հռոմի պապի փոխհարաբերություններին, այսինքն՝ այնպիսի խնդրի, որը չի առնչվել Հայոց Եկեղեցուն⁴⁷: Ներսես Լամբրոնացին նաև հպարտությամբ գրում է, որ Հայոց հայրապետի եւ նրա եղբոր՝ Ներսես Շնորհալու համբավը հասել է մինչև Հռոմ՝ արժանանալով պապի ուշադրությանը⁴⁸: Կիրակոս Գանձակեցին էլ, թերեւս «Դաշանց թղթի» ազդեցությամբ, գրում է, որ Երուսաղեմ գնալու ճանապարհին Գրիգոր Գ. հայրապետը ճոխ ընդունելություն է արժանացել Անտիոքում, որտեղ նրան հրավիրել են բազմելու Ս. Պետրոս առաքյալի գահաթոռին. «Եւ էր սիրեցեալ նա (Գրիգոր Գ.-ն.— Վ. Թ.) յամենայն ազգաց: Եղեւ նմա գնալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, զի երկրպագեսցէ նա սուրբ տեղեացն տնօրինականաց: Իբրեւ

⁴⁵ Z. POGOSSIAN, The letter of Love and Concord, p. 408, 410.


⁴⁶ SIR WILLIAM OF TYRE, A History of Deeds Done Beyond the Sea, trans. E. A. Babcock and A. C. Krey, Columbia University Press, 1943, էջ 122:

⁴⁷ Հավելենք, սակայն, որ աղբյուրների մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ Ներսես Լամբրոնացին ինչ-ինչ նպատակներով է Գրիգոր Գ.-ին «դարձրել» Անտիոքի ժողովի մասնակից, իսկ իրականում Հայոց հայրապետն այդ ժամանակ գտնվել է իր աթոռանիստ Տլուբում (այս մասին մանրամասն տես Վ. ՏԵՐ-ՂԵՌՈՒՅԱՆ, Վ. ԹՈՐՈՍՅԱՆ, Հայ-լատին եկեղեցական հարաբերությունների քաղաքական ենթահողը (12-րդ դ. 30—40-ական թթ.), «Բանբեր Մատենադարանի», հ. 31, Երևան, 2021, էջ 5—22): Սակայն Ներսես Լամբրոնացու սույն վկայությունը հարկ է նկատի առնել, քանզի հորինվածք լինելով հանդերձ՝ այն փաստում է Արեւելքի լատինական աթոռների շրջանում Հայոց կաթողիկոսի հեղինակությունն ու որոշակի ազդեցությունը:


⁴⁸ Օգտագործել ենք Ներբողի՝ Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ին (Ս. էջմիածին, 1865) կցված հրատարակությունը (ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ, Գովեստ ներբողական պատմագրական բանիւ յաղագս վարուց մեծի հայրապետին տեսառն Ներսիսի Կլայեցույ, էջ 478):

եհաս ի քաղաքն Անտիոք, եւ ամենայն քաղաքն ընդ առաջ նորա ջահիւք եւ լապտերօք եւ մեծաւ պատուով տարեալ նստուցին յաթոռն Պետրոսի առաքելոյն»⁴⁹։ Ինչպէս այս, այնպէս եւ բազմաթիւ այլ վկայություններ, այդ թվում՝ Հռոմի պապերի հետ Գրիգոր Գ.-ի, Գրիգոր Դ. Տղայի ու Գրիգոր Զ. Ապիրատի նամակագրություններն աներկբա փաստում են Ամենայն Հայոց կաթողիկոսութեան բարձր հեղինակութիւնը Միջերկրականի արեւելյան ավազանի լատին եկեղեցական աթոռների շրջանում։ Ակնհայտ է, որ Հայոց եկեղեցու առաջնորդի ազդեցութիւնն առավել պետք է աճեր Կիլիկիայի հայկական թագավորութեան հռչակումից եւ հատկապէս Անտիոքյան պատերազմում արձանագրած հաջողութիւններից հետո։ Փաստորեն՝ Հովհաննէս Զ.-ին «նախագահ կարգավիճակը ծովի այս կողմի» եկեղեցական ժողովներում ինչ-որ չափով բխում էր նաեւ հայ-լատին եկեղեցական հարաբերութիւնների նախընթաց ավանդներից, որոնց հիմքերը դրել եւ հուսալիորեն ամրակայել էին Պահլավունի կաթողիկոսները։

Շարունակությունը՝ հաջորդիվ



⁴⁹ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՅԻ, Հայոց պատմութիւն, էջ 117։ Պատմիչը հաջորդիվ գրում է, որ Գրիգոր Գ.-ն վերականգնել է Տրդատ Գ.-ի, Ս. Գրիգոր Լուսավորչի եւ Կոստանդիանոս Ա.-ի, Սեղբեստրոս պապի միջեւ կնքված դաշինքը (անդ, էջ 118)։



ԿԱՐԵՆ ՄԱԹԵՒՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, ՄՄ

ԱՆԻԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱՍԱՍԵՐԸ (ՆԵՐՔԻՆ ԲԵՐՂ, ՄԻՋՆԱՐԵՐՂ, ՓՈՔՐ ՔԱՂԱՔ)

Անիի քաղաքաշինությունը, կառուցվածքին ու հատակագծին տարբեր հետազոտողներ են անդրադարձել, եւ այդ հարցերը հիմնականում ուսումնասիրված ու բացահայտված են: Սակայն Անիի քաղաքամասերի՝ միջնադարյան սկզբնաղբյուրներում վկայված անվանումների առանձին ուսումնասիրություն չի արվել, եւ այստեղ կանգրադառնանք հենց այդ նյութին՝ մասնավորապես Անիի հնագույն քաղաքամասերին՝ Ներքին բերդին, միջնաբերդին, որտեղ գտնվում էր թագավորական պալատը, եւ Աշոտ Գ. Ողորմածի (953—977 թթ.) պարսպապատած տարածքին, որը հետազոտողները երբեմն կոչում են Հին քաղաք, սակայն սկզբնաղբյուրային միակ վկայության մեջ այն կոչվում է Փոքր քաղաք:

Հայտնի է, որ միջնադարյան քաղաքաշինության սկզբունքներին համապատասխան՝ Անին նույնպես ուներ եռամաս բաժանում՝ միջնաբերդ, բուն քաղաք կամ շահաստան եւ արվարձաններ: Սակայն Անին ուներ առանձնահատկություններ եւ այս ընդհանուր պատկերի մեջ նաեւ այլ տարաբաժանումներ: Առաջինն այն է, որ աշխարհագրական դիրքով պայմանավորված՝ միջնաբերդը քաղաքի կենտրոնում չէր, այլ արեւելյան կողմում՝ Ախուրյան գետի ու նրա կիրճի եւ Անի գետակի կամ Ծաղկոցաձորի կազմած հրվանդանի ներս ընկած բարձրադիր մասում, իսկ բուն հրվանդանի ծայրամասում գտնվում էր Ներքին բերդը: Միջնաբերդն ու Ներքին բերդը ռազմավարական տեսանկյունից եղել են ինքնուրույն միավորներ՝ առանձին պարիսպներով:

Բացի այդ՝ բուն քաղաքը նույնպես ունեցել է, թեպետ չափերով տարբեր, երկու մաս: Առաջինն այն հատվածն է, որը գտնվում է Աշոտ Գ. Ողորմածի՝ 961—964 թթ. կառուցած պարիսպներից ներս: Աշոտաշեն պարիսպները հարթավայրից դեպի միջնաբերդ ընկած հատվածում՝ Ախուրյանի

կիրճի եւ Ծաղկոցաձորի առավել մոտ գտնվող մասում են: Նրանցից ներս հնագույն քաղաքամասն է, որին, ըստ տեղադրության, հարավում հաջորդում են միջնաբերդն ու Ներքին բերդը: Իսկ շատ շանցած՝ քաղաքն այնքան ընդարձակվեց Աշոտ Ողորմածի պարիսպներից դեպի հյուսիս եւ արեւելք, որ թագավորի որդին եւ հաջորդը՝ Սմբատ Բ.-ն (977–989 թթ.), կառուցեց հզոր մի նոր պարսպաշար (երկու պարիսպների միջեւ ընկած տարածքը կազմում է շուրջ 42 հեկտար)¹: Այն կառուցողի անունով հաճախ անվանվում է Սմբատյան կամ Սմբատաշեն (գծ. 1): Դեպքերին ժամանակակից պատմիչ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը Սմբատի այս ձեռնարկի մասին գրում է. «Սա լիր արկեալ՝ պարսպափակ առնէ զպարիսպն Անուշ, յԱխուրեան գետոյ մինչեւ ցձորն Ծաղկոցաց, կրով եւ վիմաւք մածուցեալ, մահարձանաւք եւ աշտարակաւք բրգանց, բարձրաբերձ պարսպեալ բացագոյն քան զհին պարիսպն յընդարձակութիւն քաղաքին, եւ մայրագերան դրամբք՝ երկաթագամ հաստահեղոյս բեւեռապինդ ամրացուցեալ»²:

Դրականության մեջ երբեմն ասվում է, որ Սմբատյան պարիսպները կառուցվել են Իգաձորի եւ Գլիձորի միջեւ ընկած հատվածում³: Սակայն սրանք իրականում փոքր ձորեր կամ ձորակներ են, որոնցից առաջինը, Սմբատյան պարիսպների հավասարությանմբ, քաղաքի հյուսիսարեւելյան հարթավայրից իջնում է դեպի հյուսիս, միանում Ծաղկոցաձորին, իսկ երկրորդն իջնում է դեպի հարավ եւ միանում Ախուրյանի կիրճին: Սմբատաշեն պարիսպները (որոնք հետագա շրջանում հաճախակի ամրացվել են նոր պատերով ու բուրգերով) ձգվում էին Ծաղկոցաձորից մինչեւ Ախուրյանի կիրճ՝ հյուսիսային կողմում՝ Իգաձորի, հարավում՝ Գլիձորի ավերով, որոնք, այսպիսով, պաշտպանական առումով որոշակի դեր են կատարել⁴: Ձորակների միջեւ ընկած հատվածը հարթավայրային է եւ

¹ Տէս Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ, Անիի ճարտարապետությունը, ՊԲՀ, 2011, թ. 3, էջ 5:


² ՍՏԵՓԱՆՈՍ ՏԱՐՈՆԵՑԻ ԱՍՈՂԻԿ, Պատմութիւն տիեզերական, «Մատենագիրք Հայոց», հտ. ԺԵ., Ժ. դար, գիրք Բ., Երեւան, 2011, էջ 760: Եթե այստեղ պատմիչը Ծաղկոցաձորի մասին գրում է «յԱխուրեան գետոյ մինչեւ ցձորն Ծաղկոցաց», ապա երկրորդ անգամ Գագկաշեն Ս. Գրիգոր եկեղեցու կառուցման առնչությամբ գրում է. «...հիմնարկէ ի կուսէ Ծաղկոցաձոր ձորոյն», այսինքն՝ Ծաղկոցաձորը (ծագումը «ծաղկոց»՝ «պարտեզ» անվանումից) նշում է որպես հատուկ անուն (անդ, էջ 827):

³ Տէս Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Հայկական ճարտարապետության պատմություն, Երեւան, 1992, էջ 189:

⁴ Ձորակների մասին ավելացնենք, որ սկզբնաղբյուրներում վկայված Իգաձորի անունը հավանաբար ծագում է «էգի»՝ «այգի» բառից, եւ այլ կերպ այն կարելի է նաեւ կոչել Այգեձոր: Անվան ստուգաբանությունը լեզվաբան դոկտոր Հրաչ Մարտիրոսյանինն է (բանավոր մեզ փոխանցված), որը համոզիչ ենք համարում: Գլիձորը (գրականության մեջ երբեմն կոչվում է

առավել ամուր՝ երկշարք պարսպապատված. արտաքուստ այն ուներ նաեւ ջրով լցված խրամ: Սմբատյան պարիսպներից դուրս, նաեւ Ծաղկոցաձորի կողմում եղել են քաղաքի արվարձանները:

Այժմ վերադառնանք մեր հետազոտության բուն նյութին՝ ներկայացնելով վերը նշված հնագույն քաղաքամասերը եւ դրանց տեղանվանական հիշատակություններն աղբյուրներում՝ միաժամանակ անդրադառնալով այդ տարածքի որոշ եկեղեցիներին:



Գծ. 1. Անիի ֆաղափամասերն ու պարիսպները
(Ն. Մառի «Անի» գրքի գծապատկերի նիւմի վրա):

Ներքին բերդ

Անիի Ներքին բերդն անհագիտական գրականության մեջ հիմնականում կոչվում է Աղջկաբերդ (Դըզ-դալա), որն ուշ շրջանի ժողովրդական ավանդազրույցի ծնունդ է⁵: Այն քաղաքի հնագույն մասն է՝ կառուցված

Գալլիձոր) հավանաբար զառիվայր հոսող ջրի ձայնի՝ գլզլոցի հետ է կապվում: Ուշագրավ է, որ ըստ վիմագրերի՝ այս՝ համեմատաբար ոչ մեծ ձորում միջնադարում բազմաթիվ ջրաղացներ են գործել:

⁵ Տե՛ս Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Անի քաղաքը, Երևան, 1964, էջ 39, Թ. ՀԱԿՈԲՅԱՆ, ՍՏ. ՄԵԼԻՔ-ԲԱՆԵՅԱՆ, Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 1, Երևան, 1986, էջ 191 եւ այլն: Ավանդազրույցը պատմում է, որ բերդի իշխանի աղջիկը

միջնաբերդից հարավ՝ ժայռային հրվանդանի վրա, որը գրեթե երեք կողմից շրջանցում է Ախուրյան գետը (նկ. 1):



Նկ. 1. Անիի Ներքին բերդը հյուսիսից (կենտրոնում՝ Զաֆարեի եկեղեցին):

Քաղաքի այս հատվածի անվան ճշտումը կատարել է Կարեն Յուզբաշյանը 1971 թ. հրատարակած մի հոդվածում, որը նվիրված է 1298 թ. այստեղ ընդօրինակված մի Ավետարանի (այժմ պահվում է Սանկտ Պետերբուրգի Արեւելյան ձեռագրերի ինստիտուտում՝ B-44)⁶: Ձեռագրում գրչության տեղի մասին ասվում է. «...գրեցաւ սա ի քաղաքիս Անոյ, ի բերդս Ներքի կոչեցեալ, ձեռամբ Եղբայրիկ աբեղայի, ընդ հովանեաւ Սուրբ Յովհաննիսի»⁷: Կ. Յուզբաշյանը մատենագրական նյութերի համոզիչ վեր-

սիրահարված է լինում մի հովվի: Վերջինս գիշերները երգում է իր սիրեցյալի համար, որը նրան լսում է պատուհանից: Մի անգամ հայրը լսում է նրանց զրույցը եւ խիստ նախատում աղջկան, արգելում նրանց կապը: Աղջիկը, հասկանալով, որ եկել է իր սիրո վերջը, բերդի պատուհանից նետվում է Ախուրյան գետը: Այդ տեսնելով՝ հովվը նույնպես հետեւում է նրան: Այդ օրվանից բերդը կոչվում է Աղջկաբերդ (տես Ա. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ, Ավանդապատում, Երեւան, 1969, էջ 208–209): Ժողովրդական նման զրույցների վրա հիմնված Աղջկաբերդ անունով բազմաթիվ ամրոցներ կան Հայաստանի տարբեր մասերում:

⁶ Տես Կ. ЮЗБАШЯН, Анийская рукопись 1298 г., «Բանբեր Երեւանի համալսարանի», 1971, թ. 2, էջ 88–93: Ձեռագրի մասին տես նաեւ՝ Կ. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, Անի քաղաքի Ներքին բերդի Ավետարանը, «Էջմիածին», 1984, ԺԱ.–ԺԲ., էջ 110–115:

⁷ «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ. դար» (կազմեց Ա. Մաթեոսյանը), Երեւան, 1984, էջ 817: Այս եւ հաջորդ մեջբերումներում ընդգծումները մերն են.— Կ. Մ.:

լուծույթյամբ ցույց է տվել, որ մի շարք աղբյուրներում, ինչպես եւ վերը բերված հիշատակարանում նշվող Անիի Ներքի կամ Ներքին բերդը նոր ժամանակներում քաղաքի Աղջկաբերդ կոչված մասն է⁸:

Ավելի հանգամանորեն ծանոթանանք մատենագրական այդ վկայություններին, մանավանդ որ դրանց մի մասը վերաբերում է նաեւ միջնաբերդին: Ներքին բերդի վաղ շրջանի պատմության մասին հայտնում է Վարդան Արեւելցին (ԺԳ. դար), որի «Տիեզերական պատմության» մեջ Անիին վերաբերող հատվածները հիմնականում քաղված են Մխիթար Անեցու (ԺԲ. դար)՝ այժմ կորած Պատմությունից (միայն սկզբի հատվածն է պահպանվել), ուստի հնարավոր է, որ այդ տեղեկությունը նույն աղբյուրից վերցված լինի: Վարդան Արեւելցին, գրելով, որ Սմբատ Ա. Բագրատունին (890—914 թթ.) Երազգավորսում թագադրվեց եւ այդտեղ կառուցեց Ս. Փրկիչ եկեղեցին, ավելացնում է. «...մինչդեռ չեւ էր ընդարձակ շինեալ քաղաքն Անի, որ կոչի Խնամ⁹, թէպէտ Ներքին բերդն ընդ այս անուամբ էր եւ հին ժամանակաւ շինեալ»¹⁰: Այսինքն՝ հին ժամանակներից գոյություն ունեցող Ներքին բերդը մինչեւ քաղաքի ընդարձակվելն արդեն իսկ Անի անունն էր կրում: Շարունակելով պատմիչն անդրադառնում է Հայաստանում քրիստոնեության տարածման շրջանի՝ Դ. դարի դեպքերին՝ նշելով, որ Գրիգոր Լուսավորիչը հնարամտությամբ դարձի է բերել եւ մկրտել Ներքին բերդի անդամալույծ եւ համառ իշխանին. «Ասեն, թէ իշխան մի, լուծեալ ոտիւք՝ ի Ներքին բերդն ամրացեալ, ոչ հաւանէր գալ ի մկրտութիւն»¹¹:

Ս. Գրիգոր Լուսավորչի անվան հետ կապված այս պատմությունն անկասկած տարածված է եղել Անիում, եւ այստեղ համարել են, որ Հայոց եկեղեցու առաջին հայրապետը Ներքին բերդում նաեւ եկեղեցի է հիմնադրել. ԺԳ. դարի սկզբներին Անիի նոր տերը՝ Զաքարե ամիրսպասալարը, Ներքին բերդում եկեղեցի է կառուցում եւ շինարարական արձա-

⁸ Տե՛ս К. ЮЗБАШЯН, անդ.:

⁹ Անիի անվան որպէս «Ժնամք» բացատրությունն անդրադարձած Պ. Մուրադյանը կարծում է, որ այն, հավանաբար, արաբերենին ծանոթ հայ պատմիչները կապել են «Janat»՝ «նպաստ», «օժանդակություն», «խնամք» բառերի հետ (Պ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, «Անի» տեղանունը, «Անի», 1992, 1, էջ 18): Կարծում ենք, որ սա ընդունելի տեսակետ է. «Ի՛նչա(թ)» արտասանությամբ արաբերեն բառը կարող էր Ժ.—ԺԳ. դարերում Անի անվան նման մեկնաբանության առիթ դառնալ: Արաբերեն բառի վերաբերյալ խորհրդավորության համար շնորհակալություն ենք հայտնում պատմական գիտությունների դոկտոր Վահան Տեր-Ղեւոնդյանին:

¹⁰ ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑԻ, Տիեզերական պատմություն (գրաբար բնագիրը՝ ըստ Վենետիկի 1862 թ. տպագրության), աշխարհաբար թարգմանությունը՝ Գ. Թոսունյանի, Երեւան, 2001, էջ 92):

¹¹ Անդ.:

նագրության մեջ նշում, որ այն հիմնել է «մերձ առ էկեղեցե[ան] շինեալ ի Լուսաւորէն մերմէ Սրբոյն Գրիգորի...»¹²: Պատահական չէ նաեւ, որ Անիի հայտնի անուններով եկեղեցիների մեջ ամենից մեծ թիվ են կազմում Ս. Գրիգորի անունով անվանակոչվածները:

Ներքին բերդը հիշատակող մյուս պատմիչն Արիստակես Լաստիվերցին է (ԺԱ. դար): Նա, գրելով Անիում գահակալած վերջին թագավորի՝ Գագիկ Բ.-ի (1042–1045 թթ.) թագադրության պատմությունը, նշում է, որ Հովհաննես Սմբատի (1017–1041 թթ.) մահից հետո քաղաքում իշխանությունը փաստացի զավթել էր Վեստ Սարգիսը: Դրա հետ չհամակերպված Պահլավունիները գաղտնի կերպով քաղաք են բերում մահացած արքայի եղբորորդուն՝ Գագիկին, «իմաստութեամբ եւ հնարիւք մուծին ի քաղաքն» եւ կազմակերպում նրա թագադրությունը¹³: Պատմիչը շարունակում է. «Իսկ Սարգիս իբրեւ ետես զեղեալսն, զգանձս թագաւորութեանն առեալ՝ ի Ներքին ամուրն մտանէ յանառն Անի»¹⁴: Փաստորեն Վեստ Սարգիսը, որը գտնվում էր միջնաբերդի՝ Բագրատունիների պալատում, Գագիկի թագադրման լուրն առնելով, վերցնում է թագավորական գանձարանն ու ամրանում Ներքին բերդում, որն ավելի անմատչելի էր:

Հետաքրքրական է նաեւ հետագա դեպքերի նկարագրությունը, որտեղ ասվում է, թե Գագիկը համարձակորեն միայնակ «իջնում է» Սարգսի մոտ (Ներքին բերդն ավելի ցածրադիր էր միջնաբերդից) եւ համոզում նրան հանձնվել, սակայն վերջինս, ամրոցից դուրս գալով, հեռանում է Սուրմարի (Սուրբ Մարի, Սուրմալու), միաժամանակ Ներքին բերդը չի հանձնում Գագիկին¹⁵: Սա վկայում է նաեւ այն մասին, որ Ներքին բերդը, Անիի մասնիկը լինելով հանդերձ, ինքնուրույն անառիկ ամրություն էր, եւ որ հնարավոր էր այնտեղից հեռանալ առանց քաղաք մտնելու¹⁶ (հե-

¹² «Անի քաղաք», ԴՀՎ, պր. I, կազմեց Հ. Օրբելին, Երեւան, 1966, էջ 58:

¹³ Այն տեղի է ունեցել Մայր տաճարում, որի մասին նշում է Սամվել Անեցին. «... ժողովեցան առ դրունս մեծափառ Կաթողիկէին՝ ի մայրաքաղաքս յԱնի, եւ հաստատեն զԳագիկ զեղբարորդին Յովաննիսի, թագաւոր ի վերայ ինքեանց» (ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՅԻ ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿՈՂՆԵՐ, Ժամանակագրութիւն, աշխատասիրութեամբ Կ. Մաթեոսեանի, Երեւան, 2014, էջ 186):

¹⁴ «Արիստակիսի Լաստիվերտցույ Պատմութիւն», աշխատասիրութեամբ Կ. Յուզբաշեանի, Երեւան, 1963, էջ 58:

¹⁵ «Այլ Գագիկ այրական քաջասրտութեամբ միայն իջեալ առ նա, եւ ողորական բանիւք հաւանեցուցանէ զնա, եւ նա ելեալ յամրոցէն երթալ ի բերդաքաղաքն, որ կոչի Սուրմարի, այլ զամուրն ոչ տալ ի Գագիկ» (ԱՐԻՍՏԱԿԷՍ ԼԱՍՏԻՎԵՐՑԻ, անդ):

¹⁶ Ներքին բերդից ցած՝ ձորի մեջ, եղել է Ախուրյանի վրա կառուցված հնագույն կամուրջը, որի մնացորդների մասին նշում է Հ. Օրբելին (տե՛ս Կ. ՕՐԵԼԻ, Краткий путеводитель по

տագայում Գագիկին հաջողվում է, բանակցելով եւ արքունիքում Սարգսին բարձր կարգավիճակ տալով, նրան հնազանդեցնել):

Երկրորդ անգամ Արիստակես Լաստիվերցին Ներքին բերդը հիշատակում է Անիի սելջուկյան պաշարման եւ գրավման դեպքի առնչությամբ (1064 թ.)՝ նշելով, որ երբ քաղաքի պաշտպանների միջեւ ծագած անմիաբանության պատճառով թշնամին պապիսպներից ներս է խուժում, բնակիչներից շատերը փրկվելու հույսով դիմում են դեպի «յապարանս թագաւորացն», այսինքն՝ միջնաբերդ եւ Ներքին բերդ կոչվող ամրոցը. «Իսկ բազմութիւն արանց եւ կանանց յապարանս թագաւորացն դիմեալ՝ իբր թէ կարիցեն ապրել, եւ այլքն ճողոպրեալ յամուրն, որ Ներքի բերդ կոչի»¹⁷:



Նկ. 2. Անիի Ներքին բերդը եւ միջնաբերդը (Վերին բերդ),
որի բարձունքում Պապատական եկեղեցին է

Նույն դեպքի կապակցությամբ միջնաբերդն ու Ներքին բերդը հիշատակում է նաեւ պատմիչ Մատթեոս Ուռհայեցին (ԺԲ. դար): Գրելով, որ բյուզանդական կայսրը լքել է քաղաքի պարիսպների պաշտպանությունը, պատմիչը շարունակում է. «Իսկ անօրէն իշխանքն Հոռոմոց՝ զորս

городищу Ани, СПб, 1910, էջ 18):

¹⁷ ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՑԻ, էջ 135:

կացուցեալ էր թագաւորն պահապանս Տանն Հայոց, Բագրատ՝ հայրն Սմբատայ եւ Գրիգոր՝ Բակուրանին որդին՝ վրացի ազգաւ, սկսան սոքօք ամրանալ ի վերին բերդն եւ ի ներքին»¹⁸: Լաստիվերցու վերը նշված վկայությունից ելնելով՝ միանգամայն պարզ է, որ այստեղ Ուռհայեցին, «վերին բերդ» եւ «ներքին» ասելով, նկատի ունի, համապատասխանաբար, բարձրադիր միջնաբերդն ու ավելի ցածրում գտնվող ներքին բերդը (նկ. 2):

Այսպիսով՝ մատենագրական տեղեկությունները վկայում են, որ միջնադարում Անիի հարավային ծայրամասի ժայռային հրվանդանի վրա գտնվող ամրոցը կոչվել է ներքին բերդ, մի անուն, որն առաջացել է բարձրադիր միջնաբերդի համեմատությամբ վերջինիս ավելի ցածր գտնվելու պատճառով: Հատկանշական է, որ միջնաբերդն էլ Ուռհայեցին անվանել է Վերին բերդ: Այդուհանդերձ փաստն այն է, որ Անիին վերաբերող նախկին հրատարակություններում, հանրագիտարաններում եւ այլուր այս հնագույն քաղաքամասը հիշատակվում է միայն ուշ շրջանում ստացած Աղջկաբերդ անվամբ¹⁹:

Միջնաբերդ

Անիի միջնաբերդը քաղաքի առավել լավ ուսումնասիրված հատվածներից է՝ շնորհիվ այն բանի, որ այդտեղ էին Բագրատունիների արքունիքն ու պալատը: Տարածքը Ն. Մառի ղեկավարած հնագիտական արշավախումբը պեղել է 1908–1909 թթ.՝ պարզելով պալատական համալիրի կառուցվածքն ու հատակագիծը, երեւան հանելով երբեմնի ընդարձակ, փառավոր շինությունների ու սրահների մնացորդները: Միաժամանակ միջնաբերդի տարածքում են գտնվում քաղաքի հնագույն եկեղեցիներից մի քանիսը, որոնցից, այսպես կոչված, Պալատական եկեղեցին (միանավ բազիլիկ) կառուցվել է Կամսարականների շրջանում՝ վաղ միջնադարում, երբ բնակավայրը պատկանում էր այդ իշխանական տանը: Միջնաբերդի՝ Կամսարականների շրջանի պարսպապատերի մեջ եղել են նաեւ, այսպես կոչված, «ծիծեռնակապոչ» կապով քարեր, ինչպիսիք առկա են Գառնիի

¹⁸ ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵՅԻ, Ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները՝ Հ. Բարթիկյանի (գրաբար բնագիրը՝ ըստ էջմիածնի 1898 թ. հրատարակության), Երեւան, 1991, էջ 160:

¹⁹ Հատկանշական է, որ Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարանում ներքին բերդ տեղանուն ընդհանրապես չկա, իսկ Աղջկաբերդ բառահոգվածում չի հիշատակված ամրոցի միջնադարյան ներքին բերդ անունը (Տե՛ս Թ. ՀԱՎՈՐԵԱՆ, ՍՏ. ՄԵԼԻՔ-ԲԱՆԵՅԱՆ, Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, նշ. աշխ., էջ 191):

եւ Արցախի Տիգրանակերտի անտիկ պարսպապատերի շարվածքում, միայն թե այստեղ դրանք վերաշարված են («ծիծեռնակապոչերը» դեմ դիմաց չեն)²⁰: Այնուհանդերձ այդ քարերը վկայում են տեղում շատ ավելի հին պաշտպանական կառույցների գոյություն մասին: Բերդը հիմնովին ամրացվել է Բագրատունիների՝ հավանաբար նախ Աբասի (929—953 թթ.), ապա նրա որդի Աշոտ Ողորմածի ջանքերով, որն Անին թագավորանիստ դարձրեց: Հետաքրքրական է, որ հետագայում Անիում իրենց կարճատեւ իշխանության ժամանակ (1045—1064 թթ.), բյուզանդացիները նույնպես ամրացրել են միջնաբերդը, որի մասին է վկայում այնտեղ գտնված 1059 թ. մի հունարեն արձանագրություն²¹:

Անիի միջնաբերդը հենց այդ անունով վաղ շրջանի աղբյուրներում չի հիշատակվում: Ինչպես վերը նշեցինք, Արիստակես Լաստիվերցին այն հիշատակում է «յապարանս թագաւորացն» ձեւակերպմամբ, իսկ Մատթեոս Ուռհայեցին՝ «Վերին բերդ»:

Այնուամենայնիվ հավանաբար Ժէ. դարում կազմված «Պատմութիւն քաղաքին յԱնույ»²² բանաքաղական երկի հենց առաջին նախադասության մեջ նշվում է. «Այսպէս պարտ է գիտել վասն յԱնույ՝ զի զՄիջի բերդն յառաջն ունէին Հայոց իշխանքն...»²³: Միջի բերդ կամ միջնաբերդ, ըստ էության, նույնն է: Միջնաբերդի՝ այդ անունով հիշատակության այլ սկզբնաղբյուր մեզ հայտնի չէ:

Փոքր ֆաղափ

Հայտնի է, որ Անին բարգավաճ ավան էր նախքան մայրաքաղաք դառնալը: Հատկանշական փաստ է, որ Սյունյաց Սուփան իշխանը Մաքենյաց վանքի Թ. դարի վերջերին գրված արձանագրության մեջ նշում է, որ

²⁰ Տէս Կ. ՄԱՐՐ, Անի, Книжная история города и раскопки на месте городища, Ереван, 2011, էջ 49:

²¹ Տէս Յ. ՕՐԲԵԼԻ, Անույ աւերակները (Թարգմ. ռուսերենից Յուսիկ արքեպս.), Վաղարշապատ, 1911, էջ 17: Բյուզանդացիների արարքը կարելի է բացատրել նաեւ այն բանով, որ նրանք քաղաքացիների ապստամբության վտանգ էին զգում:

²² Ըստ Գ. Տեր-Վարդանյանի ենթադրության (ստորագրված՝ Յու. Վարդանյան)՝ «Պատմութիւն քաղաքին յԱնույ» բանաքաղություն հանդիսացող երկը կազմել է Մինաս Համթեցին (1630—1704 թթ.) 1698 թ. Կոստանդնուպոլսում. տես «Պատմութիւն քաղաքին յԱնույ» բանաքաղության հեղինակի եւ ժամանակի հարցի շուրջ, ՊՐՀ, 1985, թ. 2, էջ 221—225): Երկը հրատարակել է Հ. Մարգարյանը Մխիթար Անեցու Պատմության պահպանված առաջին հատվածի հետ՝ որպես հավելված:

²³ ՄԽԻԹԱՐ ԱՆԵՑԻ, հավելված, էջ 107:

վանքին նվիրաբերել է Անիում գտնվող հինգ կուղպակ²⁴: Ժ. դարի առաջին կեսին Անիի բարգավաճ բնակավայր լինելը հաստատվում է նաև ն. Մառի պեղումների ժամանակ ի հայտ եկած հնագիտական նյութերով:

Անին թագավորանիստ դարձնելուց հետո (961 թ.) Աշոտ Ողորմածի 964 թ. պարսպապատած հատվածը, որը շուրջ 7 հեկտար տարածք է ներառում²⁵, ուսումնասիրողները կոչում են Հին քաղաք²⁶ կամ թյուրիմացաբար՝ Ներքին բերդ²⁷: Սակայն դատելով Անիի Մայր տաճարի ԺԲ. դարի երկրորդ կեսի փակակալ, պատմիչ Մխիթար Անեցու մի վկայությունից՝ այս քաղաքամասը միջնադարում հատուկ անուն է ունեցել եւ կոչվել Փոֆր ֆաղաֆ: Պատմիչը գրում է. «Աշոտ Ողորմածն որդի Աբասայ, թագաւորէ յԱնի՝ ամս ԻԵ. (25) եւ շինէ զՓոֆր ֆաղաֆն»²⁸:



Նկ. 3. Անիի Աշոտյան պարսպի մի հատված, որի ներսում էր Փոֆր ֆաղաֆը, հեղվում՝ միջնաբերդը:

Այս քաղաքամասի անվան միջնադարյան այլ հիշատակություն չի պահպանվել: Սակայն հետաքրքրական է, որ Վարդան Արեւելցին Աշո-

²⁴ ՏՃՍ «Գեղարքունիք», ԴՀՎ, պրակ IV, կազմեց Ս. Բարխուդարյանը, Երեւան, 1973, էջ 290:

²⁵ ՏՃՍ Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ, նշ. աշխ., էջ 4:

²⁶ ՏՃՍ Ի. ОРБЕЛИ, Краткий путеводитель по городищу Ани, էջ 4. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Անի քաղաքը, Երեւան, 1964, էջ 40. Թ. ՀԱՎՈՐՅԱՆ, Անիի պատմություն, հտ. 1, էջ 186:


²⁷ ՏՃՍ Թ. ՀԱՎՈՐՅԱՆ, նշ. աշխ., էջ 186:

²⁸ ՄԽԻԹԱՐ ԱՆԵՑԻ, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրութեամբ Հ. Մարգարեանի, Երեւան, 1983, էջ 67:

տի եւ նրա կառուցած պարիսպների մասին նշում է. «Սա փոքր պարիսպ քաղաքին Անույ շինեաց եւ զամենայն բրգունսն եկեղեցիս յօրինեաց ի շորեքհարիւր երեքտասան (964) թուին»²⁹: Իսկ ըստ Ասողիկի Պատմության հնագույն ձեռագրում արած մի հավելման՝ դեռեւս Աբաս Բագրատունին քաղաքում կառուցել էր մի եկեղեցի (այդ մասին ավելի հանգամանորեն կխոսվի ստորեւ), որը նա կոչում է Փոքր Կաթողիկե. «Սա շինէ եւ զՓոքր Կաթողիկէն Անույ...»³⁰: Այս տվյալների շնորհիվ ի հայտ են գալիս քաղաքի հնագույն հատվածի տեղանվանական որոշակի ընդհանրություններ՝ փոքր պարիսպ, Փոքր Կաթողիկե, Փոքր ֆաղաֆ, ինչը թույլ է տալիս ավելի համոզված լինելու, որ Աշոտ Ողորմածի պարսպապատած քաղաքամասի համար Մխիթար Անեցու նշած անվանումը կիրառելի է եղել միջնադարյան Անիում, եւ այն, իրոք, կոչվել է Փոքր քաղաք:

Աշոտյան պարիսպների առնչությամբ պետք է ավելացնել, որ Վարդան Արեւելցու նշումը, թե Աշոտն իր պարսպի բուրգերի մեջ եկեղեցիներ կառուցեց, հաստատվել է քաղաքի պեղումների շրջանում, քանի որ առնվազն եզրային բուրգերում եղել են մատուռներ³¹: Միաժամանակ նշելի է, որ Սմբատաշեն պարիսպների կառուցումից հետո Աշոտյան պարիսպը կորցրել է իր ռազմավարական նշանակությունը, եւ ինչպես պեղումների ժամանակ է պարզվել, դրան կից տներ ու այլ կառույցներ են ավելացվել (նկ. 3):

Շարունակությունը՝ հաջորդիվ



²⁹ ՎԱՐԳԱՆ ԱՐԵՒԵԼՑԻ, էջ 95: Նույնը կրճատ բերված է «Պատմութիւն քաղաքին յԱնույ» երկում (ՄԽԹԱՐ ԱՆԵՑԻ, հավելված, էջ 122):

³⁰ ՍՏԵՓԱՆՈՍ ՏԱՐԱՆԵՑԻ ԱՍՈՂԻԿ, էջ 749:

³¹ ՏԷՍ Ի. ՕՐԵԼԻ, Краткий путеводитель по городищу Ани, էջ 4:

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ

**ՍՅՈՒՆԻՔ–ԱՐՑԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ-
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀՈՒՐՁ
(ԺԹ. ՊԱՐ – Ի. ՂԱՐԱՍԿԻԶԲ)**

Հայաստանի նորագույն պատմության մեջ քաղաքական կարեւորություն ունեցող տարածաշրջաններից են պատմական Հայաստանի անբաժանելի հատվածը կազմող Լեռնային Ղարաբաղն ու Սյունիքը: Վերջին 30 տարում համայն հայության եւ միջազգային հանրության ուշադրությունն իր վրա սեւեռած Լեռնաստանի այս հատվածները՝ Արցախն ու Սյունիքը, ազգագրորեն լրամշակման անհրաժեշտություն ունեն: Հետազոտողները, բնակավայրն ու բնակարանը դիտելով որպես կենսապահովման մշակույթի բաղկացուցիչներ, ուշադրություն են դարձրել գերազանցապես դրանց շինարարականկառուցողական հատկանիշների բնութագրությանը, մասնակիորեն անդրադարձել թե՛ տան եւ թե՛ բնակավայրի սոցիալական գործառնությանը, տնտեսական նշանակությանն ու դրանց առնչվող գաղափարականգեղարվեստական դրսևորումների բացահայտմանը, որով սահմանափակվել են էթնիկ մշակույթի համակարգում այդ համալիրների խորքային ուսումնասիրության հնարավորությունները: Մինչդեռ դրանց ազգագրական դիտարկման շնորհիվ, բացի կենսապահովման մշակութային ժառանգությունը բացահայտելուց, պարզաբանվում են նաեւ բնակչության էթնիկ կազմի, տնտեսական զբաղմունքների, ապրելակերպի, ունեցվածքային վիճակի, ընտանեկան, հասարակական կենցաղի, գիտելիքների մակարդակի, ազգային հոգեբանության, սովորույթների բազում կողմեր: Ուստի եւ ժողովրդական ճարտարապետությունը, արտացոլելով ժողովրդի նյութատնտեսական միջավայրը, նրա սոցիալական, կենցաղային ու մշակութային հարաբերությունները, արժեքավոր փաստական աղբյուր կարող է դառնալ պատմագրական, ազգագրական, արվեստագիտական տարբեր բնագավառների ուսումնասիրության համար:

Սյունիքի եւ Արցախի գյուղական բնակարանի վերաբերյալ ազգագրական առաջին ուսումնասիրությունը կարելի է համարել Փարսադան Տեր-Մովսիսյանի «Հայ գյուղական տունը» (Վիեննա, 1894) գրքույկը, որում հեղինակն իր հիշողությունների հիման վրա վերականգնում է հիմնականում Սյունիքի եւ Արցախի հայկական գյուղերի, գյուղական տների եւ գեղջկական կենցաղի ընդհանուր պատկերը: Հեղինակը փորձ է արել դասակարգել գյուղական բնակարանի տիպերը եւ դրանք համեմատել եվրոպական գյուղական տների հետ:

Սյունիք—Արցախի մասին պատմաազգագրական առաջին համալիր ուսումնասիրությունը կատարել է ականավոր գիտնական, հայ ազգագրական գիտության հիմնադիրներից մեկը՝ Ն. Լալայանը: Նա իր հիմնադրած «Ազգագրական հանդեսում» (1896—1916) հրատարակել է պատմաազգագրական շրջանների վերաբերյալ բազմաթիվ աշխատություններ¹, որոնց թվում են նաեւ «Վարանդա»², «Գանձակի գավառ»³, «Սիսիան»⁴, «Զանգեզուր»⁵ ծավալուն հետազոտությունները: Նյութերը գերազանցապես հավաքել, գրի է առել ու լուսանկարել ինքը՝ շրջագայելով ազգագրական հիշյալ գոտու գյուղերում ու ավաններում: Ինչպես մյուս, այնպես էլ այս պատմաազգագրական մարզերի ուսումնասիրությունն սկսում է պատմական համառոտ տեսությունմբ, ներկայացնում է տարածքի տեղագրությունը, կլիման, բուսական ու կենդանական աշխարհի պատկերը, օգտակար հանածոները, նշանավոր քաղաքներն ու գյուղերը, պատմական ու ճարտարապետական հուշարձանները: Հատուկ ուշադրություն է դարձնում բնակչության կազմին ու տեղաշարժերին, հայ բնակչության զբաղմունքներին, սոցիալական մշակույթին: Ցավոք, այդ նույնը չի կարելի ասել բնակավայր-բնակարանային համալիրների կառուցվածքի, տիպերի ընդհանուր եւ յուրահատուկ հատկանիշների վերաբերյալ:

Սյունիքի եւ Արցախի հայ բնակչության ներքին կյանքի ու սովորույթների, մասնավորապես տնտեսական զբաղմունքների ու կենցաղի վերա-

¹ Տե՛ս Ռ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ, Ն. Լալայանը՝ հայ ազգաբնակչության ուսումնասիրության պատմաազգագրական շրջանացման մեթոդի հիմնադիր, Ազգաբնական ուսումնասիրություններ, գիրք 2, 2019, էջ 214—234. նույնի՝ Երվանդ Լալայանի եւ «Ազգագրական հանդեսի» դերը հայ ազգագրական գիտության կայացման եւ զարգացման գործում, նույն տեղում, էջ 192—213:

² Տե՛ս Ն. ԼԱԼԱՅԱՆ, Վարանդա, «Ազգագրական հանդես» (այսուհետեւ՝ ԱՀ), գ. Բ., Թիֆլիս, 1897:

³ Տե՛ս Ն. ԼԱԼԱՅԱՆ, Գանձակի գավառ, ԱՀ, գ. Ե., Թիֆլիս, 1899:

⁴ Տե՛ս Ն. ԼԱԼԱՅԱՆ, Սիսիան, ԱՀ, գ. Գ., Թիֆլիս, 1898:

⁵ Տե՛ս Ն. ԼԱԼԱՅԱՆ, Զանգեզուր, ԱՀ, գ. Դ., Թիֆլիս, 1898:

բերյալ առատ նյութեր են պարունակվում նաեւ հայ պարբերական մամուլում եւ հատկապես ԺԹ. դ. վերջերին եւ Ի. դ. սկզբներին հրապարակված ռուսական մի շարք մատենաշարերում ու պարբերականներում⁶:

Հայկական բնակարանի ազգագրական համակարգված գիտական ուսումնասիրությունն սկիզբ է առնում հայ նշանավոր ազգագրագետ Ստ. Լիսիցյանի գործունեությամբ: Ե. Լալայանից հետո նա է, ով Սյունիքին եւ Լեռնային Ղարաբաղին անդրադարձել է միասնաբար՝ ներառելով հայ կյանքի գրեթե բոլոր կողմերը, այդ թվում նաեւ՝ բնակավայրերն ու բնակարանները: Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի կովկասյան պատմահնագիտական ինստիտուտի (ԿՊՀԻ) հանձնարարությամբ Ի. դ. 20–30-ական թթ. Ստ. Լիսիցյանի ղեկավարությամբ կազմակերպվում է գիտարշավ Լեռնային Ղարաբաղ, Լեռնային Քրդստան (Լաչին) եւ Զանգեզուր՝ տնտեսական, ազգագրական ու հնագիտական հետազոտություններ անցկացնելու: Բացի Ստ. Լիսիցյանից՝ արշավախմբում ընդգրկվում են ազգագրագետներ Գ. Չուրսինը, Լազոն, հնագետներ Ե. Պչեկինան, Ս. Տեր-Ավետիսյանը եւ տնտեսագետներ Գ. Քոչարյանն ու Թ. Աթարբեկովը: Գ. Քոչարյանը, Ս. Տեր-Ավետիսյանը եւ Ստ. Լիսիցյանը մեկնում են Լեռնային Ղարաբաղ, իսկ մյուսները, այդ թվում՝ Ս. Տեր-Ավետիսյանը, պետք է զբաղվեն Լեռնային Քրդստանի եւ Զանգեզուրի ուսումնասիրությամբ:

1925 թ. հունիսի 21-ին Ստ. Լիսիցյանը ԿՊՀԻ գիտնականների ժողովում զեկուցում է հայկական բնակարանների հարցի վերաբերյալ, որը նվիրված էր գլխատան ուսումնասիրությանը Ղարաբաղում⁷: Ստ. Լիսիցյանն առա-

⁶ *Տէս, օրինակ*, Н. ГРИГОРОВ, Село Татев Зангезурского уезда Елисаветпольской губернии, Сборник материалов для изучения местностей и племен Кавказа (СМОМПК), Тифлис, 1892, вып. XIII. Н. ГРИГОРОВ, Село Саров Елисаветпольской губернии Джеванширского уезда, СМОМПК, 1888, вып. VI. Н. ДАВИДБЕКОВ, Село Гадрут Елисаветпольской губернии и Джебраильского уезда, СМОМПК, 1888, Т. VI. А. ЕРИЦОВ, Экономический быт государственных крестьян Казахского уезда Елисаветпольской губернии, Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края (МИЭБГКЗК), 1886, т. II. Е. МЕЛИК-ШАХНАЗАРОВ, Селение Арцваник Зангезурского уезда Елисаветпольской губернии, СМОМПК, 1898, вып. XXV. Обзорение Российских владений за Кавказом в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях, чч. 1–4, СПб., 1836. Г. ОСИПОВ, Селение Даш-Алти Шушинского уезда Елисаветпольской губернии, СМОМПК, 1898, вып. XXV. Н. ШИРАКУНИ, Зангезурский уезд Елисаветпольской губернии, СМОМПК, 1904, вып. XXXIV. Н. ШОПЕН, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб., 1892:

⁷ *Տէս* С. ЛИСИЦИАН, К изучению армянских крестьянских жилищ (Карабахский карадам, «Известия кавказского историко-археологического института» (ИКИАИ)), т. III, Тифлис, 1925, էջ 97–108:

ջինն էր, որ հանգամանալի ներկայացրեց Հայաստանի գյուղական բնակարանի հիմնական տիպը՝ «գլխատունը», եւ այդ եզրույթը մտքրեց գիտական շրջանառութեան մեջ: Նրա բացահայտումները վերաբերում են «գլխատան» ճարտարապետական կառուցվածքի եւ հայոց պաշտամունքային կառույցների ծագումնաբանական ընդհանրություններին, որով հավաստվում է հայ ճարտարապետության տեղաբնիկ բնույթը, ինչը կասկածի տակ էին առել որոշ հետազոտողներ: Տալիս է նաեւ գլխատան նկարագրությունը, տարածման շրջանները, նրա աղերսը ժամատան հետ, այլ կերպ ասած՝ հայ դասական եկեղեցական ճարտարապետության ակունքների կապը ժողովրդական բնակարանի համալիրի ճարտարապետության հետ եւ այլն:

1927 թ. Ստ. Լիսիցյանն այդ նույն նպատակով գիտարշավ է կազմակերպում նաեւ Մեղրի, 1928 թ.՝ Ագուլիս, 1931 թ.՝ Սիսիան, Գորիս, 1932 թ.՝ Ղափան, Մեղրի⁸: Ագուլիսում գրառված դաշտային ազգագրական հարուստ նյութերում մեծ հետաքրքրություն են ներկայացնում Զուլֆա-Օրդուբադ տարածաշրջանում դեռեւս գոյատեւած «զոկեր» կոչվող էթնիկ խմբի վերաբերյալ տեղեկությունները⁹: Նյութերը գրառվում են ազգագրագետի՝ 1926 թ. կազմած «Գավառագիտություն» խորագրի ներքո, ապա՝ դեռեւս ձեռագիր «Ազգագրական հարցարան»-ում¹⁰:

1920—1930-ական թթ. գիտնականի ուսումնասիրությունների հանրագումարը եղավ «Ակնարկ նախահեղափոխական Հայաստանի ազգագրության» աշխատությունը¹¹, որը նաեւ հայոց էթնոմշակութային ամբողջական պատկերը տալու առաջին փորձն էր: 1930—1940-ական թթ. Ստ. Լիսիցյանի հիմնարար աշխատությունները լույս տեսան հետմահու¹²: «Լեռնային Ղարաբաղի հայերը» աշխատությունը 1992 թ. լույս տեսավ նաեւ ռուսերեն:

«Լեռնային Ղարաբաղի հայերը» գրքում գիտնականը նախ քննում է երկրամասի բնակլիմայական պայմաններն ու աշխարհագրական միջավայրը, բնակչության էթնիկական կազմն ու տեղաշարժերը, զբաղմունք-

⁸ Տէս Ս. ЛИСИЦИАН, Из материалов по изучению жилищ Армении. «Крестьянское жилище Мегринского района», ИКИАИ, т. V, Тифлис, 1927, էջ 119—133:

⁹ Տէս Ս. ЛИСИЦИАН, Армянская этнография за 15 лет, «Советская этнография» (այսուհետեւ՝ ՇՅ), 1936, №4—5, էջ 271:

¹⁰ Տէս Ս. ԼԻՍԻՑՅԱՆ, Ազգագրական հարցարան, Երեւան, 1946:

¹¹ Տէս Ս. ЛИСИЦИАН, Очерки этнографии дореволюционной Армении, Кавказский этнографический сборник (այսուհետեւ՝ ԿՇՅ), Москва, 1955, №1 (Новая серия), т. XXVI, էջ 182—264:

¹² Տէս Ս. ԼԻՍԻՑՅԱՆ, Զանգեզուրի հայերը, Երեւան, 1969. նույնի՝ «Լեռնային Ղարաբաղի հայերը» (ազգագրական ակնարկ), Հայ ազգագրություն եւ բանահյուսություն (այսուհետ՝ ՀԱԲ), գ. 12, Երեւան, 1981:

ները, հավատալիքները, նիստուկացը՝ իրենց առանձնահատկություններով հանդերձ՝ միաժամանակ ցույց տալով դրանց պատմամշակութային ընդհանրությունը ամբողջ հայ էթնոսի հետ։ Լեոնային Ղարաբաղի՝ որպես ուրույն պատմաազգագրական մարզի բնակչության մասին հարուստ ազգագրական նյութն առաջին անգամ դրվեց գիտական շրջանառության մեջ։ Ստ. Լիսիցյանն անդրադառնում է նաեւ Շուշիի հիմնադրմանը, իբրեւ քաղաք դրա դերին¹³։ Ըստ հեղինակի ձեռքի տակ եղած հավաստի տվյալների՝ 1924 թ. բնակչությունը Լեոնային Ղարաբաղում կազմել է 130 հազար մարդ, ընդ որում՝ հայերը՝ 120 հազար, իսկ ադրբեջանցիները՝ 10 հազար¹⁴։ Շուշին Ի. դարի սկզբին արհեստագործության եւ առեւտրի կենտրոն էր։ Քաղաքը 1893 թ. ուներ 7 հազար բնակչություն, իսկ 1914 թ. այն հասել է 25 հազարի։ Շուշին «Անդրկովկասյան Հայաստանում բացարձակապես գյուղատնտեսական զբաղմունքներից կտրված զուտ քաղաքային տիպի միակ բնակավայրն էր»¹⁵,— նշում է հեղինակը։ Արցախի հայ բնակչության էթնոմշակութային բնութագրության, հատկապես մինչքրիստոնեական հավատալիքների վերաբերյալ է նաեւ Ի. Պետրուշենկու ուշագրավ ուսումնասիրությունը¹⁶։

Ի դեպ, Ժ. Գ. վերջին տասնամյակում՝ Շուշիում ծավալած մանկավարժական եւ հրատարակչական գործունեության տարիներին, տեղի կառուցապատման մասին ուշագրավ նկարագրություն է թողել նաեւ Ե. Լալայանը։ Ըստ նրա՝ քաղաքն ընդգրկել է երկու թաղ՝ թուրքաց եւ հայկական։ «Թուրքաց թաղը կեղտոտության բուն է. բավական է ասել, որ հայոց թաղի կեղտոտությունները կոյուղիներով հոսում են մինչեւ թուրքաց մասը, իսկ այստեղ անցնում է բացօթյա արխերի միջով՝ տարածելով սարսափելի գարշահոտություն։ Թուրքերը միշտ հրաժարվել են կոյուղիներ շինել տալուց՝ չնայելով, որ այդ արխերն անցնում են նույնիսկ իրենց տների առջեւով»¹⁷։ Ե. Լալայանը հավաստում է, որ Ժ. Գ. վերջերին Շուշիի բնակիչները գլխավորապես հայեր էին եւ շիա պարսիկներ։ Հայերն այստեղ էին հաստատվել Արցախի Շոշ եւ այլ գյուղերից, Ղազանչիից, Ագուլիսից եւ Մեղրիից։ Բնակչության ընդհանուր թիվը 33 252 էր, որից 18 796-ը՝ տղամարդիկ, 14 456-ը՝ կանայք։ Հայերը կազմել են՝ 11 637 տղամարդ, 8947 կին, ընդամենը՝ 20 581

¹³ Տե՛ս ՍՏ. ԼԻՍԻՑՅԱՆ, Լեոնային Ղարաբաղի հայերը, էջ 27–32։

¹⁴ Տե՛ս անդ, էջ 16–17։

¹⁵ Անդ, էջ 27–32։

¹⁶ Տե՛ս Ի. ПЕТРУШЕВСКИЙ, О дохристианских верованиях крестьян Нагорного Карабаха, Известия Аз. ГНИИ, Баку, 1930, т. 1, вып. 5։

¹⁷ Ե. ԼԱԼԱՅԱՆ, Վարանդա, ԱՀ, գ. Բ., էջ 29։

մարդ, իսկ թուրքերը՝ 7159 տղամարդ եւ 5509 կին, ընդամենը՝ 15 668 մարդ։ Շուշիում գործում էին հայկական չորս եկեղեցի եւ մեկ կուսանոց մենաստան։ Ճարտարապետական հորինվածքով բոլորից գեղեցիկը Ղազանչեցոց Ս. Փրկիչ մայր եկեղեցին է, որի երկարությունը 35 մ է, լայնությունը՝ 23 մ, բարձրությունը՝ 35 մ։ Շուշիում էր Ղարաբաղի հայոց կոնսիստորիան՝ իր առաջնորդարանով՝ բացված 1830 թ.՝ Բաղդասար մետրոպոլիտի օրոք։ Այնուհետեւ հավաստում է, որ Շուշիի շրջակա նշանավոր Ավետարանոց (Չանախչի), Շոշ, Արեգդեմ, Սարուշեն, Վարազբուն, Նոր Թաղեր եւ մյուս գյուղերում աստիճանաբար հին, գլխատան սկզբունքով կառուցված շինությունները փոխարինվում էին եւրոպական ոճի երկհարկանի տները¹⁸։

Բացառիկ ամբողջական ուսումնասիրություն է Ստ. Լիսիցյանի «Չանգեզուրի հայերը» աշխատությունը, որում ամփոփված են Ժ. Դ. Վերջերի եւ Ի. դարի սկզբների ազգագրական հարուստ նյութերը, որոնց մեծ մասը հեղինակը հավաքել է 1920–1930-ական թթ.։ Այս ծավալուն մենագրության «Բնակավայրեր եւ շենքեր» գլխում քննության են առնվում բնակավայրերի բնույթին եւ տեղագրությանն առնչվող հարցեր։ Նա բացահայտել է ազգագրական այդ շրջանի բնական, աշխարհագրական, տնտեսական ու քաղաքական գործոններով պայմանավորված բնակավայրերի տիպերը։ Գիտնականն իրավացիորեն նկատել է, որ բնակավայրերի տեղաբաշխումը Չանգեզուրում ենթարկվել է աղբյուրների դասավորության, իշխող քամիների ուղղության եւ թշնամական հարձակումներից ապահովության պայմաններին։ Գյուղերը խորը մտնում են ձորերի մեջ (Հալիձորը, Շինուհայրը, Խոտը, Հին Գորիսը, Վերիշենը, Քարահունջը, Խնձորեսկը եւ այլն)։ Կան նաեւ քարայր բնակարաններ։ Այս տեսանկյունից տիպական է Խնձորեսկը։ Այսպիսի բնակարաններ կան Հին Գորիսում, Տեղում, Խնածախում եւ այլուր։ Ապա շարադրվել են Չանգեզուրի կենտրոն Գորիսի բարձրացման սոցիալ-տնտեսական հանգամանքները՝ կարեւոր ճանապարհների հանգույց լինելը, առեւտրական եւ վարչական կենտրոն դառնալը։ Այնուհետեւ ներկայացվել են բնակարանները եւ գյուղատնտեսական շենքերը (էջ 84–114)։

Սյունիքի ժողովրդական բնակարանի վերաբերյալ ուշագրավ աշխատության հեղինակ է ճարտարապետ Ն. Պապուխյանը, որը 1972 թ. հրատարակել է «Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը» խորագրով աշխատությունը, որտեղ շոշափված են հին քաղաքնե-

¹⁸ Տե՛ս Ե. ԼԱԼԱՅԱՆ, *անդ.* էջ 29–31։

րի, ավանների եւ գյուղերի կառուցապատման, տարբեր բնույթի շենքերի ու շինությունների կառուցվածքային, համադրվածքային եւ գեղարվեստական առանձնահատկությունները:

Բնակավայրն ու բնակարանը Սյունիքում: Ինչպես պատմական Հայաստանի ողջ տարածքում, այնպես էլ Սյունիքում բնակավայրերի տեղի ու դիրքի ընտրության համար նկատի են առնվել տեղանքի արեւահայացություն, քամիներից պաշտպանված լինելու, ոռոգելի հողեր եւ արոտներ ունենալու, աղբյուրներին մոտ գտնվելու, անվտանգությունն ապահովելու, թափվող ջրի ուժը ջրաղացների համար օգտագործելու, կեղտաջրերն ու անձրեւաջրերն արագ հեռացնելու, լվացքի համար հոսող մեծաքանակ ջուր ունենալու եւ մի շարք այլ գործոններ: Սյունիքի բնակավայրերի ջրամատակարարման մասին ուշագրավ հիշատակությունների ենք հանդիպում Ստ. Օրբելյանի «Սյունիքի պատմություն»¹⁹ գրքում: Նա պատմում է Զաքեձորի բարձունքներից բխող Վարարակի կամ Ակների աղբյուրներից սկիզբ առնող եւ մինչեւ Տաթևի վանքի Ցաքոտ կոչված վայրը հասնող, մոտ 30 կմ ճանապարհ անցնող գետի մասին, որը կենդանություն է տալիս ձորին: Այն նաեւ խմելու ջուր էր նորեցիների, խոտանացիների, շինությանյրեցիների, հալիձորցիների եւ այլ գյուղերի բնակիչների համար²⁰: Օրբելյանի հավաստմամբ՝ մի շարք գյուղերի ոռոգման եւ խմելու ջուր է մատակարարել 1098 թ. կառուցված Գնդեվազի ջրանցքը²¹: Զանգեզուրի եւ հատկապես Մեղրու շրջանի բնակավայրերում գործել են կավե խողովակներով կամ քարե սուկերով (ֆան ֆան, ֆյահրիզ) կառուցված ջրմուղներ: Դրանցից կարելի է հիշատակել Խնածախ, Նոնաձոր, Շվանիձոր, Ալվանք, Կարճեւան գյուղերինը²²: Վայոց ձորի եւ Զանգեզուրի աղբյուրներից բնակավայրերին բնորոշ է եղել մերձավորությունը լեռնային արոտներին: Այգուհանդերձ, հայկական բնակավայրերի տեղանքի ընտրության հարցում առանձնահատուկ նշանակություն է տրվել պաշտպանական հնարավորություններին: Ինչպես Սյունիքում, այնպես էլ Արցախում գյուղական բնակավայրերը հիմնվել են կամ ամրոցների մերձակայքում, կամ խուլ ձորերի խուլ անկյուններում, մերձակա բնական պատսպարան

¹⁹ Տե՛ս Ս. Օրբելյան, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911, էջ 254—257:

²⁰ Տե՛ս անդ:

²¹ Տե՛ս անդ, էջ 262—263:

²² Տե՛ս Մ. ՍԻՐԱՍԵԱՆՅ, Տեղագիր Գեղարքունի Մովսեղաբ գաւառին, Վաղարշապատ, 1895, էջ 518:

բարձրագիր քարանձավներում, լեռնածալքեր ունեցող վայրերում, որոնցով անչափ հարուստ է Ջանգեզուրը: Շատ դեպքերում անծանոթի համար դժվար է եղել գտնել ձորերում թաքնված գյուղերը: Դրանց տեղադրությունն են ցույց տալիս նաեւ անվանումները՝ Ձորագյուղ, Կոռնիձոր, Ձորաշեն, Այգեձոր, Հալիձոր, Առաջաձոր, Շվանիձոր եւ այլն: Որոշ գյուղեր ուղղակի ծվարել են վտանգավոր ճեղքվածքներ ունեցող ժայռերի տակ: Դրանցից կարելի է առանձնացնել Խոտն ու Շինուհայրը: Բնակարանների խիտ կառուցապատումների պատճառով ծուռումուռ ճանապարհները կորչում էին աստիճանաձեւ դասավորված կտուրների մեջ, որոնք մեկը մյուսի համար բակ եւ նույնիսկ ճանապարհ են ծառայել: Ժժ. դարում եւ Ի. դարի սկզբներին քարայր բնակարաններ դեռեւս գոյություն ունեին Խնձորեսկ, Շինուհայր (Շնհեր), Վերին Շեն, Տեղ, Հալիձոր, Կյորես եւ այլ գյուղերում: Ժայռափոր այդ կացարաններն այստեղ անվանվել են ֆեռ-ծի տուն, ֆրատակ: Դրանք «կարծես ծիծեռնակի բներ լինեն՝ հյուսված ժայռերի կողերի վրա»²³: Անձավային այդ բնակարանները նաեւ ինքնատիպ պատսպարաններ էին, մարդիկ ելումուտ էին անում պարաններով: Դժվարամատչելի քարայրների մի ամբողջական համալիր է Խնձորեսկի բերդը: Համաձայն Ստ. Լիսիցյանի ուսումնասիրության՝ քարայր բնակարաններ հանդիպում են նաեւ Սիսիանի շրջանի Բռնակոթ, Ուզ եւ այլ գյուղերում²⁴: «Քրատակերը» ծառայել են իբրեւ բնակարան, միաժամանակ՝ գոմ եւ բնակարան, գոմ եւ փարախ կամ մարագ. եղել են նույնիսկ արհեստանոցներ, իսկ Հին Գորիսի ստորին մասում ճամփեզրին տեղավորված քարավանատունը բաղկացած է եղել մի քանի քարայրներից: Գորիսի վարչատարածքային այս շրջանում նույնիսկ ձիթհանը, հնձանը ժայռափոր էին: Քարանձավներն այստեղ հարմարեցվել են ապարների բնույթին եւ ընտանեկան պահանջներին: Լեռնային Ղարաբաղում քարայրներն օգտագործվել են հիմնականում տնտեսական նպատակներով՝ որպես գոմ, մառան²⁵, իսկ հարավային մասերում՝ նաեւ որպես բնակարան²⁶:

Ի դեպ, գյուղի տարածքում պատմական տարբեր ժամանակահատվածներում կառուցվել է չորս եկեղեցի: Կանգուն են Ս. Թադեոս եւ Ս. Հռիփսիմե եկեղեցիները, Անապատ եկեղեցին խոնարհ-

²³ Ս. ԼԻՍԻՑԻԱՆ, Ջանգեզուրի հայերը, էջ 86:

²⁴ Տե՛ս անդ:

²⁵ Տե՛ս Ս. ԼИСИЦИАН, К изучению крестьянских жилищ (карабахский карадам), էջ 165:

²⁶ Տե՛ս В. КОБЫЧЕВ, Жилище народов Восточного Закавказья в XIX в., СЭ, №3, М., 1957:

ված է, իսկ գյուղի հարավարևելյան եզրին պահպանվել է Թ.—Փ. դդ. ժայռափոր եկեղեցի:

Ուսումնասիրություններն արձանագրում են գյուղական բնակավայրերի կառուցապատումների հնավանդ երկու եղանակ. ա) խիտ կառուցապատում՝ կառույցների հոծ զանգվածի տեսքով, համեմատաբար հարթ վայրերում, բ) սանդղաձև խիտ կառուցապատում լեռնալանջերին կամ ձորամեջերում:

Ինչպես Զանգեզուրում, այնպես էլ Արցախում բնակավայրը ձևավորվել է կենտրոնում գտնվող եկեղեցու շուրջ, որտեղ էլ անցկացվում էին հայ բնակչության պսակի, կնունքի, թաղման, կրոնական բազմապիսի արարողակարգերը: Ծուռումուռ փողոցներով տարածվում էին տների ոչ կանոնավոր դասավորությամբ զանգվածները: Տները կառուցվում էին «իրար վրա», երբ մեկի տան կտուրը մյուսի համար բակ էր ծառայում: Գյուղերում չկային լայն փողոցներ, տների արանքով երթեկեկում էին քարե աստիճաններով: Տների միմյանց մոտ լինելը, անկանոն կառուցապատումները ազգատոհմային համախմբման սովորույթներով էին պայմանավորված: Թե՛ Զանգեզուրում եւ թե՛ Արցախում բնակելի թաղերից յուրաքանչյուրը մի դեպքում կազմվել է ազգատոհմային կապեր ունեցող ընտանիքներից, մեկ այլ դեպքում՝ հայրենակցական սկզբունքով: Շուշի քաղաքում առանձնացված էր այդպես համախմբված չորս թաղ՝ Ագուլեցոց (Ագլիսի), Ղազանչալու (Ղազանչի գյուղից վերաբնակեցված), Մեղրեցոց (սրանք գաղթել էին Մեղրուց)՝ յուրաքանչյուրն իր եկեղեցու շուրջ: Զորրորդը մահմեդականներով բնակեցված թաղն էր՝ Թավրիզլի անվամբ: Այդ անվանումները ցույց են տալիս ինչպես բնակիչների ծագումը, այնպես էլ սերտ կապը նախկին բնակավայրերի հետ:

Բնակավայրի հասարակական կյանքի կենտրոնը եկեղեցու կամ դրա հարեւանությամբ գտնվող հրապարակն էր, որը տարեց տղամարդկանց զրուցարան էր, ժողովարանը, որտեղ բանավոր վճիռներ էին կայացվում համայնքին հուզող հարցերի վերաբերյալ: Այդպիսի հասարակական նշանակություն է ունեցել գյուղական աղբյուրը՝ իբրեւ կանանց եւ հարսնացու աղջիկների շփման, մտերմացման, ասպարեզ ելնելու վայր: Բնակավայրի մյուս բաղկացուցիչ տարրը գերեզմանոցն էր՝ քարքարոտ, մշակման ոչ ենթակա բարձունքների վրա: Գերեզմանոցում կանգնեցվում էին մատուռներ, խաչքարեր, աճեցվում էին սրբազան ծառեր: Այստեղ էլ գերեզմաններին են ազգատոհմային դասավորություն տվել:

Մի հանգամանք եւս. 1804—1813 եւ 1826—1828 թթ. ռուս-թուրքական պատերազմներից հետո պարսկահայերի մի հատված համալրել է Սյունիքի եւ Արցախի տեղական հայ բնակչության կազմը: Վերաբնակեցվածներն ապրում էին փոքր ընտանիքներով, եւ, բնականաբար, նրանց տները հիմնվում էին ոչ մեծ մակերեսներով, բայց տեղական սովորույթի համաձայն՝ բնակվում էին կաած տներում՝ միմյանց հետ հաղորդակցվելով միջնորմ պատերում բացված փոքրիկ պատուհաններով կամ նեղլիկ դռներով: Սյունիքի բնակավայրերին բնորոշ են եղել ծայրահեղ խիտ կառուցապատումները. դա արձանագրել են նաեւ օտար ճանապարհորդները:

Սյունիքի գլխատուն-բնակարանի մասին սկզբնաղբյուրները բազմաթիվ են, միայն Մեղրու ցածրագիր շրջանում այն չի գրանցվել²⁷: Սյունիքում գլխատունը կոչվել է «ղարադամ» եւ «հացատօն», եւ ինչպես վկայում են նյութերը, ԺԹ. դ. վերջին այն դեռեւս եղել է բնակարանի գերակշռող տիպը²⁸: Այստեղ գլխատան հիմնական բաղկացուցիչ մասերն են բուն տունը (տօն), որն անվանվել է նաեւ «հացատօն», եւ դրա առջեւ գտնվող՝ կողքերից պատերի մեջ առնված, դիմացից՝ սյունաշար, հարթածածկ սրահը կամ էյվանը, որը 2—2,5 մ առաջ էր քաշված բուն շենքից: Հացատօնը քառակուսի հատակագծով կառույց էր՝ կիսով չափ գետնափոր: Երկարությամբ եւ լայնությամբ սովորաբար հասնում էին 8—10 եւ ավելի մետրի: Հացատանը կից էր դարձյալ հարթ ծածկով մառանը (տան օթախ, մերսի օթախ, խորդանոց), որի միակ մուտքը հացատնից էր: Այն ծառայել է նաեւ որպես առանձնասենյակ նորապսակների համար:

Տները գլխավորապես բակ չունեին եւ հաճախ պարսպապատված էլ չէին: Որպես բակ ծառայել է ավելի ներքեւ գտնվող հարեւանի տան կտուրը կամ դուրս ցցված ժայռը²⁹:

Տնտեսական կառույցներից գոմը (թավլե, կյոմ) սովորաբար կառուցվում էր տնից, անգամ բնակավայրից էլ հեռու՝ վերջինիս նեղվածության պատճառով, քանզի բուն Ձանգեզուրում գյուղերը խորը մտնում են ձորերի մեջ եւ կաշում դրանց կողերին: Միայն Սիսիանի տարածաշրջանում

²⁷ Տէս Ս. ԼԻՍԻՑԻԱՆ, Крестьянское жилище Мегринского района, էջ 122:

²⁸ Տէս Ե. ԼԱՍՅԵԱՆ, Միսիան, էջ 161—177. նույնի՝ Ձանգեզուր, էջ 32—40. Н. ШИРАКУНИ, Зангезурский уезд Елисаветпольской губернии, «Сборник материалов для изучения местностей и племен Кавказа» (այսուհետեւ՝ СМОМПК), Тифлис, 1904, вып. XXXIV, էջ 191—192. Ս. ԼԻՍԻՑԻԱՆ, Ձանգեզուրի հայերը, էջ 102—114. Ն. ՊԱՊՈՒԽՅԱՆ, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, էջ 55—78:

²⁹ Տէս Ս. ԼԻՍԻՑԻԱՆ, Ձանգեզուրի հայերը, էջ 87:

գոմն ավելի հաճախ կառուցվում էր տանը կից, բայց առանձին մուտքով: Սյունիք—Զանգեզուրում բացառվում էր մարդկանց եւ անասունների բնակությունը մի ծածկի տակ. միայն «կյոմի» մուտքի մոտ հյուսված ցածրիկ միջնորմով առանձնացվում էր մի անկյուն՝ անասնապահի ննջարանը: Զանգեզուրի մասին Ժ. Դ. սկզբներին Ֆրանսիացի ճանապարհորդ Բ. Շանտրը, որպես բացառություն, արձանագրել է մարդկանց եւ անասունների հետ համատեղ բնակությամբ մեկ սենյակ ունեցող բնակարան: «Շիկահողում,— գրում է ճանապարհորդը,— բնակարանները քարից ու հողից են, եւ հարթ կտուրները կրում են կոնաձեւ ծխնելույզներ: Այստեղ մեծաքանակ շերամ են բուծում: Տները կազմում են ընդամենը մի սենյակ, որտեղ քնում է ամբողջ ընտանիքը՝ օջախի շուրջը, որը գտնվում է սենյակի մեջտեղում»³⁰: Ֆրանսիացի մեկ այլ ճանապարհորդ՝ Ժաք Մորիերը, արձանագրել է, որ այսպիսի տներում միասին են ապրել մարդիկ եւ անասունները՝ իրարից մեկուսացած ընդամենը մի ցանկապատով³¹: Այս հաղորդումներից կարելի է հետեւություն հանգել, որ Զանգեզուրում եւս մինչեւ Ժ. Դ. սկզբները բնակարանը եղել է մեկսենյականոց կառույց, կենտրոնում՝ թոնիր-օջախով, գմբեթաձեւ ծածկով, լուսավորումը եւ օդափոխումը՝ երդիկից, մարդկանց եւ անասունների համատեղ բնակեցմամբ: Հետեւաբար, այսպիսի մեկ բաժնով տները խոր անցյալից հարատեւած կառույցներ էին:

Սյունիքի որոշ շրջաններում, օրինակ՝ Սիսիանում, մարդկանց եւ անասունների համատեղ ապրելակերպն ամենայն հավանականությամբ պետք է բացատրել տեղացիների անվտանգության տեսակետից անապահով կյանքի եւ անասունների նկատմամբ պահանջվող մշտական խնամքի անհրաժեշտությամբ: Տեղի հայերի համար մեծ գլխացավանք էին տեղի թափառական կյանք վարող թաթար-թուրքական տարրերի գողությունները, ավազակային հարձակումները: Այդ առթիվ Ե. Լալայանը գրում է. «Թափառական կյանքը նրանց սովորեցրել է անհոգություն, պարապություն եւ ծուլություն, եւ այս հատկությունները այնպես խիստ են արմատացել նրանց մեջ, որ նրանք պատրաստ են մի քանի օր շարունակ քաղցած մնալ, քան թե աշխատել: Սրանից էլ առաջանում է նրանց մեջ մշտապես չքավորությունը, որի հետեւանքը լինում են գողու-

³⁰ B. CHANTRE, Travers L'Armenie Russe, Paris, 1893, p. 125.

³¹ Տե՛ս ՀՈՎՀ. ՀԱԿՈԲՅԱՆ, Ուղեգրություններ, հ. Զ., Երեւան, 1932, էջ 341:

թյունը եւ ավազակությունը, որ շատ սովորական երեւույթ է այս կողմի թաթարների մեջ: Այս է պատճառը, որ Զանգեզուրի գավառը լի է ավազակություններով»³²:

Զանգեզուրի գլխատները, կառուցված լինելով լեռների լանջերին, հիմնականում կիսագետնափոր էին: Ավելի ուշ կառուցվածները, այդ թվում՝ Սիսիանի տարածաշրջանինը, ուր տեղանքը մեծ մասամբ հարթ էր, վերգետնյա էին: Տունը Զանգեզուրում ընդարձակ քառակուսի, երբեմն էլ տեղանքով պայմանավորված՝ ուղղանկյուն հատակագծով սենյակ էր: Պատերը շարվել են անտաշ քարից, իսկ Սիսիանի շրջանում՝ բացառապես կավե ցեխից: Յուրօրինակ գմբեթաձեւ, ջերմամեկուսիչ եւ անշրանցիկ կավե հաստ շերտով պատված ծածկը միշտ եղել է գերանների զուգահեռ շարվածքով: Սյունիքի գլխատան կառուցվածքային առանձնահատկություններից մեկը նրա քառակուսի հատակագիծն էր, եւ կենտրոնում՝ 4 սյուների ու որոշ հեռավորությամբ դրանց զուգահեռ 3—4 տեղով կանգնեցված ամուր պատվանդաններով սյուներին դրվող հաստ գերանների հիմնակմախք՝ հրոտմի (առորմի³³) վրա քառակուսի հիմքով աստիճանաբար բարձրացող եւ նեղացող գերանների շրջանակը, որն ավարտվում էր երդիկով: Բրգաձեւ տանիքի քառակուսիները չորսն էին: Այսպիսի տանիքը բնորոշ էր մեծ գլխատներին, իսկ փոքրերին բնորոշ չէին կենտրոնի չորս սյուները: Տանիքն ուղղակի հենվում էր պատերին կպած 2—3 տեղով սյուների վրայի գերաններին: Սակայն այս վերջինը երբեմն բացակայել է հատկապես Սիսիանում:

Սյունիքին եւ նաեւ Արցախին բնորոշ էր բնակարանային համալիրի բնակելի եւ տնտեսական ու արտադրական շինությունների առանձնացվածությունը, որն արդյունք էր ոչ միայն չափավոր եւ մեղմ կլիմայի, ջերմաստիճանի կտրուկ տատանումների բացակայության, վառելափայտով ապահովված լինելու, այլեւ, որ ամենակարեւորն է, ոսոխներին մշտապես դիմագրավելու ունակության, որի շնորհիվ հնա-

³² Ե. ԼԱՆՅՅԱՆ, Սիսիան, ԱՀ, գ. Գ., Թիֆլիս, 1898, էջ 199:

³³ Առորմին պատերի գլխին կպած եւ սյուներով նեցուկված փայտե քառակուսի ճարտարապետական հնարանք էր, որը թեթեւացնում էր պատերին ընկնող ծանրությունը: Առորմի օգնությամբ տանիքի ծանրության որոշ չափով բեռնաթափումը կարելու էր մանավանդ այնպիսի երկրում, որտեղ երկրաշարժը կրկնվող երեւույթ է: Դրա համար էլ Սյունիքում 1931 թ. երկրաշարժի ժամանակ բնակչությունն ավելի ապահով է զգացել հացատանը, քան թե այլ տներում: Ստեփան Լիսիցյանի մեկնաբանությամբ՝ առորմին նախկին փայտաշեն տան կմախքն է, որն իր սյուների մեջ եղած արանքները լցրել է ոչ թե ուղղաձիգ տնկված գերաններով կամ հաստ տախտակներով, այլ քարե շարվածքով (տե՛ս Ս. ԼԻՍԻՅԱՆ, Զանգեզուրի հայերը, էջ 100—101):

րավորություն են ունեցել ապրելու օտարի լծից ազատ: Արտադրական եւ տնտեսական բնույթի կառուցվածքների բազմապիսի լինելը վկայում էր Սյունիքի բնակչության կենսունակության, աշխատասիրության եւ հայրենաշեն գործունեության մասին: Սեփական արտադրանքով նա բավարարել է ոչ միայն իր կարիքները, այլեւ զգալի քանակությամբ գյուղատնտեսական եւ արհեստագործական արտադրանք է ուղարկել մերձակա շրջանները:

Ներսույթը: Գլխատունը Զանգեզուրի բնակելի տան համակառուցում գլխավորն էր ոչ միայն ըստ նշանակության կամ հատկացման, այլեւ համադրվածքային տեսակետից՝ թե՛ հատակագծման եւ թե՛ ծավալային լուծման առումներով: Մնացած բաժանմունքները՝ ըստ դիրքի, ձեւի ու ծավալի, խստորեն ենթարկվել են դրան: Դաշտավարությամբ եւ անասնապահությամբ զբաղվող շրջաններում գլխատան կից կառույցների մեջ զգալի տեղ են գրավել գոմերը, փարախներն ու ախոռները, մինչդեռ դաշտավարական եւ այգեգործական շրջաններում ավելի շատ կառուցվել են շտեմարաններ, մառաններ, մարագներ, հնձաններ, ձիթհաններ:

Գլխատան մակերեսի մեծությունը համեմատական էր սյուների քանակին: Նահապետական այդ տներում են կատարվել հարսանիքները, որոնցում ամբողջ սենյակի պարագծով հարսանեկան շուրջպար էին բռնում: Կատարելով ննջարանի, խոհանոցի, ճաշասենյակի, հյուրասենյակի, աշխատանոցի, սրբազան բաժանմունքի, մառանի, երբեմն անգամ գոմի ու մարագի, հավաքույթներ կազմակերպելու հարկաբաժնի դեր՝ ունեցել է չափազանց պարզ, բնակելի նշանակության կահավորում՝ բաղկացած սակավապես գյուղացուն անհրաժեշտ մի քանի կտոր անշարժ կահույքից՝ թախտ-մահճակալ, ալյուրի, հացահատիկի, ընդեղենի՝ հաճախ երկու մասից բաղկացած, հոլմազ կոչված փայտե, երբեմն նաեւ հարդախառն կավե կամ հարդախառն թրիքով ծեփված, քթոցաձեւ, փունդով կոչված ամբարներ, որոնց թվով ու մեծության չափով որոշել են մարդկանց ունեւորության աստիճանը: Դրանց տալիս էին կլոր, քառակուսի, քառանկյունի եւ եռանկյունի ձեւեր: Հացը, մասնավորաբար չորացրած լավաշը, դարսել են ամբարներում կամ մառանի առաստաղից կախված փայտամածի վրա եւ ծածկել շորով: Տան անդամները, բացառությամբ մեծերի, քնել են հատակին փռված խսիրների, թաղիքի կամ գորգերի վրա փռված անկողիններում: Ընդ որում, Ստ. Օրբելյանի հավաստմամբ՝ բարձրաստիճան ընտանիքներում կամ վանականնե-

րի շրջանում անկողինը ոչ թե խոտեղեն էր, այլ փետրալից³⁴: Այս նույն հեղինակը բարձրաստիճան ընտանիքներում գործածվող կահույքի վերաբերյալ գրում է. «Իջեցրին (ՏերՄուշէ կաթողիկոսին.— Ռ. Ն.) արքունական դահլիճ (նկատի ունի Սյունիքի իշխանական պաշտոնատեղը.— Ռ. Ն.), նստեցրին ոսկեթել ու մարգարտազարդ բազմոցին, իշխանների գահի վրա», իսկ «Սյունիքի իշխանուհի Սահակիան (իբրեւ պատիվ) կաթողիկոսին տվեց «արքունի վրանը ամբողջ կահույքով եւ բազմականին, ապա նստեցրեց սպիտակ ջորիների ոսկեպատ կառք»³⁵: Այս տեսակները, իհարկե, բուն ժողովրդի մեջ հազվադեպ էին լինում: Նրանց օգտագործման պարագաները ինչպես ամենուրեք, այնպես էլ Սյունիքում, հիմնականում փռոցներն էին՝ թաղիքը, փսիաթը, կարպետներն ու գորգերը, որոնք փոխարինելու էին գալիս մահճակալթախտերին, բազմոցներին: Պատմիչն իր «Սյունիքի պատմություն» գրքում բազմաթիվ ակնարկներ ունի եկեղեցական բարձրաճաշակ կահույքի վերաբերյալ: Խոսելով Սյունյաց իշխանաց իշխան Սմբատի կնոջ՝ Սոփիանի (Գագիկ թագավորի քույրը.— Ռ. Ն.) եկեղեցաշեն շինարարական գործունեության մասին՝ գրում է, թե Եղեգիքում՝ Հավու (Վաչոց ձոր գավառում) գյուղի դիմաց, սուրբ Գրիգորի անվամբ եկեղեցին է կառուցել տալիս՝ այն «զարդարելով բազում կահկարասիներով», «փարթամացնում ամեն տեսակ անհրաժեշտ բաներով»³⁶, հիշատակում «սուրբ Գրիգորի սեղանը, աթոռը, գավազանը»³⁷, «փայտե մահիճը»³⁸: Նա հիացմունքով է հիշատակում, թե «... արհեստավորները անմշակ բաներից հարմար ու պիտանի առարկաներ են ստեղծում, ինչպես հյուսները ծառերից սեղան ու աթոռ, կարողները մորթիներից կոշիկ ու մուշտակ, դարբինները քարերից երկաթ են հանում եւ երկաթից սուսեր ու այլ գործիքներ պատրաստում: Ահա սրանցով մարդիկ նմանվում են Աստծուն եւ արարչակից կոչվում»³⁹: Ակնարկներ ունի նաեւ ցորենի ամբարների, գինու կարասի հորերի վերաբերյալ⁴⁰: Իսկ Ե. դ. պատմագիր Ագաթանգեղոսը հիշատակում է թագավորական

³⁴ Տե՛ս Ս. ՕՐԲԵԼՅԱՆ, Սյունիքի պատմություն, թարգմ., ներած. եւ ծանոթ.՝ Ա. Աբրահամյանի, Երեւան, 1986, էջ 187:

³⁵ Անդ, էջ 110:

³⁶ Անդ, էջ 230:

³⁷ Անդ, էջ 240:

³⁸ Անդ, էջ 153:

³⁹ Անդ, էջ 66:

⁴⁰ Տե՛ս անդ, էջ 188:

նստարաններ՝ «ոսկիապատ զահաւորակ», «զմեծապատիւ, շքեղաշուք, ոսկիակուռ զաթոռն քո հայրենի ծիրանեաց թագաւորութեանն»⁴¹: Ժէ. դ. պատմագիր Ա. Դավրիժեցին Սյունիքում մատնանշում է բնակարանի կահույքի որոշ տեսակներ: Հակառակ այն տեսակետի, որ հայ իրակա-նության մեջ բարձրորդ սեղաններ եւ աթոռներ միջնադարում չեն ար-ձանագրվել, պատմագիրը հաղորդում է, թե վանքերում սովորություն կար շինել քարե ընդհանուր բարձրորդ սեղաններ ու նստարաններ: Բարձրորդ սեղան եւ աթոռ օգտագործվել են եկեղեցիներում: Դրանք քարաշէն աթոռներ էին, թիկնաթոռներ, քանդակապատկերներով փայ-տե բազկաթոռներ⁴²: ԺԹ. դ. առաջին քառորդում քաղաքներում գոր-ծածվող բարձրորդ սեղանները գյուղերում հազվադեպ էին պատահում: Պատճառն այն էր, որ ժողովուրդը մեծ մասամբ դեռ պահպանում էր համեստություն մատնանշող ծնկած եւ ծալապատիկ նստելու սովորույ-թը: Տղամարդիկ նստում էին ցածրիկ նստարաններին կամ ծալապա-տիկ: Այդ պատճառով գործածվում էին կարճաոտ սեղաններ՝ խոնչաներ: Գյուղական վայրերում ճաշսեղանի դեր են կատարել նաեւ կարճաոտ քուրսին՝ իր փոոցով, զարդանախշված փայտե եւ պղնձե սկուտեղները, հասարակ եւ ասեղնագործված սփռոցները, կաշվից եւ մորթուց պատ-րաստված փռոցները, ճիպոտներից կամ ծղոտից հյուսված սալանները:

Գերդաստանի ընտանիքներն ունեցել են իրենց հատկացված տեղե-րը: Մեծ գերդաստաններն ունեցել են 6—7 օրորոց: Ուշագրություն ար-ժանի են օժիտի քանդակազարդ դուփ-սնդուկները: Կահույքի տարրերից են նաեւ պատամիջյան պահարանները՝ ծըլփառէղիմ, դռնով կամ անդուռ (դոլաբներ), ճրագակալները, հագուստի կախիչները, գդալնոցները, կա-վե աղամանները, սպասքի ճիպոտահյուս զամբյուղները: Մեղրիում ճի-պոտից հյուսում էին ցածրիկ սեղան, որի կենտրոնում բարձրանում էր մրգեր հրամցնելու երկհարկանի սկահակ:

Լուսավորության, ծուխը հեռացնելու եւ օդափոխության համար գերա-նաշարքերի գազաթին քառակուսի կամ բոլորածեւ անցքեր էին թողնում՝

⁴¹ Մանրամասն տե՛ս Ռ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ, Վաղմիջնադարյան Հայաստանի նախարարական տիրույթների, պաշտոնների, արտադրական եւ կենսապահովման մշակույթի վերաբերյալ տեղեկությունները Ագաթանգեղոսի «Հայոց պատմություն» երկում, Ազգաբնական ուսումնասիրություններ, գիրք 1, Երեւան, 2019, էջ 102—122:

⁴² Տե՛ս Ռ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ, Հայ ազգագրական տեղեկությունները՝ ըստ Առաքել Դավրիժեցու «Պատմություն» երկի, Ազգաբնական ուսումնասիրություններ, գիրք 1, Երեւան, 2019, էջ 152—175:

անվանելով հուրք կամ հէրք՝ երգիկ, որ ծածկում էին փայտե փականով կամ կոնաձեւ հյուսած կողովով, իսկ ավելի ուշ՝ ապակեպատ փայտե շրջանակով: Եթե գլխատանը կից մառանը, որ կոչվել է քհոլ կամ քհիլ⁴³, հիմնավոր պատեր եւ ձեւավորված երգիկավոր առաստաղ ունենար, երգիկով լուսավորված լիներ, ապա այն կհամարվեր նաեւ տան օթախ, որը կծառայեր նաեւ հյուրերի աչքից հեռու մատաղահաս հարսների կացարան⁴⁴:

Գիշերը բնակարանը լուսավորվում էր ձեթի կանթեղով կամ կավե ճրագով, որը դրվում էր պատի մեջ այդ նպատակով թողած խորշում կամ գլխատան կենտրոնական սյանն ամրացված փայտե ճրագակալի, իսկ ձմռանը՝ քուրսու վրա. ճրագի մեջ կամ ճարպ էր լինում, կամ ձեթ, կամ էլ սեւ նավթ: Հետագայում դրանց փոխարինեց նավթի լամպը⁴⁵:

Գլխատունը ջեռուցվում էր բաց կրակարանի՝ օջախի, թոնրի եւ պատամիջյան ծխնելուզավոր կրակարանի՝ բուխարու միջոցով: Թոնիրը՝ թօռէնը, պարտադիր էր հաց թխելու, կերակուր եփելու եւ տունը տաքացնելու համար: Սիսիանում մեծ թոնրի կողքին պատրաստվել է նաեւ ավելի փոքրը, որը ծառայում էր առօրյա կենցաղային անհրաժեշտ կարիքներին: Թոնիրը կավաշեն էր՝ երբեմն վերելից քարերով եզերված: Թոնիրը կրակարանի կատարելագործված ձեւն է, որը շատ ավելի խորն է՝ մինչեւ 120—130 սմ, շրջանաձեւ, դեպի ներքեւ լայնացող հորիզոնական կտրվածքով: Հատուկ օդանցքը նույնպես կավից էր՝ խողովակաձեւ, եւ կոչվում էր սունդուխ ակ, սնվածք, որն ապահովում էր վառվող կրակն անհրաժեշտ թթվածնով՝ թեժացնելու համար, եւ փակվում էր, երբ պետք էր լինում այն մարել: Թոնրի ներսից օդանցքի բացվածքը կոչվում է թոռակ, որն ունենում էր 30 սմ բարձրություն, 20 սմ լայնություն: Նշված կրակարաններն ուղիղ երգիկի տակ չէին լինում՝ նրանց շուրջը բոլորած մարդկանց, ինչպես եւ կրակը թափվող անձրեւաշրերից կամ փոշուց զերծ պահելու համար⁴⁶: Գորիսում եւ Կապանում թոնիրը տեղադրվում էր տան մի անկյունում, իսկ կենտրոնում՝ բաց օջախը: Օջախը վառում էին հիմնականում ձմռանը՝ ջեռուցման նպատակով, վառելիքը ոստոտ (շինարարու-

⁴³ Հայաստանի պատմագագարական այլ շրջաններում մառանը կոչվել է ֆիլար, կղար, ֆոլաիկ, գոդաիկ, մթերանոց, ձեռատեղ:

⁴⁴ Տէս Ս. ԼԻՍԻՅԱՆ, Զանգեզուրի հայերը, էջ 103. Ն. ՊԱՊՈՒԽՅԱՆ, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, էջ 59—60:

⁴⁵ Տէս Ս. ԼԻՍԻՅԱՆ, Զանգեզուրի հայերը, էջ 104:

⁴⁶ Տէս Գ. ЧУРСИН, Армяне Зангезура (краткий этнографический очерк), Тифлис, 1931, էջ 233. Ե. ԼԱԼԱՅԱՆ, Սիսիան, էջ 201:

թյան համար ոչ պիտանի) գերաններն էին, որոնց գլուխներն օջախի վրա իրար էին կպցնում, իսկ հակառակ ծայրերը՝ դեպի դուռն ուղղում: Թոնիրը եւ հատկապես բուխարին տեղադրում էին նաեւ սրահում: Պետք է կարծել, որ բուխարին ավելի ուշ շրջանի երեւոյթ է, այն բնորոշ չի եղել գլխատանը: Ձմռանը թոնրի վրա դնում էին կարճաոտ սեղան՝ քուրսի, որը ծածկում էին կարպետով կամ գորգով: Այն ծառայել է նաեւ իբրեւ ճաշասեղան: Բուխարին հիմնվում էր սրահի կողքի պատերից մեկի մեջ, սովորաբար՝ մուտքին ավելի մոտիկ. այն կամարակապ բացվածքով մի խորշ էր՝ իր պատի մեջ թողնված ծխնելույզով: Սրահը տեղադրվում էր գլխատան կողապատերի ելուստների միջեւ: Դիմացից հաճախ բաց էր՝ սյունաշարով, որի վրա հանգչում էր գլխատան տանիքի շարունակությունը:

Այս հարկաբաժինը համարվում էր տղամարդկանց արհեստանոցը, որտեղ տեղադրվում էին գորգագործական կամ կտավագործական դագաճը՝ հալբ, ջուլհակի ճկաֆօր կոշիկած դագաճը, ճախարակը՝ պճրաբ, եւ այլն: Զանգեզուրում կանայք դաշտային աշխատանքներից ազատ ժամանակ զբաղվել են արհեստագործությունը⁴⁷: Զուլհակությունն ու կտավագործությունը ծավալվում էին միայն տներում⁴⁸, իսկ վերոնշյալ գործիքները տեղադրվում էին հացատան լուսավոր, երդիկ-հուրթի մոտ կամ սրահում: Յերեկը սրահում էին առանձնացնում նաեւ խնամքի ենթակա նորածին եւ հիվանդ անասուններին:


Այստեղ՝ պատի տակ, սարքվում էր անշարժ, լայն փայտե թախտամահակալ՝ տան մեծերի համար: Հիմնական կահույքը ցորենի եւ ալյուրի ամբարն էր, որ դրվում էր գլխատան արեւոտ, չոր տեղում: Աղքատներն այն շինում էին կավից կամ էլ հյուսում քթոցի նման՝ ծառի ճյուղերից՝ երեսապատելով մղեղախառն թրիքով: Ամբարների վրա դասավորում էին անկողինը: Նման դեր ունեին նաեւ պատերի մեջ արված պատրհան-դոլաբները (թարեֆ)⁴⁹, որոնց մեջ դասավորում էին պղնձե եւ կավե ամանեղենն ու կուժերը, կաշվե տիկերը, ձիերի թամբերն ու փալանները, անկողիններով մաֆրաշներ եւ այլն:

Շարունակությունը՝ հաջորդիվ

⁴⁷ Сѣу Н. ШИРАКУНИ, նշ. աշխ., էջ 190:

⁴⁸ Сѣу Н. ГРИГОРОВ, Село Татев Зангезурского уезда Елисаветпольской губернии, СМОМПК, вып. II, Тифлис, 1891, էջ 103:

⁴⁹ Сѣу Е. МЕЛИК-ШАХНАЗАРОВ, Село Арцваник, Зангезурского уезда Елисаветпольской губернии, СМОМПК, Тифлис, 1898, էջ 14—16:



ՄՀԵՐ ՔՈՒՄՈՒՆՑ

Բանասիրական գիտ. թեկնածու,

Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՐԱՆԴ ԳԱՎԱՌԻ ՍԻՐԻՋԻ ԲԵՐԴԸ

Մուտք: Պատմական Սյունիքի Հաբանդ եւ Բաղք գավառների սահմանագլխին է գտնվում Սիրիջի ֆեոդ¹: 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո բերդի մի հատվածն անցել է ադրբեջանցիների հսկողության տակ: Բերդում եւ նրա շրջակա տարածքում հնագիտական ուսումնասիրություններ չեն եղել, բերդի եւ տարածքի պատմական նշանակության մասին մատենագրական, վիճագրական տեղեկությունները նույնպես սուղ են: Նրա բնական դիրքը, պահպանված բերդապարիսպները, գտածոները, շրջակայքում պահպանված հուշարձանները հավաստում են, որ երբեմնի անմատչելի բերդը կարելուք նշանակություն է ունեցել այս տարածաշրջանի համար եւ բավական երկար ժամանակ գործուն է եղել: Որպես բերդ եւ պաշտպանական դիրք՝ Արցախյան պատերազմի օրերին այստեղ է տեղակայվել հայկական աշխարհագրորդ, կանխել թշնամու ոտնձգությունը դեպի Գորիս եւ թիկունքակալ դիրքով ապահովել պատմական Սյունիքի տարածքների ազատագրումը:

¹ Քարահունջեցիները կոչում են Սիրիջի բերդ կամ Սիրիջի ֆեոդ: Շրեշ (բրբ. Շ[Ս] իրիջ) անվամբ բլուր հիշատակվում է Վարդգես Մանուկի մասին (տե՛ս Մ. ԱՔԵՂՅԱՆ, Հայ գրականության պատմություն, հտ. I, Երևան, 1944, էջ 61) Մովսես Խորենացու գրառած ավանդազրույցի մեջ («...եկեալ նստաւ զՇրէշ բլրով...»): Այն տեղագրվում է Քասաղ[խ] գետի ափին: Այս Շրեշ բլուրը, ըստ երեւույթին, ծիսական նշանակություն է ունեցել (տե՛ս Ե. ԼԱՍՅԱՆ, Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 61–62): Առհասարակ հայոց մեջ այս անվամբ տեղանուններ շատ կան (տե՛ս Թ. Խ. ՀԱՎՈՐՅԱՆ, Ս. Տ. ՄԵԼԻՔ-ԲԱՆԵՅԱՆ, Հ. Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. IV, Երևան, 1998, էջ 155), եւ այս առնչությամբ, թե ինչ նշանակություն է ունեցել բուսանունը տեղանվանական համակարգում, որեւէ ուսումնասիրություն չի հանդիպում: Տվյալ դեպքում, կարծում ենք, Սիրիջի բերդ տեղանունը կապված է շրեշ՝ բրբ. Շիրիջ || շիրիշ || շիրիծ || սիրիշ բույսի հետ, որ այս բերդի վրա առատությամբ է աճում (շրեշ՝ լատ. eremuarum. շրեշ, օղիմ, փայլկառուկ. թաղաղուազգիների ընտանիքի կոճղարմատավոր բուսատեսակ): Շրեշ բառն իրան. փոխառություն է՝ širēš (شریش) «շրեշ, սոսնձախոտ»:

Կարծում ենք, որ բերդի պատմահնագիտական արժեւորումը, նրա ռազմավարական դերի մեկնաբանումը նոր լույս կսփռեն Սյունիքի հայագիտության բնագավառում, եւ հուշարձանն արժանի տեղ կգտնի տարածաշրջանի տեսարժան վայրերի շարքում:

Պատմական տարածքը: Պատմական շրջանում Վարարակն գետի հովիտը՝ սկսած Իշխանասարի բարձունքներից մինչեւ Որոտան գետը, ամբողջությամբ ընդգրկված էր Հաբանդ գավառում: Որոտան գետի ձորահովիտը՝ Վարարակնի գետամեջ թափվելու վայրը, նրանից հյուսիս եւ հարավ ընկած ընդարձակ տարածքն ընդգրկված են եղել պատմական Բաղք գավառի մեջ, իսկ խորհրդային շրջանում այն մինչեւ Որոտան գյուղը բռնակցված է եղել Ադրբեջանական ԽՍՀ-ին: Հետեւելով Ստ. Օրբելյանի՝ Հաբանդ եւ Բաղք գավառներում նշած գյուղանուններին՝ պետք է ենթադրել, որ Որոտան գետը սահմանել է այս գավառները. հյուսիսը՝ դեպի Գորիս, ընդգրկվել է Հաբանդ գավառի մեջ, իսկ հարավը՝ Բաղքի: Իհարկե, այս բաժանումը պայմանական է², քանի որ տարբեր ժամանակներում փոխվել են գավառների սահմանները, անվանումները. այդ մասին նշում է նաեւ Սյունյաց պատմիչը³: Հաբանդ գավառի ծայրեզրում է ընդգրկվել նաեւ այսօրվա Քարահունջ գյուղը, որի վերաբերյալ պատմական տեղեկությունները նույնպես սակավ են: Այս բնակավայր-տարածքի նկարագրությունը հանդիպում ենք հայր Ղեւոնդ Ալիշանի «Սիսական»-ում: Նա նշում է, որ Կորեսի հարավային եւ Բարկուշատ մեծ գետի հյուսիսային կողմերի միջեւ, մի փարսախաչափ հեռավորությամբ, Քառաձունջ կամ Քառունջ գյուղն է՝ Ս. Հռիփսիմե եկեղեցով՝ Վարարակից աջ եւ անկյունում, որն առաջանում է նրա հետ միացող, նրա մի օժանդակ վտակով: Նրա աղբյուր-ակունք են Սոուգ պուլազը եւ Եւտի պուլազը (Սառն (Յորտ) աղ-

² Բաղքը եւ Հաբանդը 10–12-րդ դարերում ավելի ընդգրկուն են եղել: Բաղքը հարավից սահմանակից է եղել Կովսականին, արեւմուտքից՝ Ջորքին եւ Ծղուկքին, հյուսիսից՝ Հաբանդին: Արեւելքում Բաղքի սահմանը հասել է մինչեւ Աղամնո գետ: Իսկ ահա Տաթևի վանքին տրվող հարկի հին ցուցակում Բաղքը բաժանված էր երկու մասի՝ արեւմտյան Բաղք, արեւելյան Միւս Բաղք կամ Քուշանիք (տե՛ս Թ. Խ. ՀԱՎՈՐՅԱՆ, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երեւան, 1981, էջ 204): Իսկ եթե հետեւենք Ստ. Օրբելյանի նշած մի քանի բնակավայրերի տեղադրությանը, այդ թվում՝ Անդոկաբեդ, Տողոք եւ այլն, ապա պետք է ենթադրել, որ միջնադարում Վարարակնի եւ Որոտանի միացման վայրում սահմանակցվել են Բաղք, Մյուս Բաղք եւ Հաբանդ գավառները: Այս տարրոլունակ հարցը, կարծում ենք, չի կարող լուծված համարվել, քանի դեռ ամբողջացված չէ մատենագրական տեղեկություններում ընդգրկված Սյունիքի բնակավայրերի տեղադրությունը:

³ Այս մասին տե՛ս ՍՏ. ՕՐԲԵԼՅԱՆ, Սյունիքի պատմություն, Երեւան, 1986, էջ 70–71:

բյուրը եւ Յոթ աղբյուրը): Եռագագաթ Յուշ Թեփեղար լեռից իջնելով եւ անցնելով վերոհիշյալ լճակով՝ մոտ 18 չափ բարձր քարածայուերից թափվում է մեծ շառաշումով, որի համար եւ Շռան է կոչվում, եւ թերեւս, սրանից է ծագել գյուղի անունը՝ իբրեւ ֆաբերի հունչ՝ ձայն⁴: Ստ. Օրբեկյանը Հաբանդում Քարահունջ բնակատեղի չի հիշատակում: Հայր Անտոն Ալիշանը փորձում է տեղագրական հենց այդ ուղղումն անել՝ ընդգծելով, որ Ստ. Օրբեկյանի օրոք նույնպես այդ բնակավայրը գոյություն է ունեցել: Նա նշում է, որ Հին Ցուցակն Այլախ գյուղի հետ, այսինքն՝ Ծղուկի արեւելյան մասում է դասում այս Քարահունջ գյուղը: Հայր Ալիշանը եզրակացնում է, որ եթե իսկապես գյուղն այնտեղ է, որտեղ ինքը տեղորոշել է ըստ ընտիր աշխարհացույցի, ապա ավելի հարմար է Հաբանդին: Նա հիշատակում է նաեւ ճանապարհը, որը կառուցել է Աբրահամ կաթողիկոսը, երբ Խնձորեսկից գնալով դեպի Տաթեւ՝ անցել է այս գյուղով. «Տեսաք, ասէ, աւեր գիւղ մի. զոր բանա դրեալ էին առաջնորդք Տաթեւու, Քարահունջ անուն (ընդգծումը.— Մ. Ք.), աղբսեցին զիս արձակել. որ եւ զտեղի առեալ՝ ետու զարձակումն, եւ օրհնութիւն գիւղոյն, յորում գոյր պատուական եկեղեցի մի սրբատաշ քարամբք շինեալ»: Հայր Ալիշանի վկայությամբ՝ գյուղում հողագործ հայերի 150 տուն է եղել⁵: Եթե անգամ մերօրյա Քարահունջ գյուղի անունը համեմատաբար նոր է⁶, քանի որ Ստ. Օրբեկյանն այն չի հիշատակում նշյալ վայրում, այնուամենայնիվ այսօր եւս նկատվում է, որ շրջակայքում եղել են հին բնակատեղիներ: Իսկ դրանց անունների մեծ մասը եւ Ստ. Օրբեկյանի՝ այս տարածքում նշած բնակավայրերի տեղագրական եւ այլ հարցեր տակավին ուսումնասիրության կարիք ունեն: Հետագայում այդ տեղանքի մասին դարձյալ խոսում է հայր Ալիշանը՝ նշելով, որ քիչ հեռու՝ գետեզրին, կան կրային ջրերի՝ հիվանդության պատճառ դարձող աղբյուրներ: 1840 թ. Արարատի մեծ շարժի ժամանակ ավերվեց նաեւ այս գյուղը, որտեղ երկու վիհ բացվեց. մեկը՝ գյուղի տարածքում: Ահա թե ինչու պետությունը հեռացրեց այդ վիհին մոտիկ բնակվողներին: Ալիշանը նաեւ հավելում է, որ գյուղին մոտիկ հայտնաբերվել են գետնա-

⁴ Տէս Հ. Ղ. Աւիշան, Սիսական. Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Ամստերդամ, 1893, էջ 262:

⁵ Տէս անդ:

⁶ Կարծում ենք՝ Քարահունջի հին անուններից է Անձկալք-ը (այս մասին մանրամասն տես Ս. ՀԱՆՎԵՐԴՅԱՆ, Մ. ՔՈՒՄՈՒՆՅԱՆ, Ստ. Օրբեկյանի հիշատակած մի քանի տեղանունների ստուգաբանության եւ տեղագրության հարցեր, «Լեզու եւ լեզվաբանություն», թ. 1—2. էջ 65—66):

ձոր բնակարաններ ու խեցեղեն ամաններ, կահ-կարասի⁷: Տեղագրական նկարագրություններում չի նշվում Սիրիջի ֆեոժ⁸ բերդի մասին: Մեզ պատահած աղբյուրներից, թերեւս, ամփոփ տեղեկություն ունի «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարանը», ուր նշվում է, որ այն հավանաբար եղել է հենց Ջագեձորի բերդը, քանի որ գտնվում է պատմական Հաբանդ եւ Բաղք գավառների սահմանագլխին⁹:

Այսօր, ցավոք, Ծակեր կոչվող վայրից (Վարարակնի հարավային հովիտը ներառյալ) մինչեւ Որոտան գյուղի սահմանները՝ ներառյալ նախկին էյվազլար¹⁰ եւ Դողար (Դավոթլու) գյուղերը, տրվել են Ադրբեջանին (տե՛ս նկ. 1. — Սիրիջի բերդի արեւելյան հատվածի ձորը՝ Սուրիկի լիճը (Հըռանի ձօր): Պատմական հենց այս վայրում է գտնվում Սիրիջի/Շիրիջի ֆեոժը:

Ռազմավարական նշանակությունը: Բերդը եւ նրա տարածքը ոչ միայն դիտարժան են, այլեւ ռազմավարական կարեւոր նշանակություն ունեն այս տարածաշրջանի համար: Որպես բերդ-պատսպարան, որպես դիտանոց եւ ռազմական կայան գործել է ոչ միայն հին ժամանակներում, այլ նաեւ, ինչպես նշվեց, Արցախյան պատերազմի օրերին. այն եղել է քարահուռ ջեյրիների հիմնական հսկողական դիրքն ամբողջ ձորի հանդեպ (տե՛ս քարտեզը): Եթե հետեւենք խորհրդային շրջանի Հայաստանի քարտեզին, կտեսնենք, թե ինչպես են թյուրքերը Որոտան գետն ի վեր խոռոչ բացել, խորացել եւ դեմ առել Սիրիջի եւ Բղենո բերդերին, որոնք այսօր գտնվում են ՀՀ տարածքում¹¹: Սյունիքի անդամահատումն ու բուն Հա-

⁷ Այս մասին մանրամասն տե՛ս Հ. Ղ. Ալիշան, նշ. աշխ., էջ 262:

⁸ Բերդը տեղացիներից ոմանք կոչում են նաեւ Գյավուրդալա կամ Գյավուրկալա՝ հավանաբար հետեւելով ավանդազրույցին: Նման անվանումով բերդի մասին է խոսում Վ. Բալայանը (Արցախի պատմություն: Հնագրից մինչեւ մեր օրերը, Երեւան, 2002, էջ 47): Նշվում է, որ Քաշաթաղի շրջանում՝ Հոջանց գետի ձախափնյա ձորալանջին պահպանված կիկլոպյան շարվածքով հնամենի բերդի մնացորդները, ըստ մի կարծիքի, Ստ. Օրբելյանի հիշատակած Խոժոռաբերդն է, որին եկվոր քրդերը կոչում էին Գյավուրդալա (անհավատների բերդ): «Գյավուր» անվամբ տեղանուններ եւ շինություններ շատ կան: Այս անվանումը տարածաշրջանում չի կարող հաստատուն լինել: Ժողովրդական ստուգաբանության պատճառով է, որ տարածված ավանդազրույցը հաճախ վերագրվում է տարածքին կամ կառույցին (օրինակ՝ Աղջկա բերդ եւ այլն):

⁹ Թ. ՀԱՎՈՐՅԱՆ, ՍՏ. ՄԵԼԻՔ-ԲԱՆՇԱՆ, Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, Երեւան, 1986, էջ 881:

¹⁰ Այս գյուղի մասին ադրբեջանական եւ հայկական աղբյուրներում տեղեկություններ առանձնապես չեն հանդիպում: Հնարավոր է, որ այն Այվազ անձնանվան աղավաղումից լինի (այս տարածքում եղել են Գորիսի հողատիրությունները, որոնց ջուրը բերվել է Իշխանասարի փեշերից): Այս տարածքում Ադրբեջանական ԽՍՀ-ն բանավաններ է կառուցելիս եղել: Նպատակ են ունեցել խտացնել բնակչությունը:

¹¹ Սիրիջի բերդի հարավային եզրով է անցնում սահմանը:

յաստանից անջատումը, փաստորեն, կանխվել են այս ամրությունների շնորհիվ: Արցախի պարագայում պատմական Քաշաթաղ մուտք գործած օտար ցեղերին դա հաջողվել է՝ Աղավնո—Բերձոր—Շուշի տարածքներով բաժանել հայրենիքը: Սիրիջի բերդը հսկող եւ հսկվող, ազդանշանող դիրքում է Որոտանի ավազանի Քուրդիկ, Անդոկաբերդ, Քեյդալա, Սալկ, Բարգուշատ, Պահու Մագրա, Նովու, Սեթանց¹², Բդենո ամրոցների կամ ամրացված այլ բնակատեղիների նկատմամբ¹³:

Բերդի ուսումնասիրությունը եւ նկարագրությունը: Բերդը հիմնված է բնական ժայռի վրա: Ժայռի ներքեւի մասը կապտավուն է եւ ժամանակին իջել է մինչեւ գետը, իսկ հիմա այն ընդհատվում է Գորիս—Կապան ճանապարհով: Հանդիպակաց ժայռերի համեմատությամբ այն մեկուսի է՝ բնականորեն վեր բարձրացած մոտ 50—100 մ (տարբեր մասերում), իսկ գետի համեմատությամբ՝ մոտ 150—200 մ: Ժայռը տիրապետող դիրք ունի Որոտանի հովտի այս մասում. այստեղից երեւում են Ուլտի մեջքը¹⁴, դեպի Կառարին բարձրացող ժայռերն ու անտառները, թշնամուն անցած Ուռտան քաղաքային համայնքի (Կուրաթու) բարձունքները: Որոտանն այս մասում երբեմն կոչել են նաեւ Բարկուշատ (նույնանուն հովիտ, տե՛ս նկ. 2, 3, 4): Բերդ կարելի է բարձրանալ միայն պարաններով կամ կախովի աստիճաններով: Նրա ընդհանուր մակերեսը սեղանաձեւ է՝ մոտ 70 մ՝ 140 մ շրջագծով: Ծածկված է կանաչով եւ ծառերով: Բերդի տարբեր մասերում հանդիպում են փոսեր, որոնք, ամենայն հավանականությամբ, կացարաններ են եղել, իսկ որոշները՝ այլ կառույցներ: Բերդի առանձին հատվածներ երիզված են ձեռնաշեն պատերով՝ տարբեր մասերում տար-

¹² Այս ամրոցները նշված են Արցախի պետական համալսարանի 2018 թ. մարտի 16-ի գիտական նստաշրջանի «Արցախի ազատագրված տարածքների նորահայտ ամրոցները» զեկուցման մեջ (հեղ.՝ Բակուր Կարապետյան, Գագիկ Սարգսյան, ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ): Մենք անձամբ եղել ենք նշված հնավայրերից շատերում: Անուններից շատերը ճշգրտման կարիք ունեն: Հիմնականում հնարավոր չէ կատարել անվան եւ բերդի ճիշտ տեղորոշում. խորհրդային շրջանում եւ դրանից առաջ ուսումնասիրություններ առանձնապես չեն հանդիպում, իսկ մատենագրական տեղեկությունները չափազանց սուղ են: Օրինակ՝ Ստ. Օրբելյանն ամբողջական չի ներկայացրել ոչ միայն Սյունիքի գավառները, այլեւ բերդերը, որոնք բավականին շատ են (տե՛ս ՍՏ. ՕՐԲԵԼՅԱՆ, Սյունիքի պատմություն, Երեւան, 1986, էջ 70—71):

¹³ Այս բերդերի մասին առանձնակի տեղեկություններ չկան նաեւ Մ. Հովհաննիսյանի աշխատության մեջ. տե՛ս Մ. ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Հայաստանի բերդերը, Վենետիկ — Ս. Ղազար, 1970):

¹⁴ Արցախյան պատերազմի օրերին հիմնականում այստեղից էր ոմբակոծվում Գորիսի շրջանը:

բեր հաստությունամբ՝ սկսած 40 սմ-ից մինչև 1,5 մ: Գրեթե բոլոր կողմերից այն շրջապատված է բերդն անմատույց դարձնող բազալտե եւ խճապատ գոյակցությունամբ ժայռերով, իսկ եզրերը պարսպապատված են աշտարակավոր ոչ շատ բարձր ատամնապարիսպներով: Արեւելյան մասում բերդը շրջանակող ճանապարհ կա, որ անցնում է շրջանաձեւ փորված կամարներով (տե՛ս նկ. 5): Այժմ կամարներից պահպանված են երեքը, որոնցից երկուսն ամբողջական են¹⁵: Նկատելի է, որ ժամանակին այդ ճանապարհը շրջանակել է ամբողջ բերդը: Տարբեր պատճառներով եղած փլվածքները ծածկել են հետքերը (տե՛ս նկ. 6): Բերդի պարիսպների հաստությունը եւ կառուցվածքը հուշում են, որ դրանք եղել են ոչ միայն հարձակողական նպատակներով՝ վերելից հարվածելու համար, այլեւ որպես դիտանոցներ՝ շրջապատը հսկելու, եւ կրակարաններ՝ ահազանգի դեպքում շրջակա բնակավայրերին նախազգուշացնելու համար (տե՛ս նկ. 7, 8): Որոշ մասերում պահպանվել են կիսաշրջանաձեւ դիտաշտարակի եւ կացարանի մնացորդներ: Բերդն ունեցել է դեպի Վարարակն տանող գետնուղի, որը ներկայումս փակված է եւ հազիվ է նշմարվում: Բերդի տարածքում պահպանվել են առանց շաղախի կառուցված ուղղանկյուն կամ կլորավուն ոչ մեծ չափերի պատերը: Ուշագրավ է բերդի ներսում պահպանված շրջանաձեւ փոսը, որ հավանաբար եղել է ջրամբար: Բերդի հարավային, արեւելյան մասերում մոտ 2 մ բարձրությամբ պահպանվել են շրջանաձեւ պարիսպների ստորին մասերի մնացորդները: Անկասկած է, որ Քարահունջի երբեմնի ամրակուռ այս բերդն աչքի է ընկել անմատչելիությամբ:

Բերդում պահպանվել են հորեր, մարագներ եւ տարբեր նպատակների համար պահեստարաններ (տե՛ս նկ. 9, 10, 11, 12): Դրանցից լավ են պահպանված ցորենի երկու հորերը: Բերդի առանձին մասերի հողաշերտերում նկատվում են կավե ամանների մնացորդներ, ոսկորներ (տե՛ս նկ. 13, 14, 15):

Բերդի շրջակայքը: Բերդից մոտ 50 մետր հյուսիս՝ դեպի ներքեւ, Ծակեր կոչվող վայրն է, որտեղ կան ոչ միայն ժայռափոր այրեր, այլեւ ջրամբարներ, ջրատար փորվածքներ: Դիմացը՝ գետի երկու ափերին, ընկած են կիսալեռնային զանգվածով բարձրություններ ու թեքություններ, ուր տեղ-տեղ նույնպես պահպանված են ամրոցի պատեր, մարդակերպ քան-

¹⁵ Հնարավոր է՝ այն հետազայում օգտագործվել է նաեւ որպես ջրանցք, որով ոռոգվել են գետնի վար փոված տարածքները:

դակ, սալահատակ ճանապարհ եւ այլ հուշարձաններ: Ժամանակին այդ տարածքը բարեբեր է եղել: Այսօր էլ քարահունջեցիները հիշում են երբեմնի կանաչով ծածկված այգիները¹⁶: Պահպանված է սրբատաշ շարվածքով եւ ժայռափոր մոտ 15 հնձան Յոլուն բաղ, Միշի ձոր, Ավագ ֆեռու բաղ տարածքներում: Բերդի հարավային մասում՝ դեպի Որոտան գետը, ընկած են դաշտ եւ մի ավելի մեծ ժայռ, որը բնակիչներն անվանում են Բաղ բերդ¹⁷: Սիրիջի ֆեռոի արեւմտյան մասն ամբողջությամբ նույնպես այգետեղ է, որ կոչվում է Շամխալ բեյի բաղ: Այս տարածքում հայտնաբերվել են բազմաթիվ խաչքարեր, որոնց մեծ մասն անցել է Ադրբեջանի հսկողության տակ:

Ավանդագրույցներ: «Պատմողաբար մեզ է հասել, որ հայերը պարսիկներից պաշտպանվելու համար բարձրացել են Գյավուր դալան: Թշնամին ոչ մի կերպ չի կարողացել գրավել բերդը, ու անվանել են Գյավուրի դալա (անհավատի բերդ): Մեր ժամանակներում բերդը կարողացել են բարձրանալ Սերգեյ Առուստամյանն ու նրա հայրը՝ Խաչատուրը: Այնտեղ գտնվել են զանազան իրեր, ավազան՝ ջուր ամբարելու համար, թոնիր եւ այլն: Ասում են՝ բերդից մինչեւ Վարարակն գետը գոյություն է ունեցել թունել՝ գետնուղի, ելք ու մուտք, ջուր, սնունդ հայթայթելու համար»¹⁸:

¹⁶ Այս տարածքի տեղագրական հարցերում մեզ շատ օգնեց տարածքին գիտակ, բանասաց ու ստեղծագործող ՍՈՒՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ-ՔԱՐԱՀՈՒՆՋԵՅԻՆ, որ անհետացումից փրկել է շատ հուշարձաններ: Մեր շնորհակալությունն ենք հայտնում նրան՝ մեզ միանալու եւ մի քանի օր շարունակ տարածքի հնագիտական արժեքները հայտնաբերելու համար:

¹⁷ Բաղ-ի տեղանվան ստուգաբանությանը հանգամանորեն անդրադարձել է Ա. Ղարազոյցյանը: Նա քննել է նախորդների առաջ քաշած գրեթե բոլոր տեսակետները եւ եզրահանգել, որ «միանգամայն հնարավոր է, որ բալա եւ քաշ ցեղերին եւ այլ էթնիկական խմբեր ուրարտացիները տեղափոխած լինեն Սյունիք», իմա՝ Բաղ-ի-ն առաջացել է ցեղանունից (Ա. ՂԱՐԱՀՈՋՅԱՆ, Սյունիքի Բաղը եւ Քաշունիք գավառանունների ստուգաբանության շուրջը, «Լրաբեր հասարակական գիտությունների», թ. 12, էջ 71–76): Արդեն եղած կարծիքներով աշխատանքը չծանրաբեռնելու եւ կրկնությունից խուսափելու նպատակով մենք կփորձենք տեղանունը քննել այլ տեսանկյունից. բաղ հիմքը, հավանական է, առաջացել է միջին պրսկ. *bagh* (بَغ) «կալվածք, հողատարածք, ժառանգություն, անձին հանձնված» բառից, որ ինչպես արեւելյան լեզուներում, այնպես էլ հայերենի խոսակցական տարբերակներում ունի նաեւ «այգի» իմաստը: Ընդ որում՝ Սյունիք-Արցախի բառապաշարում բաղ գործածվում է նաեւ հենց «կալվածք, հողակտոր, բաժին իմաստներով»: Չենք կարող որոշել իրան. *bagh* եւ հին հայերենում առանձին գործածություն չունեցող բաղ- արմատների ընդհանրությունները, սակայն ակնհայտ է, որ «այգի» իմաստով տարբերակը բարբառային է եւ չի բխում առավելապես հունաբան հեղինակների կողմից գործածվող բաղ- ածանց-արմատից: Տեղանվան եւ անձնանվան փոխանցումները տարածված են եղել Սյունիք-Արցախում, հիմա՝ Գեղամ-Գեղարքունիք, Սյունիք-Սյունի, Բաղ-ի – Բաղակ եւ այլն:

¹⁸ Ա. ԲԱՂԿԱՍԱՐՅԱՆ, Քարահունջ գյուղի պատմությունը, 1988, էջ 7:

Մեկ այլ ավանդազրույցի համաձայն՝ Սիրիջի ֆերժը դեռ շատ հնուց եղել է բերդ: Այլի Ղուլի խանը մի քանի անգամ փորձել է գրավել այս տարածքը, բայց այս բերդից տրվող ազդակների պատճառով անհաջողություններ է ունեցել: Փորձել է գրավել Սիրիջի ֆերժը, որտեղ պատսպարված են եղել շրջակայքի բնակիչները: Չի կարողացել: Հետո նորից է արշավել մոտ 20 000 զորքով, բայց դարձյալ չի կարողացել ու բերդը անվանել է անհավատ՝ Գյավուր կալա¹⁹:

Արժեւորումը: Քարահունջ գյուղի հարավային մասը՝ հատկապես Սիրիջի ֆերժը, իսկապես տեսանելի է Ակների բարձունքից, հին Գորիսից եւ ընդհանրապես Վարարակն ձորահովտի հյուսիսային շրջաններից, Որոտանի հովտի ցածրադիր եւ բարձրադիր մասերից: Եւ ինչպես նկատելի է նկարներից եւ քարտեզից, այն կենտրոնական դիրք ունի շրջակայքում: Չենք կարող պնդել, թե Ստ. Օրբելյանի հիշատակած Ձագեձորի բերդը հենց դա է, բայց եւ անժխտելի է, որ այն գտնվում է «պատմական Հաբանդ եւ Բաղք գավառների սահմանագլխին»²⁰ տեսանելի նշված գավառների բարձունքներից:


РЕЗЮМЕ

Крепость Сириджи расположена на границе Габанда и Багга – исторических провинций Сюника. В исторический период крепость была расположена в оживленной местности. Крепость неприступна, сохранились следы ограды, хозяйственных построек и предметы, представляющие археологическую ценность. Крепость Сириджи находится на охраняемой, сигнальной позиции во всем Воротанском бассейне.

Благодаря крепости был предотвращен въезд в Габанд племен иноверцев. Мы не можем четко определить период строительства крепости. Есть мнение, что она была действующей с раннего средневековья до наших дней.

¹⁹ Ասացող՝ Սոորեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ-ՔԱՐԱՀՈՒՆՋԵՅԻ: Զրույցը բազմիցս լսել է գյուղի տարեցիներից:

²⁰ Թ. ՀԱՎՈՐՅԱՆ, ՍՏ. ՄԵԼԻՔ-ԲԱՆՇՅԱՆ, Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, նշ. աշխ., էջ 881:



Աղձաղի կողմից օկուպացված տարածքներ

Հայաստանի Հանրապետության տարածք


Բերդ կամ ամրոց

Ճանապարհ

Գետ

Լիճ

Քարտեզ



Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3




Նկ. 4



Նկ. 5



Նկ. 6



Նկ. 7




Նկ. 8



Նկ. 9



Նկ. 10



Նկ. 11



Նկ. 12



Նկ. 13



Նկ. 14




Նկ. 15

SUMMARY

The Fortress of Sirij is located on the border of the provinces Haband and Baghk of historical Syunik. During the historical period, the location of the fortress was a lively place. The fortress is inaccessible, traces of the fence, household structures and items of archaeological value have been preserved. The fortress of Siriji is located in a signaling position that guards and is guarded throughout the Vorotan basin.

The fortress prevented the entry of tribes of other religions to Haband. The period of construction of the fortress cannot be clearly determined. According to a preliminary opinion, it has been functioning from the early Middle Ages to the present days.



ԷԼՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, ՄՄ

ՀՈՐԻ ԳՐՔԻ՝ Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԼԱՅՈՒ ԼՈՒԾՈՒՆՔՈՒՄ ԱՌԿԱԼ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐ

Ս. Գրիգոր Տաթեւացու՝ Հոբի գրքի լուծմունքի անտիպ բնագիրն առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում. յուրաքանչյուր մասնագետ կարող է հարուստ տեղեկություններ գտնել այս երկում: Հոբի գրքի լուծմունքն ուշագրավ է նաեւ բանասիրական տեսանկյունից: Լինելով միջնադարյան ուսյալ հոգեւորականներից՝ Ս. Գրիգոր Տաթեւացին քաջատեղյակ էր բառ ու բանի վերլուծական, ստուգաբանական եւ քերականական բազմաթիվ գաղտնիքների: Մատենագիրը բառերի «ստուգաբանության» համար կարեւոր նախապայման է համարել լեզուների իմացությունը. «Դարձեալ պիտանի է ի ստուգաբանութիւնս բանի, զի թէ ոք զամենայն լեզուս գիտիցէ, ոչ ինչ բառի կարօտանայ... զի լեզու կոչի գործիք խօսիցն»¹: Նա բառերի մեկնաբանությունն ու ստուգաբանությունը կարեւոր եւ առաջնային է համարել, քանի որ բառերն ունեն ներքին իմաստներ, որոնք հաճախ խեղաթյուրում են տգետ ընթերցողները, թոթովախոսները, գրիչները. երբեմն ոչ միայն բառի-մաստն է խաթարվում, այլ նաեւ միտքն է աղավաղվում, ուստի բառային բացատրությունն ու ստուգաբանությունն ունեն կրկնակի արժեք. «Ճշմարտից իմաստքն ի ներքոյ բառիցն եւ գրոցն է ծածկեալ: Եւ սոքա ալլալին ի տգէտ գրչաց եւ ի գնչու եւ ի տգէտ ընթերցողաց. յայտ է թէ եւ բանն ալլալի ի նոցանէ»²: Լուծմունքում առկա են որոշ բառեր³,

¹ Գրիգոր ՏԱԹԵԼԱՅԻ, Գիրք հարցմանց, Երուսաղէմ, 1993, էջ 297:

² ՄՄ, ձեռ. Հմբ 1115, թ. 196բ:

³ Ս. Գրիգոր Տաթեւացու բառաստեղծման, բառօգտագործման, բառաքնական տարբեր հարցերի է անդրադարձել Ս. Գրիգորյանը, որի քննության ենթարկած գրվածքների շրջանակից դուրս է մնացել Հոբի գրքի լուծմունքի ինքնագիրը, տես Ս. Գրիգորյան, Պատմական քերականության հարցեր, Գրիգոր Տաթեւացի (14–15-րդ դդ.), Երեւան, 2002, էջ 72–103. նաեւ՝ Ս. Գրիգորյան, Գրիգոր Տաթեւացու «Գիրք հարցմանց»-ի նորակազմ բառերի քննություն, Երեւան, 2014:

որոնք կարծեք թե տվյալ ժամանակի կնիքն են կրում, օրինակ՝ թուրքացի բառը, որ ՆԲՀԼ-ում բացատրվում է՝ «...գործի հարկանելուց եւ կոճոպելուց, տոփիչ, գաւազան կամ գործի յօտելուց...»⁴, իսկ Ս. Գրիգոր Տաթեւացին այն մեկնաբանում է որպէս «թափոցն է ծառին», ընդ որում՝ թափոց-ն առկա չէ ներկայիս բառարաններում, ուստի ենթադրելի է, որ այն գործածվել է վարդապետի ապրած ժամանակաշրջանում կամ նրա նորաստեղծ բառերի շարքին է պատկանում: Անշուշտ, բառի բացատրությունը նա կապում է մեկնաբանվող բնագրի հետ, որն այս հատվածում այլաբանորեն է մեկնում. «Հին տերեւ՝ առաքինութիւն է կամ այլ գաւակ ծնանի: Երիցագոյն է միտք եւ կրտսեր զգայարանք: Մարմինս մերկ ծնանի եւ մերկ՝ ի հող դառնայ, իսկ հոգին անմեղ ստեղծանի եւ սրբութեամբ անմեղ դառնայ առ Աստուած: Եւ մեղքն յետոյ պատահէ մեզ իբրեւ զգեստ»⁵:

Ս. Գրիգոր Տաթեւացու երկում Սուրբ Հոգուն վերագրելի հատկանիշներից մեկի բացատրությունը բավականին հետաքրքիր է. դա պաղածնէր⁶ ներգործական բայն է, որն ուղղակիորեն կապվում է արարչագործության հետ եւ մատնանշում արարելը, ստեղծելը. «Հոգին, որ շրջէր ի վերայ ջուրց եւ պողածնէր զկենդանիս»⁷: ՆԲՀԼ-ում աստվածային էությունն են վերագրվում պաղածին (ած.) եւ պաղածնութիւն (գոյ.) բառերը, մինչդեռ պաղածնիմ բայի բացատրության մեջ աստվածությանը վերաբերող հղում չկա⁸: ՆԲՀԼ-ի մեջբերումները Կլեքսանդրացու երկերից են, եւ հավանական է, որ Ս. Գրիգոր Տաթեւացին օգտագործել է նրա եզրույթը՝ հաղորդելով նոր իմաստ: Մեջբերումներից մեկում գործածվում է պաղածին ածականը. «Միշտ պաղածին է աստուածային բնութիւնն...», իսկ մյուսի մեջ՝ պաղածնութիւն գոյականը՝ «Արդ, ճանաչումն կատարելութեան նորա է պաղածնութիւն» (Կիրեղ Ալեքսանդրացի, Գիրք գանձուց):

⁴ Տէս նոր բառգիրք..., հտ. Ա., Վենետիկ, 1836, էջ 819 (այսուհետ՝ ՆԲՀԼ):

⁵ ՄՄ, ձեռ. Հմր 1115, Թ. 11բ:

⁶ Պաղածնէլ ներգործական բայի բացատրության առջեւ գրված է՝ «տէս ծննդաբերել, ծնել»: Երբ, ըստ ցուցման, բացում ենք ծնել հիմք բառը, որ տեսնենք հոմանիշ-բացատրությունները, ապա այստեղ հոմանիշների ցանկում բացակայում է պաղածնէլ բայը. տէս Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, ԵՊՀ, Երեւան, 2009, էջ 472, 948:

⁷ Անդ, Թ. 59ա:

⁸ Տէս ՆԲՀԼ, հտ. Բ., էջ 664:

Ս. Գրիգոր Տաթևացին կիրառում է նաեւ, ամենայն հավանականութեամբ, ինքնաստեղծ բառեր⁹, որոնք չեն հանդիպում խնդրին առնչվող բառարաններում. աղընթաց¹⁰, աղապատիր¹¹, որոնք հեղինակը բացատրում է այսպես՝ «որ աչօք եւ լսելօք խաբէ»:

Թանգուզիցեմ¹² բայը (Յոբ ԺԳ. 8) Ս. Գրիգոր Տաթևացին բացատրում է որպէս «պատճառ իցէք», ՆԲՀԼ-ն՝ «...հնարիւ ճողոպրել զանձն (յամօթոյ, յերկիրէ եւ այլն), խորշիլ, խոյս տալ լռելեայն»¹³:

Գելան աղիք բառը (Յոբ Դ. 14) մեկնաբանում է որպէս ճմլել (*sic.*, =նմլել) կամ խարշել¹⁴, վերջին՝ խարշել բառը բացատրվում է՝ «...եփել եռացեալ ջրով, խաշել»¹⁵: Հետաքրքիր է, որ Հին Կտակարանում գելով բայը գործածվել է Դատ. Ե. 30, Երեմ. Դ. 19, Ողբ Ա. 20, Ամբ. Գ. 16 համարներում, Հոբի գրքում բառը, որպէս այդպիսին, չկա, այլ Ս. Գրիգոր Տաթևացին է տվյալ հատվածում շեշտադրում Հոբի տառապանքների ծանրութիւնը: Ամբ. Գ. 16 համարում է կիրառվում այն նույն իմաստով, ինչ որ լուծմունքում: Գելով-ը ՆԲՀԼ-ում բացատրվում է՝ «...արգելուլ եւ գալարել ի կապանս, պրկել, ոլորել, ճնշել, ճմլել զմարմինն կամ զսիրտն»¹⁶:

Պատանհմ¹⁷-ը (ՆԲՀԼ-ում օրինակը բերված է պատանմունմ ձեւով¹⁸) եւս, կարծում ենք, Ս. Գրիգոր Տաթևացու բառերից է, որով նա մեկնում է Յոբ Բ. 10 համարի «Անցք անցին» խոսքերը: Հր. Աճառյանի բառարանում եւս քննարկվում են պատան արմատը եւ դրանից առաջացած բառերը, որտեղ «պատահք»-ը՝ որպէս թեկուզ հոգնակիակերտ մասնիկով բառ, չկա¹⁹:

⁹ Ս. Գրիգորյանի գտած նորաստեղծ բառերի շարքում բացակայում է այս բառաշղթան. տե՛ս Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Պատմական քերականության հարցեր, էջ 83–86:

¹⁰ ՄՄ, ձեռ. Հմր 1115, թ. 117ա: Օրագացեալ բառն է օգտագործված Յոբ Բ. 9 համարում (հմմտ. նաեւ Երեմ. Ին. 24): Օրագայանամ, օրագայեմ, օրագայիմ, օրագան լինել, օրագանամ, օրագանիմ հավասարիմաստ բառերը ՆԲՀԼ-ում բացատրվում են՝ «...օթել՝ ագանել, երեկօթս առնել, իջեանիլ ուրեք զճանապարհայն՝ ընդ յարկաւ կամ բացօթեագ, դադարել՝ հանգչել ուրեք առ ժամանակ մի, լուծանիլ, հանել զգիշերն ի գլուխ...»: Նույն այս հատվածում օրինակ է բերում նաեւ Ներսես Համբրոնացու Առակաց մեկնությունից, որտեղ հիշատակում է նաեւ Հոբին. «Յոբ ի փողոցս օթագանեալ (կամ օթագացեալ)». տե՛ս ՆԲՀԼ, հտ. Բ., էջ 1023:

¹¹ ՄՄ, ձեռ. Հմր 1115, թ. 106բ:

¹² Տես անդ, թ. 40բ:

¹³ ՆԲՀԼ, հտ. Ա., էջ 795:

¹⁴ ՄՄ, ձեռ. Հմր 1115, թ. 108բ:

¹⁵ ՆԲՀԼ, հտ. Ա., էջ 932:

¹⁶ Տես անդ, էջ 534:

¹⁷ ՄՄ, ձեռ. Հմր 1115, թ. 12ա:

¹⁸ ՆԲՀԼ, հտ. Բ., էջ 603:

¹⁹ Հր. ԱՃԱՌՅԱՆ, Հայերէն արմատական բառարան (այսուհետեւ՝ ՀԱԲ), հտ. Դ., Երեւան, 1926, էջ 34:

Ոխացոյդ²⁰ բառի բացատրությունը եւս չկա. հավանաբար Ս. Գրիգոր Տաթեւացու ստեղծածն է, որը նշանակում է ռիս պահողներ, ռիսակալներ:

Անստու²¹ բառը Ս. Գրիգոր Տաթեւացին մեկնաբանում է՝ անկարգ եւ անհամ: Անստու-ն ստի բառի հակառակ իմաստն է արտահայտում, որը երբեմն գործածվել է անստի-ին զուգահեռ: Եթե Հր. Աճառյանը ստի բառը մեկնաբանում է որպէս կարգ, պատշաճութիւն²², ապա Ս. Գրիգոր Տաթեւացին ճիշտ հականիշն է գործածում՝ այն առավելապէս կապելով աստվածային գիտութեան հետ. «...անկարգ՝ ի շարս եւ անհամ ի սուրբ գիտութիւնս»:

Պելէթիւն²³ բառը որպէս ուռն²⁴-ի հոմանիշ է դիտարկում լուծմունքի հեղինակը: Կարծում ենք՝ սա եւս հունաբանությունների շարքին է պատկանում, ենթադրաբար այն ծագում է πέλεκυς — կացիւն (πελεκώ — մանրացնել, կտրատել) հունարեն բառից եւ գործածվել է Ս. Գրիգոր Տաթեւացու ապրած ժամանակաշրջանում, քանի որ այդ բառին հոմանիշ է ներկայացնում ուռն-մուրն, ուրազ բառերը:

Բելֆեհոն-ը, որը եւս առկա չէ բառարաններում, Ս. Գրիգոր Տաթեւացին բերում է որպէս ըմբափառ բառի բացատրություն. «Ըմբափառ — որ է բելքեհոն, սնդուկ ծանր լցեալ քարով, որպէս կեղծաւորք, եւ պղինձ բոլոր, զոր թըֆաք (այս բառի բացատրությունը եւս չկա բառարաններում) կոչեն»²⁵: Հստ երեւոյթին՝ այդ բառը հունաբանություն է, հունարեն πετροβόλος λιθοβόλος բառերը թարգմանաբար նշանակում են ֆառ նետող, իսկ Յոբ ԽԱ. 19 համարում գործածված ըմբափառ բառն ունի հենց այդ իմաստը, երբ նկարագրում է Աստծու զորությունն ու հզորությունը, ասվում է՝ «ըմբափառը խոտի տեղ է ընդունում»:

Եպերել²⁶ բառը ՆԲՀԼ բացատրում է միայն «...այպանել, ընդ վայր հարկանել, պարսաւել, անգոսնել, ըստգտանել»²⁷: Ս. Գրիգոր Տաթեւա-

²⁰ Տէս ՄՄ, ձեռ. Հմր 1115, թ. 112ա:

²¹ Տէս անդ, թ. 110ա:

²² Հր. Աճառյան, ՀԱԲ, հտ. Դ., էջ 274:

²³ Տէս ՄՄ, ձեռ. Հմր 1115, թ. 111բ:

²⁴ ՆԲՀԼ-ն բացատրում է որպէս՝ «Գործի երկաթի մեղեխաւոր՝ կոփիշ, տոփիշ, ջախիշ, որ եւ կռան», հտ. Բ., էջ 554:

²⁵ ՄՄ, ձեռ. Հմր 1115, թ. 111բ: «Քար ձգելի որպէս ուռմբ բռամբ, բռնաքար, ըստ յն. քարածիգ կամ քարընկէց ասի՝ որպէս մեքենայ կամ անձն ձգող զքարինս: Համարի զըմբափառ խոտ». տէս ՆԲՀԼ, հտ. Բ., էջ 681:

²⁶ Տէս անդ, թ. 111աբ:

²⁷ Տէս ՆԲՀԼ, հտ. Ա., էջ 660:

ցին այն մեկնում՝ կապելով երեք ժամանակների հետ. «Վասն անցելոյն, նախատել՝ վասն ներկային, անիծանել՝ վասն ապագային, զի անգեղջ մնայ»²⁸:

Տաշտաւոր²⁹ բառին նա հաղորդում է նոր իմաստ՝ «...ոհմակ-բանակ խաւարին տաշտաւոր եղջիրոյ», մինչդեռ ՆԲՀԼ-ն այն բացատրում է որպէս մակդիր՝ «...ընտիր այգւոյ կամ որթւոյ իբր ունող տաշտից, տաշտագեղ ուռնացեալ, սաղարթագուարճ, քաջաճիւղ կամ բարեբարունակ»³⁰, աստվածաշնչյան օրինակն էլ նույն իմաստն է արտահայտում. «Այգի տաշտաւոր պտղալից Իսրայէլ՝ ըստ բազմութեան պտղոց» (Ովս. Ժ. 1): Մեր կարծիքով՝ Ս. Գրիգոր Տաթեւացին, հավանաբար, նկատի ունի բազմաճյուղ եղջուրներ իմաստը, եւ տվյալ դեպքում առավելապէս նկարագրվում են շարը եւ նրա բանակը:

Ախր բառին Ս. Գրիգոր Տաթեւացին այլ բացատրություն եւ գործածական իմաստ է հաղորդում. «Յէր վերայ ախք, այսինքն՝ փակ, եւ խառնուրդ տարերաց»³¹: ՆԲՀԼ-ի³² եւ ՄՀԲ-ի³³ բացատրություններն այլ են:

Խէդ³⁴ բառաձեւի համար ՄՄ Հմր 1114 ձեռագրում³⁵ (որը, սակայն, ավելի ուշ շրջանի ձեռագիր է) հանդիպում ենք խեթ, շիլ բացատրությանը, որը հասկանալի է դարձնում խէդ աչքն տկար է³⁶ բառակապակցությունը: Սակայն Ս. Գրիգոր Տաթեւացին «Ամառան»-ում գործածում է նաեւ խեթ³⁷ բառը, որն արտահայտում է ռիս, ֆէն, նենգ իմաստները, իսկ «Մատթէի

²⁸ Տէս ՄՄ, ձեռ. Հմր 1115, թ. 111ա:

²⁹ Տէս ՄՄ, ձեռ. Հմր 1115, թ. 10բ:

³⁰ Տէս ՆԲՀԼ, հտ. Բ., էջ 845:

³¹ ՄՄ, ձեռ. Հմր 1115, թ. 89ա:

³² Տէս ՆԲՀԼ, հտ. Ա., էջ 14:

³³ Տէս Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ, Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Միջին հայերենի բառարան, Երեւան, 2009, էջ 20 (այսուհետ՝ ՄՀԲ):

³⁴ Այս բառը հանդիպում է նաեւ Եփրեմ Ասորու՝ Հոբի գրքի մեկնության պատճառով. «...կուրացուցանէ ամենայն ճառագայթիւք իւրովք զխէդ աչս». ձեռ. Հմր 1981, թ. 202ա. նաեւ՝ ՄՄ, ձեռ. Հմր 1879, թ. 69բ:

³⁵ Տէս ՄՄ, ձեռ. Հմր 1114, թ. 129ա («Նորին Գրիգորի Անյաղթ փիլիսոփայի եւ քաջ հոգետորի աշակերտի եռայմեծի Յովհաննու Որոտնեցւոյ համառօտ լուծմունք դժուարիմաց բանից մեկնութիւն գրոցն Յորայ եւ ի բանիս մեկնչաց», թ. 118ա—210ա, Ժողովածոյ, 1425 թ.):

³⁶ Տէս անդ, թ. 10ա:

³⁷ Տէս ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, գլ. ԺԴ., Կ. Պոլիս, 1741, էջ 392 («Այլ ոմանք զսատանայէ ասեն, թէ. «Արեգակն խեթիւ նայեցաւ ընդ իս» (Երգ երգոց Ա. 5): Եւ ո՞ր է խեթիւ նայիլն: Խեթիւ նայիլ՝ այն է սատանայի, որ նախ ինքն մոլորեցաւ ի փառաց, եւ ապա զԱղամ աղաչեաց»):

մեկնութեան» մեջ՝ մնացուած բարկութիւն³⁸: ՆԲՀԼ-ն ունի այս բառի խեթ, խեղ գրութիւնը³⁹՝ «թիր աւամբ, շիւ, ցաւոտ աշօք...» բացատրութեամբ:

Լուծմունքը զերծ չէ օտարաբանութիւններից, որոնք գործածական են եղել միջին հայերենի բառաշերտում, օրինակ՝ թապոս⁴⁰ բառը, որը «Միջին հայերենի բառարան»-ը բացատրում է՝ «արաբերեն, պարսկերեն tabut — դագաղ»⁴¹: Ս. Գրիգոր Տաթեւացու երկում եւս գործածվում է նույն իմաստով՝ «...որք զմարմինն հոգան՝ թէ՛ թապութով եւ թէ՛ փառօք թաղեցէք»⁴²:

Հետաքրքիր է Ս. Գրիգոր Տաթեւացու մոտեցումը. հինկտակարանյան բնագրի որոշ համարներ նա մեկտեղել է առանձին վերնագրերի ներքո: Օրինակ՝ Յոբ ԻԸ. 17—19 համարների բացատրութիւնը խորագրված է «Վասն առեւտրոյ»: Հենց այստեղ հանդիպում է արաբական փոխառութեան օրինակ՝ խապիաթ⁴³ բառը, որը միջին հայերենում կիրառվել է բնավորություն իմաստով:

Եւս մեկ օտարաբանութիւն, որը, սակայն, մի փոքր այլ իմաստ է կրում Ս. Գրիգոր Տաթեւացու լուծմունքում. ՄՀԲ-ում՝ դօլապ, տօլապ («պարսկ.՝ dulab, թուրք.՝ dolap, գոյ., անիւ»)՝⁴⁴, իսկ վարդապետն այն գործածում է դույլ, աման իմաստով՝ «...դօլապով ծովն ոչ սպառի»⁴⁵:

Ս. Գրիգոր Տաթեւացին գործածել է նաեւ հունարեն ծագում ունեցող բառեր, որոնք գործածական են եղել հունաբան թարգմանութիւններում (հատկապէս զգալի է Կապադոկիան հայրերի ազդեցութիւնը). օրինակ՝

³⁸ Տէս ՄՄ, ձեռ. Հմր 1264, թ. 105բ, «Հց. Վասն էր, թէ նա ունի խէթ, ես հաշտիմ: Պտ. Վասն Դ. պատճառի, նախ՝ վասն առաւել խոնարհութեան, երկրորդ՝ պարտ է, ապա զքո խէթն առաւել թողուլ, երրորդ՝ զի դու առցես զվարձս հաշտութեան եւ մի՛ ատիցես, թէ իմաս յիրաւի, զի Քրիստոս իրաւ էր ի խոռվութիւն եւ ետ զանձն իւր ի մահ վասն մեք»:

³⁹ Տէս ՆԲՀԼ, հտ. Ա., էջ 936:

⁴⁰ Տէս ՄՄ, ձեռ. Հմր 1115, թ. 19բ:

⁴¹ Տէս ՄՀԲ, էջ 235: Միջին հայերենում արաբերեն փոխառութիւնների մասին տէս նաեւ Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Արաբական փոխառութիւնները միջին հայերենում (ըստ «Միջին հայերենի բառարանի»), Գավառի պետական համալսարանի Գիտական հոգւածների ժողովածու, թ. 2, 2015, էջ 419—425: Նույն հեղինակի՝ «Հունական փոխառութիւնները միջին հայերենում», Գավառի պետական համալսարանի Գիտական հոգւածների ժողովածու, 2017, էջ 402—406, «Միջին հայերենյան բառակազմական կաղապարներ արաբերենից փոխառյալ հիմքերով», «Բանբեր Նրեւանի համալսարանի. Հայագիտութիւն», 2015, թ. 3 (18), էջ 64—73: Այս բառը չգտանք նշված հոգւածներում:

⁴² ՄՄ, ձեռ. Հմր 1115, թ. 19բ:

⁴³ ՄՄ, ձեռ. Հմր 1115, թ. 64ա:

⁴⁴ ՄՀԲ, էջ 176:

⁴⁵ ՄՄ, ձեռ. Հմր 1115, թ. 47բ:

ըստինքս բառը, որը ՆԲՀԼ-ն մեկնաբանում է՝ բառ հուն.,՝ սխիմոս, պրաու, չուան պրաուեղէն⁴⁶ (մեջբերվող օրինակը Գրիգոր Նյուսացու «Յաղագս կազմութեան մարդոյ» գրվածքից է), Ս. Գրիգոր Տաթևացու լուծմունքում էլ նույն իմաստն է արտահայտում՝ փայտ սրեալ⁴⁷։ Նույնը կարող ենք ասել նաեւ անգայտ⁴⁸ բառի մասին, որը եւս գործածվել է «Յաղագս կազմութեան մարդոյ» երկի թարգմանության մեջ։ Ս. Գրիգոր Տաթևացու լեզուների իմացությունը կարելի է փաստել նրա՝ մի ձեռագրի⁴⁹ ընդօրինակությունից, որը հայատառ եռալեզվյան արաբերեն-պարսկերեն-հայերեն բառգիրք է։ Ինչպես տեսնում ենք, այս գրվածքում եւս Ս. Գրիգոր Տաթևացին գործածել է պարսկերեն, արաբերեն, հունարեն բառեր։ Մեր դիտարկման համաձայն՝ նրա երկերում կիրառված արաբերեն եւ պարսկերեն բառերն ավելի շատ են, քան հունարեն ու եբրայերեն բառերը։

Կան նաեւ բառեր, որոնք գործածվում են եւ Ս. Գրիգոր Տաթևացու, եւ Վանական Վարդապետի նույնանուն մեկնություններում. գլխին⁵⁰, երկեան⁵¹, յերազի բաջաղեցար⁵² (Ս. Գրիգոր Տաթևացին վերագրում է մարդուն, իսկ Վանականը՝ «...ընդդիմանալ Աստուծոյ բաջաղեցաւ»՝ սատանային, Իսիքիոս Երուսաղեմացու երկում՝ «...յարուցեալ յերազոցն՝ ոչ ինչ տեսանէի ի բաջաղմանց»⁵³, ոչ արդարք են, այլ բաջաղեալ են»⁵⁴), տնասուն⁵⁵, ծննդագործ⁵⁶, աստուածապաշտ՝ Վանականի մեկնության մեջ, իսկ Ս. Գրիգոր Տաթևացու լուծմունքում՝ աստուածապաշտութեամբ ամրացեալ⁵⁷, զըմբռնիտ⁵⁸ (վերջինս գործածում է առանց փառ բառի, իսկ Վա-

⁴⁶ ՆԲՀԼ, հտ. Բ., էջ 768:

⁴⁷ ՄՄ, ձեռ. Հմր 1115, թ. 8ա:

⁴⁸ Տէս անդ, թ. 92բ:

⁴⁹ Տէս ՄՄ, ձեռ. Հմր 7151, թ. 1ա—18բ, նաեւ՝ Գ. ԹԵՐԶՅԱՆ, Գրիգոր Տաթևացու ինքնագիր ձեռագիրը, «Էջմիածին», 2011, Բ., էջ 130—133:

⁵⁰ Տէս ՄՄ, ձեռ. Հմր 1115, թ. 9ա:

⁵¹ Տէս ՄՄ, ձեռ. Հմր 1115, թ. 12ա:

⁵² Անդ, թ. 13բ: Իսկ բաջաղմունք-ը, որ Ս. Գրիգորյանը համարել է Ս. Գրիգոր Տաթևացու գործածած բառային ձեւ, այդպես չէ. այն առկա է ՆԲՀԼ-ի Վանական Վարդապետի աշակերտ Վարդան Վարդապետի Մննդոց մեկնությունից քաղված օրինակում՝ բաջաղմունք ձեւով. տես ՆԲՀԼ, հտ. Ա., էջ 439:

⁵³ «Թանգարան հայկական հին եւ նոր դպրութեանց», Ե., «Իսիքիոսի երիցու Երուսաղեմացոյ Մեկնութիւն Յոբայ», կազմ.՝ Գ. Բ. Զրաքեան, Վենետիկ, 1913, թ. 367:

⁵⁴ Անդ, թ. 368:

⁵⁵ Տէս ՄՄ, ձեռ. Հմր 1115, թ. 95բ. ՆԲՀԼ, հտ. Բ., էջ 884. ՄՄ, ձեռ. Հմր 1166, թ. 87ա:

⁵⁶ Տէս ՄՄ, ձեռ. Հմր 1115, թ. 25ա:

⁵⁷ Տէս անդ, թ. 17ա:

⁵⁸ Տէս անդ, թ. 106ա:

նականը՝ զմոնիտեան քար), շրուշակ⁵⁹ (Ս. Գրիգոր Տաթեւացին մեկնում է՝ «...փայտն, որ ի քիթ ուղտուց», իսկ Վանականը գործածում է այսպես. «Ծակիցես զոնգունս նորա, եւ անցուցես շրուշակ ընդ քիթս նորա.... Շրուշակն ցուցանէ զխաչն»⁶⁰), փերեւեալ⁶¹:

Ս. Գրիգոր Տաթեւացին նշում է ստորմակերպ⁶² բառի եւս մեկ հոմանիշ, որն առկա չէ բառարաններում՝ «...զգեստ ստորմակերպ, որ է դեղձան», Վանական Վարդապետի երկում՝ «Բուսանի ծառ ոսկեգոյն ոսկեթէլ ստորմակերպ, այսինքն՝ խառնագոյն, որ կոչի ծառ նէսայ»⁶³:

Մանկունք են մտո⁶⁴. մանկունք բառի գործածական այս ձեւն ընդհանրապես որեւէ բառարանում չգտնվեց. սա, կարծում ենք, Ս. Գրիգոր Տաթեւացու կիրառած բառակապակցություններից է: Բնագրում բացատրում է մանկունք բառի իմաստը՝ «...որ տհաս են մտօք կամ հասակով»⁶⁵:

Երկում գործածական են նաեւ բարբառային բառերը. Յոբ ԼԶ. 8 համարում կիրառված կաշկանդել-ի մեկնաբանության մեջ օգտագործում է կշկոել⁶⁶, ոխա⁶⁷ բառերը: Ռիշա բառը, որը նշանակում է ժլատ, կծծի, ինչպես նշում է Հր. Աճառյանը, պարսկերեն կամ պահլավերեն փոխառություն է⁶⁸: Հաշորդը ալսմ⁶⁹ (այսպես է բնագրում՝ =ալիսմ) բառն է, որը գործածել է Յոբ ԽԱ. 18 համարը մեկնելիս⁷⁰:

Լուծմունքում անդրադառնալով Հոբի զավակների թվի խորհրդաբանության մեկնությանը՝ հեղինակը բացատրության մեջ օրինակ է բերում

⁵⁹ Տէս անդ, Թ. 104բ:

⁶⁰ ՆԲՀԼ, հտ. Բ., էջ 495:

⁶¹ Տէս ՄՄ, ձեռ. Հմր 1115, Թ. 82բ. ՆԲՀԼ, հտ. Բ., էջ 941:

⁶² Տէս ՄՄ, ձեռ. Հմր 1115, Թ. 97բ. ՆԲՀԼ-ն նշում է. «...որպէս ստորմիք խորանիստ, մթին, խառնակ կամ պէսպիսակ, բազմագունի», հտ. Բ., էջ 751: Իսկ Համառ Արեւելցին լրացնում է. «...ստորմակերպ, որ ի թագաւորաց տունն հազիւ գտանի» (ՄՄ, ձեռ. Հմր 1007, Թ. 165ա):

⁶³ ՄՄ, ձեռ. Հմր 1166, Թ. 88ա:

⁶⁴ ՄՄ, ձեռ. Հմր 1115, Թ. 24բ:

⁶⁵ ՄՄ, ձեռ. Հմր 1115, Թ. 23բ—24ա:

⁶⁶ Տէս անդ, Թ. 83բ («Կապ ի վերայ կապի կշկոել, այսինքն՝ որ մարդն ուշտ (ժլատ, կծծի) լինի եւ տմարդի»):

⁶⁷ Տէս անդ:

⁶⁸ Տէս ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ, ՀԱՐ, հտ. Դ., էջ 145: Հր. Աճառյանը հակված է փոխառությունը կապել պարսկերենի կամ պահլավերենի, մինչդեռ ՆԲՀԼ-ն՝ հունարենի եւ լատիներենի հետ. տէս նաեւ ՆԲՀԼ-ի բացատրությունը՝ ՆԲՀԼ, հտ. Բ, էջ 681:

⁶⁹ ՄՄ, ձեռ. Հմր 1115, Թ. 111բ:

⁷⁰ Հր. Աճառյանը ալիսմ բառը բացատրում է դիւթարիւն, յոտութի իմաստով, համարում արաբական փոխառություն: Բացատրում է նաեւ ալսմաթ-ը՝ «կախարդական բաներ, յուռութք»՝ նշելով, որ այն ալիսմ բառի արաբերենն առ հոգնակիակերտ մասնիկի օգնությամբ է կազմված. տէս ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ, ՀԱՐ, հտ. Դ., էջ 411:

Ժողովրդական ասացվածքից. «...զի այսքան թիւ սիրելի եւ գովելի է աշխարհական սովորութեանց, ասեն՝ Աստուած տայ քեզ եօթն որդի եւ երեք դստերք»⁷¹:

Չնայած Ս. Գրիգոր Տաթեւացու գրվածքը խիստ աստվածաբանական-գիտական բնույթ ունի, այնուամենայնիվ, գեղարվեստական պատկերավոր խոսքի փայլուն օրինակ է: Այսպես՝

ա. «Ամպ ծագեալ յարեւելից եւ յարեւմտից, իսկ հիւսիս բնութիւնս մեր աստուածատեսակ գունեալ, որ էր ցուրտ եւ սեւ: Ծագմամբ Բանին Աստուծոյ միութեամբ՝ Աստուած եղեւ անապական, ջերմ եւ լուսաւոր, որպէս հրացեալ ոսկի»⁷²:

բ. «Յող են շնորհք Հոգւոյն ի սուրբ մարգարէս եւ յառաքեալս զուարթարար, եւ եղեամն՝ սուտ մարգարէք եւ հերձուածողք»⁷³:

գ. «Ծով, եւ լեառն, եւ վէմ են առաքինութիւնք սրբոց անհատանելի, եւ վարդապետք ողորկեն եւ կոփեն ի շինուածս հոգեւոր»⁷⁴:

դ. «Չորս է ծաղիկ եւ պտուղ հոգեւոր. նախ՝ բանն ծաղիկ է, եւ գործքն՝ պտուղ: Երկրորդ՝ հաւատն ծաղիկ է, եւ սերն՝ պտուղ: Երրորդ՝ իմացումն ներքին ծաղիկ է, եւ կատարումն արտաքին՝ պտուղ: Չորրորդ՝ աստ ամենայն առաքինութիւնքն ծաղիկ է, եւ անդ արդիւնքն՝ պտուղ»⁷⁵:

ե. Համբերությունը «հիմն է որպէս Աբրահամու, եւ խարիսխ՝ Իսահակայ, աթոռ՝ Յակոբայ, եւ սիւն՝ առ Յակոբ եւ աստիճան»⁷⁶:

զ. «Լոյս՝ Բանն Աստուած, միաւորեալ ի հոգի եւ ի մարմին երկրաւոր, որպէս անօթ արեգականն, եւ լոյս ընդ օդ միացեալ»⁷⁷:

է. «Որպէս ջուր խողովակով ի վերուստ իջուցեալ այնքան ի բարձունս ելանէ, նոյնպէս կսկիծ սրտին ի գագաթն ելեալ եւ ծանրացեալ իջեալ ընդ աշքն՝ լինի արտասուքն եւ գլորի ի վայր: Այսպէս արտասուօք աղօթքն ելեալ ի յերկինս, գլորէ թշնամին մեր յերկիր, որպէս նետածիգ եղեալ զթռչունս յերկիր գլորեմք»⁷⁸ (համեմատություն):

Չնայած Ս. Գրիգոր Տաթեւացու այս գրվածքը քերականական աշխատություն չէ, սակայն այստեղ եւս կարող ենք խոսել նրա համակարգ-

⁷¹ ՄՄ, ձեռ. Հմր 1115, թ. 24բ:

⁷² Անդ, թ. 87բ:

⁷³ Անդ, թ. 92բ:

⁷⁴ ՄՄ, ձեռ. Հմր 1115, թ. 47բ:

⁷⁵ Անդ, թ. 50ա:

⁷⁶ Անդ, թ. 43ա:

⁷⁷ Անդ, թ. 91ա:

⁷⁸ Անդ, թ. 45ա:

ված լեզվագիտական, նաեւ գեղագիտական հայացքների (պատկերավոր խոսքի) մասին: Բառերի ստուգաբանման համար նա կիրառում է իր իսկ ստեղծած նոր բառերը, առանձնակի կարեւորություն ունեն նաեւ նրա բացատրությունները: Վարդապետը հաղորդում է նաեւ անձին կամ առարկային առնչվող բազմաթիվ տեղեկություններ, ինչի շնորհիվ նրա բացատրությունները ձեռք են բերում նաեւ պատմական եւ ճանաչողական արժեք:

Այսպիսով՝ քննարկելով Ս. Գրիգոր Տաթեւացու Հոբի գրքի լուծմունքի լեզվաբանական խնդիրները՝ տեսնում ենք, որ հեղինակն օժտված է հայերենի համակողմանի իմացությամբ եւ խոր գիտելիքներով, դասակարգված եւ տրամաբանված է ներկայացնում իր ասելիքը, կարողանում է խիստ գիտական խոսքը համադրել պատկերավոր խոսքի հետ, ունի հոետորական, մանկավարժական ձիրք, մեկնաբանական-ստուգաբանական միտք, որոնք լավագույնս դրսևորվում են նաեւ այս գրվածքում:

РЕЗЮМЕ

Нетипичный оригинал решения книги Иова средневекового автора Григора Татеваци представляет собой разностороннее произведение. Хотя толкование не является грамматическим трудом, оно содержит много материалов для исследователя по самым разным лингвистическим вопросам.

Будучи образованным средневековым священнослужителем, он владел многими аналитическими, этимологическими и грамматическими секретами слов. Библиограф рассматривает знание языков как предварительное условие для «этимологии» слов, потому что, по мнению библиографа, слова имеют внутреннее значение, которое необходимо обсудить в первую очередь. В толковании есть слова, подвергшиеся влиянию времени, иногда встречаются синонимы, самодельные слова, иностранные слова, предложенные автором.

В этой статье мы попытались пересмотреть данный труд с лингвистической точки зрения.

SUMMARY

The atypical original text of the commentary of the Book of Job by the medieval author Gregory of Tatev is very versatile. Although it is not a grammatical work, it contains a lot of material for researchers on a variety of linguistic issues.

Being an educated medieval clergyman, he was skilled in many analytical, etymological and grammatical secrets of words. The author considers the knowledge of languages as a precondition for the “etymology” of words, because in his opinion, words have an intrinsic meaning that needs to be discussed first of all. There are some words in the commentary that have been influenced by time; sometimes we come across synonyms, self-created words, as well as foreign words suggested by the author.

In this article, we have tried to revise this work from the linguistic point of view.



ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, ՄՄ

ԱՐՄԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, ՄՄ

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՏԱՊԱՆԱԳՐԵՐԻ՝ ՂԵԻՈՆԴ ՎՐԳ. ՓԻՐՂԱԼԵՄՅԱՆԻ ՆՈՐԱՅԱՅՏ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

ԺԹ. դարի նշանավոր բանասեր, ձեռագրագետ, եկեղեցական գործիչ Ղեւոնդ վրգ. Փիրղալեմյան Տոսպեցին (ավագանի անունը՝ Մարտիրոս, 1830 թ. Վան — 1891 թ. Երուսաղեմ) իր հոգեւոր-գիտական գործունեությունն սկսել է 1852 թ. Լիմ անապատում: Հետագայում հաստատվելով Վարազավանքում՝ Ղեւոնդ վրգ. Փիրղալեմյանը մասնակցել է «Արծուի Վասպուրական» պարբերականի հրատարակչական աշխատանքներին՝ 1861—1863 թթ. լինելով ամսագրի՝ Կ. Պոլսի գործակալը¹: 1873—1878 թթ. եղել է Մանչեստրի հայ համայնքի հոգեւոր հովիվը: 1883—1884 թթ., երբ Վասպուրականի հոգեւոր առաջնորդ Մկրտիչ արք. Խրիմյանը հրաժարական է ներկայացրել, Ղեւոնդ վարդապետն ստանձնել է տեղի առաջնորդական փոխանորդի պաշտոնը²: Սակայն նա իր կյանքի մեծ մասն անց է կացրել շրջագայություններում՝ ինչպես Արեւմտյան ու Արեւելյան Հայաստանում, այնպես եւ Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում՝ ընդօրինակելով ձեռագիր մատյանների հազարավոր հիշատակարաններ, վիմագրեր, գավառական բառեր, ազգագրական նյութեր³:

Ս. էջմիածնի միաբանական գերեզմանոցի տապանագրերի 1889 թվակիր ժողովածուն, որին նվիրված է սույն ուսումնասիրությունը,

¹ Տե՛ս «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան», գիրք ԻԲ., «Մկրտիչ Ա. Խրիմեան Կաթողիկոս Ամենայն Հայոց (1892—1907 թթ.)», մաս Բ., կազմ.՝ Գ. Աւագեան, խմբ.՝ Ա. Վիրաբեան, Ս. էջմիածին, 2020, էջ 35—40 (Հ^{օր} 11—13). հմմտ. «Պեգասեան թռչնիկ», 1863, թիւ 7 (18 ապրիլի), էջ 54—55:

² Տե՛ս «Արձագանք», 1883, թիւ 41 (9 հոկտեմբերի), էջ 582:

³ Ղեւոնդ վարդապետի կյանքի եւ գործունեության մասին մանրամասն տե՛ս «Ղեւոնդ վրգ. Փիրղալեմեան (կենսագրական ակնարկ)», «Մուրճ», 1903, թիւ 11 (նոյեմբեր), էջ 73—87 (ստորագրված՝ «Մ.»), նաեւ՝ Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ, Ղեւոնդ վարդապետ Փիրղալեմյանի գործունեությունը եւ գրական ժառանգությունը խնդիրը (նորահայտ ինքնակենսագրականի առթիվ), «Բանբեր Մատենադարանի», Երեւան, 2020, թ. 30, էջ 408—420:

ցայսօր անհայտ է եղել հետազոտողների լայն շրջանակներին⁴։ Նախորդ դարասկզբին Ղեւոնդ վրդ. Փիրղալեմյանի երկերի՝ խաչիկ վրդ. Դադյանի կազմած եւ «Մուրճ» ամսագրում հրատարակած ցուցակներում այս աշխատությունը նույնիսկ նշված չէ⁵։ Ճիշտ է՝ «Մուրճ»-ում կա «Հաւաքածոյ արձանագրութեանց» խորագրով երկասիրությունը, սակայն, մեր կարծիքով, այն վերաբերում է վանքերի ու եկեղեցիների արձանագրություններին, որոնց մասին ակնարկում է նաեւ ինքը՝ Ղեւոնդ վրդ. Փիրղալեմյանը, ավելի վաղ մի հրատարակության մեջ. «Բաց ի սոցանէ մեր ուղեւորութեանց մէջ ձեռք բերած հին մատենից հազարաւոր յիշատակարանք, որք քաղաքական եւ ազգային պատմութեանց շատ մուկ եւ անծանօթ կէտերն կարեն լուսաւորել, ինչպէս նաեւ հին եկեղեցեաց արձանագրութիւնք եւ երեւելի արանց մահարձանի պատճէնք»⁶։ Նկատենք, որ 1871 թ. հրատարակված գրքում նշված «մահարձանի պատճէնք»-ն այլ ժողովածու է (ոչ պակաս ուշագրավ), որը չպետք է շփոթել շատ ավելի ուշ՝ 1889 թ. կազմված Ս. Էջմիածնի տապանագրերի հավաքածուի հետ։

Խնդրո առարկա ժողովածուն հայտնաբերվել է Գյուտ ավ. քհն. Աղանյանցի՝ Հայաստանի ազգային արխիվում պահվող թողոնում⁷։ Դժվարանում ենք ասել, թե ինչպէս եւ ինչ պայմաններում է այս երկը հայտնվել Գյուտ քահանայի արխիվում։ Հարկ է նշել, որ վերջինիս մի-

⁴ Վաղարշապատի վանքերից շուրջ 15 արձանագրություն է ամփոփված ՄՄ Հ^{որ} 6273 ձեռագրում, որը բովանդակում է Ղեւոնդ վրդ. Փիրղալեմյանի «Յիշատակարանք կամ նշխարք պատմութեան Հայոց» աշխատությունը՝ ընդօրինակված 1868–1889 թթ.։ Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցից վարդապետը հիշատակում է եփրեմ Ա. Ջորագեղցի (1809–1830 թթ.) կաթողիկոսի տապանագիրը՝ ծանոթագրելով, որ հայրապետի գերեզմանին սյունազարդ փոքր դամբարան է կառուցվել, եւ «հիւանդք, մանաւանդ ի դենդէ ըմբռնեալք, յաճախեն ի շիրիմ լուսահողուն» (տե՛ս Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Վաղարշապատ. վանքերը եւ վիմական արձանագրությունները (այսուհետ՝ «Վաղարշապատ»), Ս. Էջմիածին, 2016, էջ 219, ծնթ. 709)։

⁵ Տե՛ս Յ. ԹՕՓՃԵԱՆ, Յուցակ ժողովածուաց Դադեան խաչիկ վարդապետի, մասն Բ., Վաղարշապատ, 1900, էջ 57–59. հմմտ. «Ղեւոնդ վրդ. Փիրղալեմյան (կենսագրական ակնարկ)», «Մուրճ», 1903, թիւ 11 (նոյեմբեր), էջ 86–87։

⁶ Տե՛ս «Ճանապարհորդութիւն ի Մայր Աթոռն Արարատեան եւ անտի ի Կ. Պօլիս», գրեաց ՂԵՌՈՆՂ ԳՐԻ. ՓԻՐՂԱԼԵՄԵԱՆՅ ՏՈՍՊԵՅԻ՝ յուխտէն Վարազայ, Կ. Պօլիս, 1871, էջ Դ.։

⁷ Ինչպէս նշեցինք, այս ժողովածուն հայտնաբերել ենք Գյուտ ավ. քհն. Աղանյանցի՝ Հայաստանի ազգային արխիվում պահվող թողոնում, որտեղ էին գտնվում նաեւ Ղեւոնդ վրդ. Փիրղալեմյանի կազմած գավառական բառարանը եւ հիշատակարանների մի պրակ, որոնց մասին պատրաստում ենք առանձին ուսումնասիրություն (Ա. Մ.)։ Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում ՄՄ գլխավոր ավանդապահ եւ ձեռագրագիտության բաժնի վարիչ Գ. Տեր-Վարդանյանին՝ Ղեւոնդ վրդ. Փիրղալեմյանի գրական ժառանգության ուսումնասիրման շրջանակում Գյուտ ավ. քհն. Աղանյանցի արխիվային ֆոնդի վրա մեր ուշադրությունը հրավիրելու եւ շահեկան խորհուրդների համար։

ջոցով եւ Հովհաննէս ավ. քհն. Մկրյանի հանձնարարականով 1898 թ. Ղեւոնդ վրդ. Փիրղալեմյանի աշխատությունները՝ երեք կնքված կապոցներում ամփոփված, Կ. Պոլսից բերվել են Ս. Էջմիածին եւ հանձնվել Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա. Վանեցուն⁸։ Դժվար է, սակայն, հստակեցնել՝ արդյո՞ք այս երկը եղել է այդ կապոցներում, թե՞ Գյուտ քահանան այն ձեռք է բերել այլ տեղից։ Բացառված չէ, որ նա նյութը վերցրած լինի հրատարակության պատրաստելու նպատակով, ինչը, սակայն, չի իրագործվել։ Նշենք նաեւ, որ իր «Դիւան Հայոց պատմութեան» մատենաշարի Ժ. հատորում Գյուտ քահանան մեծապէս օգտվել է Փիրղալեմյանի հավաքածուից։

Ղեւոնդ վրդ. Փիրղալեմյանը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Ղեւոնդ վարդապետն առաջին անգամ Մայր Աթոռ Ս. Էջմիածին է այցելել 1860 թ.՝ քահանայական ձեռնադրությունից եւ վարդապետական աստիճան ստանալուց հետո։ Երեմիա արքեպիսկոպոսի, ինչպէս նաեւ այլ վարդապետների եւ ժողովրդի հետ միասին նա ուղեկցել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցու (1858—1865 թթ.) հրավերով Ս. Էջմիածին մեկնող Մկրտիչ արք. Խրիմյանին եւ Վանի առաջնորդ Իգնատիոս արք. Գազմաճյանին⁹։ Կարծիք կա, որ նա որոշ ժամանակ մնացել է Ս. Էջմիածնում, ապա հաջորդ տարի՝ 1861 թ., գնացել է Թիֆլիս, Քութայիս, Բաթումով անցել Զմյուռնիա, Կիպրոս, Բեյրութ, Հոպպե ու Երուսաղեմ, որտեղ մնացել է մեկ տարի՝ զբաղվելով ձեռագրերի հիշատակարանների ընդօրինակությամբ¹⁰։

Երկրորդ անգամ Ղեւոնդ վարդապետը Մայր Աթոռ է եկել երեք տարի անց՝ 1864 թ. մարտի 8-ին՝ սկսելով իր ճամփորդությունը Կ. Պոլսից, եւ Ս. Էջմիածին է հասել ապրիլի 8-ին¹¹։ Նա եւ իր երկու ուղեկիցները՝ Գրիգորն ու Ոսկանը, հենց նույն օրը հանդիպել են Վեհափառ հայրապետին, ներկայացրել այցի նպատակն ու հանձնել մի նամակ։ Այսպէս՝ «Ճանա-

⁸ Տե՛ս «Դիւան Հայոց պատմութեան», գիրք Ժ., «Մանր մատենագիրք. ԺԵ.—ԺԹ. դար», հրատ.՝ Գիւտ աւ. քհնյ Աղանեանց, Թիֆլիս, 1912, սին ՅԴ.։

⁹ Տե՛ս «Ճանապարհորդութիւն ի Մայր Աթոռն Արարատեան...», էջ 90—91, ծնթ. *։

¹⁰ Տե՛ս «Ղեւոնդ վրդ. Փիրղալեմեան (կենսագրական ակնարկ)», «Մուրճ», 1903, թիւ 11 (նոյեմբեր), էջ 76։

¹¹ Թեեւ այցելության հստակ թվական չի նշվում, բայց հետեւյալ տողերից կարող ենք եզրակացնել, որ ճամփորդությունը եղել է առաջինից 3 տարի անց. «Ետուն զմեզ Ղազարապատ այն սենեակ, որ երեք ամ առաջ պառկեր էի տակ» (տե՛ս «Ճանապարհորդութիւն...», էջ 61)։

պարհորդութեան» տարբեր էջերում նշվող վկայություններից պարզվում է, որ նրանք եկել էին մահտեսի Մաղաք Մուրատյանի¹² հանձնարարականով, որը Հայոց հայրապետին խնդրում էր ազատել Նախիջևանի իր տոհմական կալվածքները պարսիկների ձեռքից եւ վերցնել Մայր Աթոռի հովանու ներքո: Վեհափառ հայրապետը, սակայն, այդ խնդրանքն անիրագործելի է համարել՝ նույնիսկ զարմանալով, թե ինչու է Մուրատյանն այդքան մեծ ծախս արել երեք պատվիրակներին Ս. էջմիածին ուղարկելու համար: Կաթողիկոսը, այնուամենայնիվ, համաձայնում է մի թուղթ ուղարկել Նախիջևան: Պարզվում է, որ հաջորդ օրը Վեհափառը հանդիպել է Ղեւոնդ վարդապետին՝ առաջարկելով մի որոշ ժամանակ մնալ Մայր Աթոռում, իսկ ընկերներին ճանապարհել Կ. Պոլիս: Ղեւոնդ վրդ. Փիրղալեմյանն այդպես էլ վարվում է: Հայոց հայրապետը հաճախ էր իր մոտ կանչում նրան, զրուցում էին Կ. Պոլսում տիրող իրավիճակի, ազգային-եկեղեցական խնդիրների շուրջ: Այս ընթացքում Ղեւոնդ վրդ. Փիրղալեմյանն ուսումնասիրում եւ նկարագրում է Մայր Աթոռի վանական շինությունները, Վեհարանը, Թանգարանը, ուսումնարանը, պարտեզները¹³: Նա հիացմունքով է պատմում Մայր Աթոռի «ապակազարդ» գրադարանի մասին, որտեղ պահվում են 3000-ից ավելի ձեռագիր, ինչպես նաեւ հայերեն եւ օտարալեզու հատընտիր տպագիր գրքեր: Անդրադառնում է նաեւ միաբաններին ու ժառանգավորներին: Նա Ս. էջմիածնում մնում է շուրջ 15 օր եւ Սուրբ Զատիկի տոնից հետո վերադառնում Կ. Պոլիս:

Առհասարակ ընդունված է այն տեսակետը, որ Ղեւոնդ վարդապետն Արեւելյան Հայաստանում եւ Մայր Աթոռում եղել է ընդամենը երկու անգամ¹⁴: Սակայն արխիվային նորահայտ նյութերից պարզ դարձավ, որ նա երրորդ, ըստ ամենայնի, վերջին անգամ Մայր Աթոռում եղել է 1889 թ.:

¹² Մեր կարծիքով՝ Մաղաք Մուրատյանը պոլսահայ կալվածատերերից է: Հ. Մրմյանի «Թուրքահայոց հին վաճառականութիւնն եւ վաճառականք. 1740—1890» (Կ. Պոլիս, 1908) աշխատության մէջ վկայություններ կան Մուրատյան եղբայրների մասին, մասնավորապես՝ 1860—1870-ական թթ. հիշատակված են Գեւորգ Մուրատյանը՝ իրել «օտաճի (թոփով վաճառող)... Գէորգ Մուրատեան» (էջ 46), ոսկերիչ Գրիգոր Մուրատյանը՝ «Ոսկերիչներէն.... Մուրատեան Գրիգոր.... Մուրատեան եղբարք» (էջ 66—67), այսինքն՝ բացառված չէ, որ Մուրատյան եղբայրներից մեկն էլ վերոհիշյալ Մաղաքն է:

¹³ Ղեւոնդ վրդ. Փիրղալեմյանի ուղեգրությունները կարելուր աղբյուր են Մայր Աթոռի եւ առհասարակ ԺԺ. դարի հայ ժողովրդի առօրեական պատմության ու կենցաղի ուսումնասիրման համար:

¹⁴ Հմմտ. «Ղեւոնդ վրդ. Փիրղալեմեան (կենսագրական ակնարկ)», «Մուրճ», 1903, թիւ 11 (նոյեմբեր), 76—77. Մ. ԱՂԱՆՈՒՆԻ, Միաբանք եւ այցելութեւ հայ երուսաղէմի, Երուսաղէմ, 1929, էջ 234. Կ. ԱԻՆՏԵԱՆ, Ղեւոնդ վարդապետ Փիրղալեմեանը եւ իր յիշատակարանների

Մենք ենթադրում ենք, որ այս անգամ նա Ս. Էջմիածին էր եկել մասնավորապես իր անտիպ հատորների հրատարակության նպատակով: Այս առումով հատկանշական է Գարեգին եպս. Սրվանձտյանցի՝ 1885 թ. մայիսի 24-ին Կ. Պոլսից գրված նամակն անվանի պատմաբան, բանասեր Գրիգոր Խալաթյանցին: Խոսելով Ղեւոնդ վրդ. Փիրղալեմյանի հավաքածուների («մատենից յիշատակարանք, ձեռագիր տարեգրութիւնք... գաւառական բառեր») մասին՝ նա հայտնում է, որ տեսչութիւնը չի թույլատրում նույնութեամբ հրատարակել դրանք: Ղեւոնդ վրդ. Փիրղալեմյանը մերժել է նաեւ Գարեգին եպս. Սրվանձտյանցի՝ պարբերականներում մաս-մաս հրատարակելու առաջարկը՝ հստակ նպատակադրվելով տպագրութիւնն իրագործել Ս. Էջմիածնում¹⁵: Ուշագրավ է նաեւ, որ դեռեւս 1881 թ. Վասպուրականի հոգեւոր առաջնորդ Մկրտիչ արք. Խրիմյանը Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Դ. Կոստանդնուպոլսեցուն (1866—1882 թթ.) հղած նամակում ներկայացնում է Ղեւոնդ վարդապետի գործունեութիւնն ու կարեւորելով նրա հավաքած հիշատակարանների արժեքը Հայոց պատմության ուսումնասիրման համար՝ խնդրում է աջակցել դրանց լույսընծայմանը¹⁶:

Այսպես՝ հավանաբար օգտվելով Մակար Ա. Թեղուտցի (1885—1891 թթ.) կաթողիկոսի օրոք հոգեւոր-կրթական ոլորտում ստեղծված համեմատաբար բարենպաստ պայմաններից՝ 1889 թ. ամռանը Ղեւոնդ վարդապետն այցելել է Ս. Էջմիածին: Սա ընդամենը մի վարկած է, որն առայժմ դժվար է ապացուցել: Այդուհանդերձ, փաստելի է, որ Ղեւոնդ վրդ. Փիրղալեմյանի հավաքածուներից որեւէ մեկը Ս. Էջմիածնում չի տպագրվել, իսկ այցի կարեւորագույն արգասիք կարելի է համարել 29 թերթից բաղկացած «Տետր ընդօրինակութեան մահարձանաց Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի» խորագրով հիշյալ ժողովածուն, որը նա ամբողջաբերել է օգոստոսի 17-ից մինչեւ սեպտեմբերի 29-ն ընկած ժամանակահատվածում, ինչպես ինքն է նշում՝ «...յետ առ յետ 14 օր աշխատելով սաստիկ տօթ եւ բարկ արեւու ներքեւ, ի մէջ փոշեաց հողոց եւ մոխրոց եւ խայթուածոց ճանճից եւ մոծակաց, համբերատար տոկունութեամբ գործելով

հաւաքածոն, «Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ», հտ. I Ա., Երեւան, 2018, էջ 240:

¹⁵ Տէս Վ. ՎԱՐԱՆՅԱՆ, Գրիգոր Խալաթյանի անտիպ նամակները Գարեգին Սրվանձտյանցին, ՊՔՀ, 1971, թ. 1, էջ 130:

¹⁶ Տէս ՄՄ, «Կաթողիկոսական դիվան», ցուց. 20, թղթ. 235բ, վավ. 41:

ի ձեռս բերի զվերոյիշեալս՝ ազատելով զնոյնս ի ժանեաց լափող ժամանակին՝ որպէս բազումք արդէն տեսի, զի անկեալ էին ի ձեռս նորին՝ կողոպտելով ի նմանէ իսպառ յարձանագրութենէ իւրեանց»¹⁷ (ընդգծումը.— Ա. Հ., Ա. Մ., տես նկ. 2): Նույն թվականի հոկտեմբերի կեսերին Ղեւոնդ վրդ. Փիրղալեմյանը հեռացել է Մայր Աթոռից՝ ուղեւորվելով դեպի Կ. Պոլիս: Դատելով ժողովածուի տարբեր էջերում առկա հիշատակագրություններից՝ նա իր հավաքած արձանագրությունները դասակարգել, համարակալել է, կազմել անվանացանկ, այսինքն՝ ավարտուն տեսքի է բերել Ս. էջմիածնից Կ. Պոլիս վերադարձի ճանապարհին: Ղեւոնդ վրդ. Փիրղալեմյանը Կ. Պոլիս է հասել նոյեմբերի 19-ին¹⁸, իսկ հաջորդ տարի մեկնել է Երուսաղեմ, որտեղ եւ 1891 թ. կնքել է մահկանացուն¹⁹: Մկրտիչ Աղավնունու եւ Տիգրան Սավալանյանցի հաղորդմամբ՝ վարդապետի շիրմաքարի երկու կողմում խրիմյան Հայրիկի կազմած հետեւյալ տապանագիրն է. «Ղեւոնդն եմ ես վարդապետ երկասէր, / Սիրահար նախնի մեր հարց մատենից, / Շրջեցայ, տքնեցայ ի հայրենի աշխարհ, / Կարդացի, կրկտեցի հին եւ նոր ձեռագիրս, / Որչափ յիշատակարանս ես ձեռամբս օրինակեցի, / Ո՛հ, զամէն ի մթան թողի ես եւ գնացի, / Հայրիկ, ձեզ յանձնեմ եւ կտակ թողում, / Զերկոցս իմ վաստակ ի լոյս հան ի լոյս: / Երանի քեզ, Ղեւոնդի՛, / Որ ծնար առ թեւօք Վարագայ Խաչին, / յերուսաղեմ ի Սիոնի գոգ հանգչեցար, / Ո՛հ, լռեց երգախօսիկ լեզուդ, / Այլ ո՛չ երգես՝ Երանի տամ այն դարուն, / Մի՛ երկուանար, հոգի՛, կտակդ նուիրական է, / Զքեզ ելաց, զարձանագիրս յօդեց խրիմեան Հայրիկ»²⁰:

¹⁷ ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 782, 23ա: Տետրի համառոտ նկարագրությունն է. 29 թերթ (գրչի էջակալում՝ 1—48, որ է՝ 2ա—25բ, չգրված՝ 1բ, 29բ), նյութ՝ թուղթ (1—27, 29. վերին անկյունում՝ ութանկյուն ճնշադրոշմ. «ФАБРИКИ СЕРГЬЕВА, № 6»), վանդակավոր թուղթ՝ 28, մեծություն՝ 31,5x23 (1), 35,5x21,5 (2—27), 27x22,8 (28), 27,2x23 (29), գրություն՝ միասյուն (1ա, 2ա—23ա, 25բ), երկսյուն (23ա—25ա), եռասյուն (27բ), գիր՝ շղագիր (տես նկ. 1, 2), տող՝ 30—40, վիճակ՝ բավարար. թերթերի վնասված եզրերը եւ ծալվող մասերը նորոգված սպիտակավուն թղթով: Բովանդակություն. Վիմագրեր՝ 2ա—2բ, ձեռագրի հիշատակարաններ՝ 25բ, անվանացանկ՝ 23ա—25բ, 28աբ, 29ա, ժամանակագրական ցանկ՝ 26ա—27բ, գրչության ժամանակի հիշատակարաններ՝ 3բ, 8բ, 13բ, 14բ, 19բ, 22բ, 23ա, 26ա, 27բ, 29ա: Կնքադրոշմ. 1ա՝ կապույտ թանաքով բոլորշի, որի մեջ՝ «Հ. Խ. Ս. Հ. ԳՐԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ. ԱՐԽԻՎ»: Այսուհետ հիշատակելու ենք «Փիրղ., Մահարձանք» ձևով:

¹⁸ Փիրղ., Մահարձանք, 29ա:

¹⁹ Տես Մ. ԱՂԱՒՆՈՒՆԻ, Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղեմի, Երուսաղեմ, 1929, էջ 235:

²⁰ Մ. ԱՂԱՒՆՈՒՆԻ, նշ. աշխ., էջ 235. Տ. ՍԱԽԱԼԱՆՅԱՆՅ, Պատմութիւն Երուսաղեմի, հտ. Բ., Երուսաղեմ, 1931, էջ 1285—1286: Վերջին հրատարակչի դեպքում կա երկու տարբերակ. 5-րդ տողում «ես»-ը՝ չիք, իսկ 7-րդ տողում ոչ թե «ձեզ», այլ՝ «քեզ»: Առհասարակ, նման երկարաշունչ վիմագիր բանաստեղծություններ հանդիպում են ԺԸ.—ԺԹ. դդ. տապա-

Ս. Էջմիածնի տապանագրերի նորահայտ ժողովածուն

Անդրադառնալով Մայր Աթոռի տապանագրերի նորահայտ ժողովածուին՝ նախ նշենք, որ բազմարդյուն հոգեւորականն աշխատության տիրապետութիւն հիշատակագրել է. «Տետր ընդօրինակութեան մահարձանաց Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, զոր ի գիր առի 1889 օգոստոսի» 17, հինգշաբթի, ի Սբ. Էջմիածին, գրիչ եւ հաւաքող սորին է Ղեւոնդ վ[ա]րդ[ա]պ[ետ] Փիրղալէմեան»²¹։ Տետրի վերջում պահպանված մեկ այլ հիշատակարանի համաձայն, որի մասին վերը նշվեց, Ղեւոնդ վարդապետն արձանագրութիւններն ընդօրինակել է մինչեւ նույն թվականի սեպտեմբերի 29-ը՝ աշխատելով 14 օր, իսկ ընդօրինակութիւնները մաքրագրել, ժամանակագրորեն դասակարգել ու ամբողջացրել է 1889 թ. հոկտեմբերի 27-ին Թիֆլիսում. «Ընդօրինակեցի աստ ըստ կարգի զմահարձանս Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի ի պէտս տարեգրութեան, 1889 թ. հոկտեմբերի» 27, ուրբաթ, ի Տիֆլիս քաղաքի, Ղեւոնդ վ[ա]րդ[ա]պ[ետ] Փիրղալէմեան Տոսպեցի»²²։ Ժողովածուի տարբեր էջերի ստորին լուսանցքներում առկա համառոտ հիշատակարանների հիմամբ կարելի է փաստել, որ նյութն ավարտուն տեսքի բերելը տեւել է 5 օր՝ 1889 թ. հոկտեմբերի 23-ից (երկուշաբթի) մինչեւ հոկտեմբերի 27-ը (ուրբաթ)։ Նշենք, որ բոլոր հիշատակարաններում հեղինակն արձանագրել է նաեւ գրչության վայրը. այսպես՝ «1889, հոկտեմբերի» 23, երկուշաբթի, ի Տիֆլիս», «1889, հոկտեմբերի» 24, երեքշաբթի, ի Տիֆլիս» եւ այլն, այսինքն՝ Ս. Էջմիածնից Կ. Պոլիս ուղեւորվելու ճանապարհին Ղեւոնդ վրդ. Փիրղալէմյանը կանգ է առել Թիֆլիսում, որտեղ եւ ամբողջացրել է արդեն հավաքած նյութը։ Այսօրինակ հիշատակարաններից մեկը քիչ ավելի ծավալուն է եւ լրացուցիչ տեղեկութիւններ է հաղորդում Մայր Աթոռի միաբան Կարապետ սրկ. Տեր-Մկրտչյանի մասին, որը Ս. Էջմիածնից Թիֆլիս էր մեկնել՝ Գերմանիա ուղեւորվելու նպատակով. «1889, հոկտեմբերի 25], չորեքշաբթի, ի Տիֆլիս, այս երեկոյ Սբ. Էջմիածնի միաբան Կարապետ սարկաւազ Տէր-Մկրտչեան Ագուլեցի տեղս եկաւ՝ Գերմանեայ գնալու համար»²³։ Հիշատակված Կարապետ սրկ. Տեր-Մկրտչյանը (հետագա-

նագրերում, սակայն այս մեկն ուշագրավ է Ղեւոնդ վարդապետի՝ հատկապես գիտական գործունեութիւնն ամփոփ ներկայացնելու առումով։

²¹ Փիրղ., Մահարձանք, 1ա։

²² Անդ., 22բ։

²³ Փիրղ., Մահարձանք, 14բ։

յում՝ եպիսկոպոս) Հայ Եկեղեցու ականավոր հոգեւորականներից է, որը 1889 թ. հունիսի 17-ին, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 15-ամյակի առթիվ, Ս. Գայանե վանքում սարկավազ է ձեռնադրվել (նրա հետ նաեւ՝ ճեմարանի տեսուչ Արշակ Նահապետյանը (հետագայում՝ եպիսկոպոս), Գեւորգ Չորեքչյանը (հետագայում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս), Գարեգին Հովսեփյանը (հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս)։ Մականար Ա. Թեղուտցի հայրապետի՝ նույն թվականի սեպտեմբերի 22-ի կոնդակով ճեմարանի առաջադեմ շրջանավարտներ Կարապետ եւ Գեւորգ սարկավազները, Թիֆլիսի Տափ թաղի Ս. Գեւորգ եկեղեցու հոգաբարձության նվիրատվությամբ, մեկնել են Գերմանիա եւ մինչեւ 1894 թ. ուսանել Լայպցիգի, Հալլեի ու Բեռլինի համալսարաններում, որտեղ Կարապետ սրկ. Տեր-Մկրտչյանը մասնագիտացել է աստվածաբանության բնագավառում²⁴։ Ղեկնող վարդապետի նորահայտ հիշատակարանի հաղորդմամբ՝ Կարապետ սարկավազը Թիֆլիսից Գերմանիա է մեկնել առնվազն հոկտեմբերի 25-ից հետո։

Վերադառնալով բուն նյութին՝ նշենք, որ նորահայտ ժողովածուն ընդգրկում է 305 միավոր վիմագիր եւ 2 ձեռագիր հիշատակարան՝ 1704 եւ 1725 թթ.՝ քաղված «Արարատ»-ի 1888 թ. Ա. համարից²⁵։ Նյութի վեր-

²⁴ Տե՛ս ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍ. ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆ, Երկերի ժողովածու, պրակ Ա., առաջ.՝ Ա. Յարուրենեանի, Ս. էջմիածին, 2008, էջ 5–6. հմմտ. ՄԱՆՈՒԷԼ ՍՐԿ. ՍԱՐԳՍԵԱՆ, Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի գործունեությունը եւ գիտական ժառանգությունը, «20-րդ դարի ականաւոր հայ հոգեւորականներ» գիտաժողովի նիւթերի ժողովածոյ, կազմ. եւ ընդհ. խմբ.՝ Ն. Պօղոսեան, Երեւան, 2020, էջ 185։

²⁵ Փրդղ., Մահարձանք, 25բ։ Դրանցից վաղագույնը Ս. էջմիածնի գրապահոցի Հ^{մբ} 1105 (ՄՄ ձեռ. Հ^{մբ} 1094) «Վարդան Արեւելցի, Մեկնութիւն Հնգամատենին» ձեռագրի հետագա հիշատակարաններից է, ուր գրիչը նկարագրում է Բայազետի իշխան Մահմատ բեկին՝ իբրեւ «քաջամարտ եւ յաղթող» (տե՛ս [նմբագրական], Ս. էջմիածնի գրադարան, «Արարատ», 1888, Ա., էջ 28. հմմտ. «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հտ. Գ., կազմ.՝ Ա. Քեօշեան, Կ. Սուքիասեան, Յ. Քէօսէեան, Երեւան, 2008, սիւն 290–291. «Արարատ»ի ժառանգությունը. Ժ. «Արարատ»ի բնագիրները, հտ. Բ., հրատ. պատր.՝ Ս. Նահապետեան, դասակարգ., խմբ. եւ առաջ.՝ Գ. Տէր-Վարդանեանի, Ս. էջմիածին, 2017, էջ 757), իսկ մյուսի աղբյուրը գրիչ Մարտիրոս սրկ. Կարբեցու հիշատակարանն է (Ս. էջմիածնի ձեռ. Հ^{մբ} 647, ՄՄ ձեռ. Հ^{մբ} 616բ), ըստ որի՝ լեզգի Օզբեկի զորքերի ու տաճիկների հալածանքների պատճառով Աստվածատուր Ա. Համադանցի կաթողիկոսը (1715–1725 թթ.) Մայր Աթոռից հեռացել ու մեկուսացել է Աստապատում՝ իրեն փոխարինող նշանակելով Սաղմոսավանքի վանահայր եւ առաջնորդ Հովսափ վարդապետին, որը նաեւ գրիչ՝ Մարտիրոս Կարբեցու հորեղբայրն էր (ըստ Ղեկնող վրդ. Փրդղալեմյանի՝ եղբորորդին. տե՛ս անդ, էջ 30. հմմտ. «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հտ. Գ., կազմ.՝ Օ. Եգանեան, Երեւան, 2007, սիւն 72. «Արարատ»ի ժառանգությունը. Ժ. «Արարատ»ի բնագիրները, հտ. Բ., էջ 758. Ա. ՄԱՆՈՒԷԼԱՅԱՆ, Սաղմոսավանք, Երեւան, 2015, էջ 68)։

ջուժ հեղինակը կազմել է արձանագրություններում հիշատակված անձնանունների այբբենական, ինչպես նաև թվականների ժամանակագրական ցանկեր՝ անձնանուններին կից նշելով նաև վիճաբերի կարգային համարները: Աշխատության վերջում եւ ցանկերից հետո զետեղված է գրչության ժամանակի համառոտ եւ ընդարձակ 8 հիշատակարան: Անձնանունների ցանկին կից զույգ հիշատակարանների համաձայն՝ Ղեւոնդ վարդապետն այն սկսել է կազմել դեռեւս Թիֆլիսում եղած ժամանակ՝ 1889 թ. նոյեմբերի 1-ին, իսկ ավարտել է Բաթումում՝ նոյեմբերի 6-ին. «Լրացաւ ցանկս 1889, նոյեմբերի] 6, երկուշաբթի, ի Պաթում, մինչ ի Սբ. Էջմիածնէ վերադարձեալ գնացի ի Կ. Պօլիս, գրիչ սորին է Ղեւոնդ վ[ա]րդ[ա]պ[ետ] Փիր[ղալէմեան]»²⁶: Ինչ վերաբերում է թվականների ցանկի կազմմանը, ապա, ըստ պահպանված քառատող հիշատակարանի, այն կազմվել է ավելի վաղ՝ 1889 թ. հոկտեմբերի 6-ին, Ս. Էջմիածնում. «Աւարտեցաւ ցանկս, 1889, հոկտեմբերի] 6, ուրբաթ, ի Սբ. Էջմիածին...»²⁷: Միեւնույն ցանկի սկզբում Ղեւոնդ վարդապետը հիշատակագրել է 307 միավոր վիճաբրի մասին²⁸՝ ի հավելումն նշելով, որ մարզվանցի տիրացու Սեդրակը տկարության պատճառով վերադարձել է իր ծննդավայրը. «Աստուած իւր բան յաջողէ եւ բժկութիւն շնորհէ»²⁹:

Փաստելի է, որ Ղեւոնդ վարդապետը Կ. Պոլիս է հասել նոյեմբերի 19-ին, որի մասին մանուշակագույն թանաքով հիշատակարան է թողել տետրի վերջին էջին. «1889, նոյեմբեր 14, չորեքշաբթի գիշեր, ի Պաթումայ մեկնելով՝ երկուշաբթի երեկօյին, ժամ 11-ին, նոյեմբերի 19 մուտ գործեցի ի Կ. Պօլիս, գրիչ երկտողիս է Ղեւոնդ վ[ա]րդ[ա]պ[ետ] Փիրղալէմեան»³⁰:

Ժողովածուում ընդգրկված վիճաբրերից 3-ը (Հ^{մր} 1—3), ինչպես ծանոթագրել է նաև կազմողը, «...զատ են Էջմիածնի միաբանութեան մահարձանաց»³¹: Դրանք Հայոց ՁԼ. (1281), ՁԽԷ. (1298) եւ ՁՀԲ. (1323) թվակիր կոթողների արձանագրություններն են, որոնք պահպանված են եղել Վայոց ձորի Խաչիկ գյուղից ոչ հեռու գտնվող Քարկոփի կամ Խոտակերաց վանքի շրջակայքում, եւ ինչպես կազմողն է փաստում, հրատարակված են դեռեւս «Արարատ» ամսագրի էջե-

²⁶ Փիրղ., Մահարձանք, 25բ:

²⁷ Անդ, 27բ:

²⁸ Թերեւս նկատի է առել նաեւ 2 ձեռագրի հիշատակարանները:

²⁹ Փիրղ., Մահարձանք, 26ա:

³⁰ Անդ, 29ա:

³¹ Տէս անդ, 2ա:

րում³²։ Հավելենք, որ հրատարակիչը նշանավոր տեղագիր, մասնագիտությամբ բժիշկ Քաջբերունին է (Գաբրիել Տեր-Հովհաննիսյան), որն իր «Ճանապարհորդական նկատողութիւնք» հոգւածաշարի ԽԲ. (42) մասում նկարագրել է պատմական Սյունիքի մի շարք բնակավայրեր եւ ուխտատեղիներ, որոնց թվում նաեւ՝ Խաչիկ գյուղից Քարկոփի վանք ձգվող ճանապարհի հուշարձանները³³։ Ավելորդ չենք համարում նշել, որ ժամանակագրորեն վաղագույն՝ 1281 թ. խաչքարը գտնվելիս է եղել Ղարղա բազար կոչվող գյուղատեղում, որն այժմ չի պահպանվել³⁴։ Ինչ վերաբերում է մյուս երկու արձանագրություններին, ապա դրանցից մեկը փորագրված է քանդված ջրաղացի քարե նավերից մեկին, մյուսը՝ տապանաքարին³⁵։

Մնացած 302 վիմագրերը՝ Հ^{մր} 4—305³⁶, ըստ ցուցակի, թվագրվում են 1644—1886 թթ., եւ բոլորն էլ Ս. Գայանե վանքից հյուսիս գտնվող Մայր Աթոռի միաբանական գերեզմանոցից են։

Այն, որ Ս. Էջմիածնի արձանագրությունները երբեւէ չէին ամբողջացվել, պարզել էինք վերջերս իրականացրած մեր ուսումնասիրություններով։ Արսեն Հարությունյանի՝ 2016 թ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հրատարակված մենագրության էջերում ամփոփված 708 վիմագրից միայն 350-ը Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցի տապանագրերն են՝ թվագրված 1651—1922 թթ.³⁷։ Սրանց մասին մեզ ծանոթ միակ նախընթաց աղբյուրը, որից մեծապես օգտվել ենք, Գեորգյան հոգեւոր ճեմարանի սան Արարատ սրկ. Գափոյանի (այժմ՝ Տեր Ղեւոնդ)՝ 1998 թ. պաշտպանած ավարտաճառն է՝ նվիրված գերեզմանոցի 400-ից ավելի տապանագրերին (Ժէ. դարից մինչեւ Ի. դարավերջ), որի հեղինակին եւս Ղեւոնդ վրդ.

³² Տէս անդ։

³³ Տէս ՔԱՋԲԵՐՈՒՆԻ, Ճանապարհորդական նկատողութիւնք, «Արարատ», 1889, Ը., էջ 465—466։

³⁴ Տէս ՔԱՋԲԵՐՈՒՆԻ (ԳԱԲՐԻԵԼ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ), Ճանապարհորդական նկատողություններ, հրատ. պատր.՝ Ա. Քալանթարյանը, Գ. Սարգսյանը, Հ. Մելքոնյանը, Երեւան, 2003, էջ 424, ծնթ. 169. նաեւ «Դիվան հայ վիմագրության», պրակ III, Վայոց ձոր. Եղեգնաձորի եւ Ազիզբեկովի շրջաններ, կազմ.՝ Ս. Բարխուդարյան, Երեւան, 1967, էջ 208, արձ. 672։

³⁵ Տէս ՔԱՋԲԵՐՈՒՆԻ, Ճանապարհորդական նկատողություններ, էջ 305. նաեւ «Դիվան հայ վիմագրության», պրակ III, էջ 207, արձ. 670, էջ 208, արձ. 673։

³⁶ Վիմագրերի համարակալման մեջ երկու շփոթ կա. մի տեղ երկու տարբեր տապանագիր նույն համարն ունեն Հ^{մր} 82, մեկ այլ դեպքում տապանագիրը երկու համար է ստացել Հ^{մր} 293—294։

³⁷ Տէս Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Վաղարշապատ, էջ 133—235, արձ. 151—501։

Փիրղալեմյանի ժողովածուն անհայտ է եղել³⁸։ Այս տեսանկյունից խնդրո առարկա նորահայտ ժողովածուի գյուտն էական նշանակություն ունի հատկապես ներկայումս եղծված կամ կիսաեղծ, մամուլապատ ու գոսացած մի շարք արձանագրությունների վերծանությունները հստակեցնելու առումով, մանավանդ որ Ղեւոնդ վարդապետն ինքն է նշում՝ արձանագրություններն ընդօրինակել է ժամանակի «լափող ժանիքներից» փրկելու նպատակով, քանզի աշխատանքի ընթացքում ինքը եւս տեսել է այդպիսիք։ Նկատառելով այդ՝ նորահայտ ժողովածուի բոլոր տապանագրերը համեմատել ենք մեր հրատարակության³⁹ հետ եւ արդյունքում փաստել հետեւյալը։

ա. Ղեւոնդ վարդապետն ընդօրինակել է բացառապես ստույգ թվակիր արձանագրությունները, որոնք, ըստ նրա, թվագրվում են 1644—1886 թթ.։

բ. Նա փորձել է վիմագրերը ներկայացնել ժամանակագրական կարգով՝ նախապես նշելով արձանագրության հերթական համարը, համառոտ բովանդակությունը, վերծանությունը՝ արտաքին լուսանցքում թվականը նշելով նաեւ թվանշաններով, այսպես՝

«Թիւ 21. Նախջուանայ դէտ Եսայի վրդպի խաչվէմ.

է սա տապան տեառն Եսայեայ՝ առաջնորդին Նախճուանայ, որ յետ լրման ութսուն ամեայ՝ մեռեալ եղաւ պատուով ի սմա, ՌՃԻԳ. Թվին»⁴⁰։

Արտաքին լուսանցքում՝ 1674։

«Թիւ 157. Սբ. Գայիանէի վանուց լուսարար Արուծի խաչվէմ.

Այս է տապան տիրացու Արուծի, որ է լուսարար Սբ. Գայիանի, թվ. ՌՄԺԶ.»⁴¹։

Արտաքին լուսանցքում՝ 1767 (հմմտ. նկ. 1)։

Ինչպես տեսնում ենք, Ղեւոնդ վարդապետը վերծանություններում բնագրային սղումները վերականգնելիս հատուկ նշաններ չի օգտագործել՝ մի բան, որ բնորոշ է նաեւ ԺԹ. դարի մեր մյուս տեղագիրներին։ Այս հանգամանքը լուսանկարի եւ գրչանկարի չգոյություն պարագայում ուսումնասիրողին հնար չի տալիս արձանագրու-

³⁸ Տէս ԱՐԱՐԱՏ ՍՐԿ. ԳԱՓՈՅԱՆ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանական գերեզմանատան արձանագրությունների վերծանություն, ավարտաճառ, գիտ. ղեկավար՝ Ա. Մաթեւոսյան, Ս. Էջմիածին, 1998։

³⁹ Տէս Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Վաղարշապատ, էջ 133—230, արձ. 151—489 (որոշ ընդհատումներով)։

⁴⁰ Փիրղ., Մահարձանք, 3ա։

⁴¹ Անդ, 10բ։

թյան բնագրի մասին գաղափար կազմելու, առավել եւս՝ ստուգելու վերծանության իսկությունը:

գ. Ժամանակագրական կարգը խախտելիս՝ Ղեւոնդ վարդապետը տվյալ արձանագրության տողամիջում կամ վերծանությունից հետո՝ կոր փակագծերում, ուսումնասիրողին ուղղված հուշում-ցուցումներ է տալիս, օրինակ՝ Հ^{մր} 10 տապանագրի վերծանությունից հետո նշում է. «17 թիւ զկնի սորին գրելու ես»⁴², կամ Հ^{մր} 11 տապանագրից հետո նշում է. «24 թիւ զկնի սորին դասելու է»⁴³ եւ այլն, իսկ Հ^{մր} 17 տապանագրին կից գրառումը վերաբերում է այն թվականների ժամանակագրական ցանկից վրիպելուն. «...այս ՌՃԺԱ. (1662) թիւն ցանկի մէջ մոռանալով չեմ անցուցեր, ուստի դուրս է մնացեր եւ պարտիս 30 թիւէն զկնի կարգել»⁴⁴:

դ. Վերծանություններին կից հաճախ կարելի է կարդալ արձանագրության բովանդակության, անհասկանալի բառերի բացատրության կամ նյութի հետ առնչվող ուշագրավ իրադարձության մասին ծանոթագրություններ: Վկայակոչենք դրանցից մի քանիսը.

Ժամանակագրորեն վաղագույն տապանագիրը հիշատակելիս Ղեւոնդ վարդապետը ծանոթագրում է. «էջմիածնի միաբանաց գերեզմանատան ամենէն հին թուական կրող խաչվէմն այս է, որ 245 տարի առաջ ննջեր է՝ յաւուրս Փիլիպպոս կաթողիկոսին Աղբակեցւոյ»⁴⁵: Այսինքն՝ 1889 թ. ընդօրինակված տապանագրերից մեկը, որը հայտնում է ծագումով Խոտանանից Սահակի որդի մահտեսի Կյուրեղի անունը, 245 տարվա պատմութիւն ունի, հետեւաբար՝ կազմվել է Հայոց ՌՂԳ. (1644) թվականին: Որքան էլ տարօրինակ թվա, տապանագրի բավականին հստակ ընթեռնելի թվականը վերծանելիս Ղեւոնդ վրդ. Փիրղալեմյանը վրիպել է՝ ՌՃԶԶ.-ի (1737)⁴⁶ փոխարեն կարդալով ՌՂԳ. (1644). այստեղից էլ առաջացել է այն թյուր կարծիքը, թե գերեզմանոցի ստույգ թվակիր վաղագույն արձանագրութիւնը 1644-ից է: Իրականում 1651-ից է, որը հաջորդիվ վկայաբերում է նաեւ Ղեւոնդ վրդ. Փիրղալեմյանը:

Ժողովածուի Հ^{մր} 44-ի եւ 45-ի դիմաց վկայված են ջուղայեցի Ծատուրի որդի Սիմեոն (մահ. 1698 թ.), մյուսում՝ Հովսեփ (մահ. 1700 թ.) վարդա-

⁴² Անդ, 2բ:

⁴³ Անդ:

⁴⁴ Փիրղ., Մահարձանք, 3ա:

⁴⁵ Անդ, 2ա:

⁴⁶ Տես Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Վաղարշապատ, էջ 161, արձ. 260:

պետները, որոնց Ղեւոնդ վրդ. Փիրղալեմյանը ենթադրաբար եղբայրներ է համարում. «...ինձ թուի թէ 44 թուով յիշեալ փոքր Սիմէոն վարդապետի եղբայրն է սա»⁴⁷; Նույն այս ենթադրութիւնը հետագայում առաջարկել ենք նաեւ մենք⁴⁸:

Համանման է նաեւ Քասաղի կիրճում գտնվող Ս. Գրիգոր Լուսավորչի անապատի վանահայր ղափանցի մահտեսի Մարութի՝ 1734 թվակիր տապանագրերում երկիցս հիշատակվելու առնչությամբ առաջացած շփոթը (Հմ. 96, 102): Մի դեպքում Մարութի անունը հիշատակված է ուղղանկյուն օրորոցաձեւ շիրմաքարի երկու լայն նիստերին (որոնցից Ղեւոնդ վրդ. Փիրղալեմյանը միայն մեկն է վկայակոչում), իսկ մյուս տապանաքարի արձանագրութիւնը, մեր համոզմամբ, հայտնում է Մարութի որդու (թերեւս հոգեւոր)՝ ղափանցի Կոստանդի անունը⁴⁹, ուստի Ղեւոնդ վրդ. Փիրղալեմյանի ենթադրութիւնը՝ «...արդեօք զատ-զատ անձինք են, թէ՛ միեւնոյն անձն է»⁵⁰, անտեղի է:

Ս. Էջմիածնի միաբաններից բացի՝ գերեզմանոցում են հանգչում նաեւ կաթողիկոսների ու բարձրաստիճան հոգեւորականների մայրեր, եղբայրներ եւ այլ հարազատներ, ինչպիսիք են՝ Մովսէս Գ. Տաթեւացի (1629—1633 թթ.) կաթողիկոսի եղբորորդի Մովսէս վարդապետը (մահ. 1696 թ., ՂՓ — 4ա/43, ԱՀ — 146/193⁵¹), Աստվածատուր Ա. Համադանցի (1715—1725 թթ.) հայրապետի մայր Սառան (մահ. 1721 թ.), որի տապանագրում անվան սկզբնատառերն այժմ վնասված են, եւ նախկինում պայմանականորեն կարդացել ենք Մանան (ՂՓ — 6ա/81, ԱՀ — 155/234), Ղազար Ա. Զահկեցու (1737—1751 թթ.) եղբայր Մկրտիչ վարդապետը (մահ. 1752 թ., ՂՓ — 9բ/139, ԱՀ — 172/296), Սիմէոն Ա. Երեւանցի (1763—1780 թթ.) կաթողիկոսի մայր Գայանեն (մահ. 1752 թ., ՂՓ — 9բ/138, ԱՀ — 172/297), Կ. Պոլսի պատրիարք Զաքարիա վրդ. Կաղզվանցու մայր Նազեն (մահ. 1783 թ., ՂՓ — 15ա/133, ԱՀ — 188/351), Զմյուռնիայում նվիրակ, դեռ Ստեփանոս եպս. Ենոքյանի մայր Նունեն (մահ. 1816 թ.,

⁴⁷ Փիրղ., Մահարձանք, 5բ-6ա:

⁴⁸ Տէս Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Վաղարշապատ, էջ 147, արձ. 197, 199:

⁴⁹ Տէս Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Վաղարշապատ, էջ 158—159, արձ. 251, 252:

⁵⁰ Փիրղ., Մահարձանք, 11բ:

⁵¹ Տողատակերը չձանրաբեռնելու նպատակով՝ նախընտրել ենք տապանագրերի ձեռագիր եւ տպագիր օրինակների համատեղ հղումների դեպքերը նշել շարադրանքում՝ մեջբերմանը կից, համառոտագրման հետեւյալ սկզբունքով՝ ՂՓ (Ղեւոնդ Փիրղալեմյան), էջը եւ արձանագրութիւն համարը, օրինակ՝ 4ա/43, այնուհետ՝ ԱՀ (Արսեն Հարութչյան), դարձյալ էջը եւ համարը:

ՂՓ — 17բ/247, ԱՀ — 213/432) եւ այլք: Սիմեոն Երեւանցի հայրապետի մոր՝ Գայանեի տապանագրի բովանդակությունից դատելով՝ Ղեւոնդ վարդապետը ծանոթագրում է, թե իր կարծիքով՝ տիկին Գայանեն ամուսնու եւ որդիների վախճանից հետո մնացել է կուսանաց անապատում (անունը չի նշում), որտեղ եւ վախճանվել է⁵²: Տրամաբանական այս տեսակետից բացի՝ կա մի հետաքրքիր հանգամանք եւս. 1752 թ. տապանագրում Սիմեոնը հիշվում է իբրեւ «վեհ» եւ «հայրապետ», ինչը թույլ է տալիս ենթադրել, որ Մայր Աթոռում հուղարկավորված Գայանեի շիրմաքարը տեղադրվել է ավելի ուշ՝ Սիմեոնի կաթողիկոսության օրոք⁵³:

Ժողովածուում արձանագրել ենք եւս մեկ ուշագրավ տեղեկություն. Հ^մր 166 տապանագրին կից՝ այլ թանաքով, բայց թերեւս նույն ձեռքով հետագայում ավելացվել է ծանոթագրության ցուցիչ խաչանշան, որը մեկնաբանված է նույն էջի ստորին լուսանցքում: Այն բովանդակում է վիմագրում հիշատակված Ս. Գրիգոր Լուսավորչի անապատի վանահայր Անտոն վարդապետի վերաբերյալ մատենագրական աղբյուրի հղումը, այն է՝ «տե՛ս 1888 ամի «Արարատ» ամսագրի, էջ 34, տող 1...»⁵⁴: Պարզվում է՝ Անտոն «սրբակրոն» վարդապետը հիշատակված է իբրեւ պատվիրատու-ստացող Ս. Էջմիածնի գրատան Հ^մր 1375 (ՄՄ ձեռ. Հ^մր 1368) ձեռագրի՝ ընդօրինակված 1745 թ. Ս. Գրիգոր Լուսավորչի անապատում, Հովհաննես Երեցի ձեռքով. «Եւ գրեցաք սուրբ տառս այսմ չարչարատանջ ժամանակիս, ի խնդրոյ շնորհազարդ՝ րաբունույ եւ ճգնազգեաց Անտոն վարդապետի իւրոյ վայելումն, որ է առաջնորդ եւ հայր ի Սուրբ Լուսավորչի աստուածաբնակ անապատիս...»⁵⁵: Գրչագիրը բովանդակում է Մատթեոս Զուղայեցուն՝ «Գործք առաքելոց»-ի մեկնությունը, որի գրչության հիշատակարանը փաստում է, որ դեռեւս 1740-ականներից անապատի առաջնորդ-վանահայրն Անտոն վարդապետն էր, որը, ըստ տապանագրի, վախճանվել է 1771 թ. եւ թաղվել Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում (ՂՓ — 11ա/166, ԱՀ — 181/329):

Հատկանշելի է նաեւ այն, որ Ղեւոնդ վարդապետը երբեմն ծանոթագրության բնույթի համառոտ նշումներ է արել վերծանություններում. օրի-

⁵² Տե՛ս Փիրղ., Մահարձանք, 9բ:

⁵³ Տե՛ս Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Վաղարշապատ, էջ 172:

⁵⁴ Փիրղ., Մահարձանք, 11ա:

⁵⁵ [Խմբագրական], Ս. Էջմիածնի գրադարան, «Արարատ», 1888, Ա., էջ 33—34. հմմտ. «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հտ. Դ., սիւն 1084. «Արարատ»-ի ժառանգութիւնը. Ժ. «Արարատ»-ի բնագիրները, հտ. Բ., էջ 760:

նակ՝ եղիազար Ա. Այնթապցի (1681–1691 թթ.) կաթողիկոսի սպասավոր Ոհան Ստամպոլցու 1683 թ. տապանագրում ննջեցյալի հոգեւոր աստիճանը կարդացել է՝ «մակագին» (փոխանակ՝ սարկաւագին)՝ կից ծանոթագրելով, թե «այս բառ պատուագիր էր» (ՂՓ – 3բ/32, ԱՀ – 141/181), կամ՝ Ս. Էջմիածնի ավագ լուսարար եւ եփրեմ Ա. Ջորագեղցի (1809–1830 թթ.) հայրապետի տեղապահ Գրիգոր եպիսկոպոսի տապանագրում թվականի վերջին նիշը չի կարդացել ու ծանոթագրել է՝ «...վերջի թուանշան մաշել էր» (ՂՓ – 18ա/254, ԱՀ – 215/438), իսկ խոյեցի «սհաթսագ» Առաքելի տապանագիրը վերծանելիս բացատրում է ննջեցյալի մասնագիտությունը՝ ժամագործ (ՂՓ – 19ա/261, ԱՀ – 216/444)։ Կաթողիկոսական տեղապահ Դուկաս արք. Արագածունու 1864 թ. տապանագրին կից ծանոթագրությունից էլ պարզվում է, որ Դեւոնդ վարդապետը ներկա է եղել նրա հուղարկավորությանը. «...սորա թաղման հանդիսին ներկայ էր հաւաքող սոյն գերեզմանական արձանագրութեանց Դեւոնդ վարդապետ Փիրղալէմեան Տոսպեցին, յամսեան ապրիլի»⁵⁶։

Ե. Ձեռագիր եւ տպագիր օրինակների համեմատության արդյունքում հստակեցրել ենք նաեւ ներկայումս եղծված կամ կիսաեղծ, իսկ նախկինում ընթեռնելի մի շարք տապանագրերի առանձին հատվածների վերծանությունները. այսպես՝

1. Ճշտվում է ղափանցի Թուման վարդապետի մահվան թվականը, ոչ թե ՌՃՁ. (1657), այլ՝ ՌՃՀ. (1721). վերջին թվանիշ տասնավորն այժմ եղծված է (ՂՓ – 6ա/80, ԱՀ – 134–135/155)։

2. Մարտիրոս եպս. Արծկեցու (մահ. 1657 թ.) տապանագրում ընթեռնելի է ոչ թե «յարկս պ[ա]հական», այլ՝ «յարկ ս[ե]պհական» արտահայտությունը (ՂՓ – 2բ/8, ԱՀ – 135/156)։

3. Ննջեցյալ Ավետիսը (մահ. 1668 թ.) հիշվում է իբրեւ ֆառոգբան, այսինքն՝ քարոզիչ (ՂՓ – 2բ/14, ԱՀ – 138/168)։

4. Ծագումով Գողթան երկրից տեր Պողոսի տապանագրի թվականը ոչ թե ՌՃԸ. (1659), այլ ՌՃԺԸ. (1669) է (ՂՓ – 2բ/15, ԱՀ – 135/158)։

5. Գրիգոր վրդ. Բաղիշեցին (մահ. 1659 թ.) հիշվում է ոչ թե «Վարդացի», այլ «Վարագեցի» վարժարանի սան (ՂՓ – 3բ/28, ԱՀ – 136/159)։

6. Պատմագիր Առաքել Դավրիժեցու տապանագիրը վերծանել է բառերի փոխատեղմամբ. «Այս է տապան պատմագիր Առաքել վարդապետին, ՌՃԺԹ. (1670) թուին» (ՂՓ – 3ա/18, ԱՀ – 138/171)։

⁵⁶ Փիրղ., Մահարձանք, 21ա, արձ. 291։

7. Սահակ պատանու՝ ներկայումս կիսով չափ եղծված տապանագրի վերծանությունն ամբողջանում է. «...հոգեծնունդ զաւակ կոչի, սա Մես-րոպայ վարդապետի, ի թուին հազար հարիւրեկի ԼԲ.-ինն յարաբարդի (1683)...» (ՂՓ — 4ա/39, ԱՀ — 199/390): Թվականը Ղեւոնդ վրդ. Փիրղալեմյանը 1692 է կարդացել:

8. Նշանավոր բառարանագիր Երեմիա վրդ. Մեղրեցին (մահ. 1689 թ.) տապանագրում բնութագրված է իբրեւ «բառալոյծ Աստուածաշնչի» (ՂՓ — 4ա/37, ԱՀ — 143/186):

9. Մեսրոպ վրդ. Աստապատցու (մահ. 1701 թ.) տապանագրում պարզվում են մի քանի եղծված բառեր. այսպես՝ «...ուրումն մարմնոյ կա-յառանի..., էր քարոզողաց կարգի..., ի սեպտեմբերի քսան եւ ութի, հան-գեաւ ի մօր իւր յարգանդի» (ՂՓ — 4բ/47, ԱՀ — 148/200):

10. Հստակեցվում է «գրագէտ» Նսայու տապանագիրը. «Այս է տա-պան գր[ա]զ[է]տ յէսայուն, որ է որդի Թահմազին, թվին ՌՃԿԹ. (1720)» (ՂՓ — 11բ/170, ԱՀ — 154/231):

11. Ս. Էջմիածնի աթոռակալ Հովհաննես վարդապետի (մահ. 1724 թ.) մականունը Ղեւոնդ վրդ. Փիրղալեմյանը կարդում է ոչ թե «Սարեցի», այլ «Սամեցի», թերեւս նկատի ունի Կիլիկիո Այնթապ գավառի Սամ գյուղը (ՂՓ — 6ա/84, ԱՀ — 155/236):

12. Ընթերցվել է Ս. Էջմիածնի ժամասաց Դանիել վարդապետի (մահ. 1739 թ.) տապանագրի՝ ներկայումս հողով ծածկված վերջին տողը, որը բովանդակում է մահվան ամիս-ամսաթիվը՝ «Ի. (20) փետրուարի» (ՂՓ — 8ա/115, ԱՀ — 164/270):

13. Մշեցի Սիրմեոն եպիսկոպոսը (մահ. 1749 թ.) տեւական ժամանակ սպասավորել է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքում (ՂՓ — 3բ/36, ԱՀ — 169—170/289):

14. Ոչ թե Գեմարիս, այլ Գեամրեզ (այժմ՝ Կամարիս) գյուղից Հով-հաննես վարդապետի (մահ. 1750 թ.) տապանագիրը տողերի այլ հեր-թագայությունմբ է կարդում. «Ընդ այսու ղնի վիմով մարմին Յովհաննիսի վարդապետին, Գեամրէս գեղն էր տեղի սորին, գրագիր ժամասաց Սրբոյ գահին, Քրիստոս յիշեա՛ զսորա հոգին եւ մոյծ յարքայութիւնդ վերին, զի է սրբոյ արեանդ քոյ գին, ի ՌՃՂԹ. (1750)» (ՂՓ — 9ա/131, ԱՀ — 170/291):

15. Ճշտվեց մահտեսի Աստվածատուրի մահվան տարեթիվը՝ ՌՄԻ-Ա. (1772) (ՂՓ — 11բ/169, ԱՀ — 183/338), իսկ Ստեփանոս արքեպիսկոպո-սի՝ ամսաթիվը՝ «օգոստոսի 2» (ՂՓ — 17բ/249, ԱՀ — 214/436):

16. Թվակիր են բոյախչի (ներկարար) Եղիա Նախիջեանցուն՝ «1814 (ՌՄԿԳ.), փետրուարի 8» (ՂՓ — 17ա/241, ԱՀ — 199/391), նոտար Մատթեոս վարդապետի՝ «թվին ՌՄԼԱ. (1782)» (ՂՓ — 12բ/185, ԱՀ — 200/395), Սառա Ղազանչեցուն՝ «1826 (ՌՄՀԵ.), փետրուարի 9» (ՂՓ — 18բ/257, ԱՀ — 201/403) տապանագրերը, իսկ շորապան Գաբրիել վարդապետը վախճանվել է ոչ թե ՌՄԼ. (1781), այլ ՌՄԼԸ. (1789) թվականին (ՂՓ — 14բ/209, ԱՀ — 201/401):

17. Հովսեփ վրդ. Թիֆլիսեցուն (մահ. 1815 թ.) տապանագրի 4-րդ տողում ննջեցյալը բնութագրվում է իբրեւ «մերթ հիւրընկալ Սրբոյ գահի» (ՂՓ — 17ա/243, ԱՀ — 212/428):

18. Հստակեցվում է Աստվածատուր արքեպիսկոպոսի տապանագրի սկզբի երկու տողերի վերծանությունը. «Ի յամի 1827, ի 19 նոյեմբերի, Տէր Ա[ստուա]ծ[ա]տ[ո]ւր պանծալի արհի...» (ՂՓ — 18բ/257, ԱՀ — 208/417):

19. Ճշտվեց Արագածունյանց տոհմից Հովհաննեսի ազգանունը՝ «Մէլիք-Սէլումեանց» (ՂՓ — 18ա/253, ԱՀ — 217/445):

20. Ուրարակիր Մարտիրոս Տեր-Աղեքսանդրյանը (մահ. 1869 թ.) հիշվում է ոչ թե Փանկրցի, այլ Փանըկցի, այսինքն՝ Փանիկ գյուղից (ՂՓ — 21բ/296, ԱՀ — 227/478):

21. Ընդարձակ է Հովակիմ արք. Տեր-Գրիգորյանի տապանագիրը. «Այս է տապան Յովակիմ եպիսկոպոսի Տէր-Գրիգորեանց Երեւանցոյ եւ ասպետի, անդամոյ Սինօդի Սրբոյ էջմիածնի, հանգեալ ի Տէր ի 12 հոկտեմբեր, 1886 ամի: Շինեցաւ արդեամբ որդւոյ իւրոյ էմինի Տէր-Գրիգորեանց» (ՂՓ — 22բ/305, ԱՀ — 230/489): Այժմյան ամփոփ բնագիրը միգուցե քարը հետազայում փոխելու եւ գիրը վերաշարադրելու հետեւանք է:

Վերոհիշյալ սրբագրումներն արդեն իսկ բավական են նորահայտ ժողովածուի աղբյուրագիտական արժեքը գնահատելու համար: Մենք զանց ենք առել միայն ոչ էական՝ թվականներում առկա հատկապես Գ. եւ Դ. միավոր տառերի շփոթի, առանձին բառաբացթողումների եւ թերընթեռնելի դեպքերը, որոնք սպրդել են Ղեւոնդ վրդ. Փիրղալեմյանի գրչից: Ընդհանուր առմամբ սույն հոդվածը կարելի է դիտարկել իբրեւ տարիներ առաջ հրատարակված մեր աշխատության օժանդակ ու լրացուցիչ մաս:

Ավելորդ չենք համարում նշել, որ նորահայտ ժողովածուի 302 միավոր տապանագրերից միայն մեկը նկարագրված չէ վերոհիշյալ աշխատության մեջ: Ժամանակին այն լուսանկարել, սակայն հետազայում վրիպել եւ չենք ընդգրկել մեր ուսումնասիրության մեջ: Այդ տապանագիրն առկա է նաեւ Արարատ սրկ. Գափոյանի ավարտաճառում՝ հետեւյալ բո-

վանդակույթյամբ. «Այս է տապան Կարնեցի Եսայի վարդապետի, որ էր ձայնեղ ժամասաց ի գահս սուրբ, ի ՌՄԺԲ. (1763) թվին»⁵⁷:

Ասենք նաեւ, որ տպագիր օրինակում մինչեւ 1886 թ. 302 տապանագրի փոխարեն հաշվվում է 339-ը, հետեւաբար՝ Ղեւոնդ վարդապետի ցուցակում 37 միավոր բացակայում է: Անշուշտ, դա բնավ չի նսեմացնում բազմախատ հոգեւորականի ճիգն ու ջանքը հայ գրավոր մշակույթի արժանահավատ գանձերը կորստից փրկելու գործում: Կատարած վիթխարի աշխատանքը մեծանուն հայորդին եզրափակում է հետեւյալ աղերս-պատգամով. «...մինչ դիպիս երկտող յայտագրիս, ազնիւ ընթերցող, խնդրեմ յիշել՝ զիս՝ զծերուկ աշխատողս ի Տէր, եւ դու լիջիր ողջ ի խնամս Բարձրելոյն»⁵⁸:

РЕЗЮМЕ

Выдающийся армянский филолог, кодиколог и церковный деятель XIX века архимандрит Гевонд Пиргалемян (1830 Ван — 1891 Иерусалим) провел большую часть своей духовно-научной деятельности, путешествуя как по нынешней, так и по исторической Армении и во многих армянских селениях Османской империи, копируя тысячи колофонов рукописей, эпитафий, сборников диалектных слов и других ценных материалов.

Среди печатного и неопубликованного наследия выдающегося священнослужителя выделяется оригинал, озаглавленный «Тетрадь надписей на гробницах Святого Престольного Эчмиадзина...» («Տետր ընդօրինակութեան մահարձանաց Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի...»), недавно обнаруженный в архивном фонде протоиерея Гюта Аганянца в Национальном архиве Армении. Согласно колофонам, Пиргалемян скопировал эпитафии с 17 августа по 29 сентября 1889 г., затем хронологически классифицировал материал и подготовил окончательную версию с 23 по 27 октября в Тбилиси (Грузия), по пути назад из Эчмиадзина в Константинополь.

Большую часть сборника из 2 рукописных колофонов и 305 эпитафий составляют эпитафии (302) конгрегационного кладбища Первопрестольного

⁵⁷ Փիրղ., Մահարձանք, 10բ, արձ. 152, հմմտ. ԱՐԱՐԱՏ ՍՐԿ. ԳԱՓՈՅԱՆ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանական գերեզմանատան արձանագրությունների վերծանություն, էջ 94, արձ. 133:

⁵⁸ Փիրղ., Մահարձանք, 23ա:

Святого Эчмиадзина, которые Пиргалемян умело прочитал, систематизировал в хронологическом порядке, при необходимости аннотировал и в конце составил алфавитный список имен и список дат. Нововыявленный сборник имеет большое значение для разъяснения предыдущих исследований эпитафий Вагаршапата, что также дает основу для точного чтения и заполнения ныне стертых отрывков эпитафий.


SUMMARY

Archimandrite Ghevond Pirghalemyan (1830 Van—1891 Jerusalem), a 19th century Armenian prominent philologist, codicologist and church figure carried out most of his spiritual-scientific activities traveling in the territory of both present and historical Armenia, as well as in a number of Armenian-populated places of the Ottoman Empire, copying thousands of manuscript colophons, epigraphs, collecting dialectal words and other valuable materials.

Among the printed and unprinted heritage of the meritorious clergyman, the original text entitled «Տեսը ընդօրինակութեան մահարձանաց Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի...» (“A Notebook of inscriptions on the tombs in the Holy See of Etchmiadzin...”) stands out, which has been recently found in the archival fonds of Archpriest Gyut Aghanyants in the National Archive of Armenia. According to the colophons, Pirghalemyan copied the epitaphs from August 17 to September 29, 1889, then he chronologically classified the material and prepared the final version from October 23 to 27 in Tbilisi (Georgia), on his way back from Etchmiadzin to Constantinople.

Most of the collection, consisting of two manuscript colophons and 305 epigraphs, is made up of epitaphs (302) of the monastic cemetery of the Mother See of Holy Etchmiadzin, which Pirghalemyan skillfully read, systematized in chronological order, annotated if necessary, and compiled an alphabetical list of names and a list of dates at the end. The newly discovered collection is of great importance for clarifying the previous studies of the epigraphs of Vagharshapat, which also provides a basis for the accurate reading and for filling in the now erased fragments of the epitaphs.

The newly discovered collection is of major importance for elucidating the previous investigations on the epigraphs of Vagharshapat, which also provides a basis for accurately reading and completing currently erased passages of the epitaphs.



ՎԱՐՈՒՅ ՍՊԱՍՎԱԾ ՄԵԾԱՐԺԵՔ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Սուաշին հայացքից կարծես համոզված էինք, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բարձրաստիճան անվանի հոգեւորականների գործունեության վերաբերյալ ընդհանուր առմամբ շատ բան հայտնի է, հրատարակված եւ ուսումնասիրված: Այդ առումով, սակայն, հաճելի եւ ժամանակին բացահայտում է հայրենասեր եկեղեցական-ազգային գործիչներսես արք. Մելիք-Թանգյանի կյանքին ու գործունեությանը նվիրված արխիվային փաստաթղթերի վերջերս հրատարակված ժողովածուն¹: Այո՛, իսկապես վաղուց սպասված աշխատանք՝ անհրաժեշտ ոչ միայն Եկեղեցու պատմությանը հետաքրքրվողներին:

Պետք է փաստել, որ քննարկվող հատորը կազմող պատմագիտության թեկնածու Գոհար Ավագյանը բավականին փորձառու է արխիվային վավերագրերը հրատարակության պատրաստելու բնագավառում. «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության» մատենաշարով եւ Մայր Աթոռի հրատարակությամբ լույս են ընծայվել նրա կազմած բազմաթիվ հատորներ²:

Ներսես արք. Մելիք-Թանգյանն այն եզակի բարձրաստիճան հոգեւորականներից է, ում երկարատեւ եկեղեցական ծառայությունն անցել

¹ Տե՛ս «Տ. Ներսէս արք. Մելիք-Թանգեան (1866–1948): Փաստաթղթերի ժողովածու (ըստ Հայաստանի ազգային արխիւի նիւթերի)», կազմեց պատմական գիտութիւնների թեկնածու Գոհար Աւագեան, խմբագիր՝ պատմական գիտութիւնների դոկտոր Ամատունի Վիրաբեան, հրատարակիչներ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Հայաստանի ազգային արխիւ, «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», գք. ԻԳ., Ս. Էջմիածին, 2020, 544 էջ:

² Տե՛ս «Կարապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչյան», գք. ԺԶ., Ս. Էջմիածին, 2006. «Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմը», գք. ԺԹ., Ս. Էջմիածին, 2014. «Մյուստոյրհոյութունը ԺԹ.–ԻԱ. դարերում», Ս. Էջմիածին, 2015. «Գարեգին Ա. Յովսէփեան Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ», հտ. Ա., Ս. Էջմիածին, 2017. «Գէորգեան ճեմարան, Թանգարան, Արարատ ամազիր», գք. ԺԷ., Ս. Էջմիածին, 2018. «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Առաջին աշխարհամարտի եւ Հայաստանի առաջին Հանրապետութեան տարիներին (1914–1920)», հտ. Ա.–Բ., Ս. Էջմիածին, 2018. «Ս. Էջմիածինը եւ հայոց գրերի գիւտի 1500 ու տպագրութեան 400 ամեակների տօնակատարութիւնը 1912–1913 թթ.», գք. Ի., Ս. Էջմիածին, 2019. «Կոմիտաս վարդապետ Սողոմոնյան», գք. ԻԱ., Ս. Էջմիածին, 2019. «Մկրտիչ Ա. Խրիմեան Կաթողիկոս Ամենայն Հայոց», գք. ԻԲ., Ս. Էջմիածին, 2020:

է Մկրտիչ Ա., Մատթեոս Բ., Գեւորգ Ե., Խորեն Ա., Գեւորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսների գահակալության օրոք: Նրա գործունեությունը համընկավ հայ ժողովրդի պատմության ողբերգական ու հերոսական իրադարձություններով լեցուն շրջափուլերին. 1905—1906 թթ. հայ-թաթարական կռիվներ, Առաջին աշխարհամարտ, Ցեղասպանություն, Հայաստանի առաջին Հանրապետություն, Սյունիքի հերոսամարտ, Հայաստանի խորհրդայնացում, Սփյուռքում հայապահպանություն, Երկրորդ աշխարհամարտ: Հենց կուսակցական-քաղաքական դրդապատճառներով նրա անունը խստորեն արգելվեց Խորհրդային Հայաստանում, իսկ Սփյուռքում, որպես կանոն, գերազանցապես հիշվում էր իրանահայ համայնքում:

Ն. արք. Մելիք-Թանգյանը ժամանակի նշանավոր եւ բեղուն գիտնականներից էր, հեղինակ լեզվաբանական³, իրավագիտական⁴, հասարակագիտական⁵ աշխատանքների: Ցավոք, պետք է փաստել, որ ինչպես երկարատեւ եկեղեցական ծառայության, այնպես եւ մահից հետո նրա գործունեության վերաբերյալ աշխատանքները եզակի են⁶:

Ընդհանուր առմամբ գրախոսվող ժողովածուի մեջ ընդգրկված է 418 փաստաթղթուղթ, եւս 5-ը՝ որպես հավելված: Օգտագործվել են Հայաստանի ազգային արխիվի 1, 47, 50, 56, 57, 113, 114, 150, 175, 200, 227, 312, 314, 370, 399, 409, 472, 409 ֆոնդերը, ինչպես նաեւ Մատենադարանի արխիվի (Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի ֆոնդ) եւ «Արարատ» հանդեսի նյութերը: Ծավալի եւ կարեւորության առումով հատկապես առանձնանում են երկու՝ 57 (Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիվան) եւ 409 (Էջմիածնի Գերագույն հոգեւոր խորհուրդ) ֆոնդերի նյութերը:

Առաջաբանը, ցավոք, անստորագիր է: Պետք է ենթադրել՝ հեղինակը կազմողն է կամ խմբագիրը: Առաջաբանում հանգամանալից, բավարար մանրամասնությամբ գնահատվում եւ արժեւորվում են Ն. արք. Մելիք-

³ Տէս Ն. ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ, Աշխարհաբարի քերականութիւն, Շուշի, 1893, Բ. տպագրութ. Նոր-Ջուղա, 1900:

⁴ Տէս Ն. ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ, Հայոց եկեղեցական իրավունքը, գք. Ա.—Բ., Շուշի, 1903, 1905, Ս. Էջմիածին, 2005, 2009:

⁵ Տէս Ն. ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ, «Մշակ» եւ «Նոր Դար» կուսակցութիւններ եւ մի քանի խնդիրներ, Մոսկուա, 1894:

⁶ Տէս Հ. ԱՃԷՄԵԱՆ, Տէր Ներսէս արքեպիսկոպոս Մելիք-Թանգեան իւր ազգային եւ հասարակական գործունէութեան քառասնամեայ յոբելեանի առթիւ. 1886—1926, Վենետիկ, 1926. «Յուշամատենան Տէր Ներսէս արքեպիսկոպոս Մելիք-Թանգեանի ծննդեան 102 եւ մահուան 20-ամեակի առթիւ», Թեհրան, 1968:

Թանգյանի կյանքի ու գործունեության գլխավոր փուլերը, հատկապես կարեւորվում են եղեռնից հետո գաղթականների հոգսերով զբաղվելը, 1917 թ. Վանի եւ շրջակայքի առաջնորդ լինելը:

Անդրադառնալով ճակատագրական նշանակության կուսակցական-քաղաքական փուլերի գնահատմանը՝ առաջաբանը ճիշտ է եզրակացնում. «Առաջին աշխարհամարտի ու Հայաստանի Առաջին Հանրապետութեան գոյութեան տարիներին Մելիք-Թանգեանի գործունէութիւնն իր բնոյթով աւելի քաղաքական ու հասարակական էր, քան հոգեւոր: Այդ դժնդակ ու վտանգաւոր ժամանակաշրջանում շատ անգամ թեմական առաջնորդը հարկադրուած էր որոշումներ կայացնել՝ առանց սխալուելու իրաւունքի, եւ առանձին դէպքերում նաեւ նրա վարած զգուշաւոր ու շրջահայեաց քաղաքականութեան շնորհիւ պարսկահայութիւնը զերծ մնաց զանգուածային կոտորածներից ու թալանից: Հայաստանում խորհրդային իշխանութեան հաստատումից յետոյ բաւական բարդ ու լարուած յարաբերութիւններ ստեղծուեցին Ատրպատականի թեմական առաջնորդի եւ Հայաստանի բոլշեւիկեան կառավարութեան միջեւ: Որոնք էին այն «յանցանքները», որոնց համար մեղադրւում էր Մելիք-Թանգեանը. նա դիտւում էր իբրեւ դաշակցական գործիչ, որը զէնք ու սննդամթէրք էր մատակարարել Սինիքում մարտնչող Նժդէհին ու կազմակերպում էր փետրուարեան ապստամբութեան պարտութիւնից յետոյ Պարսկաստան անցած հայ տարագիրների խնամքի գործը»⁷: Այս քաղաքական տեսանկյունից ճշմարտացի գնահատական է տրվում. «Հայաստանի բոլշեւիկեան կառավարութեան կողմից Մելիք-Թանգեանը միանշանակ համարւում էր թշնամի ու անցանկալի անձ: Ամեն ինչ արւում էր, որպէսզի Ատրպատականի հայոց թեմական առաջնորդը վերադարձուէր էջմիածին, ուր հեշտութեամբ կարելի էր հաշուեյարդար տեսնել նրա հետ»⁸:

Հատորում ի մի են բերված նյութի վերաբերյալ եկեղեցական տարբեր մարմինների (սկսած ծխականից, թեմականից մինչեւ Սինոդ, Կաթողիկոսական դիվան) որոշումներ, վճիռներ, արձանագրություններ, զեկուցագրեր, նամակներ, բացատրագրեր, գրություններ: Օրինակ՝ կան եկեղեցական ծառայության վերաբերյալ Մկրտիչ Ա. եւ Մատթեոս Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսների կոնդակները:

⁷ Տէս «Տ. Ներսէս արք. Մելիք-Թանգեան (1866—1948): Փաստաթղթերի ժողովածու», էջ 12—13:

⁸ Տէս անդ, էջ 15:

Աղբյուրագիտական արժեք են ներկայացնում «Եղբայրական օգնության կոմիտեների», 1917 թ. Վանի ու Բայազետի շրջաններում որպես ժամանակավոր առաջնորդ Ն. արք. Մելիք-Թանգյանի գործունեության վերաբերյալ փաստաթղթերը, որոնք գաղթականների վիճակի, ազգային կառույցների անելիքների մասին պարունակում են կարեւոր փաստական-վիճակագրական տվյալներ՝ աղյուսակներով հանդերձ: Ի դեպ, սա առանձին ուսումնասիրման նյութ կարող է լինել:

Առանձին խումբ են կազմում Ատրպատականի թեմի կրթական-դպրոցական, ազգային-եկեղեցական կյանքի, ընդհանուր դրության, ֆինանսական վիճակի, կալվածային-գույքային հարցերի, դպրոցաշինության, անձնակազմի հարցերի (եկեղեցական, մանկավարժական), քաղաքացիական կացության, հասարակական վիճակի վերաբերյալ փաստաթղթերը: Այս պարագան վերաբերում է նաեւ Ատրպատականի թեմական մարմինների արձանագրություններին, գրություններին եւ նամակներին: Ուշագրավ են տարբեր տարիներին Ս. էջմիածնի համար գումարներ հանգանակելու եւ ուղարկելու մասին նյութերը:

Զգալի ծավալ են կազմում Գեւորգ Ե.-ի կոնդակները, նամակները, գրությունները: Մասնավորապես՝ Գեւորգ Ե.-ն 1920 թ. փետրվարի 27-ին կոնդակով Ն. եպս. Մելիք-Թանգյանին շնորհեց արքունիքի պատիվ. «Ի ժամանակս պաշտօնավարութեան Ձերոց թէ՛ աստ իբրեւ Նախագահ Վանական Կառավարութեան եւ թէ՛ ի վիճակիդ Ատրպատականի իբրեւ Թեմակալ Առաջնորդ գոհ կացուցեալ էք զմեզ արիաջան ծառայութեամբ, անշահասիրութեամբ եւ հաւատարմութեամբ թէ՛ առ Մ. Աթոռս եւ թէ՛ առ հօտն Ձեր եւ օրինակելի ջանասիրութեամբ ի պայծառութիւն եկեղեցեաց եւ ի բարգաւաճումն ծխական դպրոցաց եւ թեմական դպրանոցիդ: Նաեւ իբրեւ հովիւ քաջ ըստ օրինակի յաւէտ յիշատակաց արժանի երանելի հովուապետաց Մերոց միշտ ախոյեան հանդիսացեալ էք ի պաշտպանութիւն ազգին իրաւանց, նամանաւանդ ի վերջին աղէտաբեր ամս վասն ազգայնոց մերոց, որ ըստ կարելոյն կատարեալ էք զպարտիս Ձեր մխիթարելով զթշուառ հօտս Մեր եւ ամօքելով զգառն վիճակ նոցա: Այլ եւ թէ գրական աշխատութեամբդ եւ մաքուր վարուք եւ անբիծ կենցաղավարութեամբ գրաւեալ էք զհամակրանս ազգայնոց եւ զյարգանս օտարաց»⁹:

⁹ Տէս անդ, էջ 294:

Ժողովածուի մեջ հատկապես հետաքրքիր են Հայաստանի առաջին Հանրապետության իշխանություններին (օրինակ՝ կառավարություն, արտգործնախարարություն) ն. Մելիք-Թանգյանի ուղարկած տեղեկագրերն ու նամակները, որտեղ ճշգրիտ տեղեկություններ են հաղորդվում Ատրպատականի, Պարսկաստանի ու հայ համայնքի դրություն, գաղթականների վիճակի բարելավման, Նախիջևանում հայերի կոտորածների ու հարակից բազմաթիվ հարցերի վերաբերյալ: Առաջին Հանրապետության շրջանի փաստաթղթերից երեւում է ն. Մելիք-Թանգյանի սրտացավ աջակցությունը ՀՀ կառավարությանը հայ-պարսկական հարաբերությունների կայացման գործում՝ շնորհիվ կառավարական շրջանակներում ունեցած իր մեծ հեղինակության:

Անհրաժեշտ է առանձնացնել խորհրդային տարիներին ն. արք. Մելիք-Թանգյանի գործունեության վերաբերյալ փաստաթղթերը, որոնք վերաբերում են նրա դեմ խորհրդային իշխանությունների անհիմն մեղադրանքներին¹⁰, փաստացի հալածական քաղաքականությանը, այդ առթիվ Մայր Աթոռի ու Գեւորգ Ե.-ի բազմաթիվ նախազգուշական գրությունները, ն. արք. Մելիք-Թանգյանի խորհրդային Հայաստան հետևանքի հարցով (1922—1939 թթ. երկարատեւ շրջան) Մայր Աթոռի ու Կաթողիկոսի վրա խորհրդային տարբեր ղեկավար մարմինների կողմից տարիներ շարունակ կատարվող ճնշումների գրագրությունը, Թեհրանում ու Թավրիզում ԽՍՀՄ դիվանագիտական ներկայացուցիչների զեկուցագրեր-ամփոփագրերը:

Վերոնշյալի համապատկերում ուշագրավ եւ ինքնին խոսուն է Գեւորգ Ե.-ին 1927 թ. դեկտեմբերի 12-ին հղած ն. արք. Մելիք-Թանգյանի նամակի հետեւյալ հատվածը. «Ես պնդում եմ, որ խորհրդային իշխանությունը ոչ մի փաստ, ոչ մի իրական տուեալ չունի ինձ մեղադրելու որեւէ հակայեղափոխական դէպքի մէջ, նրանց ենթադրությունները ենթակայական են եւ թիրիմացութիւն. հապա ինչեր են անում արտասահմանի ոռու առաջնորդները, եւ ոչ ոք նրանց դէմ խնդիր չարուցանել չի կարո-

¹⁰ Որպես այդ ամենի հակընդդեմ փաստարկ՝ Մելիք-Թանգյանը 1921 թ. հուլիսի 14-ին խորեն արք. Մուրադբեկյանին գրում էր. «Իբրեւ հովիւ ծառայում եմ իմ ժողովրդին, հայոց ազգին, նրա ցաւերը իմ ցաւերն են, այն բանից անկախ թէ նրանք ինչպիսի վարչակերպ ունեն՝ դաշնակցական, մեծամասնական թէ էսէրական: Իմ իղէալս է անկախ, միացեալ, ազատ Հայաստանը, այդ ժողովրդի հետ կապեմ, նրա ցաւերով կտնքամ, եւ նրա հետ կմեռնեմ»: Տե՛ս «Տ. Ներսէս արք. Մելիք-Թանգեան (1866—1948): Փաստաթղթերի ժողովածու», էջ 309:

ղանում, համեմատութիւն չկայ մեր կորրեկտ վարմունքի եւ նրանցի մէջ ընդդէմ խորհրդային իրաւակարգի: Ընդամենը կարծիք է, իմ հեռանալս աշատեղից ոչ մի օգուտ չի բերիլ խորհրդային կառավարութեան, նոյնպէս եւ իմ հեռանալս ոչ մի օգուտ չի բերիլ էջմիածնի դրութեան. Աստուած, կրօն, եկեղեցի, կաթողիկոսութիւն, առաջնորդութիւն ոչինչ համարողների համար կան գծուած ճանապարհներ, որոնք որեւէ Ներսէսի մնալ կամ հեռանալով չեն փոփոխուիլ»¹¹: Ասվածի լրացումն են Ատրպատականի թեմական խորհրդի արձանագրութիւնները, գրութիւնները Ն. արք. Մելիք-Թանգյանին անվերապահ պաշտպանելու ու թեմից նրա չհեռանալու հիմնավորման վերաբերյալ:

Առանձին խումբ են Ն. արք. Մելիք-Թանգյանի գրութիւններն ու հեռագրերը ՀՍԽՉ ղեկավարներին (օրինակ՝ Ալ. Մյասնիկյանին, Ս. Լուկաշինին) գաղթականների հայրենադարձման, իր դեմ մեղադրանքների անհիմն լինելու մասին: Ն. արք. Մելիք-Թանգյանն իր հերթին մշտապէս փորձում էր բնականոն գործնական հարաբերութիւններ հաստատել Խորհրդային Հայաստանի իշխանութիւնների հետ, սակայն ապարդյուն՝ վերջիններիս մեղքով:

Ժողովածուն ամփոփվում է Ներսէս արք. Մելիք-Թանգյանի մահվան եւ հուղարկավորութեան մասին փաստաթղթերով: Հատորը եզրափակվում է «Հավելված»-ով, որտեղ հրապարակված են՝ Միսաք Տեր-Դանիելյանի (1942 թ.)¹², Հարութիւն Քյուրդյանի («Հայրենիք», 12 նոյեմբերի 1948 թ.), Նշան Հովհաննիսյանի («Եփրատ», 9 փետրվարի 1949 թ.), Գասպար Խաչատրյանի («Հայրենիք», 3 մարտի 1949 թ.), Վարդան Ժ. վարդապետի («Նաիրի», 11 նոյեմբերի 1973 թ.) հուշերը: Թեպետ առաջաբանում նշվում է, որ հավելվածում ներկայացված են ժամանակակիցների հուշերը, սակայն դրանք անհամեմատ ավելի շատ են (անգամ տպագիր), եւ պարզաբանված չէ, թե որն է հենց այդ հինգ հուշի ընտրութեան սկզբունքը:

Ընթերցողի աշխատանքը դյուրացնում է հատորին կից «Կենսագրական բառարան»-ը, որտեղ ներկայացված է 42 բարձրաստիճան հոգեւորականի կենսագրական:

Ի պատիվ կազմողի՝ հարկ է նշել, որ հրապարակվել են անգամ Ն. արք. Մելիք-Թանգյանի դեմ ուղղված խիստ բացասական բնույթի

¹¹ Տէս անդ, էջ 405–406:

¹² ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 25, թ. 31, ինքնագիր:

փաստաթղթեր (Իհարկե կեղծ, շինծու), ինչը պատկերն ավելի առարկայական է դարձնում:

Հատորը զերծ չէ որոշ թերացումներից: Օրինակ՝ էջ 23-ի 3-րդ ծանոթագրության՝ Նահապետ Նահապետյանի կենսագրությունն ավելի մանրամասն կա «Կենսագրական բառարան»-ում (էջ 501–502). հարկ էր կրկնությունը վերացնել: էջ 33-ի 18-րդ՝ «Երվանդ Տեր-Մինասյան» ավելի մանրամասն ծանոթագրությունը ճիշտ կլիներ տեղափոխել «Կենսագրական բառարան»: Թիվ 12-րդ փաստաթղթի վերնագրում նշված է «Համբարձում Վարդանեան», իսկ բուն փաստաթղթում՝ «Համբարձում Վարդապետեան»: Ժողովածուի տողատակային ծանոթագրություններում նշված են փաստաթղթեր, որոնք ցանկալի կլինեն ամբողջությամբ հրապարակել հենց ժողովածուի մեջ, մանավանդ ընդհանուր ծավալի վրա այն չէր ազդի, օրինակ՝ էջ 214, 238, 256 (ծանոթագրություն՝ 284, 304, 325):

Քանի որ ողջ ժողովածուն հայերեն է, ցանկալի կլինեն (եթե չասենք՝ պարտադիր), որ որոշ փաստաթղթեր ռուսերենի փոխարեն հրապարակվեին հենց հայերեն թարգմանությամբ՝ համապատասխան նշումով¹³: Ռուսերեն փաստաթղթերը՝ մանավանդ Պարսկաստանում ԽՍՀՄ դիվանագիտական մարմինների, հետաքրքիր քաղաքական տեղեկատվություն են պարունակում, եւ դրանց հայերեն թարգմանությամբ ներկայացումը հնարավորություն կընձեռեր ծանոթանալու նաեւ սփյուռքահայերին, խոսքը հատկապես գաղթականների վիճակը ներկայացնող նյութերի մասին է: Ասվածը վերաբերում է նաեւ առաջաբանում ռուսերեն մեջբերմանը:

Հատորում ընդգրկված են փաստաթղթեր, որոնք առաջին հայացքից գուցե պատմական արժեք չեն ներկայացնում (օրինակ՝ գյուղական հասարակությունների խնդրագրեր, նպաստների հատկացում, կենցաղային, մանր շինարարական), սակայն դրանցով առավել ամբողջական ու սպառիչ է դառնում ասելիքը:

Ժողովածուի ողջունելի կողմերից է հարուստ տեղեկատվություն պարունակող ծանոթագրությունների առկայությունը: Տողատակային բազմաթիվ ծանոթագրություններում ոչ միայն պարզաբանվում են փաս-

¹³ Տե՛ս, օրինակ, փաստաթղթեր թ. 27, 28, 29, 30, 52, 69, 70, 82, 157, 170, 171, 175, 179, 182, 193, 212, 285, 300, 303, 304, 306, 308–318, 320, 321, 324–326, 349, 350, 356, 364, 383 (էջ 43–45, 68–69, 81–83, 92, 172, 186, 187, 190, 194, 196, 208, 209, 233, 311–312, 326–327, 329–355, 359–361, 393–395, 402–403, 411–412, 430–432), տողատակային ծանոթագրություններ, էջ 57, 90–91, 120, 128, 135–136 (թ. 43, 83, 128, 142, 149):

տաթղթերը, այլեւ տրվում են հարակից, օժանդակ փաստաթղթեր, որոնք լրացնում են տվյալ փաստաթղթի մեջ պարունակվող տեղեկատվությունը: Բազմաթիվ անհրաժեշտ ծանոթագրումներ կան դեպքերի, իրադարձությունների, անձանց, աշխարհագրական անունների ու բառերի բացատրության վերաբերյալ: Ներառված են հակիրճ կենսագրական տվյալներ (հատկապես՝ օտարազգիների), որոնք ամենեւին հայտնի չեն կամ նվազ հայտնի են նույնիսկ մասնագետներին:


Ժողովածուն ավելի գրավիչ ու հետաքրքրաշարժ դարձնելու համար ցանկալի էր, որ տեղագրվեին ինչպես Ն. արք. Մելիք-Թանգյանի, այնպես եւ նրա գործունեությանն առնչվող անձանց ու իրադարձությունների լուսանկարներ:

Ժողովածուն կազմվել է հրատարակվել է արխիվագիտական բոլոր սկզբունքներին եւ կանոններին համապատասխան:

Հույս ունենք, որ հետայսու եւս Մայր Աթոռի հրատարակչությունը կշարունակի պատմաբանների կողմից մեծ պահանջարկ վայելող «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմության» մատենաշարի հրատարակումը:

Այսպիսով՝ ընթերցողի սեղանին է դրվել արխիվային փաստաթղթերի կոթողային ժողովածու, որը հիմք է ինչպես Ներսես արք. Մելիք-Թանգյանի հայրենանվեր գործունեության, այնպես եւ իրանահայ համայնքի ամբողջական ուսումնասիրության համար:

ԱՎԱԳ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու



СОДЕРЖАНИЕ

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И ГРАМОТЫ БЛАГОСЛОВЕНИЯ

Послание ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , по случаю Республиканского молебна в церкви Святого Григория Просветителя в Горисе	5
Слово ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , в ходе церемонии «Рашапар» (Чудесный) в монастыре Амарас	8
Слово ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , во время встречи с военнослужащими в Арцахе	12
Слово ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , в монастыре Гандзасар	15
Слово ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , во время Святой Литургии в церкви Пресвятой Богородицы в Степанакерте	18
Послание ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , в связи внеочередными парламентскими выборами	23

ОФИЦИАЛЬНОЕ

Патриарший визит Его Святейшества Гарегина II, Верховного Патриарха и Католикоса Всех Армян, в Сюник и Республику Арцах	25
Епископы Армении выступили с заявлением в связи с внутривосполитическими развитиями в Армении	41
Заявление Первопрестольного Святого Эчмиадзина	43

ПРОПОВЕДИ

Проповедь АРХИМАНДРИТА ТАЧАТА ЦАТУРЯНА , произнесенная во время Святой Литургии в монастыре Св. Гаяне	45
---	----

Проповедь ПРОТОИЕРЕЯ ХОРЕНА КИРАКОСЯНА , произнесенная в монастыре Св. Гаяне во время Литургии в честь праздника Обретения фимиамника Пресвятой Богородицы	49
---	----

РЕЛИГИОВЕДЕНИЕ

ПРОТОАРХИМАНДРИТ ШАГЕ АНАНЯН — Каноническое право и богословие: <i>Заметки и перспективы в свете традиции канонического права Армянской Церкви</i>	53
АФИНАГОР АФИНСКИЙ — Прошение о христианах.	65
ВАГЕ ТОРОСЯН — Кого из католиков олицетворял Св. Григорий Просветитель в документе «Дашанц тухт» («Договорная грамота»)	74

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

КАРЕН МАТЕВОСЯН — Древние части города Ани (Нижняя крепость, Цитадель, Малый город)	93
РАФИК НААПЕТЯН — Об изучении народных населенных, жилищных комплексов Сюника и Арцаха (XIX – начало XX в.)	104

СООБЩЕНИЯ

МГЕР КУМУНЦ — Крепость Сриджи в исторической провинции Габанд.	121
ЭЛЯ САРИБЕКЯН — О некоторых лингвистических вопросах в «Толковании книги Иова» Св. Григора Татеваци	130
АРСЕН АРУТЮНЯН, АРМИНЕ МЕЛКОНЯН — Нововыявленное собрание эпитафий Святого Эчмиадзина архимандрита Гевонда Пиргалемяна.	141

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

АВАГ А. АРУТЮНЯН — Долгожданный ценный сборник	162
---	-----

CONTENTS

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , on the occasion of the Republican prayer service at St. Gregory the Illuminator Church of Goris	5
Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , during “Hrashapar” service at the Monastery of Amaras	8
Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , during the meeting with soldiers.	12
Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , at the Monastery of Gandzasar.	15
Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , during the Divine Liturgy at Holy Mother of God Church in Stepanakert.	18
Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , on the occasion of the extraordinary parliamentary elections . . .	23

OFFICIAL

Visit of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Syunik and the Republic of Artsakh	25
Bishops of Armenia made a statement on the internal political developments in Armenia	41
Statement of the Mother See of Holy Etchmiadzin	43

SERMONS

Sermon delivered by ARCHIMANDRITE DAJAD TSATURYAN during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery	45
Sermon delivered by ARCHPRIEST KHOREN KIRAKOSYAN during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery on the occasion of the feast of discovery of the box of the Holy Virgin Mary	49

RELIGIOUS STUDIES

- PROTO-ARCHIMANDRITE SHAHE ANANYAN** — Canon law and theology: *Notes and perspectives in the light of the Armenian canon law tradition* 53
- ATHENAGORAS OF ATHENS** — Petition for the protection of Christians 65
- VAHE TOROSYAN** — Which catholicos was personified by St. Gregory the Illuminator in the document “Letter of love and concord”. 74

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES


- KAREN MATHEVOSYAN** — Ancient parts of the city of Ani (Lower fortress, Citadel, Small city) 93
- RAFIK NAHAPETYAN** — On the study of folk houses and residential complexes of Syunik-Artsakh (19th century—early 20th century). 104

ESSAYS

- MHER KUMUNTS** — The fortress of Sirij in the historical province of Haband 121
- ELYA SARIBEKYAN** — On some linguistic issues in the “Commentary of the Book of Job” by St. Gregory of Tatev 130
- ARSEN HARUTYUNYAN, ARMINE MELKONYAN** — Newly discovered collection of epitaphs of Holy Etchmiadzin by Archimandrite Ghevond Pirghalemyan 141

LITERARY REVIEW

- AVAG A. HARUTYUNYAN** — A long-awaited valuable collection 162



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

խօսքը Հանրապետական մաղթանքի արարողության առիթով Գորիսի

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում 5

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

խօսքը Ամարասի վանքում Հրաշափառի արարողության ընթացքում 8

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

խօսքը Արցախում զինուորականների հետ հանդիպմանը 12

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

խօսքը Գանձասարի վանքում 15

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

խօսքը Ստեփանակերտի Սուրբ Աստուածածին եկեղեցում յընթացս

Սուրբ Պատարագի 18

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

խօսքը խորհրդարանական արտահերթ ընտրությունների առիթով 23

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական այցը

Սիւնիք եւ Արցախի Հանրապետութիւն 25

Հայաստանեան եպիսկոպոսների յայտարարութիւնը ՀՀ ներքաղաքական

գարգացումների վերաբերեալ 41

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի յայտարարութիւնը 43

ՔԱՐՈՉԽՕՍԱԿԱՆ

Տ. ՏԱՃԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ

վանքում մատուցուած Սուրբ եւ Անմահ Պատարագին 45

Տ. ԽՈՐԷՆ ԱԲԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ քարոզը՝

խօսուած Ս. Գայանէ վանքում Սուրբ Աստուածածնի տուփի զիւտի տօնին

մատուցուած Ս. Պատարագին. 49

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

- Տ. ՇԱՀԷ ՃԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԱՆԵԱՆ** — Կանոնական իրաւունք
 եւ աստուածաբանութիւն. *մօտեցումներ ու հեռանկարներ հայ եկեղեցական-
 կանոնական իրաւունքի ասանդութեան լոյսի ներքոյ* 53
- ԱԹԵՆԱԳՈՐԱՍ ԱԹԵՆԱՅԻ** — Խնդրագիր ի պաշտպանութիւն
 քրիստոնեաների. 65
- ՎԱՀԷ ԹՈՐՈՍԵԱՆ** — Ո՞ր կաթողիկոսին է «Դաշանց թղթում» կերպաւորել
 Ս. Գրիգոր Լուսաւորիչը 74

ՊԱՏՄԱՐԱՆԱՍԻՐԱԿԱՆ


- ԿԱՐԷՆ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ** — Անիի հնագոյն քաղաքամասերը (Ներքին բերդ,
 միջնաբերդ, Փոքր քաղաք) 93
- ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ** — Սիւնիք—Արցախի ժողովրդական
 բնակավայր-բնակարանային համալիրների ուսումնասիրութեան շուրջ
 (ԺԹ. դար — Ի. դարասկիզբ) 104

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

- ՄՀԵՐ ԶՈՒՄՈՒՆՑ** — Պատմական Հաբանդ գաւառի Սիրիջի բերդը 121
- ԷԼՅԱ ՍԱՐԻԲԵԿԵԱՆ** — Յորի գրքի՝ Ս. Գրիգոր Տաթեւացու լուծմունքում
 առկա լեզուաւորական որոշ հարցեր 130
- ԱՐՍԷՆ ՅԱՐՈՒԹԻԲԵԱՆ, ԱՐՄԻՆԷ ՄԵԼՔՈՆԵԱՆ** — Ս. Էջմիածնի
 տապանազրերի՝ Ղևոնդ վրդ. Փիրդալեմեանի նորայայտ ժողովածուն 141

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

- ԱԲԱԳ Ա. ՅԱՐՈՒԹԻԲԵԱՆ** — Վաղուց սպասուած մեծարժէք ժողովածու. . . 162



ISSN 1829-4243

Հրատարակում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխատրոյթեամբ եւ որոշմամբ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՀ ազգային եւ ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարանները ձեռնամուխ են եղել «Հայկական գիտատեղեկատուական հանգոյցի» ձեւաւորման աշխատանքներին:

Այս հանգոյցում ի մի են բերում հայագէտների եւ գիտութեան տարբեր բնագաւառների ներկայացուցիչների հրատարակած յօդուածների, գրքերի ընտրանիները: Այս աշխատանքներին իրենց աջակցութիւնն են բերում Հայաստանեան եւ Սփիւռքի հայագիտական կենտրոնները, հրատարակչութիւնները, գրադարանները:

Հանգոյցը հասանելի է համացանցային հասցէով՝ <https://arar.sci.am/> կամ <https://www.flib.sci.am/journal/Ejmiadzin/Frame.html>:

Բոլոր նիւթերը հասանելի են ազատ դիտման ու ներբեռնման համար:

Ունեցէ՛ք Ձեր ներդրումը համահայկական այս եզակի նախագծում՝ օգտուելով հանգոյցից, տարածելով տեղեկատւութիւն դրա մասին, տրամադրելով թուայնացուած նիւթեր:

ՀՀ Ազգային գրադարան
ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարան

Խմբագրութեան հասցէն՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ»

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal "Etchmiadzin"

Էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com

Հեռ. (+374-10) 517-277/278

Ստորագրուած է տպագրութեան՝ 15.07.2021 թ.

